

ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈՒՅԱԼ (ԹԱՐՈՒԽԵԱԼ)

ՀԱՅՈՑ ՏԱՐԻՐԸ

ՁԵՒԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱԼ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ



ԱՄՏԱՐԵՆ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

RUBEN HAKOBYAN (TARUMIAN)

ARMENIAN LETTERS

COMPARATIVE STUDY OF MORPHOGENESIS



Antares

YEREVAN 2017

4(47.925)
h-17
h21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՒՐԲԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ (ԹԱՐՈՒՄԻԱՆ)

ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԸ

ՁԵԽԱԳՈՅՈՑՄԱՆ ՀԱՄԵՄՈՏԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

8675



Antares

YEREVAN 2017



ՀՏԴ 930.27:81'351

ԳՄԴ 63.3+81

Հ 177

Տպագրված է ՀՀ ԳԱԱ Արևելազիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ **Գայանե Գետրգյան**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Հակոբյան (Թարումեան) Ռուբեն

Հ 177 Հայոց տառերը: Ձեռագրայցման համեմատական քննություն / Ռ. Հակոբյան (Թարումեան). - Եր.: Անտարես, 2017.- 228 էջ:

Դետագոտությունը նվիրված է Հայոց այբուբենի ծագման խնդրին: Շուրջ 20 գրային համակարգերի (ներառյալ սինայյան, փյունիկյան, եթովպական, դպտական, ասորական, եբրայական, նաբաթեական, արաբական, հունական, լատինական, սլավոնական, ադուանական, վրացական եւն) ավելի քան 300 գրանշանների գծապատկերային-համեմատական վերլուծության միջոցով փորձ է արված՝ բացահայտելու Հայոց այբուբենի տեղը գրային մյուս համակարգերի շարքում: Ձեռագրված են գրային համակարգերի ստեղծման եւ փոխառման ընդհանուր սկզբունքները, որոնք այնուհետեւ կիրառված են Հայոց գրի վերլուծության ընթացքում: Համեմատական քննությունը նպատակ ունի բացահայտելու գծապատկերային նշանների՝ արագագրության հետեւանքով կատարված ձեւափոխությունների օրինաչափությունները:

ՀՏԴ 930.27:81'351

ԳՄԴ 63.3+81

ISBN 978-9939-0-2360-1

© Պատճենաշնորհ, Ռ. Հակոբյան (Թարումեան), 2017

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	9
Ներածություն	11
1. Հայոց գրերի ուսումնասիրության մասին	13
1.1. Նշանավոր հետապոստողներ	18
1.1.1. Գրայնա Աճառյան	19
1.1.2. Աշոտ Արրահամյան	23
1.1.3. Գուրգեն Սեւակ	26
1.1.4. Դմիտրի Օլդեռոզգե	27
1.1.5. Էդուարդ Աղայան	28
1.1.6. Սերգեյ Մուրավյով	30
1.1.7. Անահիտ Փերիխանյան	34
1.1.8. Արտաշես Մարտիրոսյան	36
1.1.9. Թամազ Գամկրելիձե	38
1.1.10. Լիպարիտ Սադոյան	39
1.1.11. Պողոս Պողոսյան	42
1.1.12. Վահան Սարգսյան	45
1.1.13. Ալբերտ Մուշեղյան	50
2. Գրանշանների արտաքին ձեւի վերլուծման սկզբունքները	52
2.1. Գիտական մեթոդաբանությունը	52
2.1.1. Ի՞նչ սկզբունքով են ընտրում գրային համակարգը	54
2.1.1.1. Ազգային համակարգ, թե՞ փոխառություն	54
2.1.1.2. Ո՞րն ընտրել	60
2.1.1.3. Պետական գիր	62
2.1.2. Փոխառված գիր	64
2.1.2.1. Ի՞նչ է նշանակում «տվյալ ազգի (լեզվի) գիր»	64
2.1.2.2. Ո՞րն է համարվում հեղինակային գիր	67
2.1.3. Ի՞նչ սկզբունքով են ստեղծվում նոր գրի նշանները	69
2.1.4. Ինչ՞ է են փոխվում տառածեւերը, եւ ինչպե՞ս է ապահովվում կայունությունը	70
2.1.4.1. Փոփոխության պատճառները	70
2.1.4.2. Արագագրությունը եւ գրանշանների ձեւափոխման օրինաչափությունները	75
2.1.4.3. Փորձագիտական քերաբանություն	77
2.1.4.4. Գրչարհեստը եւ գրույթը	80
2.1.4.5. Գրանշանների բնորոշ ձեւափոխությունները արագագրության ընթացքում	81
2.1.4.6. Գրանշաններին բնորոշ ձեւափոխությունները կոթողայնացման ընթացքում	84
2.1.5. Ինչպե՞ս պետք է համեմատվեն գրանշանները	85

2.2.	Հայոց գրերի հնարավոր նախօրինակները.....	90
2.3.	Այբուբենի ակունքների մասին	94
2.3.1.	Սինայյան գրանշանների ծագումը.....	94
2.3.2.	Սեմական գրանշանների հաջորդական ձեւափոխման ընթացքը	95
3.	Հայոց գրերը	100
3.1.	Հայոց գրերի ստեղծման հանգամանքները	100
3.1.1.	Նախամաշտոցյան գրի հարցը.....	100
3.1.1.1.	Ընդհանուր օրինաչափություններ	101
3.1.1.2.	Բանասիրական հիմնավորումներ	106
3.1.1.3.	Պատմական վկայությունները	106
3.1.1.4.	Ձեւագոյացման վերակառուցումներ	108
3.1.1.5.	Առկա նմուշները	109
3.1.2.	Դանիելյան եւ մաշտոցյան գրերի հարաբերությունը	110
3.1.3.	Ի՞նչ նպատակով Մաշտոցը ստեղծեց Հայոց այբուբենը	115
3.1.4.	Արտակարգ եւ լիակրոր դեպքանը.....	116
3.1.5.	Եզրակացություններ	123
3.2.	Հայոց տառերի բերաբանությունը	125
3.2.1.	Դանիելյան գրերը	126
3.2.1.1.	Այբ	126
3.2.1.2.	Բեն	130
3.2.1.3.	Գիմ	132
3.2.1.4.	Դա	133
3.2.1.5.	Եչ	135
3.2.1.6.	Իլն եւ Վել	137
3.2.1.7.	Չա եւ Ձա	139
3.2.1.8.	Շթ եւ Է	140
3.2.1.9.	Թո	141
3.2.1.10.	Ին	143
3.2.1.11.	Վել	144
3.2.1.12.	Դատ եւ Լիւն	145
3.2.1.13.	Մեն	146
3.2.1.14.	Նու	147
3.2.1.15.	Շա	148
3.2.1.16.	Ո	149
3.2.1.17.	ՊԷ	150
3.2.1.18.	Շա	151
3.2.1.19.	ՔԷ	152
3.2.1.20.	ԴԷ եւ Ռա	153
3.2.1.21.	ՍԷ	154
3.2.1.22.	Տիւն	155
3.2.2.	Դանիելյան գրերի աղյուսակը	156
3.2.3.	Հայոց «լրացուցիչ» տառերը	156
3.2.3.1.	ԽԷ եւ Փիւր	157
3.2.3.2.	ՃԷ	158
3.2.3.3.	ԺԷ, Չա, ՁԷ, Յո	159
3.2.3.4.	Հո, Յի	163

3.2.4.	Վեց այբուբենների համեմատական աղյուսակ.....	165
3.2.4.1.	Հայոց եւ եթովպական գրերի հարաբերությունը	168
3.2.4.2.	Հայոց եւ հունաց գրերի հարաբերությունը	173
3.2.4.3.	Հայոց, վրաց եւ աղուանից գրերի կապը	176
3.2.4.4.	Հայոց եւ վրաց գրերի հարաբերությունը	178
3.2.4.5.	Հայոց եւ աղուանից գրերի հարաբերությունը.....	182
3.3.	Հարակից խնդիրներ	184
3.3.1.	Կրկին նախամաշտոցյան գրերի հարցը.....	185
3.3.2.	Տառերի հաջորդականությունը	193
3.3.3.	Տառերի թիվը.....	195
3.3.4.	Այբուբենի հորինվածքը	198
3.3.5.	Տառերի անունները	200
Որպես վերջաբան	209	
Summary	211	
Резюме	213	
Օգտագործված գրականություն	215	
Հավելված	221	
Անվանացանկ	225	

206	Հանրահայտություններ	206
207	Հանրահայտություններ	207
208	Հանրահայտություններ	208
209	Հանրահայտություններ	209
210	Հանրահայտություններ	210
211	Հանրահայտություններ	211
212	Հանրահայտություններ	212
213	Հանրահայտություններ	213
214	Հանրահայտություններ	214
215	Հանրահայտություններ	215
216	Հանրահայտություններ	216
217	Հանրահայտություններ	217
218	Հանրահայտություններ	218
219	Հանրահայտություններ	219
220	Հանրահայտություններ	220
221	Հանրահայտություններ	221
222	Հանրահայտություններ	222
223	Հանրահայտություններ	223
224	Հանրահայտություններ	224
225	Հանրահայտություններ	225
226	Հանրահայտություններ	226
227	Հանրահայտություններ	227
228	Հանրահայտություններ	228
229	Հանրահայտություններ	229
230	Հանրահայտություններ	230
231	Հանրահայտություններ	231
232	Հանրահայտություններ	232
233	Հանրահայտություններ	233
234	Հանրահայտություններ	234
235	Հանրահայտություններ	235
236	Հանրահայտություններ	236
237	Հանրահայտություններ	237
238	Հանրահայտություններ	238
239	Հանրահայտություններ	239
240	Հանրահայտություններ	240
241	Հանրահայտություններ	241
242	Հանրահայտություններ	242
243	Հանրահայտություններ	243
244	Հանրահայտություններ	244
245	Հանրահայտություններ	245
246	Հանրահայտություններ	246
247	Հանրահայտություններ	247
248	Հանրահայտություններ	248
249	Հանրահայտություններ	249
250	Հանրահայտություններ	250
251	Հանրահայտություններ	251
252	Հանրահայտություններ	252
253	Հանրահայտություններ	253
254	Հանրահայտություններ	254
255	Հանրահայտություններ	255
256	Հանրահայտություններ	256
257	Հանրահայտություններ	257
258	Հանրահայտություններ	258
259	Հանրահայտություններ	259
260	Հանրահայտություններ	260
261	Հանրահայտություններ	261
262	Հանրահայտություններ	262
263	Հանրահայտություններ	263
264	Հանրահայտություններ	264
265	Հանրահայտություններ	265
266	Հանրահայտություններ	266
267	Հանրահայտություններ	267
268	Հանրահայտություններ	268
269	Հանրահայտություններ	269
270	Հանրահայտություններ	270
271	Հանրահայտություններ	271
272	Հանրահայտություններ	272
273	Հանրահայտություններ	273
274	Հանրահայտություններ	274
275	Հանրահայտություններ	275
276	Հանրահայտություններ	276
277	Հանրահայտություններ	277
278	Հանրահայտություններ	278
279	Հանրահայտություններ	279
280	Հանրահայտություններ	280
281	Հանրահայտություններ	281
282	Հանրահայտություններ	282
283	Հանրահայտություններ	283
284	Հանրահայտություններ	284
285	Հանրահայտություններ	285
286	Հանրահայտություններ	286
287	Հանրահայտություններ	287
288	Հանրահայտություններ	288
289	Հանրահայտություններ	289
290	Հանրահայտություններ	290
291	Հանրահայտություններ	291
292	Հանրահայտություններ	292
293	Հանրահայտություններ	293
294	Հանրահայտություններ	294
295	Հանրահայտություններ	295
296	Հանրահայտություններ	296
297	Հանրահայտություններ	297
298	Հանրահայտություններ	298
299	Հանրահայտություններ	299
300	Հանրահայտություններ	300

ՀԱՅՈՑ ՏՎՈՒԵՐԸ
Ռուբեն Չակոբյան (Թարումեան)

Գիրքը պատկանում է Հայաստանի Հանրապետության Գրականության և Մամուլի նախարարությանը:

ԵՐԿՐՈՒ ԽՈՍՔ

Գիրքը քաղաքակրթության հիմքն է, մինչդեռ նրա ակունքները թաղված են հազարամյակների խորքում: Դա է պատճառը, որ գրային համակարգերի ստեղծման պատմությունը պատված է դիցաբանական եւ խորհրդապաշտական շղարշով: Այդ հանգամանքը գրի պատմության ուսումնասիրությունը դարձնում է չափազանց հետաքրքիր, բայց եւ միաժամանակ հետազոտողից պահանջում է չենթարկվել գայթակղությունների եւ չշեղվել գիտական մոտեցումներից: Եւ հատկապես այն դեպքում, երբ խոսքն ի՛ր ժողովրդի գրի ուսումնասիրությանն է վերաբերում:

Գրերի ծագումը հաճախ է կապվել գերբնականի հետ: Եգիպտական գրի ստեղծումը կապվում է Թոթ աստծու հետ: Հնդիկներն իրենց գիրն անվանել են *դեւանագարի*՝ «աստվածային քաղաքացիական»: Կելտերն իրենց *օգամյան* այբուբենը՝ *բեթ-լուիս-նիոնը* կամ *բոիբել-լոթը*, համարել են Օգմա աստծու ստեղծագործությունը: Կորյունն ու Մոլվեսն խորենացին իրենց աշխատանքներում որպես Աստծո պարգեւ են ներկայացնում Հայոց գիրը:

Սակայն գրի՝ աստվածային պարգեւ համարելը հանգեցնում է նրան, որ այն սկսում է ընկալվել որպես անքննելի ինչ-որ բան: Ոմանք հենց այդպես էլ վերաբերվում են նաեւ Հայոց գրերի ծագման հարցին՝ համարելով, որ դրա քննությունն անիմաստ զբաղմունք է, իսկ մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները միանգամայն սպառնիչ են: Մյուս կողմից, ինչպես կտեսնենք, գիտական, համեմատական մոտեցումը բացահայտում է Հայոց գրերի գոյացման հետ կապված այնպիսի փաստեր, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում նորովի ընկալել գրերի ստեղծման պատմությունը:

Սույն ուսումնասիրությունը մեր «Սկզբից եր տառը» գրքի՝ Հայոց տառերի ծագմանը նվիրված գլխի զարգացման արդյունք է: Հայագիտական գրականության մեջ չկա Հայոց տառածեւերի ծագմանը նվիրված համակարգային հետազոտություն: Կան խնդրի պատմական, բանասիրական հետազոտություններ, որոնցում լուսաբանված են կրոնական, քաղաքական, աղբյուրագիտական, մշակութաբանական կողմերը, ինչպես՝ Ի.ս. Հարությունյանցի «Հայոց գիրը», Հր. Աճառյանի «Հայոց գրերը»: Դրանցում ճշտվում է գրերի ստեղծման տարեթիվը, վերականգնվում են Մաշտոցի ուղեւորությունների մանրամասները, մինչդեռ *տառածեւերի* ծագման բուն խնդրին հատկացված են հակիրճ, հպանցիկ դատողություններ:

տողներից այս տեսակետն ընդունում էր Մ. Չամչյանը, ով փաստորեն կրկնում էր նշանագրերի գյուտի՝ խորենացու նկարագրությունը²: Ու թեև տեսականորեն դա հնարավոր է, սակայն կասկածելի է, քանի որ գրային այլ համակարգերի ստեղծման պատմությունը վկայում է դրանց *բարեշրջական* (evolutionary) ծագումը աստիճանական հաջորդական փոփոխությունների հավելման արդյունքում: Սակայն հետագայում կյանքի իրավունք ստացած այս կարգի մոտեցումները նույնպես մինչեւ վերջ տրամաբանական չէին: Այդ սկզբունքն ընդունած հետազոտողներն ընկնում են այլ ծայրահեղության մեջ. չկա հարեան, երբեմն էլ նաեւ աշխարհագրորեն հեռադիր ազգի որեւէ այբուբեն, որում նրանք փորձ արած չլինեն գտնելու հայկական որեւէ տառ: Որոշ հեղինակներ նույնիսկ կարծում են, թե Մաշտոցը ծաղկաբաղ է կատարել օտարալեզու մի քանի այբուբենից, ինչը հակասում է գրային համակարգին ներկայացվող գործառնության պահանջներին, որոնց մասին կխոսվի գրանշանների արտաքին ձեւի վերլուծման սկզբունքներին նվիրված բաժնում:

Հայոց գրերի ծագումն ուսումնասիրելու համար առկա նյութերը մի կողմից պատմագրական են (Կորյունի եւ Մովսեսի գործերը, ինչպես նաեւ ավելի ուշ դարերի հեղինակներինը), իսկ մյուս կողմից՝ հնագրական: Սակայն եթե պատմագրական նյութի քննության միջոցը բանասիրական հայտնի եղանակն է, ապա հնագրական նյութի քննության եղանակներն ակնհայտ չեն: Ցավոք, սովորաբար հնագրական նյութի հետազոտողները նույն բանասերներն են, որոնք քննում են այն՝ հաշվի չառնելով դրա առանձնահատկությունները: Մինչդեռ պարզ տրամաբանությունը հուշում է, որ եթե տարբեր են քննության առարկաները (մեկը՝ *շարադրանք*, մյուսը՝ *գծապատկեր*), ապա տարբեր պիտի լինեն նաեւ քննության եղանակներն ու նաեւ քննողները:

Բանն այն է, որ հետազոտողները, լինելով բանասերներ կամ պատմաբաններ եւ ծանոթ չլինելով տառարվեստի օրինաչափություններին, հաճախ ձեւաբանական արժեք են վերագրում գրանշանների առանձին վայելչագրական տարրերին (մասնիկներին), օրինակ՝ տառերի *գծափակոցներին*, կամ համեմատում են վայելչագրորեն անհամեմատելի տարրերը: Գրային հնագույն այլ համակարգերի հետ Հայոց տառերը համեմատելիս նրանք կրկին դատում են ըստ գրանշանների արտաքին նմանության: Դրա արդյունքում ծագումնաբանական կապ է նկատվում, օրինակ, *Թ-ի ու Ժ-ի, Ա-ի ու Վ-ի* եւ այլ գրանշանների միջեւ: Թե՛ նախկինում եւ թե՛ այսօր բոլորովին ուշադրություն չի դարձվում այլ ազգերի գրերի ստեղծման գործընթացների հետ համեմատությանը: Այդ կարգի մոտեցումների ցայտուն օրինակ դրսեւորել է Գուրգեն Սեւակը³:

² Մ. Չամչյան, *Պատմություն Հայոց*, հտ. Ա, Գիրք Բ, ԾԴ, ք. Կենտրիկ, 1784, էջ 493:
³ Գ. Սեւակ, *Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները եւ աղբյուրները* // «Մեսրոպ Մաշտոց», եր., 1963, էջ 179:

Հայոց գրերի արտաքին ձեւերի ուսումնասիրությունը կարող է ընթանալ մի քանի կանխավարկածներով.

- դրանք ստեղծված են Մեսրոպ Մաշտոցի կողմից հեղինակային եղանակով, այսինքն՝ գրանշանների արտաքին ձեւը ընտրված է գրային այլ համակարգերի նշաններից անկախ.
- դրանք ստեղծված են՝ որպես նախօրինակ ընդունելով գրային այլ համակարգերի գրանշանների ձեւերը:

Երկրորդ կանխավարկածն իր հերթին բաժանվում է երկու ենթականխավարկածների.

- որպես նախօրինակ ծառայել են օտար համակարգերի գրանշանները.
- որպես նախօրինակ ծառայել են տեղական՝ հայկական ծագումով անհայտ գրանշանները:

Այստեղ կանխավարկածները ձեւակերպված են անխառն ձեւով: Գործնականում հետազոտողներն անգամ եթե ընդունում են դրանցից որեւէ մեկը, ապա շատ հաճախ չեն բացառում նաեւ մյուս կանխավարկածի տրամաբանությունից որոշ չափով օգտվելու հնարավորությունը: Բոլոր այդ կռվանները կարելի է գտնել հենց մեր պատմիչների տեղեկություններում: Այսպես, ըստ Կորյունի՝ «*Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին*»⁴: Հետեւապես պետք է լսելու, որ գործ ունենք ուրույն համակարգի հետ, թեւ տրամաբանորեն այս տեղեկությունից չի հետեւում, որ Աստված չէր կարող պարգեւել մեզ մեկ այլ ազգին արդեւ իսկ պարգեւած համակարգ:

Մյուս կողմից, Կորյունը գրում է. «*Նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Զոոփանոս անուն գտեալ, որով պամենայն ընտրութիւնս նշանագրացն վերբարդոյն եւ վայնագոյնն, վկարճն եւ վերկայնն, պառանծիւնն եւ վերկնաւորն, միանգամայն յաւրինեալ եւ յանկուցեալ*»⁵: Այսինքն՝ ինչ-որ բան հայկական գրային համակարգում հաստատապես արվել է օտար մասնագետի կողմից ու հավանաբար իննց օտար ձեւով: Եթե սրան հավելենք այն, որ Զոոփանոսը գրիչ էր (իմա՝ գեղագիր, վայելչագրող), իսկ խնդիրը վերաբերում է տառերի արտաքին ձեւին, ապա Զոոփանոսի ներդրումը կարող է եւ ծանրակշիռ լինել:

Իսկ ըստ Ղազարի՝ «*...մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հետք է ինքեան ձայնիւ, եւ ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանուց*»⁶: Այսինքն՝ Մաշտոցից առաջ եղել են հայկական գրեր:

⁴ Կորյուն, *Վարք Մեսրոպայ Վարդապետի*, Ը // Մատենագիրք Հայոց, հտ. Ա, էջ 238:
⁵ Լույն տեղում:
⁶ Ղազար Փարպեզի, *Պատմություն Հայոց*, Ա, Ժ, 5 // Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2212:

հնչպես երեւաց վերոբերյալից, հիշյալ կանխադրոյթները կարող են զուգորդվել.

- Մաշտոցն ինքնուրույն է ստեղծել տառածեւերը, բայց ընդօրինակել է հունական գրի կառուցվածքը (այբբենական կարգը, գրերի ուղղությունը եւ այլն).
- վերցրել է հարեւան լեզուներից մեկի (հունարենի, ասորերենի, պարսկերենի եւ այլն) գրանշանները, սակայն այնպես է ձեւափոխել, որ դրանք անճանաչելի են դարձել.
- վերցրել է աշխարհագրորեն հեռու լեզուների (եթովպերենի, քարոշտիի) գրանշանները.
- վերցրել է հայկական հին գրանշանները (գաղափարագրերը, ժայռապատկերները եւ այլն), դրանք ձեւափոխել է, հավելել է նորերը, դասավորել է հունական կարգով:

Կանխադրոյթների տարբերակները շատ են, եւ դրանց շարքը կարելի է շարունակել: Այնուամենայնիվ, կա մեկ ընդհանուր հատկություն, որը մինչ այսօր բնորոշ է եղել Հայոց գրերի գրեթե բոլոր հետազոտողներին եւ որից խուսափելու համար էլ արվել է սույն հետազոտությունը: Դա այն է, որ նրանք վերաբերվում են հայկական գրանշաններին ոչ որպես հենց գրային նշանների, այլ միայն որպես նշանների: Այսինքն՝ դիտում են դրանք սոսկ որպես երկրաչափական ձեւեր՝ մոռանալով, որ գրանշաններն ունեն որոշակի, այն է՝ տեղեկույթ հաղորդելու գործառույթ, եւ որ բավական չէ նշաններ հորինել եւ սահմանել, դրանք դեռ պետք է իրագործվեն, այն է՝ գրվեն. սա կարող է լրջորեն փոխել դատողությունների տրամաբանությունը: Այդ հանգամանքը նկատել է նաեւ Անահիտ Փերիխանյանը՝ արտահայտվելով որոշ հեղինակների կարծիքների դեմ. «...հայկական տառերի ծագումը հունականներից ապացուցելու փորձերը ներկայացնում են բռնություն հնագրության նկատմամբ եւ այդպիսի հետապոտությունների մեթոդաբանության տարրական կանոնների արհամարհում...»⁷: Հավելենք, որ դրանք անտեսվում են հայերեն գրերի՝ ոչ միայն հունական գրից ծագումը հիմնավորելու, այլ գրեթե բոլոր դեպքերում:

Թերեւս, պատճառն այն է, որ գրանշանները դիտվում են իբրեւ անփոփոխ ձեւեր, մինչդեռ գիրը՝ որպես կատարված փաստ, պետք է ուսումնասիրվի ոչ միայն իր վերջնական վիճակում, այլեւ ընթացքի մեջ: Այսինքն՝ պետք է հաշվի առնվեն գրանշանների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաեւ տվյալ գրության իրագործման ընթացքում՝ հաշվի առնելով նաեւ գրանշանի իմաստաբանական եւ տեղեկութային կողմերը գրի ընդհանուր տեսության կամ բերաբանության շրջանակներում:


⁷ А. Периханян, К вопросу о происхождении армянской письменности // Переднеазиатский сборник. М., 1966. Т. II, с. 106.

Հայոց գրերի՝ մինչեւ այսօր ամենահիմնարար եւ ամենարժեքավոր ուսումնասիրությունը Հր. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատությունն է, որը հիմնականում գրվել է մինչեւ 1935 թվ., այնուհետեւ լրացվել է առանձին հոդվածներով եւ միայն 1984 թ. լույս է տեսել մեկ գրքով: Սույն հետազոտությունը կատարել ենք՝ հաշվի առնելով Հր. Աճառյանի այս աշխատության գոյությունը՝ չկրկնելով նրանում բերված տվյալներն ու պնդումները, եթե դրանք չեն առնչվում մեր խնդիրներին:

Յավոք, Հր. Աճառյանից հետո կատարված ուսումնասիրությունների ներդրումը զգալիորեն ավելի փոքր է թե՛ ծավալով, թե՛ ընդգրկմամբ եւ թե՛ արդյունավետությամբ: Սույն հետազոտության մեջ կանդրադառնանք նաեւ մի շարք հեղինակների (Ա. Փերիխանյան, Ա. Մարտիրոսյան, Վ. Սարգսյան, Ա. Աբրահամյան, Թ. Գամկրելիձե, Ս. Մուրավյով, Գ. Սեւակ, Է. Աղայան, Դ. Օլդեռոգզե, Լ. Սադոյան, Ա. Մուշեղյան), որոնք քննել են հայկական տառերի գծապատկերները Հր. Աճառյանից հետո: Նրանցից ոմանց աշխատանքները (Լ. Սադոյանի, Ա. Փերիխանյանի, Ա. Մարտիրոսյանի) պարունակում են հետաքրքիր դիտարկումներ, որոնք վրիպել են նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից: Սակայն, ցավոք, ուսումնասիրությունների մեծ մասը պետք է անարդյունավետ համարել, հիմնախնդրի համապարփակ լուծման առումով:

Պատճառներից մեկն այն է, որ հետազոտողների ձեռքի տակ եղած փաստական նյութը վաղուց արդեն քննվել է ամենատարբեր կողմերով եւ դժվար է նրանում նոր բան գտնել: Դժվար է նաեւ հուսալ, որ կհայտնաբերվեն նոր նյութեր (թե՛ եւ նման բան տեղի ունեցավ համեմատաբար վերջերս՝ 1994-96 թթ., երբ Սինայի Սբ. Եկատերինեի վանքում հայտնաբերվեցին վրաց-աղուաներեն կրկնագրեր, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն տվեց լրացուցիչ լույս սփռել Մաշտոցի կատարած մեկ այլ գործի՝ աղուանական գրի հետ կապված խնդրի վրա):

Մյուս ու թերեւս ավելի կարեւոր պատճառը այս հարցի չափազանց մեծ բաղաբանացվածությունն է: Գիր ստեղծելը մեծագույն գործ է, սակայն գրային հնագույն համակարգերի հեղինակների անունները մեզ չեն հասել: Իսկ Մաշտոցը գրային համակարգերի ստեղծողների շարքում, հավանաբար, առաջինն է, որի ոչ միայն անունը, այլեւ բավական մանրամասն կենսագրությունը, ինչպես նաեւ այբուբենի ստեղծման գործընթացի առանձին (թե՛ եւ՝ սակավաթիվ) մանրամասները պատմությունը հասցրել է մինչեւ մեր օրերը: Դեռ ավելին, նրա գործունեությունը շոշափել է նաեւ մեր հարեւան ազգերի մշակույթի հիմքերը, եւ հաճախ հետազոտողները որեւէ գիտական եզրակացություն ձեւակերպելուց առաջ փորձում են ծայրաստիճան զգուշավորություն դրսեւորել՝ չհակադրվելու համար սեփական ազգերի ավանդություններին եւ «ջուր չցնելու» համար հարեւանների գաղափարական ջրաղացի անիվին: Նման պայմաններում գիտությունը, իհարկե, չի կարող արդյունավետ լինել:



Վերջապես, երրորդ, ամենահիմնական պատճառը գրի ուսումնասիրության հարցում հիմնական սկզբունքների՝ *աբսիոմների* սահմանված չլինելն է:

Բանն այն է, որ Հայոց գրանշանների արտաքին ձեւի հետազոտմանը նվիրված աշխատությունները, որոնք լույս են տեսել վերջին 200 տարիներին, գրվում են գրեթե միեւնոյն մոտեցումներով. որպես կանոն՝ փորձ է արվում մեկնաբանել Կորյունի բառերը՝ «*վերբազոյնն եւ վայնազոյնն, վկարճն եւ վերկայնն, պառանձինն եւ վկրկնաւորն*»՝ նմանություն որոնելով նույն ժամանակի գրային համակարգերի գրանշանների հետ, նաեւ որոշել, թե որ տառը որ գրից է՝ հարցադրումներ անելով, թե արդյո՞ք Մաշտոցն օգտագործել է դանիելյան գրերը եւ դրանք ի՞նչ էին իրենցից ներկայացնում: Ինչ խոսք, բոլոր այս հարցերի պատասխաններն ի վերջո անհրաժեշտ է գտնել: Սակայն սովորաբար դա արվում է առանց դատողությունների համար որոշակի սկզբունքների սահմանման (դա հանգեցնում է Ա. Փերիխանյանի՝ վերելում հիշատակված բառերով՝ հնագրության նկատմամբ *բռնության*), կամ էլ հայտարարվում է, որ Մաշտոցի տառաձեւերը հեղինակային են, այսինքն՝ չունեն նախօրինակներ. դա հավասարազոր է հարցի փակմանը⁸: Երբեմն էլ սրան հետեւում են առավելապես *ձեւավորչության* (այլ ոչ թե *հնագրության*) ոլորտին վերաբերող, ուստի եւ անօգուտ դատողություններ այն մասին, թե երկրաչափական ինչ ձեւեր (չրջանագիծ, ձվածիր, պայտ, գծիկ եւ այլն) են դրված Հայոց եւ դրան առնչվող ադուանական ու վրացական գրանշանների հիմքում: Այս կարգի մոտեցումով է աչքի ընկնում, մասնավորապես, Ռ. Լոլուան⁹:

Մինչդեռ անհրաժեշտ է այդ սկզբունքներն ի վերջո ձեւակերպել, այլապես ոչ մի դատողություն չի կարող ունենալ գիտական արժեք:

Ուսումնասիրության ընթացքում չենք անդրադարձել այն հետազոտողներին, որոնք հարցի սուկ բանասիրական վերլուծություններ են կատարել առանց արծարծելու գծապատկերային խնդիրները:

1.1. ԼԵԱՆԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

Ստորեւ սեղմ շարադրված են Հրաչյա Աճառյանի եւ Նրանից հետո Հայոց գրերի ծագմանն անդրադարձած մի շարք հեղինակների հետազոտությունների հիմնական դրույթները: Դրանք բերված են համապատասխան հեղինակների հետազոտությունների հրապարակման տարեթվերի մոտավոր հաջորդականությամբ, թեեւ հնարավոր են շեղումներ այդ սկզբունքից, քանի որ որոշ հեղինակներ մի քանի անգամ են անդրադարձել Հայոց տառաձեւերի խնդրին: Այդ հետազոտություններն

⁸ «*Բայց համեմատության են դիմում եւ այն դեպքում, երբ ընդունվում է, որ ամբողջ այբուբենը Մաշտոցին է պատկանում: Դա անհասկանալի է:*» (Ա. Մարտիրոսյան, *Մաշտոց*, Եր., 1982, էջ 265):

⁹ P. Лолуа, *Месроп Маштоц и вопросы генезиса еркатигра II Abania Caucasica*, I, М., 2015, с. 200, 201.

եապես տարբերվում են միմյանցից թե՛ գիտական մոտեցումներով, թե՛ խորությամբ եւ թե՛ հայագիտության վրա թողած ազդեցությամբ:

1.1.1. Հրաչյա Աճառյան

Ինչպես նշել էինք, Հայոց գրերի մինչ այսօր ամենահիմնարար ուսումնասիրությունը Հր. Աճառյանինն է: Ցավոք, գրանշանների ձեւերի ծագումը վերլուծելու նրա սկզբունքները չափազանց հակասական են: Այսպես՝ մի կողմից տառաձեւերի փոփոխման պատճառը նա միանգամայն արդարացիորեն տեսնում է գրչարհեստի ազդեցության մեջ. «*Գրերը իրենց ձեւափոխության մեջ ենթակա են եղած միշտ հաջորդական վարձացման. ամեն վարձացում իր սկզբնապատճառն ունի. օրինակի համար՝ երբ ասում ենք, որ հույն գրերի բերանը բացված է հայերենում, դա գրչի թուլության քնական արդյունք է, վարձացման հաջորդական մի աստիճան: Երբ տեսնում ենք, որ մի տառի պոչը կտրված է, դա ավելի համառոտ գրելու կամ ժամանակի ընթացքում մաշվելու սկզբունքից է: Երբ տեսնում ենք, որ մի գծի ծայրին մի ավելորդ պոչ է ավելացել (օրինակ՝ *վեղական* **Ջ** գրի պոչը), սա էլ կարող ենք մեկնել աճման կամ վարդարուն գրելու հասարակ սկզբունքով (ինչպես է տաճկերենը կամ տաճկահայոց արդի ձեռագիրը): Բայց երբ ուզում են բոլորովին անկախ մի մաս ավելացնել մի գրի վրա, առանց որեւիցե պատճառի, դա մնում է անըմբռնելի»¹⁰: Մյուս կողմից, մոռանալով իր իսկ շարադրած վերոբերյալ սկզբունքն ու նաեւ գրի՝ տեղեկույթի փոխանակման գործառույթը, նա դիտում է գրանշանները որպես չհամակարգված տարրերի հավաքածո, որոնք կարող են ենթարկվել կամայական ձեւափոխությունների:*

Ցավոք, սա Հայոց գրանշանների գրեթե բոլոր հետազոտողների թույլ կողմն է: Այսպես, արտահայտվելով Ա տառի ծագման մասին, Հր. Աճառյանը գրում է. «*Հայերեն Ա ձեւը դուրս բերելու համար երեք շարժում ենք անում. առաջին շարժումով գծում ենք ձախակողմյան, երկրորդ շարժումով այս սյունը շարունակում ենք եւ գծում աջակողմյան սյունը. երրորդ շարժումով գծում ենք պոչը: Եթե այս երեք շարժումների կարգը փոխենք եւ առաջին շարժումից հետո անցնենք երրորդ շարժումին, կձեւանա վրացի գրի հիմնական մասը L, որ լրացնելու համար կմնա երրորդ շարժումով գծել աջակողմյան սյունը»¹¹: Սակայն նա չըջանցում է այն կարեւոր հարցը, թե ինչը պիտի ստիպեր Մաշտոցին վրացական տառերի դեպքում փոխել գրելու ձեւը, եթե նա ընդամենը մի քանի տարի առաջ ստեղծել էր հայերենի տառերը եւ որոշել նրանց գրելու կարգը: Դրա համար պատճառ չկար, ուստի նման մոտեցմամբ առաջնորդվող հետազոտողների միակ արդարացումն այն է, որ Մաշտոցը ձեւափոխել է վրացական տառաձեւերը, որպեսզի դրանք հայկականին չնմանվեն (տե՛ս մասնավորա-*

¹⁰ Հ. Աճառյան, *Հայոց գրերը*, Եր., 1984, էջ 522:

¹¹ Նույն տեղում, էջ 519:

պես ստորել՝ Յր. Աճառյանի վերլուծական սկզբունքների ա կետը), մի բան, որ հակասում է գրի գործառույթին: Դեռ կարելի էր հասկանալ վրացիներին, եթե նրանք ձգտեին ստեղծել հայկականից տարբերվող «ազգային» գիր, սակայն հակառակը տրամաբանական չէ:

Խոսելով *Բ* տառի ձեւի մասին, որը, ըստ Յր. Աճառյանի, ծագել է հունական *B*-ից, նա գրում է. «...հույն գրի աջակողմյան երկու կլոր դարձվածքները՝ հայերեն գեղագրության սովորական օրենքով (ինչպես մի քիչ վերել բացատրեցինք) բացված եւ ձեւացրած են մեր *Բ* գրի երկու թելերը: Այսօր էլ շատերն արդեն այնպես են գրում մեր գլխատառ *Բ* գիրը, որ գրեթե հունական կամ եւրոպական *B* գիրն է դառնում»¹²: Յր. Աճառյանի բացատրությունը սակայն համոզիչ չէ. մի՞թե այն փաստից, որ *Բ* գրելուց ոմանց մոտ ստացվում է *B*, կարող է հետեւել, որ *B* գրելիս էլ կարող է ձեւանալ *Բ*-ն: Ինչ վերաբերում է Յր. Աճառյանի հիշատակած գեղագրական օրենքին, ապա, ինչպես ստորել կտեսնենք, որ նման օրենք չկա: Այո՛, որոշ դեպքերում, հունական համապատասխան գրանշանի փակ գծի դիմաց ունենք բաց գծեր, բայց այլ դեպքերում, օրինակ՝ *Թ*-ի, փակ գծը պահպանված է: Եւ միակ օրենքը մնում է այն, որ արագ գրելիս գրողը չի կարող վերահսկել գրչի շարժումները եւ ճշգրտորեն վերարտադրել նախօրինակը, եւ եթե հետագայում որպես գրանշանի պաշտոնական (կոթողային) տարբերակ ընդունվի այս ձեւափոխված ձեւը, կունենանք «պարզացման հաջորդական մի աստիճան» եւս¹³:

Յր. Աճառյանի դատողությունների պատճառները հասկանալու համար անդադառնանք նրա հետազոտման սկզբունքներին: Ի դեպ, Յր. Աճառյանը մինչեւ այսօր կարծես թե միակն է մեր տառաձեւերն ուսումնասիրողներից, ով վերլուծական սկզբունքների մշակման փորձ է արել: Դրանք չորսն են¹⁴, սակայն չեն ընդգրկում խնդրի բոլոր կողմերը: Պատճառն այն է, որ սկզբունքների մեծ մասն ընկալվում է որպես հասկանալի եւ անվիճելի, սակայն՝ միայն առաջին հայացքից: Այդ սկզբունքների հանգամանալից բնությունը այլ եզրահանգումների է բերում: Զննենք դրանք:

Ա) «Մետրոպը հենց դիտմամբ կամ սկզբունքով նպատակ էր դրած հեռանալ բնատիպ տառերի կատարյալ նմանությունից»¹⁵: Կարծում ենք՝ բնատիպից հեռանալը որեւէ իմաստ չի կարող ունենալ, քանի որ եթե տառերը պիտի տարբերվեն բնատիպից, ապա ո՞րն է բնատիպ ունենալու իմաստը, եւ այդ դեպքում ինչպե՞ս կարող է հետազոտողը իմանալ, թե որն է բնատիպը. հետազոտությունը անիմաստ է դառնում: Ի դեպ, մեկ այլ դեպքում Յր. Աճառյանը շատ տեղին նկատում է. «Կարո՞ղ էր եւ

կամ պետք ունե՞ր Մետրոպը այս անհետացած այբուբենները երեւան հանելու եւ նրանցից օգտվելու հայերեն տառերի համար, մինչդեռ իր ձեռքի տակ պատրաստ ուներ մի խումբ այբուբեններ, որոնք իր հայրենակիցներին էլ մասամբ կամ ամբողջովին ծանոթ էին: Մեր կարծիքով ոչ»¹⁶: Ի՞նչ իմաստ կարող էր ունենալ «իր հայրենակիցներին ծանոթ» գրերից հեռանալը:

Բ) «Տառերը ապրում են. միեւնույն տառաձեւ ժամանակի ընթացքում այնքան է փոփոխվում, որ հաճախ անկարելի է ճանաչել եւ նորի մեջ հնի պատկերը տեսնել»¹⁷: Անկասկած: Խնդիրն այն է միայն, թե ի՞նչ միջոցներով եւ ո՞ր չափով է ժամանակն ազդում տառաձեւերի վրա¹⁸:

Գ) «... կան տառեր, որ ոչ մի նմանություն չունեն իրար հետ, կան էլ՝ որ չափապանց նման են: ... տառերը կապվում են մի քանի բնորոշ գծերից: ... Ուրեմն տառերի համեմատության մեջ անհրաժեշտ է գտնել նրանց էական կողմը եւ կարեւորությունը չտալ երկրորդական մասերին»¹⁹: Իրոք, պետք է «գտնել նրանց էական կողմը եւ կարեւորությունը չտալ երկրորդական մասերին»²⁰, սակայն հենց այստեղ գրանշանները հետազոտող բանասերները սայթաքում են, քանի որ, չտիրապետելով վայելչագրության արվեստին, հաճախ նշանակություն են տալիս գրանշանների ձեւավորչական առանձնահատկություններին՝ վերագրելով դրանց գրույթային արժեք²¹:

Դ) «...պետք չէ այլանիշ տառերը համեմատել նմանաձեւ տառերի հետ եւ նրանց մեջ ծագման նույնություն ենթադրել»²²: Միանգամայն ճիշտ է. սա այն կետն է, որը մենք ընդունում ենք անվերապահորեն²³: Յր. Աճառյանի դրույթների գերակշիռ մասը (բացի առաջինից, որը, սակայն, չափազանց կարեւոր է) ընդունելի է, եւ մեր կարծիքով՝ նրան մեկ քայլ էր մնում՝ տեսնելու Չայոց տառաձեւերի ծագման աղբյուրը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր պարզապես ընդունել Մաշտոցի ժամանակակիցների հաղորդումներն այն մասին, որ Մաշտոցից առաջ եղել են հայկական գրեր, ինչպես նաեւ միջնադարյան մեր պատմիչների հաղորդումներն այն մասին, որ Չայոց այբուբենի հիմքում Մաշտոցը դրել է դանիելյան համարված գրերը: Թեեւ Յր. Աճառյանը բերում է պատմիչների տասից ավելի վկայություն այն մասին, որ Մաշտոցը Չայոց գրերի հիմքում դրել է դանիելյան գրերը, սակայն անտեսում է դրանք: Պատճառը կարելի է բացահայտել այս մեջբերմամբ. «Մետրոպին մասնակի գյուտ վերագրելու գաղափարը առաջին անգամ ծագում է Չայոց մեջ՝ Ժ դարում (Ասողիկի

¹² Նույն տեղում, էջ 509:
¹³ Նույն տեղում, էջ 516:
¹⁴ Տե՛ս «Ինչո՞ւ են փոխվում տառաձեւերը, եւ ինչպե՞ս է ապահովվում դրանց կայունությունը» գլուխը:
¹⁵ Յ. Աճառյան, Նշվ. աշխ., էջ 517:
¹⁶ Նույն տեղում:
¹⁷ Տե՛ս «Գրչարիեստը եւ գրույթը» եւ «Ինչպե՞ս պիտի համեմատվեն գրանշանները» գլուխները:
¹⁸ Յ. Աճառյան, Նշվ. աշխ., էջ 517:
¹⁹ Տե՛ս «Ինչպե՞ս պիտի համեմատվեն գրանշանները» գլուխը:

մոտ): ... Սկզբում Մեսրոպի ավելացրած տառերի թիվը 7 է համարվում, բայց առանց որոշելու, թե ինչ տառեր են: Երկու երեք դար հետո՝ թիվը բարձրանում է 14-ի (ինչպես ունեն Սասնեցին եւ Վարդանը) ... Քիչ հետո գալիս են Գանձարանն ու Ոսկեփոփկը, որոնք խաբվելով 7 գաղափարաց փոփոխությամբ ենթադրում են, թե Մեսրոպի հնարած գրերը ձայնավորներն են: Վերջապես գալիս է Վարդանագիրքը, որ խայտառակ մի պատմություն է հերյուրում...

Խնդիրն այսպես ամփոփելուց հետո հարցնում ենք. իրավացի՞ է արդյոք մի կողմ գցել հնագույն եւ գրի գյուտին ժամանակակից պատմիչներին եւ 600 կամ 800 տարի հետո եկող անձերի պատմածին կարելորություն տալ ... այն էլ կամայաբար մեկին կամ մյուսին հետեւելով: Եթե խնդիրը ներքին պահանջներ ունենար, այն ժամանակ հնարավոր էր թերեւս լսել հետին պատմիչներին. բայց այսպիսի պահանջ չկա: Եթե Մեսրոպը հասկացավ, որ խաբեության կամ սխալմունքի փոխ է գնացել, թե Դանիելյան գրերը հայերեն չեն, այլ եւս ինչո՞ւ պիտի պահեր այդ ձեւերը: Կորյունը իր գրքի սկզբում գրում է. «Չմսքանապետն ազգին եւ Հայաստան աշխարհին պատվածապարգէլ գրոյն...»: Եթե մեր գրերը Դանիելի ուղարկածներն են եւ մի քանի հատը միայն Մեսրոպն է գտել, էլ ի՞նչ «ասքանապետն ազգ», «Հայաստանն աշխարհ», կամ «պատվածապարգէլ գիր». թող ասեր «պատրական ազգին եւ Միջագետաց աշխարհին պատվածապարգէլ գրոյն...»: Ով որ աչք ունի համեմատելու հայերեն, ինչպես նաեւ հին վրացերեն գրերը, պարզ կտեսնի, որ սրանք մեկ ոճ, նկարչական մեկ գրություն ունեն, հետեւաբար եւ մեկ ձեռքի շնորհք, միեւնոյն մարդու ձեռակերտն են: Երկու գրություն, երկու տարր, մեկը Դանիելյան եւ մյուսը Մեսրոպյան՝ չկա այնտեղ»²⁴:

Այս հատվածին կանդիդատանսն ստորեւ եւ կմեկնաբանենք Նախամաշտոցյան գրին վերաբերող գլուխներում:

Դանիելյան գրերի ընդունման խնդիրն առանցքային է Հայոց գրերի աղբյուրը որոշելու հարցում: Հր. Աճառյանը գրում է. «Այն հեղինակները, որոնք հայերեն գրերին տալիս են փյունիկյան, արամական կամ պալմիրական ծագում, հավատում են դանիելյան գրերի գոյության, որով չափապանց մոտենում են կամ նույնիսկ ժամանակակից են դառնում այն գրերին: Բայց որովհետեւ մեկ համար դանիելյան հայ գիր ու գրականություն գոյություն չունի, ուստի հայ գրերն էլ չեն կարող փյունիկյան, պալմիրական կամ արամական ծագում ունենալ»²⁵:

Ինչպես տեսնում ենք, դանիելյան գրերը հայկական գրերի մաս չդիտելու միակ պատճառն այն է, որ ունանց թվում է (ու թերեւս Հր. Աճառյանը պատկանում է նրանց շարքին), թե Նախամաշտոցյան հայ գրի գոյությունը վիրավորանք է հասցնում Մաշտոցին ու նսեմացնում նրա կատարածը (էլ ի՞նչ «ասքանապետն ազգ»,

²⁴ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 491:

²⁵ Նույն տեղում, էջ 510:

«Հայաստան աշխարհ», կամ «աստվածապարգէլ գիր». թող ասեր «պատրական ազգին եւ Միջագետաց աշխարհին պատվածապարգէլ գրոյն...»): Սակայն, մի կողմից, խնդիրը վերաբերում է իրականության գիտական բացահայտմանը, եւ այստեղ հուկականությունն անտեղի է, բացի այդ՝ ստեղծագործողին հազիվ թե հաճելի լինի, որ իրեն վերագրվեն գործեր, որոնք նա չի կատարել, թեկուզ դրանք շատ պատվաբեր լինեն, իսկ մյուս կողմից, անտեսվի նրա իրական ներդրման բաժինը: Այսինքն, վերագրելով Մաշտոցին ավելին, քան նա արել է Հայոց գրերը ստեղծելու գործում, մոռացվում է նրա տաղանդի մեկ այլ եւ, մեր կարծիքով, ոչ պակաս կարեւոր կողմը՝ դիվանագիտական ծիրքը²⁶, որի շնորհիվ միայն նրան հաջողվեց հաղթական ավարտի հասցնել իր գործը:

Գաղափարաբանական հսկայական հակազդեցության պայմաններում, երբ դեռ նոր էր հաստատվել քրիստոնեական կրոնը, եւ ազգային ամեն ինչը սվիններով էր ընդունվում վերապային գաղափարներով առաջնորդվող հոգեւորականների կողմից, երբ այդ հոգեւորականության վերնախավի շրջանում հսկայական ազդեցություն ունեին այլազգի՝ հույն ու ասորի պաշտոնյաները, Մաշտոցը կարողացավ ոչ միայն բարձրացնել Հայոց գրերի խնդիրը (թող որ իր կրոնի կարիքներից ելնելով), այլեւ հասնել իր ծրագրի իրականացմանը:

Ի դեպ, գրանշաններ հորինելն առանձնապես մեծ շնորհք չի էլ պահանջում: Յուրաքանչյուր մարդ օրական կարող է 10-20 այբուբենների գրանշաններ հորինել: Խնդիրը տվյալ գրանշաններին հոգի տալն է: Այսինքն՝ մի կողմից դա հնչյունական խնդիրների լուծում է, ու քանի որ Հայոց այբուբենին ներկայիս տեսքը հաղորդել է Մաշտոցը, պետք է եզրակացնել, որ այդ գործի վերջնական փուլը հենց նա է կատարել, իսկ մյուս կողմից՝ դեռ պետք էր կազմակերպել ուսուցչապետական եւ թարգմանչական գործերը, որոնք նա նույնպես հաղթական ուղու վրա դրեց: Սա, մեր կարծիքով, շատ ավելի լուրջ ծառայություն է, քան այն, ինչ նրան փորձում են վերագրել²⁷, մանավանդ որ (դա ասում ենք արդեն որպես տառաստեղծության մասնագետ) Հայոց գրանշանները գործառնության լուրջ խնդիրներ են հարուցում՝ կապված շարվածքի եւ ընթեռնելիության հետ:

1.1.2. Աշոտ Աբրահամյան

Ա. Աբրահամյանն անդրադարձել է Հայոց գրի հարցին իր մի շարք աշխատություններում: Նա գրային համակարգերի բարեշրջական գոյացման կողմնակից է, եւ ընդունում է, որ «այբուբենները մտացածին ձեւով, անգոյական չեն ստեղծվում. նրանք մեծ կամ փոքր փոփոխություններով կապվում են իրար հետ, մեկը՝ սկիզբ առնում

²⁶ Այդ ծիրքի մասին հատուկ տե՛ս Ա. Յակոբեան, Մաշտոցի երկրորդ հիսախային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները // Միջագային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երեւան, 2005 թ.), Չեկուցումների ժողովածու, Եր., 2006, էջ 122-131:

²⁷ Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր՝ «Արտակարգ եւ լիազոր դեսպանը» գլխում:

մյուսից»²⁸: Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք Մաշտոցն օգտագործել է դանիելյան գրերը, նա տալիս է դրական պատասխան: Նա գտնում է, որ Հայոց այբուբենը երկշերտ է՝ բաղկացած Դանիել Ասորու գրերից, որոնք նա կազմել էր հունական գրի հիման վրա, եւ Մաշտոցի հավելած 12 տառերից, որոնք նա վերցրել է հունական, արամեական եւ ասորական տառանիշերից: Ընդ որում՝ Ա. Աբրահամյանը կարծում է, որը Դանիելը «հունական որոշ տառեր շուտ է տվել այս կամ այն կողմը, որոշ տառերի ելուններ է ավելացրել, ձեւափոխել է սյունագծերը եւ այլն»²⁹:

Թե ինչու է նա այդպես վարվել, գիտնականը չի մանրամասնում, իսկ ահա Մաշտոցին վերագրում է հետեւյալ մոտեցումը. «...հունական, արամեական եւ ասորական տառանիշերը Մաշտոցը տառացի չի պատճենահանել, այլ դրանք ենթարկել է հիմնական ձեւափոխությունների: Այդ ձեւափոխությունն այնքան մեծ է, որ որոշ տառերի մայրերը մինչեւ այժմ դժվար է լինում ուղղությամբ որոշել: Մաշտոցը որոշակի սկզբունք է ունեցել. չվերցնել այլ այբուբենից ոչ մի տառ, եթե այն չի ենթարկվում ձեւափոխությունների: Այդ նպատակին հասնելու համար նա կատարել է հետեւյալ ձեւափոխությունները. ա) բաց է արել նախատիպ տառերի շրջագծերը, բ) տառերի մեծ մասի աջ կողմից վայրահակ թեւեր է ստեղծել, գ) ոճական նմանություն ունեցող տառերի վրա կլորներ է ստեղծել, դ) շեղ եւ կիսաբոլոր գծերին ուղղորդ եւ հորիզոնական ձեւեր է տվել, ե) սյունագծերն իրար եւ իրենց թեւիկներին է միացրել կլոր գծիկներով»³⁰: Ըստ Ա. Աբրահամյանի՝ Մաշտոցն այսպես է վարվել միայն այն տառանիշերի դեպքում, որոնց համապատասխանող հնչյունները կային այլ այբուբեններում: Իսկ արդեն հայերենին հատուկ հնչյունների դեպքում նա այլ կերպ է վարվել. «...դրանց համար նա տառանիշեր է ստեղծել հայկական առկա տառերի հիման վրա եւ մեծ մասամբ դրել այն տառի կողքին, որից նա ստեղծել է»³¹: Ա. Աբրահամյանի կարծիքով՝ այդ մոտեցման արդյունքում «Գ-ն դրվել է Դ-ի մոտ, Թ-ն՝ Ժ-ի, Է-ն՝ Ը-ի, Ն-ն՝ Ծ-ի, Ռ-ն՝ Զ-ի, Ս-ն՝ Կ-ի: Բացառություն են կազմում Ի-ից առաջացած Խ-ն, Լ-ից առաջացած Դ-ն եւ Բ-ից առաջացած Ռ-ն, որոնք հեռացվել են իրարից՝ նույնահնչյուն տառանիշերը չչփոթելու համար»³²:

Ստորեւ ներկայացված է հայկական տառերի գոյացումն ըստ Ա. Աբրահամյանի: Ձախից տրված են Ե դարի հունական տառերը, որոնք, ըստ նրա, մայրեր են հանդիսացել հայկական տառերի համար, դրանց աջ կողմում՝ նույն դարի հայկական տառերն են, իսկ աջ սյունակում հակիրճ նկարագրված են այն փոփոխությունները, որոնք հեղինակի կարծիքով կատարել է Մաշտոցը՝ ձեւավորելու համար Հայոց տառերը:

²⁸ Ա. Աբրահամյան, Հայոց գիր եւ գրչություն, Եր., 1973, էջ 48:

²⁹ Ա. Աբրահամյան, Հայ գրի եւ գրչության պատմություն, Եր., 1959, էջ 58:

³⁰ Ա. Աբրահամյան, Հայոց գիր եւ գրչություն, էջ 49:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում, էջ 52:

հունական
Վայրեր
V դարի

Ա	Ա	- Կտրված է ալֆայի վերեւից:
Բ	Բ	- Կտրված է բետտայի աջ երկու դարձվածքները:
Գ	Գ	- Գամմայի առջեւից կլոր է ավելացված:
-	Դ	- Ծագել է հայկական «Գ»-ից:
Ե	Ե	- Կտրված է վերին կտուցը:
Զ	Զ	- Չետտայի վերեւում կլոր է միացված:
Ը	Ը	- Կտրված է էտտայի աջ սյունագիծը եւ ձախից պոչ ավելացված:
-	Թ	- Ծագել է հայկական «Է»-ից:
Ս	Ս	- Թետտայի կլորը բաց է արված:
-	Ճ	- Ծագել է հայկական «Թ» տառից. նրանից աջ կտրված թեւն է:
Լ	Լ	- Իտտայի սյունագծին թեւ է ավելացված:
Լ	Լ	- Շուտ է տրված լամիա տառը:
-	Բ	- Ծագել է հայկական «Լ»-ից:
-	Ծ	- Ծագել է հայկական «Ծ»-ից:
Կ	Կ	- Կտրված է կապայի աջ թեւվածքի եւ սյունագծի կետը:
-	Կ	- Ծագել է հայկական «Կ»-ից:
-	Չ	- Ծագել է հայկական «Չ»-ից:
-	Չ	- Ծագել է հայկական «Լ»-ից:
Ճ	Ճ	- Դելտայի վերեւից փոքրիկ պոչիկ է ավելացված:
Մ	Մ	- Շուտ է տրված մու տառը եւ ելուն ավելացված:
Յ	Յ	- Օմեգան նստեցված է:
Ն	Ն	- Նստեցված է նու տառը եւ վրան ելուն դրված:
Ճ	Ճ	- Կտրված է բսի տառի վերին բարդությունը:
Օ	Օ	- Կտրված է օ-միկրոնի ներքեւից:
-	Չ	- Ծագել է հայկական «Ռ»-ից:
Ո	Ո	- Պիի վերին գիծը երկարացված է եւ կեռ ստեղծված:
-	Ճ	- Ձեւված է հունական koppa-յի (90-ի թվանշանագրի հիման վրա):
-	Ռ	- Կապված է երկու «ր»-երի միացումից:
Ս	Ս	- Սիգման նստեցված է:
Կ	Կ	- Ձեւված է պսիի հիման վրա:
Դ	Դ	- Վերին ձախ թեւը կտրվել է եւ ավելացվել վերեւից:
Բ	Բ	- Բոյի վերին կլորը բաց է արված:
-	Ց	- Կապված է հունական sampi (900-ի թվանշանագրից):
Կ	Վ	- Ձախ թեւը սյունագիծ է դարձված, իսկ աջը վեր է ածված թեւի:
Փ	Փ	- Կապված է անշան փոփոխություններով:
Մ	Ք	- Ուղղահայաց ձեւ է տրված եւ վրան գլուխ դրված:

Հայոց տառերի կազմությունն ըստ Ա. Աբրահամյանի³³:

³³ Տառաձեւերը եւ հունական տառանունները բերված են ըստ՝ Ա. Աբրահամյան, Հայ գրի եւ գրչության պատմություն, էջ 59-60:

Բերված պնդումները չափազանց խոցելի են: Ցավոք, նման կարծիքներ հաճախ են արտահայտվում: Դրանց մենք անդրադառնում ենք «Գրանշանների արտաքին ձեռի վերլուծման սկզբունքները» բաժնում: Այստեղ նշենք միայն մի բանի նկատառում: Եթե ձեռագիրություններն այդքան մեծ են, որ տառերի մայրերը դժվար է որոշել, ապա ինչպե՞ս կարող ենք պնդել, որ գործ ունենք հենց ենթադրվող նախորինակների հետ, եւ որ Մաշտոցը վարվել է դրանց հետ այն կերպ, ինչպես նկարագրում է Ա. Աբրահամյանը: Եթե պիտի նախորինակները անճանաչելիության աստիճանի ձեռագիրովեին, ապա ինչի՞ համար էին դրանք անհրաժեշտ: Փ-ն առհասարակ լիովին համընկնում է հունական Ֆի-ին, որը հակասում է Ա. Աբրահամյանի՝ «չվերցնել այլ այբուբենից ոչ մի տառ, եթե այն չի ենթարկվում ձեռագիրությունների» սկզբունքին, եւ նա ստիպված է եղել խոսել «աննշան փոփոխությունների» մասին՝ չբացատրելով, թե որոնք են դրանք: Ինչ վերաբերում է հայկական առկա տառերի հիման վրա ստեղծված տառերին, ապա [q]-ն եւ [ŋ]-ն ամենեւին էլ միայն հայերենին հատուկ հնչյուններ չեն, որպեսզի մեկը մյուսից կազմվեին. երկուսն էլ կան հունարենում, ուստի եւ, ըստ Ա. Աբրահամյանի, պիտի ներառվեին նաեւ Դանիելի կազմած այբուբենում: Եթե Է-ն ու Ը-ն, իրոք, այնքան մոտ են թե՛ հնչյունային եւ թե՛ գծապատկերային տեսանկյունից, որ կարելի է նման վարկած առաջ քաշել, ապա ենթադրել, որ Ը-ն նման է Լ-ին, Զ-ն՝ Ռ-ին, կամ Ը-ն՝ Կ-ին, հնարավոր է միայն հայկական վայելչագրությանը չտիրապետելու դեպքում (մոտավորապես նույն կարծիքին էր նաեւ Զր. Աճառյանը): Վերջապես, եւս երեք զույգերի համար նոր սկզբունք առաջարկելը չափազանց թուլացնում է Ա. Աբրահամյանի առաջարկած ամբողջ համակարգը, մանավանդ որ Ի-ն եւ դրանից առաջացած Խ-ն ոչ մի կերպ չեն կարող «նույնահնչյուն» թվալ, որ Մաշտոցը անհրաժեշտ գտներ դրանք տարբերակել:

Այնուհանդերձ, Ա. Աբրահամյանը շատ դեպքերում ճիշտ է նկատել Զայոց տառերի ծագումնաբանական կապերը, ինչը պարզ կդառնա հետագա շարադրանքից:

1.1.3. Գուրգեն Սեւակ

Գ. Սեւակը Զայոց գիրը եթովպական գրից բխեցնելու վարկածի կողմնակիցն էր³⁴: Նրա տեսակետները, որոնց հիմքում, ըստ էության, պատմահամեմատական եղանակի մերժումն է, չափազանց սկզբունքային են, եւ այս հետազոտության տարբեր հատվածներում («Ինչպես պետք է համեմատվեն գրանշանները» եւ «Զայոց եւ եթովպական գրերի հարաբերությունը») մենք այս կամ այն կերպ անդրադառնում ենք դրանց, այդ իսկ պատճառով այստեղ դրանք չենք դիտարկում:

³⁴ Գ. Սեւակ, *Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները եւ աղբյուրները* // «Մեսրոպ Մաշտոց», Եր., 1963, էջ 163-208:

Պետք է ասել, որ պատմահամեմատական եղանակը, որը սովորաբար ընկալվում է սոսկ որպես լեզվաբանական հասկացություն, իրականում համագիտական քննյոթ ունի: Զետագոտել իրականության որեւէ դրսեւորում նշանակում է համեմատել այն այլ երեւոյթների հետ՝ գտնելու համար դրանց ընդհանրությունները, որոնք կայուն են եւ ոչ պատահական, այսինքն՝ կրկնվում են ժամանակի (պատմության) մեջ, այլ կերպ ասած՝ որոշակի *օրինաչափությունների* դրսեւորում են ներկայացնում: Եւ հակառակը, սոսկ պատահական, պատմականորեն չհաստատվող երեւոյթների հիման վրա եզրակացություններ անել, նշանակում է իրականությանը վերագրել նրան ոչ բնորոշ հատկություններ:

Ինչ վերաբերում է Զայոց գրանշանները եթովպական գրերից դուրս բերելու տեսությանը, որը հիմնվում է որոշ նշանների արտաքին նմանության վրա (այս տեսության հայտնվելու պատճառների մասին նույնպես կխոսվի), ապա այն ներկայումս էլ կողմնակիցներ ունի: Օտարազգի գիտնականներից այս տեսակետը պաշտպանել են Դ. Օլդերոգգեն «Զայ-եթովպական կապերի պատմությունից (Մաշտոցի այբուբենը)» հոդվածում³⁵ եւ Ա. Բեքերին «Եթովպական գրային համակարգերի՝ հայկական այբուբենի ստեղծման վրա հնարավոր ազդեցության պատմական տեսություն» հոդվածում³⁶:

1.1.4. Դմիտրի Օլդերոգգե

Դ. Օլդերոգգեն (որին հղում է նաեւ Ա. Բեքերին), նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դ-Ե դարերում եթովպական Աթումի պետությունը վերելք էր ապրում, կարծում է, որ Մաշտոցը չէր կարող չիմանալ այդ քրիստոնեական երկրի գոյության մասին, հետեւաբար կարող էր տեսած լինել նաեւ այդ երկրի լեզվով գրված փաստաթղթեր: Դրանից բացի՝ նա անդրադառնում է նաեւ կրոնա-քաղաքական հանգամանքներին, երբ Եփեսոսի եւ Քաղկեդոնի ժողովներում դատապարտվեցին նեստորականությունն ու միաբնակությունը եւ հակաքաղկեդոնական մեկ ճամբարում հայտնվեցին հայերը, ղպտիներն ու եթովպացիները:

Պետք է նկատել, որ այս պնդումներն այնքան էլ համոզիչ չեն. Մաշտոցը կարող էր տեսած լինել տասնյակ երկրների լեզուներով գրված փաստաթղթեր, եւ ինչո՞ւ հենց եթովպականները պիտի գրավեին նրան, եւ նա, թողնելով քրիստոնյա հարեւան ազգերի գրերը, որպես հիմք ընտրեր այդ հեռու երկրի գիրը: Ինչ վերաբերում է քաղկեդոնականության հարցին, ապա նշված դեպքերը տեղի ունեցան Զայոց այբուբենի ստեղծումից կես դար անց, ու թեեւ Քաղկեդոնով ավարտված

³⁵ Д. Ольдерогге, *Из истории армяно-эфиопских связей (Алфавит Маштоца)* // Древний Восток: Сб. 1, М., 1975; <http://iatp.am/news/digest/digest9/olderoge.pdf>.

³⁶ А. Bekerie, *Historical Overview of Ethiopic Writing System's Possible Influence on the Development of the Armenian Alphabet* // International Journal of Ethiopian Studies, Vol. 1, № 1 (Summer/Fall 2003), p. 33-58.

իրադարձությունները ունեին նախապատմություն, փաստեր չկան՝ պնդելու, թե դրանք կարող էին կանխորոշիչ լինել Հայոց գրերի նախորինակն ընտրելիս:

Ինչպես Գ. Սեւակը, Դ. Օլդեռոզգեն եւս ուշադրություն է դարձնում հայկական տառերին բնորոշ հորիզոնական գծիկներին, որով մի տառը տարբերվում է մյուսից, ինչպես ինքն է կարծում, եթովպական գրի ձեւով³⁷: Նա գտնում է, որ Հայոց այբուբենի 22 կամ 23 տառերը, այսինքն՝ շուրջ 2/3-ը պատկանում են հենց այդ խմբին, սակայն հայերենին հատուկ *Չա, Չա, Չէ, Ցո, Զէ* տառերն այդ խմբից չեն: Հեղինակը նկատում է նաեւ, որ ձեւով համընկնող հայկական եւ եթովպական գրանշաններն ամբողջովին տարբերվում են հնչյունային արժեքներով:

Այս բոլորից հետո Դ. Օլդեռոզգեն անում է անսպասելի եզրակացություն. «Ուրեմն Հայոց այբուբենը ստեղծելիս Մաշտոցն իմացել է եթովպական գրի սկզբունքները»³⁸: Նշելով, որ գծիկները եւ օղակները եթովպական գրում հնչյունավորիչ դեր են կատարում, նա հայտարարում է, որ նույն ձեւով են կառուցված նաեւ հայկական տառերը՝ «գծիկների եւ օղակների հավելմամբ՝ տառի հիմնական ուրվագծին»³⁹, սակայն առանց հնչյունավորման հետ կապի, քանի որ Հայոց գրում դրա անհրաժեշտությունը չկար: Թե ինչու է այդ դեպքում նա կարծում, որ կիրառված է «նույն» սկզբունքը, եւ թե որն է «տառի հիմնական ուրվագիծը», Դ. Օլդեռոզգեն չի մանրամասնում:

Ինչպես կտեսնենք ստորեւ, Դ. Օլդեռոզգեն միակը չէ, որ նկատել է Հայոց գրանշանների այդ հատկությունը՝ գծիկների առկայությունը՝ անելով դրանից չբխող հետետություններ: Նույն ուղիով է շարժվել նաեւ Ս. Մուրավյովը, ով, սակայն, փորձել է պարզել, թե ինչը կարող է համարվել հայկական տառերի «հիմնական ուրվագիծը»:

1.1.5. Էդուարդ Աղայան

Է. Աղայանը Հայոց գրերի խնդրին անդրադարձել է մի շարք գործերում: Նա նախամաշտոցյան հայերեն գրի գոյությունը ժխտողներից է, իսկ որպես մեսրոպյան տառերի նախորինակ համարում է հիմնականում հունական տառերը՝ պահլավական եւ ասորական որոշ տառերի հավելմամբ: Այս մասին նա գրում է. «Ուսումնասիրելով մեսրոպյան տառերը՝ մենք կարողացանք պարզել հայերեն գրերի ձեւավորման կամ, որ նույնն է, նախատիպարների ձեւափոխությունների հետեւյալ սկզբունքները՝ ա) բացել է նախատիպարների շրջանակները (օր. Ռ, Ս). բ) կլորակները (շրջանակներ) պահել է այն դեպքում միայն, եթե դրանց ավելացրել է թեւեր վերելից, ներքելից կամ

միջից (օր. Զ, Գ). գ) ուղղահայաց գծերը միացրել է կոր գծիկով եւ ոչ մի դեպքում չի դիմել ուղիղ գծիկի օգնությանը. դ) տառերի հիմնական գծերին վերելից, ներքելից կամ միջից կցված աջակողմյան թեւիկներն անխտիր վերջավորել է դեպի ցած հակված ելունով, իսկ ձախակողմյան թեւիկները՝ սուր կամ բութ սայրով (օր. Է, Լ, Մ, Ծ, Զ). ե) ոչ մի տառի ձեւում եռանկյունի չի պահպանել, մի բան, որ հատուկ էր հունական տառերին. Վ) բոլոր սյունագծերը ուղիղ են, առանց կորության կամ թեթւության (օր. Ս, Ի, Ռ): Այս սկզբունքների գործադրությունը ցույց տալու համար իբրեւ օրինակ վերցնենք մեսրոպյան այբուբենի մի քանի տառեր. Բ տառի նախատիպն է Ե. առաջին սկզբունքի համաձայն բացված են շրջանակները (Ե) [տպագրված է այսպես - Ռ. Թ.] եւ չորրորդ սկզբունքի համաձայն ցածի մասը փոխարինել է միջին թեւով: Թ տառը կապվել է հունարեն Թ-ից. առաջին սկզբունքով բացել է շրջանակը (Թ) [տպագրված է այսպես - Ռ. Թ.], երրորդ սկզբունքով՝ միջի ուղիղ գիծը կորացրել (Թ), երկրորդ սկզբունքով՝ շրջանակին թեւիկ ավելացրել (Թ) եւ չորրորդ սկզբունքի համաձայն՝ դեպի վայր հակված ելունով ավարտել (Թ)»⁴⁰: Եւ ահա, օգտագործելով այս սկզբունքները, Է. Աղայանը փորձում է որոշել, «թե մեսրոպյան այբուբենի որ տառը որ այբուբենի (հունական, ասորական եւս) համապատասխան տառից է ձեւավորվել»⁴¹:

Ինչպես երեւում է վերոբերյալից, Է. Աղայանը տարբերություն չի դնում «ձեւավորում» եւ «ձեւափոխում» հասկացությունների միջեւ, թեւ պարզ չէ, թե ինչ է նա հասկանում ասելով «ձեւավորում»: Հազիվ թե՝ «գոյացում, առաջացում»⁴². համենայն դեպս իր հեղինակած բառարանում տեսնում ենք միայն «որեւէ բանի տրված արտաքին տեսք՝ ձեւ»⁴³ իմաստը: Իհարկե, ցանկացած ձեւավորում ձեւափոխում է ենթադրում, սակայն ամեն մի ձեւափոխում ձեւավորում չէ: «Ձեւավորումը» զեղազրական հասկացություն է. ձեւավորման արդյունքում գրանշանը կարող է եսպես փոխվել, սակայն պետք է պահպանի իր գրույթային արժեքը, այսինքն՝ ճանաչվի որպես տվյալ ինդիվիդուս համապատասխանող գրանշան, մինչդեռ պարզապես «ձեւափոխություն» արդյունքում գրանշանը կարող է անճանաչելի դառնալ: Եւ իրոք, Է. Աղայանի ստաջին սկզբունքն առավելապես վերաբերում է գրույթային ձեւափոխություններին (թեւեւ շրջանակները կարելի է բացել այնքան աննշան կամ ինչ-որ հնարքի կիրառմամբ, որ գրանշանի գրույթային կերպարը չի փոխվի), մինչդեռ չորրորդ սկզբունքը՝ «թեւիկների» «դեպի ցած հակված ելունով» կամ «սուր կամ բութ սայրով» վերջավորելը (տառարվեստի եզրերով՝ գծափակոցով ավարտելը) զուտ ձեւավորչաբան է: Առհասարակ, գծափակոցներին գրույթային արժեք վերագրելը բավական ստորաձեւավորում է տառարվեստի հնարքներին անձանոթ հետազոտողների շրջանում:

⁴⁰ Է. Աղայան, *Մեսրոպյան այբուբենը եւ ուղղագրությունը* // «Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, Եր., 1963, էջ 70:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969:

⁴³ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Եր., 1976:

³⁷ «...некоторые буквы отличаются друг от друга добавлением черточек по принципу эфиопского алфавита» (Է. Ольдерегге, նշվ. աշխ.).

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում:

Անդրադառնալով հունարենում համապատասխանություն չունեցող տառերի հարցին՝ Է. Աղայանը կարծում է, որ Մաշտոցը «իրեն կանոն, դրանք ձեռն է իր հորինած հայերեն տառերից. այդ ձեռով հորինված տառերն են՝ դ, ը, ժ, լ, խ, չ, ո, վ»⁴⁴: Չե-տաբար է այս շարքում Դ-ի հայտնվելը. հունական այբուբենում այն կա, սակայն այլ հետազոտողների պես Է. Աղայանն էլ կարծում է, որ Դ-ն ստեղծված է ոչ թե փոխառյալ բնօրինակից, այլ նախապես ստեղծված Գ-ից⁴⁵, մի բան, որ կրկին ցուցադրում է հետազոտողների՝ ձեռավորչական ազդեցություններին (դրանք, իրոք, պետք է որ եղած լինեին, թեև հակառակ ուղղությամբ) գրույթային նշանակություն վերագրելու սովորությունը: Մեկ այլ տեղ նա գրում է. «Հունարենի երրորդ տառն է գամման (γ), որի դիմաց Մեսրոպյան ստեղծեց հայերեն Գ. եթե ընդունենք, թե այս տառը հունական նախատիպարից է, ապա պետք է ասենք, պահել է սյունագիծը, հորիզոնական աջակողմյան գիծն իջեցրել է ցած՝ սյունագծի միջին մասը, վերեւից ծախակողմյան շրջանակ (օղ) ավելացրել. ավելի հեշտ չէ՞ր Բ-ի վերին մասը շրջել ու փակել (շրջանակ դարձնել): Դ-ն հայտնապես նույն Գ-ն է՝ շրջանակը բացած»⁴⁶: Այսինքն, Դ-ն կազմված է Գ-ից, որն էլ իր հերթին կազմված է Բ-ից: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Է. Աղայանի կարծիքով՝ այբուբեն ստեղծելը գծանկարային զբաղմունք է՝ հնչյունական, գործառութային, քաղաքական, գաղափարաբանական եւ այլ գործոններից անկախ:

Ինչ վերաբերում է այդ տառերի այբբենական կարգին, ապա, ըստ Է. Աղայանի, «հունարենում, պահլավերենում կամ ասորերենում չեղած տառերը Մեսրոպը հորինել է մյուս տառերի ձեռնափոխությամբ եւ վետեղել է մեր այբուբենի այն տառերից հետո, որոնց նմանությամբ հորինել է այդ չեղյալ տառերը»⁴⁷: Ինչպես կտեսնենք ստորեւ, նույն օրինաչափությունն է տեսնում նաեւ Պ. Պողոսյանը, մի օրինաչափություն, որը եթե իրական լիներ, պիտի նշանակեր, որ Մեսրոպը ստեղծել է այդ տառերը՝ չկապելով դրանք նախօրինակների հնչյունային արժեքներին, մինչդեռ հունարենից վերցված տառերի դեպքում հետեւել է դրանց: Այսինքն՝ միաժամանակ կիրառել է սկզբունքորեն տարբեր երկու հնարքներ:

1.1.6. Սերգեյ Մուրավյով

Ս. Մուրավյովն անդրադարձել է Հայոց գրերի ձեւաստեղծման հարցին մի շարք աշխատանքներում, այդ թվում՝ «Հայոց այբուբենի նախահամակարգի մասին»⁴⁸ եւ «Դանիելյան գրանշանները»⁴⁹ հոդվածներում եւ «Երկաթագիրը, կամ ինչպես է ծնվել

⁴⁴ Նույն տեղում, էջ 75:

⁴⁵ Նույն տեղում, էջ 72:

⁴⁶ Է. Աղայան, Մեսրոպ Մաշտոց, Եր., 1986, էջ 86:

⁴⁷ Է. Աղայան, Մեսրոպյան այբուբենը եւ ուղղագրությունը, էջ 76:

⁴⁸ С. Муравьев, О протоцистеме армянского алфавита // ИФЖ, 1980, № 2.

⁴⁹ S. Mouraviev, Les caractères daniéliens (identification et reconstruction); Les caractères mesropiens (Leur genèse reconstituée) // Revue des Études Arméniennes, NS, t. XIV, Paris, 1980.

Հայոց այբուբենը»⁵⁰ գրքում, որոնք որոշակի հետաքրքրություն են առաջացրել հասարակության շրջանում⁵¹, թեև կիրառված մոտեցումները չափազանց խոցելի են:

Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ
Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Զ	Զ	Զ	Զ	Զ	Զ
Է	Է	Է	Է	Է	Է
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
Ճ	Ճ	Ճ	Ճ	Ճ	Ճ
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Կ</					

մասը համապատասխանում է հունական այբուբենի տառերին: Սրանից բացի՝ Ս. Մուրավյովը պնդում է, որ այդ խմբի տառերը բաղկացած են երկու տեսակի մասնիկներից՝ հիմնական՝ պայտանման ու կեռանման գծերն ու ուղղաձիգ ծողը, եւ երկրորդական՝ հորիզոնական գծերը, որոնք ունեն այն հատկությունը, որ հունական տառերի կարգով դրանցից 20-ը դասավորելու դեպքում կազմում են չորս սյունակներ, որոնցում այդ կառուցվածքային տարրերը կրկնվում են՝ հայտնվելով նույն տողերում կամ սյունակներում:

Ելնելով նրանից, որ բացահայտված օրինաչափությանը ենթարկվում են ոչ բոլոր տառերը, Ս. Մուրավյովը ենթադրում է, որ գոյություն է ունեցել հունական տառերի ներկայացման ինչ-որ հին, նշանային, գուցե գաղտնագրային համակարգ, որն արդեն ամբողջական է եղել եւ որն էլ հենց դրվել է Հայոց այբուբենի հիմքում՝ որպես դանիելյան գրեր: Հետաքրքիր է, որ նա մաշտոցյան տառաձեւերը ստանում է իր վերականգնած համակարգից՝ օգտագործելով արագագրությանը բնորոշ ձեւափոխություններ: Այսինքն՝ Ս. Մուրավյովն ի վերջո նկատի է ունենում այն գործոնը, որով, ինչպես կտեսնենք, լիովին բացատրվում են Հայոց տառաձեւերը՝ առանց արհեստական կառուցումների:


Այստեղ մենք չենք վերլուծի Ս. Մուրավյովի ամբողջ տեսությունը, բայց նկատենք, որ դրա հիմնադրույթները հաճախ հակասում են Հայոց գրանշանների կառուցվածքային ներքին առանձնահատկություններին: Այսպես, հայ գրչարվեստին տիրապետողի համար միանգամայն ակնհայտ է, որ, օրինակ, Չ տառի վերին կեռ տարրը (մասնիկը) ոչ մի կապ չունի Դ-ի կամ Դ-ի կեռ տարրերի հետ, Կ-ի ծախ տարրը կապ չունի Լ-ի հետ, իսկ Տ-ի ծախ տարրը հորիզոնական ուղիղ գիծ չէ, եւ հիմքում նման կամայականություններ ունեցող վերլուծությունը ճիշտ հետետությունների չի կարող հանգեցնել: Իսկ վարկածի բավականին սպառնալիք բնագավառումը ներկայացրել է Կ. Յուզբաշյանը «Հայոց այբուբենի ծագումը մեկնելու նոր փորձ. հայտնագործություն», թե՛ մոլորություն» հոդվածում⁵²: Նշենք միայն, որ Ս. Մուրավյովն իր դատողություններով լրացրել է այն հետազոտողների շարքը, որոնք, բացահայտելով իրենց համար Հայոց գրանշանների գծապատկերային, ձեւավորչական կառուցվածքը, վերագրել են դրան գրության արժեք՝ փորձելով նրանում ոչ ձեւավորչական օրինաչափություն տեսնել, մասնավորապես՝ այսպես կոչվող բնութավորիչ գրի (անգլ. Featural scripts)⁵³ տեսակի: Որպես նույն կարգի նմուշ՝ կարելի է հիշատակել Ս. Բաբայանի հոդվածը⁵⁴:

⁵² К. Юзбашян, Новая попытка истолковать происхождение армянского алфавита: открытые или заблуждение? // ИФЖ, 1982, № 1, с. 177-184.

⁵³ G. Sampson, Writing systems: methods for recording language (To be chapter 4 of Keith Allan, ed., Routledge Handbook of Linguistics, Routledge, 2014), p 4.


⁵⁴ Ս. Բաբայան, Տիեզերք, հոգի եւ... Այբուբեն // Էություն, Գ՛ 0, Եր., 1992, էջ 30-33; http://www.eutyun.org/S/E/EHandes/EHNNH_14_30.htm

Ճիշտ է, Ս. Մուրավյովի աշխատանքներն իրենց ծավալով եւ քննված բանասիրական նյութով զգալի արժեք են ներկայացնում, սակայն մեթոդաբանությամբ եւ արդյունքներով այս վերջին գործից համարյա չեն տարբերվում:



Հայկական այբուբենի կառուցվածքն ըստ Ս. Բաբայանի:

Մտավորապես նույն մոտեցումն է դրսևորում նաև Ռ. Լոլուան, ով, դատելով սուկ ըստ գրանշանների արտաքին ձևերի, տեսնում է դրանցում ինչ-որ խմբեր ու ենթախմբեր՝ եզրակացնելով, որ պայտանման հիմքով գրանշանները Դանիելյան գրերի մնացորդն են ներկայացնում⁵⁵: Եւ նա նույնիսկ վերականգնում է այդպիսի մի բացակայող ենթախումբ:



Հայոց այբուբենի «պայտանման գրություններն» ըստ Ռ. Լոլուայի: Գծերը ներկայացնում են գծապատկերային կապերը ենթախմբերի միջև. կետագծով նշված է վերականգնված ենթախումբը⁵⁶:

Բացի այդ, նա, ինչպես եւ Գ. Սեւակն ու Դ. Օլդեռոզգեն, Հայոց գրանշանների հորիզոնական գծիկները համեմատում է եթովպական գրանշանների հնչյունավորիչ նշանների հետ⁵⁷:

⁵⁵ Р. Лолуа, Месроп Маштоц и вопросы генезиса еркатагиря // Abania Caucasica, I, с. 208.

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Նույն տեղում:

1.1.7. Անահիտ Փերիխանյան

Ա. Փերիխանյանն անդրադարձել է Հայոց տառածեւերի հարցին իր «Հայոց գրերի ծագման հարցի շուրջ»⁵⁸ հոդվածում: Այնտեղ հեղինակը Հայոց տառերի ուսումնասիրության համար մի շարք կարեւորագույն նկատառումներ է արտահայտում կապված հնագրական ուսումնասիրությունների մեթոդաբանության հետ: Նա գրանշանների հետազոտման հարցում առաջնային տեղ է տալիս հնագրությանը՝ չնսեմացնելով նաեւ պատմիչների հաղորդած տեղեկությունների նշանակությունը՝ համարելով դրանք ընդհանուր առմամբ հուսալի, թեւէ գիտականորեն զուսպ է վերաբերվում այդ աղբյուրներին: Օրինակ, վրացական եւ աղուանական գրերի ստեղծման հարցում առաջարկելով «մեծ նշանակություն չտալ» Կորյունի հաղորդման այն մասին, որ Մաշտոցը տեղում է տեղեկություններ հավաքել այդ լեզուների հնչունային կարգի մասին, քանի որ չէր տիրապետում վրացերենին ու աղուաներենին, նա գտնում է, որ «նոր գրի ստեղծումը ... չի կարելի հանգեցնել «տառաստեղծության»: այն ներառում է նախ եւ առաջ տվյալ լեզվի հնչույթների առանձնացում եւ ենթադրում է հնչույթաբանության խոր իմացություն»⁵⁹: Ա. Փերիխանյանը միաժամանակ կարծում է, որ աղուանական ու վրացական այբուբենների հեղինակներ պետք է համարել համապատասխանաբար Բենիամինին եւ Ջաղային, որոնք, ըստ Կորյունի, օգնել են Մաշտոցին: Նա չի ընդունում նախամաշտոցյան գրականության գոյությունը, իսկ Ե դարի հայ գրականության բարձր զարգացածությունը բացատրում է (հետեւելով Հ. Մանանդյանին) երկրում այլալեզու գրչության ավանդույթների առկայությամբ: Թեւէ այս մտքի տրամաբանությունը չի կարող չզարմացնել, լեզուն կարող է զարգանալ միայն այն կիրառելու դեպքում: Այլալեզու գրականությունը կարող էր զարգացնել միայն համապատասխան օտար լեզուն, եւ, օրինակ՝ Արտավազդ արքայի գրած հունարեն թատերգություններն ու պատմական երկերը կարող էին զարգացնել միայն հունարենը, բայց ոչ հայերենը:

Ինչ վերաբերում է բուն խնդրին՝ Հայոց այբուբենի ծագմանը, ապա Ա. Փերիխանյանը գտնում է, որ Մաշտոցի համար հիմք է հանդիսացել հյուսիսմիջագետքյան մեկ որոշակի այբուբեն, սակայն հնարավոր է համարում, որ մի շարք գրանշանների համար Մաշտոցը հիմք է ընդունել նաեւ հունական եւ պահլավական գրանշանները: Նշված հոդվածից ստորեւ բերված է երկու աղյուսակ, որոնցում պատկերված են որոշ գրանշանների հնարավոր նախածեւերը:

⁵⁸ А. Периханян, К вопросу о происхождении армянской письменности // Переднеазиатский сборник. М., 1966. Т. II, с. 103-133.
⁵⁹ Նույն տեղում, էջ 126 (թարգմանությունը մերն է):

ИСХОДНЫЙ ЗНАК	- РАБОЧАЯ - ФОРМА	АРМЯНСКАЯ БУКВА У В.	ИСХОДНЫЙ ЗНАК	- РАБОЧАЯ - ФОРМА	ГРУЗИНСКАЯ БУКВА У В.	АЛПАНСКАЯ БУКВА
ГРЕЧ. Ε (ε)	ϵ	Ե (e)	АРМ. Յ (h)	Ի>Է>Գ	Գ (h)	Դ (ЗНАЧ?)
ГРЕЧ. Φ (ph)		Փ (pʰ)	АРМ. Չ (y)		Չ (y)	Յ (yʰ; -yud-)
ՍԵՂ. Ϛ (Ϛ, ϛ, Ϟ)	Ϛ	Չ (ϛ)	АРМ. Ք (q)	Գ	Գ (q)	
—	Ϛ Ϛ	Չ (j)	АРМ. Ն (h)	Ի>Է	Է (x)	
ՍԵՂ. Յ (ϝ)	ϝ	Յ (ϝ)	ՍԵՂ. Յ (ϝ)	Է>Ե	Ե (t)	
ՍԵՂ. Ղ, Լ (w)	Ի	Ի (y=w)	ՍԵՂ. Թ (m)	Թ	Թ (m)	
АРМ. Չ (y)	(i-l) Ϛ	Յ (y)	ՍԵՂ. Ϛ (Ϛ, ϛ, Ϟ)		Ը (c)	Ը (zʰ - zum-)
АРМ. Ր (r, ɹ, ʀ, ʁ)	(r-r) Բ, Բ, Բ	Ր (r)	—	Ϛ		Ը (ЗНАЧ?)
ՍԵՂ. Լ (w)	(w-w) Կ	Կ (v)	—	Գ>Գ		Գ Գ (ЗНАЧ?)
ՍԵՂ. Ϛ (Ϛ, ϛ, Ϟ)	(ϛ-ϛ) Ϛ	Չ (j)	—	Ի>Ե	Տ (i)	Տ (-zat-)
—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ Ϛ	Չ (c)	—			Շ (-joy-)
—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ	Շ (c)	АРМ. Չ (y)	(i-l) Ϛ		Յ (-yagd-)
—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ		АРМ. Պ (w)	(w-w) Բ	Բ (v)	Դ (vʰ)
—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ		ՍԵՂ. Ϛ (Ϛ, ϛ, Ϟ)	(ϛ-ϛ) Ϛ		Գ Գ Գ
—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ Ϛ		—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ Ϛ		Շ (ЗНАЧ?)
—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ		—	(ϛ-ϛ) Ϛ Ϛ	Ճ (j)	
—	(ϛ-ϛ) Ϛ		—	(ϛ-ϛ) Ϛ		Ճ (car)

Վայական որոշ գրանշանների ենթադրյալ առաջացումը ըստ Ա. Փերիխանյանի:
 Ա. թ. Ե դ. վրացական եւ աղուանական որոշ գրանշանների ենթադրյալ առաջացումը արամեական եւ պահլավական գրանշաններից:

Ի տարբերություն այլ հեղինակների՝ Ա. Փերիխանյանը համեմատում է Հայոց գրանշանները նախօրինակ այբուբենի որոշակի եւ նույնարժեք գրանշանների հետ՝ փորձելով նաեւ հասկանալ դրանց հնարավոր ձեւափոխությունների ընթացքը: Սակայն նա չի փորձում բացատրել դրանց պատճառները: Օրինակ՝ գտնելով, որ պահլավական Ϛ գրանշանը կարող էր տալ հայերենում Չ, չի պարզաբանում, թե որտեղից է ծագում Չ-ի ստորին մասնիկը: Նա մեծ տեղ է տալիս մայր գրանշանի կրկնություններով հայկական տառերի ստեղծման հնարքին, սակայն ենթադրում է դրա լրացմատեսակ գործածություն: Ըստ Ա. Փերիխանյանի՝ Կ-ն եւ Ղ-ն կարող էին գոյանալ ելից տառի կողք կողքի ղնելու միջոցով, Յ-ի դեպքում իրար վրա ղնելով, իսկ Շ-ի, Ծ-ի ու Ծ-ի դեպքում ուղիղ ձեւը հայելայինի հետ համատեղելով: Նույն հնարքերի ու սկզբունքների կիրառմամբ նա բացատրում է նաեւ վրացական եւ աղուանական տառերի ստեղծումը:

Պետք է նկատել, որ Ա. Փերիխանյանն իր դատողություններում միշտ չէ, որ հետեւողական է: Երբեմն նա խախտում է նաեւ իր իսկ դրույթները: Թեւէ պնդում է, որ փոխառությունը պիտի կատարված լիներ մեկ որոշակի աղբյուրից, սակայն

վերոբերյալ աղյուսակում տեսնում ենք երեք տարբեր գրային համակարգերից վերցված գրանշաններ: Կամ վերոհիշյալ դեպքում նա գտնում է, որ Մաշտոցը կիրառել է պահլավական գրանշանի հայելային տարբերակը, մինչդեռ Դ-ի դեպքում, ըստ նրա, գործածվել է պահլավական գրանշանի ուղիղ ձևը: Ինչ վերաբերում է արամեական գրային համակարգի՝ որպես նախօրինակի ընտրությանը, ապա նա կարծում է, որ դա Մաշտոցի՝ որպես «հունաբան» ուղղության ներկայացուցչի համար՝ «պատահական հանգամանք է», քանի որ մնացած բոլոր հարցերում նա հետևել է հունական սկզբունքներին: Սակայն պատահականության հետ կապելը, մեր կարծիքով, այնքան էլ համոզիչ չէ:


1.1.8. Արտաշես Մարտիրոսյան

Ա. Մարտիրոսյանը «Մաշտոց»⁶⁰ վերտառությամբ ծավալուն աշխատության հեղինակ է, ինչպես նաև ռուսերենով լույս տեսած «Маштоц»⁶¹ աշխատության, որը մասամբ է կրկնում հայերեն տարբերակը: Գ. Սեւակի նման նա եւս գրային համակարգերի ծագումն ուսումնասիրելիս չի ընդունում համեմատական եղանակների ավանդական կիրառումները: «Անշուշտ, համեմատությունը գրի ծագումը որոշելու ճիշտ ուղի է, բայց ամբողջ խնդիրն այն է, որ դա պետք չէ համընդհանրացնել, և սխալը դրանից է գալիս: Գիրը կարող է լինել ինքնաբեր, հեղինակային և միջնորդված, որ ինքնաբեր կարգացման ուղի անցել, բայց ինչ-որ տեղ ընդունել է անհատական միջամտություն»⁶², - գրում է նա՝ գտնելով, որ հեղինակային գրի դեպքում համեմատությունն անհրաժեշտ չէ: Ա. Մարտիրոսյանը հենց հեղինակային գրի կողմնակից է, այսինքն՝ կարծում է, որ դանիելյան գրի հետ կապված բոլոր վարկածներն իրարամերժ են, չեն հաստատվում, ու հետևապես Մաշտոցն ինքնուրույն է ստեղծել Հայոց գրանշանները, և հետագոտողին ոչինչ չի տա համեմատությունն այլ գրերի հետ:

Գրային այլ համակարգերի հետ նմանությունները հեղինակը համարում է պատահական՝ բերելով իննամյա մի աղջկա օրինակը, որի ստեղծած փորձնական այբուբենի գրանշանները նմանվել էին փյունիկյան, կիպրական և սինայյան գրերին: Նա բացատրում է դա գրանշանների երկրաչափական պարզությամբ, որոնք կարող են տարբեր հեղինակներ օգտագործել իրարից անկախ, ինչպես նաև նմանատիպ ոճով: Օրինակ՝ նա նկատում է, որ նման են եգիպտական և չինական գաղափարագրերը, ասորա-բաբելյական և պարսից սեպագրերը և այլն: Ա. Մարտիրոսյանն ամբողջովին շրջանցում է համեմատության ընթացքում հնչյունային համապատասխանությունների հարցը:

⁶⁰ Ա. Մարտիրոսյան, Մաշտոց, Եր., 1982:
⁶¹ А. Мартиросян, Маштоц, Ер., 1988.
⁶² Ա. Մարտիրոսյան, Մաշտոց, էջ 265:

Նա բերում է մի գծագիր, որով պատկերում է Հայոց տառերի գոյացման մի տարբերակ. «Վերցնենք, օրինակ, մի ձվածիր. Մի տեղ ձվածիրը բացված է վերելից, մի այլ դեպքում հեռացված է կողը, թողնելով կորությունը, մի տեղ ավելացված է փոքր ինչ կորություն և բացվածք վերելից և այլն»⁶³: Ինչպես տեսնում ենք, Ա. Մարտիրոսյանը խոսում է գրանշանների ձևավորչական սկզբունքների մասին՝ չանդրադառնալով այն հարցին, թե ինչու է հենց տվյալ հնչյունի դեպքում հեղինակը որոշել ավելացնել «փոքր-ինչ կորություն», իսկ մյուսի դեպքում «բացել վերելից»: Թեև այդ հարցի պատասխանն էլ նա ունի: Վկայակոչելով Հ. Բաուերի խոսքը՝ նա գրում է. «Եթե մենք հարցնենք իրեն՝ Իսման Յուսուֆին... ինչու նա b-ի համար ընտրեց հենց այսպիսի նշան, իսկ d-ի համար՝ ուրիշ, ապա նա հավաստաբար կպատասխաներ, որ ինքն էլ դա չգիտե»: Այս մեջբերումից հետո Ա. Մարտիրոսյանը կարծում է, որ նույնը կպատասխաներ նաև Մաշտոցը, թեև անմիջապես ընդունում է, որ «այստեղ կարող էին հատուկ շարժառիթներ լինել, և տառածներն ունենային որեւէ ներակա խորհուրդ, խորհրդանշող ինչ-որ բան, ինչպես, օրինակ, հայկական Բ տառը, որ խաչի ձև ունի և խորհրդանշում է Զրիստոսին»⁶⁴:



Փաստորեն նա ընդունում է, որ ի վերջո ինչ-որ բան կարող էր կանխորոշել տվյալ գծապատկերը որոշակի որեւէ հնչյունին համապատասխանեցնելը, սակայն որ դա կարող էր լինել որեւէ նախօրինակ՝ հնարավոր չի համարում: Խոսելով

⁶³ Նույն տեղում, էջ 268:
⁶⁴ Նույն տեղում, էջ 270:

Իսման Յուսուֆի ստեղծած այբուբենի մասին՝ Ա. Մարտիրոսյանը արտահայտում է եւս մեկ հակասական միտք. «Նրա այբուբենը, ինչպես հետապոտողներն են վկայում, լիակատար կախման մեջ է արաբականից, բայց արաբական գրի հետ ոչ մի կապ չունենք»⁶⁵:

Հեղինակային, փոխառված (Ա. Մարտիրոսյանի եզրույթով՝ «միջնորդված») համակարգերի մասին կխոսվի ստորել՝ վերլուծման սկզբունքների բաժնում: Այստեղ նկատենք միայն, որ չնայած գիտնականի դատողությունները, ինչպես տեսանք, հակասական են, սակայն նա անդրադարձել է Հայոց գրերի գյուտին առնչվող հարցերին բավականին ուրույն մոտեցմամբ՝ բացահայտելով դրանցում *բաղաբական-դիվանագիտական հանգամանքների դերը*, որը, սակայն, մեր կարծիքով, ըստ արժանվույն չի գնահատվել գիտական հանրության կողմից:

1.1.9. Թամազ Գամկրելիձե

Ակադ. Թ. Գամկրելիձեն Հայոց գրերին անդրադարձած հեղինակներից, թերեւս, միակն է, ով հարցի նկատմամբ դրսեւորել է համակարգային մոտեցում՝ սկսելով հետազոտությունը գրի՝ որպես տեղեկության փոխանակման միջոցի եւությունից, դրա ներքին եւ արտաքին ձեւերը (կամ՝ *արտահայտությունն ու բովանդակությունը*, «նշանակողը») (signans) եւ «նշանակվողը» (signatum)) զանազանելուց: Հայոց գրին նա անդրադարձել է «Գրի այբբենական համակարգի ծագումը եւ տիպաբանությունը»⁶⁶ եւ «Այբբենական գիրը եւ հին վրացական գիրը»⁶⁷ հոդվածներում: Նա կարծում է, որ հայկական, ինչպես նաեւ վրացական, սլավոնական, դպտական, գոթական համակարգերը տիպաբանական մեկ խումբ են եւ պետք է դիտարկվեն գրի ցեղակցական զարգացման եւ բուն այբբենական համակարգի գոյացման լայն ետնաշերտի վրա:

Սրանից բացի՝ նա դիտարկում է կարեւոր հասկացությունների եւս մեկ զույգ՝ գրի *հարացուցականությունը* (paradigmatics)՝ գրանշանների հաջորդական կարգը, որն արտահայտվում է մասնավորապես գրանշանների թվային արժեքներում, եւ *շարութականությունը* (syntagmatics)՝ գրանշանների փոխադարձ դասավորությունը գրվածքում: Քննելով Հայոց գրի հարացուցական առանձնահատկությունները՝ Թ. Գամկրելիձեն ընդգծում է այն հանգամանքը, որ Հայոց այբուբենը, ըստ այս հատկության, տարբերվում է հունականից, քանի որ թեւս հունականին համապատասխանող Հայոց տառերը դասավորված են ըստ հունական այբուբենի հաջորդականության, սակայն «լրացուցիչ» տառերի դասավորությունը նախորդ խմբի

⁶⁵ Նույն տեղում, էջ 267:

⁶⁶ **Т. Гамкредидзе**, *Происхождение и типология алфавитной системы письма* (Письменные системы раннехристианской эпохи) // *Вопросы языкознания*, М., 1988, № 5.

⁶⁷ **Т. Гамкредидзе**, *Алфавитное письмо и древнегрузинская письменность*, Тбилиси, 1989.

տառերի միջեւ խախտում է դրանց թվային արժեքները: Այս փաստը նա սուկ արձանագրում է առանց փորձելու գտնել բացատրությունը:

Ինչ վերաբերում է տառաձեւերի հարցին, ապա Թ. Գամկրելիձեն, նկատելով, որ Հայոց տառաձեւերը փորձել են բխեցնել ամենատարբեր գրային համակարգերից, փաստում է, որ «*առանձին գրանշանների գծապատկերային նմանությունը տարբեր գրային համակարգերում դեռ ոչինչ չի տալիս այս կամ այն գրային աղբյուրից դրա ծագման մասին պնդումների համար: Նման պնդումների համար անհրաժեշտ են գրի ավելի էական ներքին համակարգային բնութագրիչներ, որոնք հիմք կծառայեն այս կամ այն գրային համակարգից, որոշակի գրային աղբյուրից կախվածության մասին ելքադրության համար*»⁶⁸:

Որպես ներքին բնութագրիչ՝ հեղինակը դիտում է Հայոց լեզվի հարացուցականությունը, որը փաստորեն համընկնում է հունականի հետ՝ չհաշված տառերի թվային արժեքները: Իսկ տառերի արտաքին ձեւը, այսինքն՝ նշանակողները, գրանշանները, ըստ Թ. Գամկրելիձեի, կարող էին լինել կամայական, եւ Մաշտոցը կարող էր օգտվել գրային ամենատարբեր համակարգերի նշանների ձեւերից:

Այսպիսով, ըստ Թ. Գամկրելիձեի, Հայոց այբուբենի հարացուցական հիմքը հունականն է, իսկ արտաքին ձեւը հեղինակային է, այսինքն՝ ստեղծված է Մաշտոցի կողմից, թեւս նա կարող էր ազդված լինել այլ համակարգերի գրանշանների ձեւերից, եւ այդ իսկ պատճառով իմաստ չունի որոնել այն միակ նախորինակ համակարգը, որից վերցված կլինեին Հայոց գրանշանները: Նույնը նա տեսնում է տառաւունների դեպքում՝ համարելով դրանք Մաշտոցի ստեղծածը, սակայն մի մասի դեպքում նկատում է դրանց սեմական նախորինակ ունենալը: Նման գործելակերպը Թ. Գամկրելիձեն բացատրում է կրոնա-բաղաբական նկատառումներով, այն է՝ թաքցնելու հունական աշխարհի հետ տեղական քրիստոնեության կապերը: Նույն նկատառումներով նա բացատրում է նաեւ սլավոնական *զլազոլիցայի* տառաձեւերի եզակիությունը:

Ինչպես տեսնում ենք, Թ. Գամկրելիձեն հիմնականում պաշտպանում է հայ հետազոտողների զգալի մասի կարծիքները՝ միաժամանակ լրացնելով դրանք հիմնարար եւ առավել համակարգված սկզբունքներով գրային համակարգերի հետազոտման վերաբերյալ:

1.1.10. Լիպարիտ Սադոյան

Լ. Սադոյանը մինչ այսօր Հայոց տառերը հետազոտած միակ հեղինակն է, ով ոչ թե թանասեր էր, այլ ճարտարապետ, նաեւ տառարվեստի մասնագետ: Ու երեւի պատահական չէ, որ նա կարողացել է ոչ միայն նորովի մեկնաբանել Կորյունի հաղորդածը,

⁶⁸ **Т. Гамкредидзе**, *Происхождение и типология алфавитной системы письма*, с. 28.

այլեւ նոր տեսանկյունից վերլուծել Հայոց տառաձեւերը: Այդ հարցին նա անդրադարձել է «Հայոց մետրոպաստեղծ այբուբենը» հոդվածում⁶⁹:


Լ. Սաղոյանը պատկանում է այն հետազոտողների շարքին, ովքեր կարծում են, որ Մաշտոցն օգտագործել է դանիեյան գրերը: Նա դրանք համարում է հունական հիմքով մի համակարգ եւ կարծում է, որ Ասորիքում եղած ժամանակ Մաշտոցին մտում էր միայն «վերջին ճշտումները կատարել եւ օտար՝ հունարեն գրանշաններն ազգայնացնել, ուրույն գրապատկերներ կազմել եւ ապահովել գրերի ոյուրընթեռնելիությունը»⁷⁰: Այսպիսով, Լ. Սաղոյանը եւս կարելու նշանակություն է տալիս գրի «ազգային» լինելու, այսինքն՝ մյուսներից տարբերվելու գաղափարին, որը, ինչպես կտեսնենք, հակասում է գրային համակարգերի գործառնության պահանջներին: Սակայն առավել կարելու է նրա մյուս դիտարկումը՝ կապված գրերի ոյուրընթեռնելիության հետ, մի խնդիր, որին մյուս հետազոտողները կարծես թե չեն էլ անդրադարձել:

Լ. Սաղոյանը եւս հատուկ ուշադրություն է դարձնում այն փաստին, որ Հայոց տառերը բաժանվում են երկու հստակ խմբերի՝ բարդ ուրվագծով՝ «կլոր փաթույթներ ունեցող» (ժ, թ, ճ, զ, ջ եւ այլն), եւ պարզ ուրվագծով՝ «ուղիղ, շիտակ» (Ո, Ս, Լ, Ը եւ այլն), այսինքն՝ հիմնված ուղիղ գծի եւ պայտի վրա⁷¹, մի փաստ, որից, ինչպես տեսանք, բխեցրել են իրենց դատողությունները թե՛ Հայոց այբուբենում բողարկված օրինաչափություններ տեսնողները (Ս. Մուրավյով, Ս. Բաբայան եւ այլք) եւ թե՛ դրան եթովպական ծագում վերագրողները (Գ. Սեւակ, Դ. Օլբեռոզգե եւ այլք):

Սակայն լինելով վարպետ գեղագիր՝ Լ. Սաղոյանը մոտենում է այդ հարցին հնարամիտ դիրքերից: Հաշվի առնելով, որ Հայոց տառերն ունեն գործածման տարբեր հաճախություններ, նա նկատում է, որ առավել բարձր հաճախականությամբ գործածվող տառերը պարզ կառուցվածքով տառերն են, մինչդեռ ուրույն կառուցվածքով եւ, որպես կանոն, ավելի լայն ու խոշոր գծվող տառերն ունեն գործածության ցածր հաճախականություն: Սա նկատի ունենալով՝ ուսումնասիրողը ձեւակերպում է «Հնչյունի հաճախականությունը հակադարձ համեմատական է պատկերի արտահայտությանը»⁷² բանաձեւը՝ փաստելով, որ սա Մաշտոցին հատուկ հնարքներից է՝ ուղղված գրի ոյուրընթեռնելիության բարձրացմանը:

Լ. Սաղոյանի դիտարկումը Հայոց տառերի գեղագիրներին ծանոթ փաստ է, թեեւ առաջին անգամ է արտահայտված Հայոց տառաձեւերին նվիրված հետազոտություններում եւ առաջին անգամ է ստացել նման պարզ ձեւակերպում: Սակայն դա անվիճելի չէ: Այսպես, ուսումնասիրողը փաստորեն չի քննում համապատաս-

խան խմբի գրույթների ընտրության հարցը, մինչդեռ միեւնոյն գրույթն ի վերջո կարելի է գծել թե՛ լայն, թե՛ նեղ, եւ տարբեր գեղագիրներ ունեն տարբեր մոտեցումներ այդ հարցի վերաբերյալ. հաճախ դա հենց տվյալ գեղագրի ձեռագրի մասն է կազմում: Մյուս կողմից այդ բանաձեւը նաեւ ունի շեղումներ. այսպես՝ Գ եւ Շ տառերն իրենց արտահայտչականությամբ նույնական են, սակայն առաջինի հաճախությունը, ըստ Լ. Սաղոյանի, 1.46% է, իսկ երկրորդինը՝ գրեթե 5 անգամ պակաս՝ 0.34%: Դ-ն ամենաուրույն ձեւ ունեցող հայկական տառերից է, սակայն դրա հաճախությունը (1.44%) ավելին է, քան «շարքային» Բ (1.14%), Դ (1.28%), Ը (0.29%), Դ (0.77%) տառերինը եւ այլն: Եւ վերջապես, այն պնդումը, թե ընթեռնելիությունը պահանջում է, որ հնչյունի հաճախականությունը հակադարձ համեմատական լինի պատկերի արտահայտությանը, վիճելի է: Լ. Սաղոյանի կողմից նկատված երեւոյթի արդյունքում հայերեն գրվածքները ներկայանում են որպես գրեթե համասեռ հյուսածո գորգեր, որոնց վրա տեղ-տեղ փայլում են ուրույն ուրվագծով սակավաթիվ տառերը: Դա, իրոք, գեղեցիկ է գեղարվեստի տեսակետից, սակայն չի ոյուրացնում ընթեռնելիությունը, քանի որ գրվածքի հիմնական զանգվածը կազմում են իրարից դժվար տարբերվող նույնատիպ գրանշանները: Գուցե ճիշտ է հակառակը, եւ գործածության առավել բարձր հաճախականությամբ տառերը պետք է ուրույն տառաձեւեր ունենային: Հասնեայն դեպս, վերջնական եզրակացության համար անհրաժեշտ են վիճակագրական լուրջ ուսումնասիրություններ:



Հայկական որոշ գրանշանների համաչափական առանձնահատկությունները ըստ Լ. Սաղոյանի:

Կարծում ենք՝ Հայոց տառաձեւերի գոյացման տեսակետից շատ ավելի կարելու է Լ. Սաղոյանի մեկ այլ դիտարկումը մի շարք տառաձեւերի համաչափական նմանության վերաբերյալ (տե՛ս գծագիրը): Որպես այդպիսին՝ դա էլ նորություն չէ, բայց չափազանց ուշագրավ է Լ. Սաղոյանի առաջարկը Կորյունի «կրկնաւորն» կամ «կրկնայարն» եզրերը կապել հենց այդ համաչափության հետ: Մասնավորա-

⁶⁹ Լ. Սաղոյան, Հայոց մետրոպաստեղծ այբուբենը // ՊԲՀ, 2005, Գ՝ 2, էջ 58-86:
⁷⁰ Նույն տեղում, էջ 58:
⁷¹ Նույն տեղում, էջ 70:
⁷² Նույն տեղում, էջ 66:

պես, քանի որ ըստ Չայկազյան բառարանի՝ «կրկնել» բառի հնագույն նշանակությունն է «ծալել»։ Ինչպես կոտեսենք ստորեւ, դա հավանական մեկնություն է եւ բացահայտում է որոշ տառածեւերի գոյացման եղանակը։

Յավոք, Լ. Սաղոյանը փորձում է տեսնել դա բոլոր դեպքերում շփոթելով գրանշանների ուրվագծի գրույթային (այսինքն՝ տարբերիչ) հատկությունները ձեւավորչական հատկությունների հետ, օրինակ՝ հնագույն Տ-ի ձեւի մեջ ջանում է գտնել երկու բաղադրիչի՝ Ռ-ի եւ Նույն տառի՝ 180°-ով պտտված արտապատկերման համատեղություն։ Կամ հայերեն որեւէ տառածեւին չհամապատասխանող համաչափ արտապատկերումներում տեսնում է վրացական կամ աղուանական տառածեւերը՝ հնչյունային արժեքից անկախ։

1.1.11. Պողոս Պողոսյան

Պ. Պողոսյանը Չայոց գրանշանների ծագման խնդրին անդրադարձել է «1600-ամյա գաղտնիքներ» գրքույկում⁷³։ Սա չափազանց հակասական մի աշխատություն է, որում չհիմնավորված պնդումները հետեւում են մեկը մյուսին, թեւէ երբեմն զուգորդվում են խորաթափանց դիտարկումներով։

Իր դատողությունները Պ. Պողոսյանը սկսում է Չայոց, վրաց եւ աղուանից տառանունների վերլուծությամբ։ Նա կարծում է, որ հայկական տառանուններից ոչ մեկը փոխառված չէ ուրիշ լեզվից, այլ ստեղծված է Մաշտոցի կողմից որոշակի օրինաչափությամբ։ Յեղիակը նկատում է, որ տառանունների մեծ մասը միավանկ է եւ զուրկ իմաստից, որը նա դիտում է որպես տառանուն կազմելու մաշտոցյան սկզբունք։ Ի տառի Ինի անվանումը նա սխալ է համարում՝ շեշտելով, որ աղբյուրներում կա նաեւ միավանկ Ին տարբերակը։ Ըստ նրա՝ Մաշտոցը տառանուններ կազմելու համար «ընտրել է մի շատ հասարակ, բնական եւ միանգամայն տրամաբանական եղանակ՝ ձայնավոր տառի հնչյունին ավելացրել է բաղաձայն, իսկ բաղաձայն տառի հնչյունին՝ ձայնավոր»⁷⁴, եւ ստացել է այդ միավանկ անվանումները։ Օրինակ՝ Ա-ի Այբ անվանումը ստացվել է Այ-ից (յ-ն հավելվել է Ռ-ի Ոյ անվան օրինակով), որին հավելվել է հաջորդող բաղաձայնը՝ Բ։ Ը-ի անվանումը ստացվել է Ը-ին հաջորդող Թ բաղաձայնի հավելմամբ։ Ե-ի դեպքում հաջորդող բաղաձայնը չի հավելվել, քանի որ այդ դեպքում կստացվեր եպ բառը, մինչդեռ, ըստ հռչակված սկզբունքի, տառանունը պիտի անիմաստ լիներ, եւ Մաշտոցն այստեղ ընտրել է կամայական բաղաձայն։

Բաղաձայների դեպքում համակարգն ավելի բարդ է։ Նախ, ըստ Պ. Պողոսյանի, Մաշտոցն այրուբենը բաժանել է իննական խմբերի, հետեւեւ, որպեսզի տառանուններում (ներառյալ արդեն իսկ ձեւավորված ձայնավորների անունները) Ա եւ Է ձայնավորների պարունակությամբ մեկական խումբ լինի, Ե, Ի, Ը ձայնավորներով

⁷³ Պ. Պողոսյան, 1600-ամյա գաղտնիքներ, Եր., 1991։
⁷⁴ Նույն տեղում, էջ 17։

մեկ խումբ, եւ մեկ խումբ էլ՝ Ռ եւ Ի ձայնավորներով։ Իր կարծիքով՝ հենց այդ բաժանումն է պահպանված Մատենադարանի Չ՝ 8098 եւ 599 ձեռագրերում որպես արական, իգական, լերկական եւ թուական տառախմբեր։ Պ. Պողոսյանը ենթադրում է, որ սկզբնապես դրանք կոչվել են ասական, իական, էական եւ ուական, սակայն հետագայում դրանց իմաստը մոռացվել է եւ արտագրողները վերախմբագրել են դրանք՝ տալով իրենց այժմյան տեսքը։ Չաշվի առնելով այս պայմանները՝ ստեղծվել են բաղաձայնների անունները, որոնց մեծ մասը ձայնավորահանգ է, այսինքն՝ ձայնավորով ավարտվող՝ դայ, կայ, ժէ, իւէ եւ այլն, եւ բաղաձայնահանգ՝ դատ, բեն, գիմ, կեն, մեն, վեւ, լին, տին, փիւր։ Պ. Պողոսյանը չի կարծում, որ դա խախտում է օրինաչափությունը։ Օրինակ՝ Ե-ով կազմվող անվանումների դեպքում, եթե դրանք լինեին բառի վերջին տառը, գրաբարի կանոններով Ե-ն պիտի փոխվեր Է-ի, իսկ չփոխվելու համար այն պիտի փակվեր բաղաձայնով։ Իսկ, օրինակ, Գիմ-ի դեպքում վերջին բաղաձայնը նա բացատրում է նրանով, որ Գի ձեւով դա կզուգահիսվեր գի (գիհի) բառին։ Եթե ավելացվեր ն, կստացվեր Գին, որը կրկին բառ է, այդ իսկ պատճառով ավելացվել է մ։ Այսպես ստեղծվել են Գիմ, Ղատ, Վեւ եւ Փիւր անունները։ «Չնարավոր է նաեւ, որ այս չորս անվանումները սահմանելիս դեր է ունեցել ազատ ընտրության գործոնը, եւ նա մի դեպքում տ է առել, մյուս դեպքում՝ մ, ր, ւ, ինչպես որ Ե-ի վրա բաղաձայն հավելելիս էլ պատահական վերցրել է չ եւ ոչ թե մի այլ բաղաձայն։ Բայց որ Ե՛ւ դատ-ը, Ե՛ւ գիմ-ը, Ե՛ւ վեւ-ը մյուս բոլոր տառանվանումների հետ միասին միեւնույն սկզբունքով են ստեղծված եւ ոչ թե հնչյունափոխություններով փոխ են առնված այլ լեզուներից, մեկ համար միանգամայն պարզ է, եւ սա որեւէ կասկածի տեղիք չի տալիս»⁷⁵։ Այսպես՝ Պ. Պողոսյանը համարում է, որ խնդիր այլեւս չկա, եւ եզրակացնում է. «Չայերենի գրերի անվանումների ինչ լինելը եւ ծագումը, որ 1600 տարի մնում էր գաղտնիք, մենք սրանով համարում ենք լուծված»⁷⁶։ Նույն կերպ նա բացատրում է նաեւ վրացական եւ աղուանից տառանունների կառուցվածքը։

Տառածեւերի հարցը քննելուց առաջ եւս մեկ անգամ անդրադառնանք Պ. Պողոսյանի դատողություններին։ Այն, որ նրա հռչակած օրինաչափությունները հակասում են փաստերին, բացահայտ է։ Նա, ինչպես տեսանք, Նույնիսկ ստիպված է խոսել «ազատ ընտրության գործոնի» եւ պատահականության մասին։ Բայց դրանից հետո էլ ի՛նչ օրինաչափության կամ հիմնավորման մասին կարող է խոսք լինել։ Միակ հետաքրքիր տեղեկությունը, որ կարելի է քաղել Պ. Պողոսյանի դատողություններից, չորս տառախմբերի եւ դրանց՝ տառանունների ձայնավորների հետ կապելու գաղափարն է։ Սակայն դա էլ ոչինչ չի տալիս, քանի որ դրանից չի հետեւում, թե տառանունները կազմվել են հենց այդ սկզբունքով, ավելի հավանական է հակառակը. հենց տառանունների ուսումնասիրությունն է հնագույն ժամանակներում

⁷⁵ Նույն տեղում, էջ 24։
⁷⁶ Նույն տեղում, էջ 25։

անհայտ հեղինակին հանգեցրել նման խմբերի բացահայտմանը, եւ այդ խմբերի առանձնացումն էլ անվիճելի չէ: Օրինակ՝ Ի-ով կազմված անուններ կան «ուական» խմբում, իսկ «իական» խմբում կա Ի-ով կազմված Վաւ-ը: Վիճելի են նաեւ Է-ով եւ Ե-ով կազմված անունները. օրինակ, ըստ Հայկազյան բառարանի, Մ-ի Մեն անվանման կողքին հայտնի են նաեւ Մեւ, Միւ եւ այլ տարբերակներ: Այնպես որ բավական է համապատասխան տառերը դասել մյուս խմբերի մեջ, եւ ամբողջ օրինաչափությունը կանխեստանա:

Մեթոդաբանական նույն մոտեցմամբ Պ. Պողոսյանը կատարում է նաեւ տառաձեւերի վերլուծությունը: Նախ նա առաջարկում է հիմնական կանխավարկածը. «Մեր ըմբռնումով ոչ միայն գրերի ծագումը, դրանց ձեւերը (նկատի չունենք ոճավորումը) եւ տառատեսակները (գլխազիր եւ ձեռագիր), այլեւ այբուբենի դասավորությունը եւ տառերի թվային արժեքները արդյունք են միանգամայն գործողության, այսինքն՝ ոչ թե դրանք մեկը մյուսից անկախ տեղի ունեցած ստեղծագործական գործույթներ (ակտ) են, այլ միմյանցով փոխադարձորեն պայմանավորված, միաժամանակ կատարված, բավանկողմ հորինողական մեկ գործողության արդյունք»⁷⁷: Հետո առաջարկում է եւս մեկ դրույթ. «Հայոց գրերի համար նախատիպարներ են դարձել միայն ու միայն հունարենի տառերը, այն էլ ոչ թե հետքրիստոնեական (մոնումենտալ կոչվող), այլ հին հունական տառերը»⁷⁸: Նկատենք, որ «մոնումենտալ», այսինքն՝ կոթողային տառերն ամենեւին էլ «հետքրիստոնեական» չեն, այլ ցանկացած գրային համակարգի հենց սկզբնական (հետեւապես եւ՝ հնագույն) ձեւերն են: Այդ դեպքում ինչու են դրանք հակադրվում «հին հունական տառերին»՝ պարզ չէ: Գուցե հակառակը, «հետքրիստոնեական» ասելով նա նկատի ունի գրանշանների արագագրական ձեւերը, իսկ «մոնումենտալ» եզրույթի կիրառումը վրիպա՞կ է: Այդ դեպքում, ինչպես կերեւա հաջորդ շարադրանքից, դա միանգամայն ընդունելի դիտարկում է: Ըստ Պ. Պողոսյանի՝ հունական այբուբենից «դեն են նետվել» Փսի-ն եւ Օմեգա-ն, որոնք համապատասխան հնչյուններ չունեն հայերենում, իսկ «հունարենի 22 տառերից ստեղծվել են հայերենի համապատասխան 22 գրերը, որոնք մեր այբուբենում դասավորվել են հունարենի հերթականությամբ»⁷⁹: Ապա Պ. Պողոսյանը հաջորդաբար վերլուծում է հայկական բոլոր տառերը եւ առանց վարանելու որոշում յուրաքանչյուրի նախօրինակը: Իսկ հունարենում բացակայող տառերի դեպքում նա թույլ է տալիս բացահայտ կամայականություններ՝ պնդելով, թե այդ տառերը կազմված են հունականից փոխառված այն տառերից, որոնցից հետո դրանք տեղադրված են այբուբենում: Օրինակ՝ «Ձ-ն հետեւում է Գ-ին: Այդ նշանակում է, որ Ձ-ն եւս կապված է Կ-ին: Ձ-ի համար առնվել է հին հունական Կ-ի Խ տարբերակը, որից Ձ ստանալու

⁷⁷ Նույն տեղում, էջ 51:
⁷⁸ Նույն տեղում, էջ 66:
⁷⁹ Նույն տեղում:

համար բավական է եղել Գ-ածել մասի վերին ելուստին կիսաշրջանի դիրք տալը: Միա հետ դեն է նետվել ձախ սյունը, ինչպես որ Գ-ի կերտման ժամանակ է արվել Խ → Զ → Զ⁸⁰: Իրոք, ինչպես նկատել էր Ա. Փերիխանյանը, հնագրության նկատմամբ նման բռնության⁸¹ մասին չգիտես ինչ ասես:

Ավելացնենք, որ նույն եղանակով Պ. Պողոսյանը բացատրում է նաեւ փոքրատառերի ծագումը: Նա գրում է. «...հայագետների ըմբռնումով փոքրատառերն ամենաշուտը IX դարից հետո ստեղծված գրեր են, քանի որ դրանք ավելի վաղ ժամանակներից չեն ավանդված: Սակայն արձանագրված կամ վկայված չլինելը մեզ համար փաստարկ չէ»⁸²: Ինչ խոսք, վկայված չլինելը իրոք բավարար փաստարկ չէ (թեեւ այնուամենայնիվ՝ փաստարկ է), բայց փոքրատառերի ուշ ծագումն ամենեւին էլ դրանց նմուշների բացակայությամբ չի հիմնավորվում, այլ բազմաթիվ այդ թվում՝ նաեւ տնտեսական, ժողովրդագրական, գաղափարաբանական եւ այլ գործոնների ազդեցությամբ⁸³: Մյուս կողմից, եղած նյութն էլ բավական է տեսնելու համար փոքրատառերի գոյացման ամբողջ ընթացքը դրանց միջանկյալ, անցումային ձեւերով եւ համոզվելու, որ դա աստիճանական, բարեշրջական եւ ոչ թե ակնթարթային ու միանվագ գործընթաց էր⁸⁴: Իսկ շատ ավելի լավ պահպանված հունատառ եւ լատիկատառ գրչարվեստի նմուշների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ փոքրատառերի գոյացման հարցում գործ ունենք գրանշանների ձեւափոխման ընդհանուր օրինաչափությունների հետ: Մինչդեռ Պ. Պողոսյանը եւս մեկ անգամ հաստատում է. «Հայոց գրերի ծագման հարցը սույն ուսումնասիրությամբ մենք համարում ենք լուծված»⁸⁵:

1.1.12. Վահան Սարգսյան

Հայոց այբուբենի հարցերին Վ. Սարգսյանը նվիրել է մեծածավալ մի աշխատություն՝ «Հայոց գրերի ծագումը»⁸⁶: Այս գրքում արտահայտված մի շարք դատողությունների մենք կանդորադառնանք նաեւ տառանուններին եւ այբբենական կարգին վերաբերող բաժիններում: Սակայն քանի որ Վ. Սարգսյանը Հայոց այբուբենը հետազոտողներից միակն է, որը վերլուծությունները կատարում է իր իսկ կողմից առաջադրած իմաստասիրական եւ մեթոդաբանական ուրույն համակարգի շրջանակներում, այստեղ հակիրճ կներկայացնենք դրանք: Նա կարծում է, որ «մաշտոցյան այբուբենի

⁸⁰ Նույն տեղում, էջ 79:
⁸¹ А. Периханя, К вопросу о происхождении армянской письменности, с. 106.
⁸² Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 67:
⁸³ Տե՛ս, մասնավորապես՝ Ю. Перепёлкин, О происхождении минускульного письма // М. А. Коростовцев, Писцы Древнего Египта. СПб, 2001, с. 253-308.
⁸⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 599:
⁸⁵ Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 90:
⁸⁶ Վ. Սարգսյան, Հայոց գրերի ծագումը, Եր., 1999:

ուսումնասիրության մեջ գործել է, այսպես ասած, շղթայական ռեակցիայի սկզբունքը»⁸⁷, եւ Յ. Աճառյանի «Հայոց գրերի» օրինակով բացատրում է. «ընդունելով, որ հայերեն գրերը օտար ծագում ունեն եւ ձեւավորվել են հունական, ասորական եւ իրանական գրանշանների հիման վրա, Աճառյանն այլեւս ոչ մի կերպ չի կարող շեղվել այդ կանխադրույթից: Եթե հայերեն այբուբենն իր ընդհանուր գծապատկերային հորինվածքով պարտական է նշված երեք այբուբեններին, ապա, շղթայական ռեակցիայի օրենքով, մնացած բոլոր հանգամանքները՝ գրերի անունները, դասավորությունը, ուղղությունը եւ այլն, նույնպես պետք է բացատրվեն հունական, ասորական կամ իրանական ազդեցությամբ»⁸⁸:

Վ. Սարգսյանն իր մեթոդաբանական հիմքը դարձնում է «ներքին վերականգնում» կոչված սկզբունքը, որի ելությունը նա ներկայացնում է լեզվական նյութի օրինակով: Ներքին վերականգնման եղանակը հնդեւրոպաբանության մեջ կիրառվում է նախալեզվի ափսոսանքի նախնական վիճակը վերականգնելու համար, հիմնվելով դրա ներքին վերլուծության վրա: Վ. Սարգսյանն առաջարկում է կիրառել այն առանձին լեզուների դեպքում: Կանխելու համար հնարավոր առարկությունները նա գրում է. «Ներքին վերականգնումը չի հակադրվում արտաքին համեմատություններին, այն չի կարող եւ չի պատրաստվում քանդել համեմատական լեզվաբանություն կոչված գիտության հիմքերը կամ փոխարինել այդ գիտությունը»⁸⁹: «Մեթոդաբանական մեր մտածողում այն է, որ չի կարող լինել ճշգրիտ արտաքին համեմատություն՝ առանց ներքին վերականգնման, եւ վերջինս էլ երբեք չի կարող լինել հավաստի՝ առանց արտաքին համեմատության տվյալների հաշվառման. իսկական գիտական հավասարակշռությունը երկու մեթոդների իրավահավասարության, հավասարաչափ, ճկուն կիրառման եւ զուգորդման մեջ է, դրանց անբաժանելիության մեջ»⁹⁰: Շարադրելով ներքին վերականգնման միջոցները՝ նա նախ խոսում է «հնչյունական օրենքների ազդեցության գոտու ընդարձակման սկզբունքի» մասին, որը համարում է «օրենքների օրենք», եւ ապա եւս երեք օրինաչափության մասին՝ կրկնություն, դրափոխություն եւ ձեւույթների հետադարձ ընդարձակման սկզբունք⁹¹:

Ապա, «լեզու-խոսք-բառ-հնչյուն-գիր» շղթայով կապելով լեզվական, հնչյունական խնդիրները գրին առնչվող խնդիրների հետ, նա առաջ է քաշում եւս մեկ մեթոդաբանական եւ իմաստասիրական դրույթ, ըստ որի՝ «որեւէ գրանշանի կարգացման պատմությունն անբաժանելի է նրա նշանակած հնչյունի կարգացման պատմությունից, ուստի դրանց երկուսի քննությունն էլ պետք է տարվի միաժամանակ՝ գրանշանի

⁸⁷ Նույն տեղում, էջ 52:
⁸⁸ Նույն տեղում:
⁸⁹ Նույն տեղում, էջ 23:
⁹⁰ Նույն տեղում, էջ 24:
⁹¹ Նույն տեղում, էջ 34:

հնարավոր աստիճանական փոփոխությունները բխեցնելով տվյալ հնչյունի կրած աստիճանական փոփոխություններից»⁹²:

Իր վերլուծությունը նա սկսում է Այբ-ից. «...Հայոց այբուբենի առաջին գրանշանի ներքին վերականգնումը պետք է իրականացվի հայերենի ներքին տվյալների հիման վրա՝ զուտ լեզվական տվյալները զուգորդելով արտալեզվական գործոնների հետ»⁹³: Նախ նա ստուգաբանում է Այբ անվանումը՝ կիրառելով ներքին վերականգնման սկզբունքը՝ գտնելով, որ Յր. Աճառյանի՝ Այբ անվանումը սեմական Ալփ-ից հանելու պնդումն անհիմն է, քանի որ Հայոց լեզվում «բ ծայնեղ պայթականից առաջ լ > յ հնչյունափոխության» օրինակ հայտնի չէ⁹⁴: Հաշվի առնելով հայերենին հատուկ հնչյունափոխությունները՝ Վ. Սարգսյանն Այբ անունը կապում է արփի, արեւ, արեգակ, այգ բառերի հետ եւ գալիս այն եզրակացության, որ «հայերն իրենց այբուբենի առաջին տառը կոչել են արեւ անունով»: Ապա շարունակում է, որ դա «մեկ բավարար հիմքեր է տալիս ենթադրելու, որ Ա գրանշանն էլ, իր հերթին, ինչ-որ կապ պետք է ունենա արեգակի հետ: Սրանից ինքնաբերաբար բխում է այն հետեւությունը, որ հին հայերը այբ «արեւ, արեգակ» անունը կարող էին տալ միմիայն արեգակի պատկերին կամ խորհրդանշանին, ուստի Հայոց այբուբենի առաջին տառի ետեւում պետք է որ թաքնված լինի արեգակի պատկեր կամ նշան»⁹⁵:

Այնուհետեւ նա անցնում է այդ նշանի հնարավոր ձեւի վերականգնմանը. «Ալկնհայտ է, որ այս դեպքում պետք է նկատի ունենալ արեգակի հիմնական ֆիզիկական հատկանիշը՝ գնդաձեւությունը, որի պատկերային արտահայտությունը կլիներ շրջանագիծը, օղակը»⁹⁶: Նկատելով, որ «մինչ այժմ կատարված հնչյունական եւ իմաստային վերականգնումները կարող են հավաստի համարվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ հայերեն Ա գրանշանի գծագրական կառուցվածքի հիմքում ընկած է շրջանագիծը», նա նշում է, որ ««արեւ» իմաստն արտահայտվում է արեւ, արեգ եւ արփի հոմանիշներով: Սրանք երեքն էլ ամբողջական բառեր են, որոնք մինչեւ օրս գործածվում են հայերենում՝ պահպանելով իրենց ամբողջական կառուցվածքը եւ «արեւ» իմաստը: Եւ եթե մեր նախնիները փորձեին «արեւ» իմաստն արտահայտել ինչ-որ պատկերով, ասենք՝ շրջանագծով, ապա այդ շրջանագիծը, արտահայտելով «արեւ» նշանակումը, փաստորեն կփոխարիներ արեւ, արեգ եւ արփի ամբողջական բառերին»⁹⁷: Շեշտելով այդ «ամբողջականության» գաղափարը՝ նա կարծում է. «...քանի որ «արեւ» բառի եւ այբ կապության միջեւ կան որոշ տարբերություններ», ուստի «արեւ» բառը «կորցրել է իր ամբողջականությունը»: Վ. Սարգսյանի կարծի-


⁹² Նույն տեղում, էջ 28:
⁹³ Նույն տեղում, էջ 68:
⁹⁴ Նույն տեղում, էջ 69:
⁹⁵ Նույն տեղում, էջ 72:
⁹⁶ Նույն տեղում:
⁹⁷ Նույն տեղում:

բով՝ դա պիտի արտահայտվեր «արեւ» նշանակող շրջանագծի ամբողջականության վրա: Սա հիմնավորելու համար նա դիմում է «Չայոց նշանագրության եւ պատկերագրության հարցերին»՝ քննելով «արեգակ», «մարդ» եւ «այծ» պատկերները եւ դրանց համապատասխան իմաստները: Ապա Այբ գրանշանի բուն վերլուծությանն անցնելուց առաջ Վ. Սարգսյանը կարծում է, որ վերոհիշյալ «ծեւույթների հետադարձ ընդարձակման սկզբունքը» կարող է գործածվել նաեւ «գրանշանների հետադարձ ընդարձակման» համար: Ի դեպ, նա նկատում է, որ «առաջին հայացքից կարող է թվալ, թե նման հարցադրումը իրական ոչ մի հիմք չունի, քանի որ խոսքը վերաբերում է միանգամայն տարբեր ոլորտների, բացի այդ, արտաբնուստ ամենեւին չի երեւում, թե ... գրանշանների իՆչը պիտի ընդարձակվի եւ ինչպես»: Սակայն շարունակում է գործադրել այդ սկզբունքը, քանի որ «լեզվի գրային համակարգն անբաժանելի է նրա հնչյունական համակարգից»⁹⁸:


Անցնելով բուն վերլուծությանը՝ Վ. Սարգսյանն առաջարկում է պատկերացնել «թելից, ռետինից, մետաղալարից կամ մեկ այլ ճկուն նյութից պատրաստված», «որոշ չափով ձվածիր հիշեցնող մի շրջանագիծ, որը մեր առջեւ դրված է ... ուղղահայաց դիրքով», ապա «հատվում է շրջանագծի վերին ծախս անկյունը, աջ ծայրը անջատվում է ծախս սյունագծից եւ, ասես սեփական ծանրության տակ թեքվելով, սկսում է ցած իջնել»⁹⁹: Փաստորեն դրանով նա պատկերում է ամբողջական շրջանագծի (որը համապատասխանում է ամբողջական «արեւ»-ին) ամբողջականության կորուստը (որը համապատասխանում է Այբ-ի վերածվելուն):



Եթե անջատված այդ աջ ծայրը ավելի շատ թեքվի դեպի աջ, ըստ Վ. Սարգսյանի՝ կգոյանա Տեկորի արձանագրության Ա-ն:




Դրանից բացի՝ նա հնարավոր է համարում, որ անջատված ծայրը կարող է շարժվել նաեւ հակառակ ուղղությամբ՝ հանգեցնելով նույն արդյունքին:



Ապա Վ. Սարգսյանը հաջորդաբար քննում է մյուս տառերը՝ առաջնորդվելով դրանց՝ հայերենին բնորոշ հնչյունական կապերով: Ըստ այդմ՝ նա անցնում է նախ Բ-ի վերականգնմանը՝ ընդգծելով, որ «հայ ը ծայնորդի հիմնական գործառնական առանձնահատկությունը նախաձայն դիրքում չգործածվելն է եւ ա հնչյունից

⁹⁸ Նույն տեղում, էջ 78:
⁹⁹ Նույն տեղում, էջ 79:

կախվածությունը»¹⁰⁰: Այդ վերականգնումը նա կատարում է հետեյալ հաջորդական ձեւափոխությունների համաձայն.



Ինչպես տեսնում ենք, Վ. Սարգսյանի տեսությունը կամայական ենթադրությունների մի շղթա է, որի բոլոր օղակների ենթադրականությունը հեղինակը չի էլ թաքցնում, թեւս ամեն անգամ շարունակում է իր դատողություններն այնպես, կարծես նախորդ դրույթն արդեն ապացուցված է¹⁰¹: Չի հաստատվում նաեւ նրա պնդումն այն մասին, որ «ներքին վերականգնումը չի հակադրվում արտաքին համեմատություններին»¹⁰², քանի որ իր բոլոր հետագա դատողություններում նա վկայակոչում է միայն հայերենին բնորոշ օրինաչափությունները: Նա իր դատողությունները հիմնում է այն սկզբնադրույթի վրա, որ «լեզվի գրային համակարգն անբաժանելի է նրա հնչյունական համակարգից»¹⁰³, որը թեւս կարելի է ընդունել որպես հնագույն գրային համակարգերի գոյացման ենթադրական սկզբունք, սակայն հակասում է համեմատաբար երիտասարդ համակարգերի գոյացման օրինաչափություններին: Բացի այդ՝ հայտնի է, որ բազմաթիվ լեզուներ պատմության ընթացքում գործածել են գրային մի քանի համակարգեր, քանի որ փոխառել են հարեւանների համակարգերը՝ ելնելով դրանց գործառնական կամ գաղափարաբանական առանձնահատկություններից: Կարելի է ենթադրել, որ Չայոց գիրն այնքան հին է, որ մեր նախնիները, հարեւանների մոտ չտեսնելով գրային համակարգի որեւէ օրինակ, սակայն գրի անհրաժեշտություն ունենալով, ինքնուրույն են ստեղծել իրենց գիրը՝ անցում կատարելով գաղափարագրից հնչյունային գրի: Տեսականորեն, այո՝ Բայց եթե նույնիսկ դա այդպես եղած լիներ, այդ գրի ձեւավորման ընթացքը չէր կարող լինել

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 93:
¹⁰¹ Նկատենք, որ Վ-ի ծագումը Բ-ից առանձին վերցված ընդունելի է (տես ստորեւ):
¹⁰² Վ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 23:
¹⁰³ Նույն տեղում, էջ 78:

այնպիսին, ինչպես ներկայացնում է Վ. Սարգսյանը, քանի որ գրային համակարգերի պատմությունը ցույց է տալիս, որ դրանց բարեշրջումը ընթանում է որոշակի հաջորդականությամբ. գաղափարագրից՝ հնչյունային վանկագրի եւ հետո միայն՝ այբբենական գրի, քանի որ հնչյունային միավորների ամանձնացումը ոյուրին չէ եւ տեւել է հազարամյակներ: Իսկ, ըստ Վ. Սարգսյանի, ստացվում է, որ հայերենում անցումը գաղափարագրից այբբենական համակարգի կատարվել է միանգամից, այն էլ՝ տառ առ տառ, այնպես ձեւափոխության յուրաքանչյուր փուլ պիտի առնվազն տասնամյակներ տեւեր, եւ սկզբում մեր նախնիները պիտի ունենային միայն Ա տառը, հետո դրան հավելվել Ր-ն, հետո՝ Ռ-ն, հետո՝ Յ-ն եւ այլն: Հագիվ թե մեր նախնիները ստեղծեին բոլոր տառերը միանգամից եւ թելից կամ ռետինից արելի մանրակերտ պատրաստած լիսեին ու այն ձեւափոխելով՝ ստանային տառեր՝ հետեւելով Հայոց լեզվի հնչյունափոխության օրինաչափություններին (դրանք, ի դեպ, այն ժամանակներում կարող էին եւ տարբերվել այսօր մեզ հայտնի օրինաչափություններից): Ընդհանուր առմամբ՝ պետք է արձանագրել, որ Վ. Սարգսյանի վարկածը եղածներից ամենամիտաբանականն է:

1.1.13. Այբերտ Մուշեղյան

Ա. Մուշեղյանը Հայոց տառաձեւերի նախամաշտոցյան ծագման կողմնակից է եւ որպես Հայոց գրի նախօրինակ՝ առաջարկում է ընդունել հնդկական Զարոշթի գիրը: Իր վարկածը նա շարադրել է «Մերոպ Մաշտոցը եւ նախամաշտոցյան հայ գիրը» հոդվածում¹⁰⁴: Այս վարկածը եւս մեկ փորձ է՝ բխեցնելու Հայոց գիրը ոչ թե հարեան, այլ հեռավոր երկրների գրային համակարգերից, ինչպես դա անում են նրանք, ովքեր Հայոց տառերը բխեցնում են էթովպական գրից:

Ըստ Ա. Մուշեղյանի՝ հօգուտ Զարոշթի գրային համակարգի խոսում է այն, որ այս համակարգի գրանշանների շարքում կան շուրջ 30-ը, որոնք իրենց ձեւերով համընկնում են կամ նման են Հայոց տառերին, մասնավորապես՝ Ղ, Ե, Զ, Է, Ը, Ի, Լ, Ծ, Զ, Զ, Ն, Ը, Զ, Պ, Ռ, Տ, Ր, Ց, Թ տառերը: Բացի այդ՝ հօգուտ այդ վարկածի կարող են վկայել հնում հայ-բակտրիական սերտ հարաբերությունները, ինչպես նաեւ այն, որ «դեռ քրիստոնեությունից առաջ Հայաստանում՝ Տարոն գավառում հնդիկ քուրմերի հիմնած Ղեմետր Ա Գիսանե կուռքերի պաշտամունքն էր, որոնց, ըստ Չենոբ Գլակ պատմիչի, պաշտում էին նաև Հնդկաստանում»¹⁰⁵:

Ինչպես տեսնում ենք, Ա. Մուշեղյանը էթովպական վարկածի կողմնակիցների նման բավարարվում է գրանշանների արտաքին նմանությամբ, մինչդեռ այս համակարգում նույնպես գրանշանների քանակն այնքան մեծ է, որ դրանում կարելի է նկատել նաեւ այլ լեզուների գրանշաններ:

¹⁰⁴ Ա. Մուշեղյան, Մերոպ Մաշտոցը եւ նախամաշտոցյան հայ գիրը, Եր., 2012, էջ 201-236:

¹⁰⁵ Նույն տեղում:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	շ	չ	ղ	ռ	տ	տ	տ
kh	ky	ca	dy	ey	ca	ey	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca	ca

Ջարոշթի գրանշաններն ըստ Դ. Դիրինգերի:

Այսպես, կարող ենք նկատել լատինական՝ Z, S, T, Y, C, N, H, J, B, D, L, P, եւ այլ տառերը, մինչդեռ լատինական գրի գոյացման գրեթե ամբողջ ընթացքը հայտնի է, եւ այն կապ չունի Զարոշթիի հետ: Այնպես որ գրանշանների արտաքին նմանությունն առանց դրանց հնչյունային արժեքների համընկման գրային համակարգերի ծագումնաբանական կապը պարզելու տեսակետից ոչ մի արժեք չի ներկայացնում:

2. ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՁԵԻՒ ԿԵՐԼՈՒԾՄԱՆ ՍԿՉՐՈՒՆՔՆԵՐԸ

2.1. ԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ գլխում շարադրված թերություններից խուսափելու համար անհրաժեշտ է նախ դիտարկել գրային համակարգերի ստեղծման օրինաչափությունները, դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև հետազոտման եղանակները: Ներածության մեջ մենք արդեն նշել ենք գիտական մոտեցման կարեւորությունը հատկապես Հայոց գրի պատմության ուսումնասիրության ընթացքում: Այստեղ այդ մասին ասենք եւս մի քանի խոսք:

Թե որն է գիտական մոտեցումը, որ դեպքում դատողությունները կարող են գիտական համարվել եւ որ դեպքում ոչ գիտական, շատ է խոսվել եւ խոսվում: Սակայն համոզիչ եւ անհակասական սկզբունքներ մինչ այսօր դեռ չեն ձեւակերպվել: Մեր այս հետազոտության նպատակներից դուրս է նման խնդրի քննարկումը կամ առավել եւս լուծումը: Նշենք միայն մինչ այժմ արված նման փորձերի անհաջողության պատճառները: Մեր կարծիքով՝ գիտական մոտեցումը դրանցում սահմանվում է չափազանց մեծաթիվ, երբեմն տասը եւ ավելի հատկանիշներով, այն էլ որպես կանոն՝ նկարագրական եղանակով՝ պատմական օրինակների հիշատակմամբ եւ հեղինակությունների վկայակոչմամբ, այսինքն՝ հենց այն միջոցներով, որոնք կապ չունեն գիտության հետ: Գիտության համար նախադեպը կամ հեղինակությունը կարող է սոսկ ուղեցույց լինել, լրացուցիչ փաստարկ, բայց ոչ՝ ապացույց: Նույն շարքից է նաև փաստերի բացակայությունը վկայակոչելը. գիտության համար նշանակություն կարող է ունենալ փաստերի առկայությունը եւ ոչ թե դրանց բացակայությունը: Իսկ փաստերի բացակայությունն ինքնին որպես փաստ ներկայացնելը անհեռանկար մոտեցում է. այն իմաստ կարող է ունենալ միայն տվյալ պահին. ժամանակի հետ կարող են բացվել ամենաանսպասելի փաստեր:

Արդյունքում կմնա թերեւս մեկ կարելորագույն հատկություն՝ **կասկածանքը**, կասկածանքը սեփական դատողությունների իսկության հարցում, որը պիտի զգացվի հետազոտողի շարադրանքից: Ինչպես նաև սեփական տեսության թույլ տեղերի մատնացույց անելը (*հերքելիություն*), քանի որ հաճախ հեղինակին հայտնի են իր տեսության այնպիսի թույլ տեղեր, որոնք այլ կարող են եւ միանգամից չնկատել:

ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՁԵԻՒ ԿԵՐԼՈՒԾՄԱՆ ՍԿՉՐՈՒՆՔՆԵՐԸ

Մատնացույց անելով դրանք՝ հեղինակը դյուրացնում է իր դրույթները հերքելու գործը, որն անհրաժեշտ է, եթե նա ձգտում է ճշմարտության բացահայտմանը, քանզի գիտության նպատակը իսկության բացահայտումն է: Որովհետև որքան մենք այսօր պատկերացնում ենք բնությունը եւ իրականությունը, դրա բացարձակ ճանաչումն առհասարակ անհնար է: Նրան միայն կարելի է ավելի ու ավելի մոտենալ, բայց հազիվ թե հնարավոր է հասնել: Նույնիսկ եթե մի որեւէ մասնավոր հարցում հասնում ես բացարձակ ճշմարտության, պարզվում է, որ մեկ այլ պայման հաշվի առնելու դեպքում դա արդեն բացարձակ չէ:

Հենց դրանով է գիտական պնդումը տարբերվում կրոնական պնդումից: Գիտական պնդման հիմնավորված հերքումը բարիք է գիտության համար, քանի որ գիտության տեսակետից բացասական արդյունքը նույնպես արդյունք է: Այն ներդրում է որոնումների դաշտը՝ օգնելով մյուս հետազոտողներին այլեւ ուժեր չվատնել այդ սխալ ուղղությամբ (թեև հնարավոր էլ չէ արգելել դա նրանց, ովքեր գտնում են, որ տվյալ արդյունքի բացասական լինելն իրականում նախորդ ուսումնասիրողների մոլորության հետեւանք է): Հակառակ դրան՝ կրոնական պնդման դեպքում դրա նույնիսկ ոչ թե հերքումը, այլ ընդամենը կասկածի տակ ղնելը արդեն իսկ կործանարար է, քանի որ կրոնական պնդումը հենվում է ոչ թե փաստերի, այլ հեղինակությունների վրա՝ անձերի, գրքերի, անկրկնելի դեպքերի, իսկ ցանկացած հեղինակություն մնում է այդպիսին, եթե այն անսասան է:

Ցավոք, յուրաքանչյուրը կարող է վախենալ, որ ընդդիմախոսները նրա նկատմամբ նույն բարեխղճությամբ չեն գործի: Եւ որքան էլ ցավալի է, հաճախ այդպես էլ լինում է: Սակայն գիտական բարեխղճությանը գոնե պետք է ձգտել: Եւ եթե այդ ձգտումը կա, այն հնարավոր չի լինի թաքցնել. աշխատության ամբողջ շարադրանքում դա կարտացոլվի եւ ակնհայտ կլինի:

Եւս մի քանի հավելյալ սկզբունքներ.

ա) **լրացման**՝ առաջարկվող տեսությունը կարող է ժխտել նախկինում ապացուցված համարված ինչ-որ տեսություններ, սակայն ոչ բոլորը.

բ) **խնայողության** կամ **Օկկամի ածելի**, այն է. «Մի՛ բազմացրեք էություններն ատանց անհրաժեշտության», այսինքն, եթե առաջարկվող տեսությունը տալիս է ինտրի լուծման ավելի կարճ ճանապարհ, ավելի քիչ կանխավարկածներով կամ լրացատրում է ավելի շատ դիտվող փաստեր, այն նախընտրելի է.

գ) **երկակի ստանդարտների բացառումը**, երբ հեղինակը, տարբեր դիրքերից եւ կանխադրույթներից ելնելով, քննում է նույն շարքի տարբեր հարցերը՝ հարմարեցնելով սեփական ցանկություններին.

դ) **տեսության ստուգելիությունը եւ հերքելիությունը (Պոպպերի սկզբունքը)**, երբ տեսությունը մատնացույց է անում (կամ առնվազն չի փորձում շրջանցել) իրա հաստատման կամ հերքման պայմանները եւ եղանակները:

Այսպիսով, կրկին հանգում ենք **գիտական բարեխղճության** խնդրին, թերեւս՝ ամենահիմնական պայմանին, առանց որի գիտության մասին խոսելն անիմաստ է: Սույն աշխատության մեջ մենք ձգտել ենք առաջնորդվել հենց այդ սկզբունքով:

2.1.1. Ի՞նչ սկզբունքով են ընտրում գրային համակարգը

2.1.1.1. Ազգային համակարգ, թե՛ փոխառություն

Գիրը տեղեկության պահպանման եւ տարածման միջոց է: Եթե որեւէ ազգի շրջանում որոշում են գիր գործածել, ապա գրային համակարգի ընտրությունը կարող է տարբեր լինել: Այս հետազոտության շրջանակներում մենք չենք խոսելու հնագույն ժամանակների այն գրային համակարգերի մասին, որոնք առաջին անգամ էին ստեղծվում մարդկության պատմության ընթացքում: Այն ժամանակներում գրանշանները ստեղծվում էին այլ սկզբունքներով: Ի տարբերություն այդ ժամանակների կամ այն դեպքերի, երբ ստեղծողները շրջապատված էին ոչ գրածանաչ ազգերով, եւ գրելու գաղափարն իսկ նրանց հայտնի չէր, ավելի ուշ ժամանակներում մարդկանց առջեւ կար երկու տարբերակ.

- ունենալով գրի մասին ընդհանուր պատկերացում՝ գրոյից ստեղծել բոլորովին նոր համակարգ.
- հարմարեցնել իրենց լեզվի համար հարեաններից որեւէ մեկի գրային համակարգը, այն է՝ փոխառել:

Առաջին տարբերակը կարող էր իմաստ ունենալ, եթե խնդիր էր դրված այլոց համար անճանաչելի գիր ունենալը: Սակայն նման խնդիրը բնորոշ է ոչ թե ամբողջական ազգերին, այլ մասնագիտական առանձին խմբերին, օրինակ՝ լուտեսներին, սեփական մասնագիտական գաղտնիքները թաքցնել ցանկացող վարպետներին եւ այլն: Նաեւ եթե փոխառումը դժվար էր, օրինակ՝ փոխառվելիք համակարգի գրանշանների չափազանց մեծ թվի պատճառով կամ գրչարհեստում կիրառվող այնպիսի նյութերի, որոնք այլ տեղերում սակավ էին տարածված (օրինակ՝ անհրաժեշտ որակի կավը): Վերջապես, դա կարող էր լինել եւ առանց տեսանելի պատճառի, պարզապես՝ դեպքերի բերումով, ինչպես դա եղավ *չիրոկի* գրի դեպքում: Թերեւս, սրանք են ամենահավանական պատճառները, որոնք կարող են ստիպել հրաժարվել արդեն իսկ ծանոթ հարեան գրային համակարգից՝ հօգուտ բացարձակապես նորի:

Իսկ կա՞ն այլ պատճառներ, որոնք կարող են դրդել խուսափելու փոխառումից: Առհասարակ որեւէ գյուտ դատարկ տեղում չի արվում¹⁰⁶: Գյուտարարության ամբողջ պատմությունը վկայում է, որ ցանկացած գյուտ ունենում է որեւէ նախորինակ: Մեր օրերում գյուտի պաշտոնական գրանցման ժամանակ պարզապես պահանջվում է նշել նախորինակը, քանի որ *այն չի կարող չլինել*: Գոյություն ունեցող

¹⁰⁶ И. Гельб, *Опыт изучения письма*, М., 1982, с.192.

փորձը կարող է չօգտագործվել միայն այն դեպքում, եթե այն հայտնի չէ գյուտարարին, կամ եթե դրա մերժումն ինքնանպատակ է: Եւ սա ընդհանուր սկզբունք է, որը կիրառելի է մարդու գործունեության նաեւ այլ ասպարեզներում: Յուրաքանչյուր հայտնագործություն արվում է նախորդ նվաճումների հիմքի վրա. մի երեւոյթ, որ կարելի է անվանել «լրացման սկզբունք»: Այս սկզբունքը դաժանորեն է պատժում նրանց, ովքեր փորձում են շրջանցել այն. նրանց ջանքերն ապարդյուն են մնում, քանի որ արդյունքում ստեղծվում է արժեք չունեցող ինչ-որ բան, կամ էլ վերահայտնագործվում է վաղուց հայտնին: Մինչդեռ յուրաքանչյուր գրագետ ստեղծագործող նոր բան ստեղծելիս հետեւում է որեւէ նախորինակի՝ կատարելագործելով այն եւ հարմարեցնելով իր նպատակներին:

Գրի դեպքում նախորինակից չհրաժարվելը նաեւ կազմակերպչական հիմնավորում ունի: Գրային համակարգ ստեղծելը ինքնանպատակ չէ. այն դեռ պիտի դասավանդվի եւ տարածվի ժողովրդի մեջ: Եւ եթե հարեան ազգերն արդեն ունեն որեւէ գիր, ակնհայտ է, որ ժողովրդի մեջ կարող են գտնվել բազմաթիվ մարդիկ, որոնք տիրապետում են դրան: Այդ իսկ պատճառով իմաստ ունի որպես հիմք ընդունել ոչ թե որեւէ կամայական գիր, այլ ժողովրդի շրջանում քիչ թե շատ տարածվածը: Օրինակ, եթե մտովի դիմենք մի գիտափորձի, ապա կհասկանանք, որ եթե մեր գիրը այսօր ստեղծվեր, անկասկած դրա հիմքում կդրվեր լատիներենը (այն ամենատարածված գրային համակարգն է, որը գործածում են աշխարհի ամենաազդեցիկ պետությունները) ռուսական որոշ տառերի եւ հայտնի այլ նշանների հավելմամբ¹⁰⁷:

Չաճախ կարելի է բախվել այնպիսի դատողությունների, թե իբր տվյալ գրի հեղինակը (մեր դեպքում՝ Մաշտոցը) միտումնավոր ձգտում էր ստեղծել այլ համակարգերին չնմանվող գրանշաններ: Նման գործելակերպ հնարավոր է գտնում, օրինակ, Թ. Գամկրելիձեին¹⁰⁸: Ըստ նրա՝ վրացական այբուբենը կարող է ստեղծված լինել

¹⁰⁷ Այսպես, մեր օրերում էլեկտրոնային փոստից օգտվելու հարմարությունից ելնելով, Չայոց լիզվի (նաեւ՝ ռուսաց եւ այլ լեզուների) համար տարբերայնորեն կիրառվում է լատինատառ գրային համակարգ: Եւ չնայած որ Չայոց լեզվի համար 38 տառերի փոխարեն հիմնականում կիրառվում են լատինական 26 տառերը եւ անգլերենում ընդունված կցագրությունները, այնուամենայնիվ երբեմն, օրինակ, *h* տառի համար կիրառվում է ռուսական *X* տառը (պատկերված անգլիական *hny-lia* ձև: *էքս-ով!*, օրինակ՝ *խաչատուր-ը* գրվում է *Xachatur*): Բնականաբար, այս հնարքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ նամակագիրն իր նամակն ուղղում է ռուսերեն (կամ հունարեն) իմացող որեւէ մեկին: Անգլախոսին գրելիս այդ նույն մարդը կգրի արդեն ոչ թե *Xachatur* (այլապես դա կընթերցվի [բասչատուր], կամ զուցե նույնիսկ՝ [էքսաչատուր]), այլ *Khachatur*:

Էլեկտրոնային նամակներ գրելիս կիրառվում է գրի պատմությունից մեզ հայտնի մեզ այլ հնարք եւս՝ *սկզբնահնչունային* սկզբունքը: Օրինակ՝ *Ը* տառի փոխարեն (որը բացակայում է է՛ւ ռուսերենում, է՛ւ անգլերենում) ներկայումս կիրառվում է լատինական կրճատագիր @ նշանը, որի անվան (*Շթ*) առաջին հնչյունը նույնական է հայերեն [ը]-ին: Որպես հետաքրքիր *կուզարդիպություն*՝ կարելի է նշել այն, որ @ նշանի հնչյունային արժեքը [ըթ] համընկնում է հայերեն *Ը* տառի այբբենական անվան հետ:

¹⁰⁸ Т. Гамкrelidze, *Алфавитное письмо и древнегрузинская письменность. (Типология и происхождение алфавитных систем письма)*, Тбилиси, 1989.

«միտումնավոր հնացման» արդյունքում¹⁰⁹: Նման տեսակետ (երբ ստեղծվող գրային համակարգի հեղինակի կողմից հնարավոր են համարվում ինչ-որ գործողություններ՝ ուղղված սեփական ուրույն համակարգ ձեւավորելուն) տարածված է նաեւ հայ հեղինակների մոտ (օրինակ՝ Յր. Աճառյանի, Աշ. Աբրահամյանի): Այսպես՝ Յր. Աճառյանը գրում է. «Թեեւ այժմյան արեւմտյան աշխարհում տիրապետող է միեւնոյն այբուբենը (լատինական) գործածելու սկզբունքը, բայց այդպէս չէր հին արեւելյան աշխարհը: Այստեղ տիրապետում էր այն գաղափարը, թէ ո՛չ միայն ամեն մի այգ, այլ նոյնիսկ ամեն մի կրոն կամ դավանություն, պիտի ունենար իր սեփական անկախ այբուբենը»¹¹⁰: Այնուհետեւ՝ «Ազգային լեզու, ազգային այբուբեն. – այս էր հին սկզբունքը»¹¹¹: Մեկ այլ տեղ՝ «Մտորոպը հենց դիտմամբ կամ սկզբունքով նպատակ էր դրած հեռանալ բնատուր կատարյալ նմանությունից»¹¹²: Սակայն Յր. Աճառյանի այս պնդումը դժվար է ընդունել: Նախ, եթէ այն իրականությունից բխեր, շատ ազգերի այբուբեններ այսօր ինքնուրույն կլինեին: Հոյները չէին թողնի իրենց հին գրերը (գծային գիր Բ) եւ չէին անցնի փյունիկյան գրին, դպտիները չէին անցնի հունական գրին, այլ կգործածեին եգիպտական, թուրքական ցեղերը, իրենց հին ուրույն այբուբենները (թուրքական ռուները) թողած, չէին անցնի արաբականին, իսկ հետո՝ լատինականին եւ այլն:

Յր. Աճառյանն ինքն էլ է զգում, որ իրականության եւ պատմական տվյալների համեմատության դեպքում նման մոտեցումը հակասական է. «Ամեն մի այգ, որ գրականության նոր է անցնում եւ մի ուրիշ ազգից տառեր է փոխառնում, վերցնում է այդ ազգի ամբողջ այբուբենը՝ ավելացնելով նրա վրա պակաս տառերը», այնուհետեւ բերելով հայտնի օրինակները՝ հարց է տալիս. «Արդ՝ ինչո՞ւ Մտորոպը չվարվեց նույն ձեւով»¹¹³: Նկատելով, որ դրանից անմիջապէս բխում է Մ. Աբրեղյանի այն հետետությունը, թէ Մաշտոցը պարզապէս «վերցրել է ուղղակի դանիելյան այբուբենը եւ ավելացրել պակաս տառերը»¹¹⁴, բայց չցանկանալով ընդունել դա՝ Յր. Աճառյանը, հետեւելով Մ. Աբրեղյանին, փորձում է շրջանցել այդ տարբերակը այն դատողությամբ, որ եթէ որպէս հիմք ընդունվեր ասորական այբուբենը, ապա այն կարգելվեր Արեւմտյան

¹⁰⁹ «...нужно допустить, что при создании древнегрузинской письменности в качестве письменного образца был использован архаический греческий алфавит с учетом тех графических и фонетических изменений, которые возникли в греческой системе в последующий период. Все это делает возможным предположить создание древнегрузинского алфавита искусственным путем, в результате сознательной архаизации и графической стилизации взятой за образец греческой графической системы» (նշվ. աշխ.: <http://amkob113.ru/gkr/gkr95.html>).

¹¹⁰ Յ. Աճառյան, *Հայոց գրերը*, էջ 503:
¹¹¹ Նույն տեղում:
¹¹² Նույն տեղում, էջ 514:
¹¹³ Նույն տեղում, էջ 492:
¹¹⁴ «Սովետական գրականություն», 1941, ԳՎ 2, էջ 46ա:

Պայաստանում, իսկ եթէ հիմք ընդունվեր հունականը, կարգելվեր արեւելյան մասում, իսկ այսպէս ոչ մի կողմ իրեն պարտված չզգաց, եւ Հայոց գիրը տարածվեց Պայաստանի բոլոր մարզերում¹⁵: Մ. Աբրեղյանի այս բացատրությունը Յր. Աճառյանը համարում է սրամիտ, բայց մնում է իր նախորդ կարծիքին, թէ պատճառը «ազգային լեզու, ազգային այբուբեն» սկզբունքն էր, որին հետեւելը Յր. Աճառյանը վերագրում է Մաշտոցին եւ առհասարակ հին աշխարհին: Մի բան, որը, ինչպէս եւ հենց ինքն է նկատում, չի եղել¹¹⁶:

Այն փաստից, որ Հին Արեւելքում յուրաքանչյուր դավանանք ուներ սեփական գրային համակարգ, չի հետեւում, թէ դրանք միտումնավոր են մեկը մյուսից տարբերվող գծագրությամբ ստեղծվել, քանի որ իրականում դրանք միեւնոյն բնից բնականորեն (վայելչագրորեն) ճյուղավորված համակարգեր են, որոնց տարբերությունները գոյացել են *գրչական դպրոցների մեկուսացման հետեւանքով*, որը միանգամայն բնական է կրոնական համայնքների դեպքում: Իսկ, օրինակ, *Էստրանզելո, Նեստորական եւ հակոբիկյան (յաղուբի, սերտո)* գրերը, որոնք նույն պարբերության մեջ որպէս իր պնդման ապացույց վկայակոչում է Յր. Աճառյանը, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլինեին պարզապէս դիտել որպէս գրատեսակային տարբերակներ, որոնք ավելի քիչ են տարբերվում միմյանցից (հատկապէս՝ նեստորականն ու հակոբիկյանը), քան, օրինակ, հայկական *երկաթագիր, նոտրովի* եւ *բոլորգիր* գրատեսակները:

Ազգայնական գիրը հնարավոր է համարում (թեեւ վերապահումով) նաեւ Լ. Օսպենհայմը՝ ենթադրելով, որ Աբեմնեյան տերության մեջ՝ Միջագետքում, անկում ապրող սեպագրի մասնակի վերելքը կարող է բացատրվել պարսիկ արքաների՝ սեփական «ազգային» գիր ունենալու ծգտմամբ¹¹⁷: Ինչ խոսք, առանձին բացառիկ

¹¹⁵ Յ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 493:
¹¹⁶ Նույն տեղում:
¹¹⁷ «Այս պարագայում, որպէս տարօրինակություն պետք է նշել աբեմնեյան կառավարիչների գործածած (մ. թ. ա. վեցերորդից՝ չորրորդ դարերում) եւ հարավային Պարսքում ու Շոշում վկայված ոչ սեպագիր համակարգի գոյացումը: Համակարգն իրենից ներկայացնում է բառագրեր, վանկագրեր ու այբբենական տարրեր պարունակող բարդ համակցություն եւ թվում է, թէ ծագումով ասորական է պարսիկ արքաների՝ բաբելոնեւրեւի եւ էլամեւրեւի համար գործածվողների կողքին «ազգային» գրային համակարգ ունենալու ցանկությանը: Մենք նաեւ կարող ենք ասել, որ պարսկական համակարգն իր գոյությամբ ավելի շուտ պարտական է փառասիրական նկատառումներին, քան թէ գործավարության պահանջներին» (թարգմանությունը մերն է): «As a curiosity in this context should be mentioned the rise of a late cuneiform system used by the Achaemenid rulers (from the sixth to the fourth century B. C.) and attested in southern Persia and Susa. The system presents a complex hybrid containing logographic, syllabic and alphabetic elements and seems to owe its origin to the desire of the Persian kings to have a “national” system of writing beside the systems used for Babylonian and Elamite. We may well say that the Persian system owed its existence to considerations of prestige rather than to the needs of a bureaucracy». (A. Leo Oppenheim, *Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization*, Chicago, 1964, p. 236).

համակարգերի՝ հաջորդական փոխառությունների շղթա լինելը ընդունում է անվերապահորեն՝ բացատրելով նաեւ դրանց արտաքին տարբերությունները¹²¹: Նա հստակորեն չի նշում այդ տարբերությունների առաջացման եւ օտար գրերի «ազգայնացման» պատճառները՝ հավանաբար համարելով դրանք կամայական:

2.1.1.2. Ո՞րն ընտրել

Եւ ահա գրելու անհրաժեշտությունը գիտակցված է: Հարեան ո՞ր համակարգն է ընտրվելու որպես հիմք: Դա կախված է մի շարք հանգամանքներից, այդ թվում՝ լեզվական, մասնագիտական, ավանդական, գաղափարաբանական եւ այլն:

Նախ հիշենք, որ գիրն անհրաժեշտ է որեւէ տեղեկություն պահելու եւ հաղորդելու համար, իսկ դրա անհրաժեշտությունը կարող է առաջանալ միայն որոշակի գործունեության արդյունքում. այսինքն, երբ անձն ունի որոշակի զբաղմունք: Օրինակ՝ հողագործին, արհեստավորին, բեռնակրին, զինվորին գիրն առանձնապես պետք չէ: Իսկ առեւտրականին հարկավոր է. նա պիտի գրի առնի ապրանքների քանակը, գինը, ստացված եկամուտը, պարտքերը եւ այլն: Գիրն անհրաժեշտ է նաեւ գյուղապետին, հարկահավաքին, կրոնավորներին՝ ուսմունքը շարադրելու, կանոնարկելու համար: Այսպիսով, պահվող եւ հաղորդվող տեղեկությունը կարող է լինել կենցաղային, պետական, գիտական, մշակութային եւ այլն: Օրինակ՝ դիվանագիտական կառույցը կնախընտրի տվյալ պահին ընդունված միջազգային դիվանագիտական լեզուն՝ իր գրով: Գուցե նույն լեզուն (բայց ոչ պարտադիր) իր գրագրության համար կնախընտրի պետությունը: Այլ գիր կարող է հարմար գտնվել առեւտրում, մեկ ուրիշը՝ գիտության բնագավառում եւ այլն: Վերջապես, կենցաղում ժողովրդին կարող է հարմար լինել գործածել բոլորովին այլ գիր (կամ չգործածել որեւէ գիր առհասարակ. նկատենք, որ համատարած գրագիտությունը որեւէ ժողովրդի երբեք պետք չի եղել, այն էլ հնագույն անցյալում, եւ միայն վերջին դարերում է գիտակցվել դրա անհրաժեշտությունը. բավական է հիշել խորհրդային «լիկբեզները»):

Դա հայտնի երեւոյթ է. հասարակության խավային եւ մասնագիտական շերտավորումը ազդու է լեզվի վրա՝ առաջացնելով համապատասխան ենթալեզուներ¹²²: Սրանք սովորաբար նույն լեզվի տարբերակներն են լինում, սակայն երբեմն առանձին մասնագիտություններ ունեցող մարդիկ օգտագործում են բոլորովին այլ լեզու՝ գրային տարբեր համակարգերով:

Սովորաբար գրչության հնագույն փուլերն ուսումնասիրելիս գրի գործածությանը մոտենում են այսօրվա դիրքերից, երբ մասնագիտական տարբեր խավերի զատվածությունն այնքան արտահայտված չէ՝ ենթադրելով, որ գիրը պիտի բավարարի տվյալ ազգի բոլոր ներկայացուցիչների եւ մասնագետների պահանջները:

¹²¹ Տե՛ս Ա. Ղարիբջան, *Հայ գրերի եւ գրության ստեղծող Մեսրոպ Մաշտոցը* II, ԴԲՀ, ԳԼ 2, 1962, էջ 15-25:

¹²² В. Звегинцев, *Очерки по общему языкознанию*, IV, 4.1.

Մինչդեռ նույնիսկ մեր օրերում կան ոլորտներ, որոնց շրջանակներում գործածում են (կամ սկզբունքորեն կարող են գործածվել) պետական գրից տարբերվող համակարգեր: Այսպես՝ մաթեմատիկոսները կարող են ամբողջական նախադասություններ գրել, որոնցում կիրառում են այնպիսի հատուկ գրանշաններ, որոնք ուրիշ տեղ չես տեսնի: Օրինակ՝ $(\exists x \in \mathbb{N})P(x)$, որ «թարգմանաբար» նշանակում է. «գոյություն ունեն բնական թվեր, որոնք համապատասխանում են $P(x)$ հայտարարությանը»: Կամ քիմիական հետեւյալ կարճ արտահայտությունը՝ $2H_2+O_2=2H_2O+Q$, որը նշանակում է. «ջրածնի երկու մոլեկուլի եւ թթվածնի մեկ մոլեկուլի փոխազդեցությունից ստացվում է երկու մոլեկուլ ջուր, եւ արտածվում է ջերմություն»: Այս արտահայտություններում թեեւ պատկերված են նաեւ լատինական հայտնի տառեր, սակայն դրանք գործածված են այլ իմաստներով: Վերոբերյալ օրինակներում դրանք ոչ թե հնչյունային արժեքով, այլ որպես բառագրություններ են գործածված, թեեւ հիմնականում ծագում են համապատասխան լատինագիր բառերի առաջին տառերից՝ սկզբնահնչյունության կարգով: Դա նշանակում է, որ ներկայումս տարբեր ազգեր իրենց հիմնական գրային համակարգերի կողքին որոշ ոլորտներում գործածում են նաեւ գրային այլ համակարգեր, թեեւ դա սովորաբար չի գիտակցվում:

Երբեմն էլ մեր օրերում մասնագիտական տարբեր ոլորտներում գործածվում են ոչ միայն յուրահատուկ գրային համակարգեր, այլեւ լեզուներ: Այսպես՝ երբեմն թժիշկները, դեղագործները օգտագործում են լատիներեն արտահայտություններ, դիվանագետներն իրենց գործում առավելապես դիմում են անգլերեն հաղորդակցմանը եւ այլն: Մեկ այլ երեւոյթ է դիտվում Ճապոնիայում, որտեղ ավանդաբար գործածվող չինական գաղափարագրերի (դրանցով պատկերվում են բառահիմքերը) կողքին զուգահեռ գործածվում են հնչյունային երկու, գրեթե տարբեր համակարգեր. մեկը՝ բառերի թեք ձևերի վերջավորություններն իրագործելու համար (*իսիռազանա*), մյուսը՝ փոխառյալ բառերի համար (*կատականա*):

Այս երեւոյթն ավելի արտահայտված էր հին աշխարհում, երբ մասնագիտական եւ խավային տարբեր խմբեր ունենում էին իրենց գործը սպասարկող գրային համակարգ եւ լեզու: Այսպես, երբ Միջագետքում աքադերենն աստիճանաբար դուրս մղեց շումերերենը, ավելի քան մեկուկես հազարամյակի ընթացքում հաստատվեց այնպիսի վիճակ, երբ մի շարք բնագավառներ սպասարկում էր աքադերենը (օրինակ՝ օրենքների, դատական որոշումների գրառումը), իսկ մյուսները (պաշտամունքային բնույթի գրվածքների իրագործումը)՝ դեռեւս շումերերենը, կամ էլ երկու լեզուները գործածվում էին զուգահեռաբար: Հետագայում կատարվեց գործառույթների բաժանում, եւ շումերերենը մինչեւ մ. թ. սկիզբը մնաց գիտության եւ կրոնի լեզու, թեեւ խոսակցական ոլորտից արդեն բոլորովին դուրս էր մղվել¹²³: Այն պահպանեց իր դիրքը նաեւ մ. թ. ա. 1-ին հազարամյակում, երբ Միջագետք ներթա-

¹²³ Л. Оппенхейм, *Древняя Месопотамия*, М., 1990, с. 41.

փանցած արամեացիները տարածեցին այստեղ իրենց գիրն ու լեզուն՝ աստիճանաբար դուրս մղելով աթաղերենը: Այս փուլում փաստորեն հաստատվել էր արամեա-շումերական լեզվական զուգորդություն: Եթե հաշվի առնենք, որ արամեերենն ուներ նաև գրային սեփական համակարգ (տառային), ապա կունենանք միեւնույն երկրում գործող երկու տարբեր գրային համակարգերի համակեցություն: Ընդ որում, հավանաբար, արամեերենը գործածել են հատկապես առետրականները¹²⁴: Իսկ դիվանագետները պատմության արշալույսին հաճախ էին գործածում աթաղերենը: Մ. թ. ա. Ե դարից նրան փոխարինեց արամեերենը, հետո՝ հունարենը, ապա՝ լատիներենը: Այլ էր վիճակը գիտության բնագավառում, որտեղ երկար ժամանակ ընդունված լեզուն (օրինակ՝ նույն Միջագետքում) շումերերենն էր՝ նույնիսկ կենցաղային գործածությունից դուրս գալուց հետո: Միջնադարյան Երոպայում այդ դերը կատարում էր լատիներենը՝ նույնպես արդեն կենցաղային գործածությունից դուրս գալուց հետո:

Մեկ այլ օրինակ ունենք միջնադարյան Կորեայում, որտեղ 1443-1446 թթ. Սեջոն Մեծ արքայի նախաձեռնությամբ ստեղծվել էր հնչյունային «ժողովրդական» հատուկ գիր («հանգիլ», «սմուն»)՝ ի տարբերություն բարձր խավերի կողմից գործածվող «հանջա» գաղափարագրության՝ հիմնված չինական գաղափարագրերի վրա: Այն գործածության մեջ էր մինչև 1504 թ., երբ «հանգիլ»-ի գործածումը պաշտոնական գրագրությունում արգելվեց: Արդյունքում մինչև նորագույն ժամանակները կորեացիները զուգահեռ գործածել են գրային երկու համակարգ՝ գաղափարագիր՝ պաշտոնական ոլորտում, եւ հնչյունագիր՝ ցածր խավերի համար:

Ասվածից հետեւում է մի կարեւոր հանգամանք (այն սովորաբար անտեսվում է, բայց անհրաժեշտ է հաշվի առնել գրային համակարգեր ուսումնասիրելիս). **յուրաքանչյուր ազգ կարող է միաժամանակ գործածել գրային մի քանի համակարգ:**

2.1.1.3. Պետական գիր

Ինչպես արդեն նկատեցինք, հնագույն ժամանակներում, երբ կրոնական հաստատությունները համազգային չէին եւ արհեստավոր ու հողագործ բնակչության զգալի մասն ազատ էր¹²⁵, պետությունը, ի դեմս իր գրասենյակի, սոսկ մեկն էր գիր օգտագործողների՝ կրոնավորների, դիվանագետների, առետրականների եւ այլոց շարքում: Միջնադարում աճեց կրոնական հաստատությունների դերը պետության կյանքում, եւ դրանք սկսեցին ստանալ պետական կարգավիճակ: Դրա հետեւանքով համապատասխան ուսմունքի գրվածքների գիրը նույնպես ստանում է պետական

¹²⁴ Նույն տեղում, էջ 76.
¹²⁵ Տե՛ս Ի. Դյակոնովի Դ. Դիրինգերի «Այբուբենը» գրքի նախաբանում (Դ. Դիրինգեր, *Алфавит*, М., 1963, с. 20).

կարգավիճակ, եւ այդ պահից կարելի է ասել, որ *գիրը հետեւում է կրոնին*: Այս հանգամանքը մի քանի անգամ հիշատակում է Դ. Դիրինգերը իր «Այբուբենը» գրքում¹²⁶: Նույն գրքի խմբագրական նախաբանում ու գրքի էջատակում այդ միտքն ընդհանուր առմամբ ընդունում է Ի. Դյակոնովը¹²⁷: Ընդունելով այդ սկզբունքի գոյության փաստը՝ նա վերապահում է կատարում՝ նշելով, որ «գիրը հետեւում է կրոնին» բանաձեւը գործում է միայն կրոնական պարտադրանքով հատկանշվող ավատատիրական հասարակարգերում, մինչդեռ ավելի վաղ շրջանում կրոնական բազմազանության պայմաններում այն չի գործում, իսկ ավելի ուշ շրջանում փոխվում է դրա էությունը՝ փոխարինվելով «այբուբենը հետեւում է դրոշին» եւ «այբուբենը հետեւում է առետրին» բանաձեւերով (սա ընդունում է նաեւ Դ. Դիրինգերը): Այդ իսկ պատճառով ավելի ճիշտ է **«գիրը հետեւում է գաղափարաբանությանը»** առավել ընդհանուր բանաձեւը:

Թերեւս, դրա ամենատպավորիչ օրինակներից է թուրքական ազգերի գրային համակարգերի հաջորդական փոփոխությունը: Թուրքալեզու առաջին գրությունները ներկայացնում են այսպես կոչվող օրթոնա-ենիստյան լեզուն (Չ դար)՝ գրված *թուրքական ռունային* գրով, ապա՝ ուղղուրական լեզուն՝ համանուն գրով: Իսլամացվելուց հետո՝ մոտավորապես Ժ-ԺԳ դարերից սկսած, թուրքական ազգերը անցան արաբական գրին (Ղուրանի գրին): Հանրապետական կարգ, այսինքն՝ արեւմտյան գաղափարաբանական արժեքներ ընդունած Թուրքիան 1928 թ. պաշտոնապես անցավ լատինական գրին, մինչդեռ այն թուրքական ազգերը, որոնք ընդգրկվեցին Խորհրդային պետության կազմում, անցան ռուսատառ գրային համակարգերի: Հետագայում ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, թուրքալեզու այն ազգերը, որոնք կողմնորոշվեցին դեպի Արեւմուտք (Ադրբեջան, Թուրքմենստան, Ուզբեկստան), նույնպես անցան լատինատառ համակարգի, մինչդեռ համեմատաբար ռուսամետ բաղաբանություն վարողները՝ ղազախները, ղըրղըզները, պահպանեցին ռուսատառ գիրը:

Մեկ այլ օրինակ են ներկայացնում սլավոնական ազգերը. ուղղափառները (սերբերը, բուլղարացիները եւ այլն) որպես կանոն գործածում են *կյուրեղատառ* այբուբեններ (կիրիլիցա), մինչդեռ կաթոլիկները (խորվաթները, լեհերը, չեխերը եւ այլն)՝ լատինատառ: Կարելի է բերել նաեւ մուղավերենի ու ռումիներենի օրինակները (այս դեպքում *գիրը հետեւում է դրոշին*. երկու երկրներն էլ ուղղափառ են): Լինում են եւ բացառություններ: Այսպես, նույն այդ խորհրդայնացումից հետո մերձբայթյան ազգերը, հայերն ու վրացիները չանցան սլավոնական գրի: Պատճառն այն է, որ, ի տարբերություն մյուսների, նրանք արդեն ունեին գրային այլ համակարգեր եւ

¹²⁶ Դ. Դիրինգեր, *Алфавит*, М., 1963, с. 555, 629. Տե՛ս նաեւ այս գրքի Ի. Դյակոնովի նախաբանը, էջ 20:
¹²⁷ Նույն տեղում, էջ 629.

զարգացած գրականություն՝ գրված այդ գրով, եւ անցումը նոր գրին կոժվարացներ խորհրդային իշխանությունների քարոզչության գործը:

Ասվածից հետեւում է նաեւ, որ **նոր այբուբենի հիմքում կարող է դրվել միայն գրային մեկ համակարգ եւ ոչ թե գրանշանների ծաղկաբաղ՝ տարբեր այբուբեններից**¹²⁸: Համեմայն դեպքս, գրային այլ համակարգերից վերցված գրանշանները կարող են միայն լրացուցիչ լինել: Դա բնական է նաեւ գործնական իմաստով, քանի որ նոր գիրը պիտի յուրացվի եւ տարածվի: Երկրում կարող են գտնվել բազմաթիվ մարդիկ, որոնք տիրապետում են ներմուծվող գրային համակարգին՝ որպէս օտար լեզվի գրի, մինչդեռ նրանք, ովքեր կտիրապետեն միաժամանակ մի քանի օտար լեզվի, ավելի սակավաթիվ կլինեն: Ցավոք, շատ ուսումնասիրողներ այդ հանգամանքը հաշվի չեն առնում: Այսպէս՝ Հր. Աճառյանը գտնում էր, որ «*հայերեն գրերի ծագումը չի կարող լինել մի միակ աղբյուրից եւ պետք է վանապան աղբյուրներ ենթադրել*», քանի որ եղած «*այբուբեններից ոչ մեկը չէր կարող Մեսրոպի փափազը ամբողջապէս լրացնել, այսինքն՝ տալ հայերեն լեզվի հնչումները պատկերացնող բոլոր տառերը միանգամայն*»¹²⁹: Սակայն, ինչպէս տեսանք, աղբյուրի ընտրությունը կատարվում է՝ ոչ թե սոսկ հնչյունային լրակազմ հավաքածո ունենալու պայմանից եւ նելով, այլ կրոնական եւ գործնական լրջագույն պայմանների շրջանակներում:

2.1.2. Փոխառված գիր

2.1.2.1. Ի՛նչ է նշանակում «տվյալ ազգի (լեզվի) գիր»

Նախորդ ասվածից պարզ է, որ այն գիրը կարող է համարվել տվյալ լեզվի գիրը, որն *ի սկզբանե* ստեղծվել է այդ լեզվի համար: Սակայն, ինչպէս տեսանք, միայն ամենահնագույն ժամանակներում ստեղծված (օրինակ՝ շումերական, եգիպտական) եւ կամ աշխարհագրորեն մեկուսացված գրային համակարգերի մասին խոսելիս (օրինակ՝ ամերիկյան բնիկների) կարելի է *ենթադրել*, թե դրանք ինքնուրույն ստեղծագործություններ են, այսինքն՝ տվյալ լեզվի կրողները *առանց որեւէ այլ գրի օրինակ ունենալու* են ստեղծել իրենց գիրը: Ավելի ուշ ժամանակներում, երբ շփումները երկրների միջեւ ընդլայնվել էին, եթե նույնիսկ անմիջականորեն չփոխառվեր գիրը, ապա կարող էր փոխառվել դրա գաղափարը (օրինակ՝ կորեական գրի դեպքում, որի գրանշանները թեեւ զգալիորեն ինքնուրույն են, սակայն ազդված են համարվում մոնղոլական քառակուսի գրից): Եւ ահա գրային ու հատկապէս

¹²⁸ Այս հանգամանքը նկատել է Ա. Փերիխանյանը. «*Рабочим материалом при изобретении армянского письма мог служить только о п р е д е л ё н н ы й вариант северомесопотамского арамейского письма, имевший хождение на юге Армении в первые века нашей эры, а не сводная таблица синхронных ему алфавитов*» (նորացումը՝ հեղինակին է) (А. Периханян, К вопросу о происхождении армянской письменности // Переднеазиатский сборник. М., 1966. Т. II, с. 113).

¹²⁹ Հ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, էջ 512:

այբբենական համակարգերի պատմությունն ուսումնասիրելիս խնդիր է առաջանում հստակեցնելու, թե ինչ ենք հասկանում «տվյալ լեզվի գիր» կամ «փոխառված գիր» ասելով:

Սովորաբար ընդունված է ասել, որ այնպիսի լեզուներ, ինչպիսիք են չեխերենը կամ գերմաներենը, չունեն սեփական գրային համակարգ եւ օգտվում են լատինական գրից: Սակայն լատինական այբուբենում չկան այդ լեզուներում գործածվող այնպիսի նշաններ, ինչպիսիք են, օրինակ, *Č* կամ *ß* գրանշանները: Այդ հակասությունը շրջանցելու համար ասում են, թե այս լեզուների այբուբենները «լատինական հիմքով» են: Ասել է, թե տարբերություններն «աննշան» են, եւ սրանք ինքնուրույն այբուբեններ չեն: Բայց ո՞ր պահից սկսած կարելի է համարել, որ տարբերություններն «եական» են եւ կարելի է խոսել «նոր» այբուբենի մասին: Օրինակ, ընդունվում է, որ գոյություն ունի ռուսական գիր, չնայած ներկայիս ռուսական գիրը երկու երրորդով ոչ այլ ինչ է, եթե ոչ հունական այբուբենը: Իսկ հունական 24 տառերից 21-ը փյունիկյան գրանշաններ են կամ դրանց տարբերակները, եւ հույների կողմից հավելվել են միայն *Φ*, *Χ*, *Ψ* տառերը: Այսինքն՝ հունական այբուբենը 88 տոկոսով փյունիկյան է, բայց նույնպէս համարվում է փյունիկյանից տարբեր մի համակարգ: Սակայն 32 տառ պարունակող իսլանդական այբուբենը, որից 10-ը լատինական հիմքից դուրս են, համարվում է լատինական հիմքով այբուբեն: Թերեւս պատճառն այն է, որ իսլանդական լրացուցիչ տառերը կազմվում են լատիներենից՝ տարբերիչ տառերով, իսկ հունական երեք տառերը սկզբունքորեն այլ ձեւ ունեն: Բայց հավանաբար ավելի մեծ դեր ունի գրանշանների վայելչագրական ռճավորումը. տարբերիչ նշաններով տառերը հիմնականում պահպանում են հիմքային տառի գծապատկերը եւ նորություն չեն մտցնում այբուբենի արտաքին կերպարի մեջ: Սակայն վայելչագրական ռճավորումը չի ազդում գրոյթների եուրյան վրա:

Մյուս կողմից՝ գրային որոշ համակարգեր (օրինակ՝ ասորական, արաբական եւ այլն) թեեւ հաստատապէս ծագել են նույն հյուսիսսեմական այբուբենից, սակայն դրանց առանձին գրանշանները կրել են ոչ միայն վայելչագրական, այլեւ տեղաբանական (topological) փոփոխություններ. *մակերեսային դիտարկմամբ* դրանց գրոյթների ծագումն այդ նախօրինակից դժվար է պատկերացնել, եւ սրանք իրավամբ կարելի էր ինքնուրույն համակարգեր համարել:

Հետեւապէս մնում է երկու հնարավորություն. ընդունելով, որ վերոնշյալ հաջորդաբար փոխառված գրային համակարգերը փյունիկյան այբուբենի տարբերակներն են (չմոռանալով նաեւ, որ փյունիկյան գիրն էլ գրոյից չի ստեղծվել եւ ունեցել է նախօրինակ, թեեւ այն դեռ հաստատապէս բացահայտված չէ), յուրաքանչյուր լեզվի գրային համակարգ (ներառյալ՝ չեխերենը, էստոներենը եւ նման բոլոր այլ համակարգերը) առանձին այբուբեններ համարել՝ միմյանցից առավել կամ պակաս չափով տարբերվող (գործնականում տարբերություններ անպայման կլինեն),

կամ ինքնուրույն համարել միայն համակարգերը, որոնց գրանշանները տեղաբա-
նորեն տարբերվում են: Թերեւս, առավել ճշգրիտ պետք է համարել առաջին տար-
բերակը. յուրաքանչյուր լեզու ունի սեփական այբուբեն, որը կարող է ձեւավորված
լինել ըստ վայելչագրական, ծագումնաբանական եւ այլ սկզբունքների:

Սակայն սովորաբար այս հարցում հստակություն չկա: Օրինակ՝ Է. Աղայանը
գրում է. «Ժամանակակից եւրոպական լեզուները գրեթե բոլորն էլ օգտագործում են
լատինական այբուբենը»¹³⁰: Կամ այսպիսի հակասական միտք. «Ժամանակակից
ֆրանսերենն ունի իր այբուբենն, իհարկե, բայց դա ոչ թե ֆրանսիական այբուբեն է,
այլ լատինական»¹³¹: «Մեսրոպն էլ, ձեռնարկելով հայերենի համար գիր ստեղծելու
գործին, կարող էր, անշուշտ, վերցնել իրեն ծանոթ այբուբեններից մեկը, օրինակ՝
հունարենը, եւ հարմարեցնել հայերենին՝ որոշ տառակապակցություններով ու
նշաններ ավելացնելով: Բայց նա այդպես չի վարվել. նա ստեղծել է **հայկական այ-
բուբեն** [ընդգծումը՝ Է. Ա.], մի այբուբեն, որ խորապես տարբեր է իր ժամանակի (եւ
հետագայի) բոլոր այբուբեններից եւ միանգամայն ինքնատիպ»¹³²: «Հայտնի է, որ
հայկական գրերն ստեղծելու համար Մեսրոպն օգտագործել է հիմնականում հու-
նական, ասորական եւ իրանական (հատկապես պահլավական) այբուբենները,
բայց դրանք նրան ծառայել են որպես ելակետ կամ նախատիպար: Նկատի ունենա-
լով դրանք եւ վերցնելով դրանցից պնակապատ տառեր, նա այնպես է փոխել այդ տա-
ռերը, որ հնագրական (palaeographic) բազմաթիվ հետապոստություններն անգամ
դեռեւս վերջնականապես չեն կարողացել որոշել մի շարք տառերի նախատիպար-
ները»¹³³:

Չր. Աճառյանը գրում է. «Թեեւ աշխարհում 1500 լեզու կա, բայց այս բոլորը,
իրենց սեփական այբուբենը չունեն: Նախ լեզուների մեծ մասը անգիր է, երկրորդ՝ շա-
տերը գործ են ածում մի ուրիշ ազգի կամ լեզվի այբուբենը»¹³⁴:

Նա այն ազգերը (լեզուները), որոնք չունեն սեփական այբուբեն, երեք խմբի է
բաժանում. ազգեր, որ անփոփոխ գործածում են ուրիշ լեզվի այբուբենը, ազգեր, որ
գործածում են ուրիշ լեզվի այբուբենը՝ «ավելացնելով նրա վրա մի քանի նոր տա-
ռեր», եւ «երրորդ տեսակին են պատկանում այն այբուբենները, որոնք թեեւ մի ուրիշից
են կազմված, բայց այնքան են փոփոխված, որ ստացել են սեփական անկախ այբու-
բենի երեւոյթ. այսպես են սլավականը եւ դպտիականը, որոնք կազմված են հունա-
կանից եւ նույնիսկ հունականը, որ ծագել է փյունիկական այբուբենից»¹³⁵:

¹³⁰ Է. Աղայան, Մեսրոպյան այբուբենը եւ ուղղագրությունը // «Մեսրոպ Մաշտոց», էջ 67:

¹³¹ Նույն տեղում, էջ 68:

¹³² Նույն տեղում, էջ 67:

¹³³ Նույն տեղում, էջ 68:

¹³⁴ Չ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 502:

¹³⁵ Նույն տեղում, էջ 503:

Թե որ լեզուները կարելի է դասել Չր. Աճառյանի սահմանած առաջին տեսա-
կին, պարզ չէ. նա օրինակներ չի բերել, մինչդեռ հայտնի այբուբեններից յուրաքանչ-
յուրը ինչ-որ հատկանիշով տարբերվում է մյուսներից: Այնպես որ կարելի է այս
դեպքն առհասարակ չդիտարկել: Ինչ վերաբերում է երկրորդ եւ երրորդ դեպքերին,
ապա պարզ չէ, թե որն է այն սահմանը, որի դեպքում կարելի է ասել, որ դա մեկ այլ
այբուբեն է՝ «ավելացված նրա վրա մի քանի նոր տառ», իսկ դրանից հետո՝ որ դա
«այնքան է փոփոխված, որ ստացել է սեփական անկախ այբուբենի երեւոյթ»¹³⁶:

Այսպիսով, **գրերի՝ «ազգայինների» եւ «փոխառվածների» բաժանումը պայ-
մանական է եւ կախված է մի կողմից տվյալ գրային համակարգի ընկալումից՝
որպես իր նախորդից տարբերվողի, մյուս կողմից պայմանավորված է ավան-
դական մոտեցումներով եւ կապ չունի իրական անկախության հետ**, քանի որ
պատմականորեն նոր այբուբենները ստեղծվել են գոյություն ունեցող որեւէ հարե-
ւան այբբենական համակարգ (բոլորն էլ ի վերջո միեւնույն աղբյուրից են բխում)
տվյալ լեզվին հարմարեցնելու միջոցով՝ լրացվելով իրենց հնչյունային համակարգե-
րի պահանջներին բավարարող նշաններով՝ տառային, կետադրական: Մինչդեռ
հաճախ ուսումնասիրողները հակադրում են «այբուբեն ստեղծելը» «այբուբեն հար-
մարեցնելուն»:

2.1.2.2. Ո՞րն է համարվում հեղինակային գիր

Նախորդ կետի տրամաբանական շարունակությունն է «*հեղինակային գիր*» հարցը:
Երբեմն հեղինակային գիր ասելով՝ հասկանում են նախօրինակ չունեցող գիր, սա-
կայն, ինչպես տեսանք, նման բան փաստորեն չի եղել եւ **գրի հեղինակ պիտի հա-
մարվի այն անձը, որն առաջինն է տեղայնացրել նախօրինակ գիրը**: Պետք է ար-
ձանագրել, որ սովորաբար հենց այդպես էլ արվում է, եւ այս իմաստով են հեղինակ-
ներ համարվում, օրինակ, Վուլֆիլան կամ Կիրիլը, որոնք իրենց լեզվի համար տե-
ղայնացրել են հունական գիրը: Ոչ ոք չի կասկածում, որ Վուլֆիլան վերցրել է հու-
նական այբուբենը եւ լրացրել այն գործերնին անհրաժեշտ տառերով, սակայն նա
չի դադարում այդ այբուբենի հեղինակը լինելուց: Մեկ ուրիշն էլ ժամանակին նույն
կերպ ստեղծել է հունական գիրը՝ դառնալով դրա հեղինակը: Միակ տարբերու-
թյունը նրա եւ Վուլֆիլայի միջեւ այն է, որ այդ մարդու (կամ մարդկանց) անունը մեզ
չի հասել, քանի որ հունական այբուբենը շատ ավելի վաղուց է փոխառվել ու նաեւ
թաղմիցս բարեփոխվել է: Հունական ավանդությունը դրա փյունիկյան կորիզի հե-
ղինակ համարում է կիսաառասպելական Կադմոսին (այդ մասին ստորեւ): Փոխա-
րենը՝ մենք չգիտենք այն հայի (կամ հայերի) անունը, որ մեր այբուբենին հավելցե *օ*
եւ *ֆ* տառերը, իսկ հույները գիտեն, որ իրենց լրացուցիչ տառերը հավելել են Սիմո-
կիդես Սամոսացին եւ Էպիհարմոս Սիկիլիացին¹³⁷:

¹³⁶ Նույն տեղում:

¹³⁷ P. Грейс, Мифы Древней Греции, М., 1992, с. 142.

Ա. Մարտիրոսյանը այդ հասկացությունը գործածում է առաջին իմաստով. «*Եթե ասենք Վուֆիլան, Մաշտոցը կամ Կիրիլն են ստեղծել համապատասխան այբուբենները, ապա ուրեմն դրանք վուֆիլյան, մաշտոցյան կամ կիրիլյան ծագում ունեն: Մոռացվում է գրի հեղինակային բնույթը, նրա արարումը եւ ամբողջ ուշադրությունը տրվում նշանների արտաքին ձեւին*»¹³⁸: Դժվար է չհամաձայնել Ա. Մարտիրոսյանի հետ, որ եթե տվյալ գիրը ստեղծել է Վուֆիլյան, ուրեմն դա «վուֆիլյան» գիր է: Եւ իրոք, իմաստ չէր ունենա նմանություն որոնել նրա ստեղծած գրանշանների եւ մեկ այլ այբուբենի գրանշանների միջեւ, եթե ապացուցված լիներ, որ նա կամայական նշաններ է ստեղծել համապատասխան հնչյունների համար: Բայց հարցն էլ հենց այն է, որ նրա ստեղծած նշանները, ինչպես ասվեց, կամայական չեն: Դրանց մեծ մասը վերցված է հունական գրից, եւ նրա կողմից ընդամենը 5 կամ 6 նշան է հավելվել: Ընդ որում հունական գրի՝ դրա նախօրինակը լինելն այնքան ակնհայտ է, որ երկար համեմատելու կարիք չկա, եւ դրանից հետո մնում է պարզել միայն լրացուցիչ տառերի ծագումը, որը նույնպես դժվար չէ. դրանց մեծ մասը լատինական են, եւ միայն երկուսը՝ ռունական: Ինչպես տեսանք, համեմատությունն արդյունավետ եղավ. բոլոր տառերի նախօրինակները պարզ են: Մի՞թե դրանից հետեւում է, որ գոթական այբուբենի հեղինակը Վուֆիլյան չէ: Ո՛չ, իհարկե: Չէ՞ որ այդպիսի գրանշանների ցանկ չունի ոչ մի այբուբեն, եւ հենց Վուֆիլյան է այդ ցանկի հեղինակը:

Բնականաբար, ինչպես նշվեց, գրային համակարգերի անմիջական փոխառումից բացի, հնարավոր է գրանշանների թե՛ ներքին, թե՛ արտաքին ձեւի հարցում գրային համակարգի հեղինակային ստեղծում առանց որեւէ նախօրինակի: Գործնականում, սակայն, նման ապացուցված դեպքեր (համեմատյալ դեպս՝ հին աշխարհից) չկան: Նոր ժամանակներից նմանատիպ օրինակներ կան: Դրանցից ամենահայտնին է ԺԹ դարասկզբում չիրոկի հնդկացիական ցեղի լեզվի համար ստեղծված այբուբենը. այն ներքին ձեւով վանկագիր է, արտաքին ձեւով՝ լատինական տառերի (առանց հնչյունային արժեքների համապատասխանության) եւ կամայական նշանների կիրառմամբ ձեւավորված: Թեեւ այս համակարգում էլ որոշ տարրեր փոխառված են հեղինակի՝ հնդկացի Սիբվայայի կողմից, բայց այնքան կամայականորեն, որ այս գիրն իրոք կարող է հեղինակային համարվել: Սակայն աշխատանքի արդյունքը գոհացուցիչ չի եղել. թեեւ գիրը գործածվել է մի քանի տասնամյակ (դրանով նույնիսկ թերթեր են տպագրվել, իսկ այսօր՝ Համացանցի դարում, որոշ նվիրյալներ փորձում են վերակենդանացնել այն՝ ստեղծելով գրային այդ համակարգով *Ճեպագիտարանի* (Wikipedia) բաժին), սակայն դրանում չէին օգտագործվել գրային համակարգերի՝ այդ ժամանակի բոլոր նվաճումները, մասնավորապես՝ լատինական համակարգի դրական կողմերը: Դա օրինաչափ էր. Սիբվայան գրավոր լեզվի չէր տիրապետում:

¹³⁸ Ա. Մարտիրոսյան, *Մաշտոց*, էջ 265:

2.1.3. *Ի՞նչ սկզբունքով են ստեղծվում նոր գրի նշանները*

Ընդունենք, որ նոր գրային համակարգի նախօրինակն ընտրված է: Սակայն նոր լեզվում, որին այդ գիրը պիտի այսուհետ սպասարկի, անկասկած լինելու են հնչյունային տարբերություններ, որոնք պիտի որեւէ կերպ հաշվի առնվեն:

Նոր նշանների հավելման (ստեղծման) տարբեր եղանակներ կան.

ա. եղած նշաններից կազմվում են երկ-, եռա-, քառա- գրություններ, օրինակ՝ լատինական գրանշանները՝ *CH, TH, SCH* եւ այլն.

բ. ստեղծվում են նոր նշաններ՝ նախօրինակի նշաններին հարազատ ձեւերով. դա արվում է ընտրված նախօրինակի նշանների համաչափ փոփոխմամբ (*Յ-ն՝ E-ից*), առանձին տարրերի հավելմամբ (*G-ն՝ C-ից, Ճ-ն՝ D-ից*) կամ փոփոխմամբ (*U-ն՝ V-ից*), երկգրությունների՝ մեկ գրանշանի վերածմամբ (*W-ն՝ VV-ից, AE-ն՝ AE-ից*) եւ այլն.

գ. եղած նշաններին հավելվում են տարբերիչ նշաններ, օրինակ՝ *Ս, Շ, Ն*.

դ. փոխառվում են նշաններ մեկ այլ գրային համակարգից, որը, սակայն, նույնպես ծանոթ է ապագա լսարանին, օրինակ՝ իսլանդական *D-ն*՝ գերմանական ռուներից:

Տեսականորեն հնարավոր է նաեւ հինգերորդ տարբերակը՝ որեւէ կամայական նշանի հավելումը, սակայն գործնականում նման բան գրեթե չի դիտվում, քանի որ ցանկացած հնչյուն կարող է դասվել գրանշանների որեւէ առկա խմբին եւ վերոթվարկյալ հնարքների կիրառմամբ պատկերվել համապատասխան խմբի գրանշանների փոփոխմամբ, հատկապես որ դա նաեւ հեշտացնում է նոր գրանշանների յուրացումը:

Եթե նախօրինակի գրանշանները ձեւավորչական տեսակետից թերի են, դրանք կարող են շտկվել (*կորոնդայնացում*), սակայն փոփոխությունները պիտի այնքան չափավոր լինեն, որ տվյալ նշանն անճանաչելի չդառնա, հակառակ դեպքում դա հավասարագոր կլինի նոր, կամայական գրանշանի ստեղծմանը, մինչդեռ հիմնօրինակ գրային համակարգը ընտրվել էր հենց դրա որոշ արժանիքների համար եւ դրանք գործածելու ու ոչ թե թաքցնելու նպատակով: Ինչպես արդեն նկատել ենք, այբուբենը տեղեկույթի պահպանման եւ տարածման համակարգ է եւ ներթադրում է գրողի (տեղեկույթի հաղորդիչի) եւ ընթերցողի (տեղեկույթի ընդունիչի) առկայություն, որոնք օգտվում են այլագրային (կողային) որոշակի համակարգից՝ այբուբենից, որը ներկայանում է որպես տառաձեւերի լրակազմ: Հետևապես, հաղորդակցվողները շահագրգռված են չխախտել գրանշանների ձեւերը, այլապես դրանք անճանաչելի, այսինքն՝ ոչ պիտանի կդառնան, քանի որ **գիրը ոչ թե գաղտնագրման համակարգ է, այլ գործիք է լայն վանձվածների հաղորդակցման համար:**

2.1.4. Ինչո՞ւ են փոխվում տառածեւերը, եւ ինչպե՞ս է ապահովվում կայունութիւնը

2.1.4.1. Փոփոխության պատճառները

Տառածեւերը փոխվում են, այլապէս չէին գոյանա ներկայումս հայտնի հարյուրավոր գրային համակարգերը, որոնք հիմնականում հաջորդական փոխառութիւններ են, երբեմն՝ նույնիսկ փաստագրված: Ո՞րն է փոփոխության պատճառը:

Յր. Աճառյանը դրա պատճառ է համարում ժամանակը: Նա բերում է փոփոխված տառածեւերի օրինակներ՝ Ա եւ ա, Ի եւ ւ, Ձ, ծ եւ շ, Տ եւ տ, եւ եզրակացնում. «Ժամանակն է այս բոլորի հեղինակը»¹³⁹: Մինչդեռ ակնհայտ է, որ ժամանակն այստեղ էթէ անգամ կապ ունի, ապա այդ կապն անուղղակի է: Ի վերջո, ամեն ինչ ժամանակի մեջ է կատարվում, եւ ժամանակը փոփոխութիւնների պատճառ հայտարարելն անվազն պիտի նշանակի, որ տառածեւերի փոփոխութիւնները ժամանակի մեջ հավասար արագութեամբ են ընթանում: Բայց այդ նույն Ա տառը անփոփոխ է գրեթէ Մեսրոպի օրերից, իսկ ա տառն անփոփոխ է գրեթէ Ժ դարից՝ ավելի քան հազար տարի: Ինչո՞ւ Ա տառը երեք-չորս դարերի ընթացքում վերածվել է ա-ի, բայց հետո՝ հազար տարվա ընթացքում, անփոփոխ են մնացել թե՛ այդ ածանցյալ ա-ն եւ թե՛ սկզբնական Ա ձեւը: Եւ ոչ միայն Ա-ն, այլեւ Յր. Աճառյանի թվարկած մյուս տառերը նույնպէս, նաեւ՝ բոլոր մնացածը:

Դրանից բացի՝ հունական գիրը ծագում է փյունիկյանից (անմիջականորէն կամ միջնորդված), լատինականը՝ հունականից (ինչպէս ընդունված է համարել՝ էտրուսկականով միջնորդված), նաեւ գոյացել են դրանց փոքրատառերը (պատմութեան սանդղակով՝ գրեթէ ակնթարթորէն) եւ այլն: Յուրաքանչյուր փոխառութիւն բերել է զգալի փոփոխութիւնների վերոնշյալ գրերի թե՛ ներքին եւ թե՛ արտաքին ձեւերում: Իսկ արդէն փոխառման պահերից հետո անցել են հազարավոր տարիներ, բայց այդ գրային համակարգերը մնացել են գրեթէ անփոփոխ:

Պարզ է, որ բուն պատճառն այլ տեղ պետք է որոնել: *Գրանշաններն աղավաղվում են վերարտադրելու ընթացքում*: Գրանշանների իրագործման եղանակները, ըստ աղավաղումից պաշտպանվածութեան աստիճանի, կարելի է բաժանել երկու խմբի՝ ձեւի մոտավոր վերարտադրման եւ ճշգրիտ վերարտադրման: Առաջինը *բուն գրելն է*, որը կարելի է սահմանել որպէս գրանշանի տարրերի (մասնիկների) իրագործում այնպիսի եղանակով, որի դեպքում նրա առանձին տարրերը գոյանում են կրիչի (թղթի, մագաղաթի, կավի եւ այլն) վրայով գրելու գործիքի (մատիտի, գրիչի, շուղի, վրձնի եւ այլն) միանգամայն շարժման արդյունքում եւ այնպիսի արագութեամբ, որ իրագործողը չի հասցնում վերահսկել գրիչի շարժման ուղղությունը եւ չի ուղղում սխալները, որոնց հետեւանքով գրանշանն իր սահմանված պաշտոնական ձեւից որոշ չափով տարբեր է ստացվում: Գրի այս տեսակը այսուհետ կանվանենք

¹³⁹ Յ. Աճառյան, *Հայոց գրերը*, էջ 516:

արագագիր կամ *կենցաղային գիր*: Ճշգրիտ վերարտադրման եղանակներն են *Նկարելը*, *գծագրելը* եւ այլն, որոնց դեպքում գրանշանի տարրերը գոյանում են կրիչի վրայով գործիքի այնքան անգամ եւ այնքան դանդաղ շարժվելու արդյունքում, մինչեւ որ նշանը ձեռք բերի իրագործողին *հայտնի պաշտոնական ձեւը*: Գրի այս տեսակը կանվանենք *կոթողային գիր*:

Սա գրի հիմնական տեսակն է, որը կիրառվում է տվյալ գրի (լեզվի) կրողներին ուղղված կարելու գրութիւններում: Գիրը կոթողային դարձնելիս դրան ձգտում են հաղորդել առավել պարզ երկրաչափական ձեւեր: Կոթողային գիրը հենց այն օղակներից մեկն է, որը պաշտպանում է գրանշանների ձեւը տարբեր տեսակի աղավաղումներից: Դրա կազմակերպչական մարմինը ազգային *դպրոցն է* (սովորաբար կրօնական կամ պետական կազմավորմանը ենթարկվող), որտեղ դասավանդվում են գրանշանների իրագործման եղանակները (*վայելչագրութիւնը*) պաշտոնական, կոթողային գրի օրինակներով¹⁴⁰: Այսինքն՝ գիրը կարող է փոփոխվել միայն ազատ գործածման ընթացքում եւ մասնավորապէս՝ որեւէ նոր լեզվի սպասարկմանն անցնելու պահին՝ այն կարճատեւ ժամանակաշրջանում, *երբ նախորդ լեզվի գրչական դպրոցն այլեւս չի ապրում նրա վրա, իսկ նոր լեզվի դպրոցը դեռ չի սկսել վերահսկել այն*: Պատկերացնելու համար, թե որքան արդյունավետ է գործում այս համակարգը, բավական է համեմատել օրինակ, ներկայիս լատինական գլխատառերի ձեւերը Տրայանոսի սյան՝ 113 թ. արձանագրութեան գրեթէ երկհազարամյա տառածեւերի հետ կամ ներկայիս Հայոց գլխատառերի ձեւերը՝ եղվարդի եռանավ եկեղեցու՝ 2 դարի արձանագրութեան տառածեւերի հետ. նույնիսկ հազարամյակների ընթացքում տառածեւերը կարող են մնալ անփոփոխ: Ավելին, այսօր այս արձանագրութիւնների տառածեւերը մնում են համապատասխան գրային համակարգերի գեղագիրների համար հիմնօրինակային նմուշներ. դրանց երկրաչափական ձեւերը ուսումնասիրվում են, գտնելու համար դրանց կանոնավոր իրագործման սկզբունքները, որպէս կատարյալ գրի օրինակներ հանձնարարվում են աշակերտներին:

¹⁴⁰ Ուշ միջնադարում ասպարեզում հայտնվեց եւս մի գործոն՝ տպագրութիւնը, որը մեծապէս նպաստեց կոթողային տառածեւերի ամրակայմանը: Նախկինում դրանց առավելագույն կայունութիւնը պահպանում էին քարի վրա փորագրված արձանագրութիւնները, սակայն միեւնոյն է՝ ձեւավորվում էին տարբեր գրչական դպրոցներ, որոնք այս կամ այն չափով հեռանում էին սկզբնական ձեւերից, ինչն արտահայտվում էր նաեւ նոր արձանագրութիւններում: Ու քանի դեռ գրեթէ ոչ ուտեղծվում էին ձեռքով եւ դրանց քանակը փոքր էր, տարբեր դպրոցները կարող էին կողք կողքի գոյատեւել: Սակայն երբ ասպարեզում հայտնվեց տպագրութիւնը՝ գրքերի հսկայական տպաքանակներով, դրանց տառածեւերը արագորէն տարածվեցին, հիմնօրինակ դառնալով տարբեր դպրոցների համար: Այսուհետ միօրինակացվում էր նաեւ դասագիրքը, այսինքն՝ եւ ինքը՝ դպրոցը: Իսկ տպագրական տառածեւերը մշակվում էին առավել կատարյալ եւ ընթերցելի, հաճախ՝ հնարուն ձեռագրերի եւ արձանագրութիւնների նմուշների հիման վրա:



Տրայանոսի սյան արձանագրությունը: Ճարտարապետ՝ Ապոլլոդորոս Դամասկոսցի, 113 թ.:



Եղվարդի եռանավ եկեղեցու (2 դար) արձանագրության մի հատված:

Սակայն փոխանակվող տեղեկույթի ծավալը մոտավորապես վաղ միջնադարում այնքան է աճում, որ տառերի հիմնական կանոնավոր ձեւը հնարավորություն չի տալիս արագացնել գրի իրագործումն առանց տառաձեւերի աղավաղման: Օգնու

թյան է գալիս մի պարզ հնարք. դժվար չէ նկատել, որ եթե կանոնավոր տառաձեւերն այնպիսին լինեն, որ մոտ լինեն արագագրականին, դրանք ավելի քիչ կաղավաղվեն: Եւ ահա գրային որոշ համակարգերում (պայմանականորեն անվանենք եւրոպական) այդ արագագրական ձեւերը կոթողայնացվում են՝ ստեղծելով գրանշանների *երկրորդ կանոնավոր ձեւը*, որը ստանում է *փոքրատառ* (minusculus) անվանումը¹⁴¹: Հայկական գրչարվեստում այն ստանում է նաեւ *բոլորգիր* անվանումը, բանի որ արագ գրված գրանշաններն առավելապես կլորավուն են, *բոլորածեւ*: Միաժամանակ, կոթողային գրատեսակը նույնպես շարունակում է օգտագործվել, սակայն միայն կարեւոր դիրքերում՝ վերնագրերում, հատուկ անունների, գոյականների, նախադասությունների առաջին տառերն իրագործելիս, բանի որ առավել պարզ եւ հանրահայտ լինելով՝ հնարավորություն է տալիս ապահովել դրանց ընթեռնելիությունը եւ ստանում է *մեծատառ* (majusculus) անվանումը¹⁴²: Ահա եւ բացատրությունն այն բանի, թե ինչու են կոթողային տառաձեւերը աղավաղվում ստանալով երբեմն դրանցից էապես տարբերվող փոքրատառերի ձեւ, սակայն հետո՝ դարերի ընթացքում, մնում են անփոփոխ:

Այսպիսով, յուրաքանչյուր գրային համակարգի կյանքում առկա են լինում հավաքիչ երեւույթներ. մեկը՝ ուղղված գրանշանների ձեւի պահպանմանը, մյուսը՝ դրանց փոփոխմանը: Դիտվում է նաեւ այսպիսի երեւույթ. բանի որ յուրաքանչյուր հաղորդակցվող (ոչ միայն պաշտոնական ատյանների հետ կապված) շահագրգռված է պահպանել գրանշանների ձեւերը, շատերը փորձում են հաղորդել իրենց գրածին առավել հանդիսավոր (կոթողային) տեսք. որոշ կոր գծեր ուղղում են, մեծ կորություն ունեցող հատվածները փոխարինում են անկյուններով, անկանոն կորերը՝ կարկինային կորերով եւ այլն: Տեղի է ունենում կենցաղային տառաձեւերի կոթողայնացում (ավելի ճիշտ՝ տառաձեւերի մասին կենցաղային, անձնական պատկերացումների փոփոխություն): Գրանշանի կոթողային ձեւի հետ կապ չունեցող հավելյալ մասնիկներն առանձին անհատներ մեկնաբանում են յուրովի՝ վերաիմաստավորելով դրանք: Ապա նրանք ներառում են վերաիմաստավորած մասնիկները իրենց կողմից իրագործվող կոթողային բնույթի գրություններում՝ ստեղծելով վայելչագրական նոր ավանդույթներ:

Լեզվաբանության մեջ այս երեւույթը հայտնի է որպես *ժողովրդական ստուգարանություն*: Հիշենք, օրինակ, «Լեզու» բառը, որն իր ձեւն է ստացել՝ ազդվելով

¹⁴¹ Ю. Перепѣлкин, О происхождении минускульного письма // М. А. Коростовцев, Писцы Древнего Египта, СПб, 2001, с. 253-308.

¹⁴² Գրի արագության ավելացման անհրաժեշտությունից ելնելով՝ հետագայում ձեւավորվում է երրորդ կանոնավոր ձեւը՝ ձեռագիրը: Արագությունն էլ ավելի բարձրացնելու համար կիրառվում է նա մի գրելաձեւ՝ սղագրությունը, որը, սակայն, այլ բնույթ ունի՝ տառաբառագրային (գործածվում են հատուկ նշաններ տառերի եւ առանձին բառերի համար), որը տարբեր երկրներում գործածվել է հնագույն ժամանակներից սովորական գրին զուգահեռ:

«լիզել» բառից: Գրի ասպարեզում նույնպես դիտվում են նման օրինակներ: Այսպես, արդեն մեր օրերում տառատեսակների որոշ ձևավորողներ հայկական Շ գրանշանը ընկալեցին որպես եւրոպական Շ գրանշանի սկզբունքով ստեղծված գիր. այսինքն՝ Շ գրանշանը՝ «[~]» (*պսակ*, caron) տարբերիչ նշանով: Արդյունքում Շ-ն սկսեցին երբեմն պատկերել երկու առանձին մասերից բաղկացած (վերին գծիկի եւ ստորին կիսակլորի): Կարող են դիտվել ժողովրդական ստուգաբանության եւ այլ օրինակներ: Այսպես՝ արագագրության ընթացքում գոյացող գրչի պատահական հետքերը (կապակցող գծերը, *ազիւները*) կարող են ընկալվել որպես գրանշանի բաղկացուցիչ մաս, կամ հակառակը՝ գրանշանի բաղկացուցիչ մասը կարող է ընկալվել որպես կապակցող մասնիկ եւ գրանշանին հանդիսավոր տեսք հաղորդելիս վերացվել:

Սակայն այս երեւոյթը եւս էապես չի կարող ազդել գրանշանների պաշտոնական ձեւի վրա. պաշտպանիչ համակարգերը չափազանց հուսալի են:

Վիճակն այլ է լինում, եթե գրային համակարգը փոխառվում է: Այստեղ հնարավոր է երկու դեպք. ա) փոխառումը կատարվում է կենտրոնացված եղանակով՝ հասարակութունը կառավարող գերագույն մարմինների՝ աշխարհիկ եւ/կամ հոգևոր իշխանութունների կողմից իրենց խնդիրների՝ կառավարման եւ քարոզչության իրականացման համար. բ) փոխառումը կատարվում է տարերայնորեն՝ առանձին անհատների շփումների արդյունքում:


Առաջին դեպքում պաշտպանիչ համակարգերը կշարունակեն գործել, քանի որ դրանք պետական մի համակարգ ստանում է մյուսից՝ «ձեռքից ձեռք»:

Սակայն եթե որեւէ ժողովուրդ յուրացնի հարեւան ժողովրդի գիրն անհատների մակարդակով, ապա կարող է փոխառվել տվյալ գրի արագագրական, կենցաղային ձեւը: Գետագայում, եթե տվյալ գիրը ստանա պաշտոնական կարգավիճակ, անհրաժեշտութուն կառաջանա արագագրական ձեւերի հիման վրա ստեղծել դրանց կոթողային տարբերակը, այսինքն՝ անկազմակերպ գրանշաններին հաղորդել հանդիսավորություն եւ կանոնավոր ձեւ: Եւ այս դեպքում ժողովրդական ստուգաբանության ազդեցությունը կարող է վճռորոշ լինել, քանի որ նոր գրի պաշտոնական ձեւը մշակողը՝ ձեւավորողը, գեղագիրը, վայելչագիրը, չխորանալով տվյալ գրանշանների ծագումնաբանության մեջ (իսկ հաճախ էլ դրա հնարավորությունն առհասարակ չունենալով), յուրովի է ընկալելու դրանց կառուցվածքը, եւ գոյանալու է առանձին մասնիկների իրագործման նոր հաջորդականություն, որը հետագայում կնպաստի կենցաղային տարբեր ձեւերի գոյացմանը: Սրանից բացի՝ նոր լեզուն անխուսափելիորեն հնչունային այլ կազմ կունենա, որին հարմարվելու համար անհրաժեշտ կլինի ստեղծել նոր գրանշաններ, հեռացնել կամ այլ կերպ գործածել եղածները: Դա հավասարազոր կլինի նոր գրի ստեղծման:

Այսպիսով, գրանշանների ձեւը կարող է աղավաղվել հետեւյալ գործոնների ազդեցության տակ՝ արագագրության եւ վայելչագրական կարգի խախտման: Գործնականում դրանք համատեղ են ազդում գրանշանների ձեւի վրա. կարգի խախտումն առաջացնում է գրիչի անսովոր շարժումներ, իսկ արագագրությունն ավելացնում է դրանց թափը եւ կանոնավոր ձեւից հեռացումը:

2.1.4.2. Արագագրությունը եւ գրանշանների ձեւափոխման օրինաչափությունները


Փաստորեն, գրելու արագությունը գրանշանների ձեւերն աղավաղող թերեւս ամենահիմնական գործոնն է. եթե գրողը դանդաղ է աշխատում, ապա անկախ նրանից, թե ինչ գործիքներով եւ ինչ կարգով է իրագործվում գրանշանը, սկզբունքորեն այն հնարավոր է վերարտադրել գրեթե անփոփոխ: Իսկ արագ գրելու դեպքում, երբ գրողը չի կարողանում վերահսկել գրիչի շարժումները, կատարվում է հետեւյալը. գրելիս ձեռքն ազդում է գրիչի վրա տարածական բոլոր հնարավոր ուղղություններով: Դա գրի հիմնական ուղղությունն է. հայկականում, եւրոպականներում ձախից աջ, սեմականներում՝ աջից ձախ եւ այլն: Բացի այդ՝ առանձին տառերն իրագործելիս գրիչը ստանում է հիմնական ուղղությանը ուղղահայաց, թեք կամ հետադարձ ազդակներ. այդ ուղղությունները որոշվում են գրչության դպրոցի կանոններով: Վերջապես, գրելու ընթացքն սկսելիս եւ ավարտելիս, մասնավորապես՝ տառա- կամ բառամիջյան բացատներ ստեղծելու համար գրիչին հաղորդվում են նաեւ գրելու մակերեւոյթին ուղղահայաց, պոկող կամ սեղմող ազդակներ: Սրանք բոլորը գումարվում են մեխանիկայից հայտնի կանոններով՝ տալով այս կամ այն *համապորներ (resultant)*, որոնցով էլ որոշվում են գրիչի շարժման ուղղությունն ու սեղմման ուժը:



Վերելում բերված են գրային բազմաթիվ համակարգերում գործածվող երկու պարզունակ նշանների՝ անկյունակի եւ խաչի հնարավոր ձեւափոխությունների մի քանի օրինակներ, որոնք գոյանում են արագագրության արդյունքում՝ գրիչով (մատիտով, շյուղով) գրելիս: Անկյունակի օրինակով փորձենք պատկերացնել այն երեւոյթները, որոնք հանգեցնում են դիտվող ձեւափոխություններին:

Կախված դրա երկու՝ ուղղաձիգ եւ հորիզոնական մասնիկների կատարման ուղղությունից (պատկերված են սլաքներով) եւ հաջորդականությունից (նշված են թվերով)՝ հնարավոր է մի քանի տարբերակ: Դրանցից յուրաքանչյուրն առաջացնելու

Ե ձեւափոխության խմբեր, որոնցից այստեղ բերված են երկուսը (ենթադրվում է, որ գրելու ընթացքն սկսվում է հենց այս գրանշանից):



Սկզբում գրիչն իջնում է թղթի մակերեսային Ա կետում եւ ստանում է ազդակ՝ ներքեւից վերեւ: Գրողը մտադիր է քիչ հետո անցնել նաեւ հաջորդ գրանշանի կատարմանը, ուստի նրա ձեռքից գրիչն ակամա ստանում է աննշան ազդակ նաեւ ձախից աջ: Արդյունքում գոյացած համագործ գրիչն ուղղում է դեպի վերեւ ու մի քիչ աջ: Սակայն շուտով ստացվում է մեկ այլ ազդակ՝ դադարեցնելու համար շարժումը դեպի վեր:

Այսքանը կատարվում է բոլոր դեպքերում, սակայն այս պահին գրողը պիտի իրագործի սուր անկյունը: Որպեսզի անկյունը ստացվի հստակորեն, գրիչը պիտի մի պահ կանգ առնի Բ կետում եւ հետո նոր շարժվի աջ (տարբերակ ա): Այդպես էլ լինում է, երբ գրիչը դանդաղ է շարժվում. գրիչն ստանում է շարժումը արգելակող ազդակ եւ կանգ է առնում: Սակայն եթե գրիչը շարժվում է արագ, միշտ չէ, որ այդպես է լինում: Ավելի հաճախ գրողը չի կարողանում հաշվարկել ազդակի այն չափը, որի արդյունքում գրիչը կանգ կառնի Բ կետում, եւ կախված նրանից, թե գրողը որքանով է մտադիր շեշտել գրանշանի այդ առանձնահատկությունը, հնարավոր է եւս երկու տարբերակ. գրիչին հաղորդվող աջից ձախ եւ վերեւից ներքեւ արգելակող ազդակները կարող են նախապես հաղորդած ազդակներից բացարձակ չափով ավելին լինել կամ պակաս:

Մի դեպքում (տարբերակ Բ) լրացուցիչ ազդակները, գումարվելով նախորդներին, տալիս են համագործ, ուղղված աջ վերեւից դեպի ձախ ներքեւ. ապա այս պահին գրիչը ստանում է դեպի աջ տանող ազդակ (հորիզոնական մասնիկն իրագործելու համար) ու որոշ չափով նաեւ վերեւ՝ ձեռքի եւ թղթի հետ շփման ուժի գոյությանը եւ մաշկի որոշակի առաձգականությամբ պայմանավորված, որն աստիճանաբար փոխում է համագործի ուղղությունը՝ հաղորդելով գրիչին աղեղնաձեւ շարժում՝ աստիճանաբար մեծացող շառավղով: Արդյունքում անկյան փոխարեն գոյանում է գալար:

Մյուս դեպքում (տարբերակ Գ) ազդակների չափերը եւ մասնավորապես աջից ձախ արգելակողը կարող են աննշան լինել, եւ ոչ միայն գալար չի գոյանա, այլեւ գրիչն առհասարակ կանգ չի առնի, եւ երկու մասնիկները կկազմեն սոսկ աննշան ուռուցիկությամբ միասնական, կոկիկ աղեղ այն տեղում, որտեղ պիտի գտնվեր անկյունը:

Բերված նկարագրությունն անշուշտ չափազանց մոտավոր է, սակայն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել, թե ինչ երեւոյթներ են տեղի ունենում նույնիսկ պարզ գրանշան իրագործելիս:

2.1.4.3. Փորձագիտական քերականություն

Գործնականում կարիք չկա յուրաքանչյուր գրանշանը հետազոտել նման միջոցներով. դա կարող է արվել նաեւ փորձնական ճանապարհով, եւ եթե ենթադրվում է, որ տվյալ գրանշանը փոխառության արդյունք է, ապա, ունենալով դրա որեւէ վարկածային նախօրինակ, գործնականում հնարավոր է պարզել՝ արդյո՞ք այն կարող էր ընկան ձեւափոխությունների արդյունքում վերածվել այդ գրանշանի: Փորձերի համար կարող են կիրառվել ժամանակակից սովորական գրանյութեր¹⁴³:

Կարելի է տարբեր անձանց հանձնարարել գրել հետազոտվող գրանշանի ենթադրական նախօրինակը՝ առանձին մասնիկների իրագործման նախապես առաջադրված ուղղորդներով: Ստացված արդյունքները կհամեմատվեն հնագրական տվյալների հետ: Համընկնումները կվկայեն, որ տվյալ գրանշանն իրոք *կարող է* համարվել հետազոտվող գրանշանի նախօրինակը: Բազմաթիվ փորձերի միջինացված արդյունքը կարելի է բավական հավաստի հիմք համարել հետագա ուսումնասիրությունների համար: Այսպիսով, այս եղանակի կիրառմամբ քերականական ուսումնասիրությունները կարող են ստանալ արտանձնային անաչառ հիմք, որը նվազագույնի կհասցնի հետազոտողի անձնական տեսակետների ազդեցությունը:

Վերջապես, յուրաքանչյուր հետազոտող կարող է ինքնուրույն ստանալ այս կամ այն գրանշանը ենթադրյալ նախաձեւից: Այս տարբերակը, իհարկե, հնարավորություն չի տա գիտական հանրությանը ներկայացնել անաչառորեն կատարված գիտափորձ, սակայն յուրաքանչյուր հետազոտող ինքն իր փորձի արդյունքը գիտի, եւ եթե նրան առաջնորդի գիտական ճշմարտությունը բացահայտելու մղումը, նա կկարողանա բաղել այդ փորձից անհրաժեշտ նյութը: Երբեմն այս եղանակը, որքան էլ այն անձնային է, պարզապես անփոխարինելի է, քանի որ միայն հետազոտողը կարող է զգալ փորձի ընթացքը եւ գնահատել ստացված արդյունքները:

Պետք է նշել, սակայն, որ, ցավոք, այս բնույթի գիտափորձերն ունեն կազմակերպչական մի մեծ թերություն: Բանն այն է, որ արագագործության հետ կապված այն երեւոյթները, որոնց մասին խոսվեց, առաջանում են միայն տվյալ գրային համակարգին լավ տիրապետելուց հետո: Սակայն խնդիրն էլ հենց այն է, որ հետազոտվում են փորձի մասնակիցներին անծանոթ գրանշաններ. դա պահանջվում է հենց փորձի մաքրության համար: Մասնակիցները պետք է ծանոթ չլինեն գրանշաններին, որոնց ծագումը հետազոտվում է, այլապես նրանք կարող են հարմարվել սպասվելիք արդյունքին: Կարելի է նույնիսկ առաջարկել փորձարկվող գրանշանների հայելային տեսքը՝ բողբոջելու համար այն հարցերը, որոնց պատասխանը փնտրում է հետազոտողը: Թեեւ այդ դեպքում էլ պետք է նշվեն գրելու այլ *ուղղորդներ*¹⁴⁴: Ուրիշ կլինեն նաեւ ձեռքի վրա ազդող ուժերը, եւ դա նույնպես պետք է հաշվի առնել:

¹⁴³ Այս մասին տե՛ս ստորեւ՝ «Գրչարիեստը եւ գրույթը» բաժնում:

¹⁴⁴ Լատ. *ductus*՝ գրանշանների մասնիկներն իրագործելու ուղղությունն ու հերթականությունը:

Handwritten musical notation on 5-line staves, showing various rhythmic patterns and notes. Each staff includes a clef and a time signature.

Staff 1: 4/4, Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ Δ

Staff 2: 4/4, Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε

Staff 3: 4/4, Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ Γ

Staff 4: 4/4, Α Α Α Α Α Α Α Α Α Α Α Α Α Α Α

Staff 5: 4/4, Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε Ε

Staff 6: 4/4, Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ Υ

Staff 7: 4/4, Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ Ζ

Staff 8: 4/4, Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ Θ

Staff 9: 4/4, Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ Σ

Staff 10: 4/4, Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ Χ

Staff 11: 4/4, Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ Լ

Staff 12: 4/4, Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ

Staff 13: 4/4, Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն

Staff 14: 4/4, Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք Ք

Staff 15: 4/4, Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ Օ

Staff 16: 4/4, Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր

Staff 17: 4/4, Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ Մ

Staff 18: 4/4, Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ Փ

Staff 19: 4/4, Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ

Staff 20: 4/4, Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ Վ

Staff 21: 4/4, Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ

Քերարանական հետազոտության մի նմուշ: Հետազոտվողին հանձնարարվել է վերարտադրել փյունիկյան գրանշանների լրակազմը՝ ուղղորդների (ductus) նշմամբ: Երևում է, որ որոշ նշանների շարքում հայտնվում են հայոց տառը հիշեցնող ձևեր (օրինակ՝ P, E, T, R եւ այլն): Իսկ ուրիշ դեպքում փորձարկվողը սխալվել է եւ չի հետեւել հանձնարարված ուղղորդներին (*ՊՇ գրանշանի դեպքում):

Սակայն այս դեպքում փորձարկողը, չտիրապետելով տվյալ գրանշանին, ձգտում է ճշգրիտ վերարտադրել դրա ձեւը, որն անիմաստ է դարձնում գիտափորձը: Ստացվում է, որ փորձի հաջողության համար անհրաժեշտ է փորձի մասնակիցներին օրերի կամ նույնիսկ ամիսների ընթացքում վարժեցնել փորձարկվող գրանշաններին, որպեսզի սկսեն դրսևորվել արագագրությանը բնորոշ երևույթները, սակայն գործնականում դա դժվար է կազմակերպել:

Այնուամենայնիվ, մեր կազմակերպած մի շարք փորձերից (տե՛ս պատկերը) հաջողվել է ստանալ առանձին արդյունքներ: Սովորաբար գրանշանի իրագործման՝ տասնյակների հասնող փորձերը տալիս են չափազանց անհամասեռ արդյունք: Սակայն որքան էլ գրողը փորձում է ճշտորեն վերարտադրել տառաձեւը, միևնույնն է, երբեմն «վրիպում է» (փորձարկվողի կարծիքով): Նման «վրիպումները» չափազանց հազվադեպ են լինում, բայց հենց դրանք են ցույց տալիս գրանշանի աղավաղման հնարավոր ձևերը:

Բնականաբար, գրանշանների իրագործման համար հանձնարարվող ուղղորդները պետք է տրամաբանական լինեն, այսինքն՝ այնպիսիք, ինչպիսիք կլինեին իրականում գրելիս, որպեսզի ստացվող արդյունքները իմաստալից լինեն:

Միաժամանակ պետք է գիտակցել, որ նույնիսկ դրական արդյունքը վերջնական համարվել չի կարող, քանի որ տվյալ ձեւը կարող է գոյանալ տարբեր, համաձուլ (convergent) ճանապարհով, եւ թե՛ դրանցից որևէ մեկը իրականում, այս եղանակով անհնար է պարզել անհրաժեշտ են լրացուցիչ տվյալներ:

Այսպես՝ դիտարկված անկյունակի (որը փաստորեն հունական Γ-ն է՝ *Գամմա*-ն) ձևափոխումների շարքում տեսնում ենք մի քանի ձևեր, որոնցից մեկը՝ Է-ն, ոչ այլ ինչ է, քան հունական փոքրատառ (ձեռագիր, արագագիր) Գ-ն, մյուսը՝ Գ-ն, լատինական C-ն է, իսկ Բ-ն ներկայացնում է հայերեն մեծատառ Գ-ն: Սակայն սա դեռ բավական չէ պնդելու համար, թե հենց հունականից է ծագում հայկական գրանշանը: Բան այն է, որ Գ տառը նույն հաջողությամբ կարելի է ստանալ նաեւ այլ գրանշաններից: Օրինակ՝ լատինական G-ից, որը հաստատվում է շատերի ձեռագրերում դրանց նույնությամբ եւ պարզապես յուրաքանչյուրի անձնական փորձով՝

⊕ ⊙ ⊕: Այնպես որ առանձին գրանշանների փոփոխված ձևերի նմանությունը զրո թիչ է եւ կարող է պատահական լինել: Սակայն եթե գրային որեւէ համակարգի գրանշանների *զգալի մասն* իրենց հնարավոր ձևափոխությունների բազմության մեջ ունենա մեկ այլ համակարգի գրանշանների *զգալի մասը*, դա արդեն նվազագույնի կհասցնի պատահականության հնարավորությունը:

Պետք է նաեւ հիշել, որ այս եղանակը չի կարող հաշվի առնել գրանշանների միջանկյալ կոթողայնացման ընթացքում կատարված միջամտությունները: Դրանց հետևի կարելի է որոշ *ենթադրություններ* անել՝ ելնելով վերլուծվող գրանշանի նմանաձևատկություններից, ոչ ավելին:

2.1.4.4. Գրչարհեստը եւ գրույթը

Վերետում նշվեց, որ փորձերի համար կարող են կիրառվել ժամանակակից սովորական գրանյութեր: Արդյոք նման փոխարինումը արդարացված է: Անշուշտ, գրչարհեստը՝ գրելու նյութերն ու գործիքները, մեծապես ազդում են տառաձեւերի վրա, բավական է հիշել *սեպագիրը*, որի նշանների ձեւը ամբողջովին պայմանավորված է թաց կավի վրա ծողով սեղմելով, կամ *օրիա* գիրը, որի գրանշանների կլորավորությունը արմավենու տերեւների վրա գրելու արդյունք է: Սակայն *մեր* գրչարհեստը դարերի ընթացքում էապես չի փոխվել: գրել են *որեւէ* գործիքով, որը հետք է թողել *կողմնահամասեռ* (isotropic) *որեւէ* կրիչի վրա: Եւ անկախ նրանից, թե գործիքն այդ թանաքային գրիչն էր, թե շյուղը, իսկ նյութը՝ մազաղաթը, թուղթը, թե՛ պնակիտը, մեխանիկական տեսակետից այս բոլոր տարբերակները գրեթե նույնական են:

Այնուամենայնիվ, գրչարհեստի հետ կապված մի հարցի անհրաժեշտ է անդրադառնալ. խոսքը վերաբերում է արդեն ոչ թե կրիչի, այլ գրելու գործիքի *կողմնահամասեռությունը*, այսինքն՝ կախված ուղղությունից՝ կրիչի վրա դրա թողած հետքի հաստությանը: Եթե մի կողմ թողնենք վրձինը, որը բնորոշ չէ մեր գրչարհեստին, ապա գրելու գործիքները կարելի է բաժանել երկու խմբի՝ բոլոր ուղղություններով *միեւնույն* հաստության հետքեր թողնող եւ՝ *տարբեր* հաստության հետքեր թողնող Առաջին տեսակին պատկանում է *լայնածայր գրիչը* (ինի այն եղեգնից, փետուրից, թե՛ այլ նյութից). երկրորդ տեսակի գործիքներ են *շյուղը*, *մատիտը* եւ այլն:

Գրանշանը՝ որպես գրույթ, այսինքն՝ գրավոր համակարգի նվազագույն միավոր, մյուս գրանշաններից հստակորեն տարբերվելու համար պետք է ունենա որոշակի ճանաչելի առանձնահատկություններ: Տեսականորեն դա կարող էր լինել որոշ ցանկացած տեսանելի հատկություն՝ մասնիկների գույնը, հաստությունը եւ այլն: Գործնականում, քանի որ գիրը գոյացել է հնագույն ժամանակներում եւ իրագործվել է պարզագույն կրիչների վրա՝ քերծվելով քարի, կավի, ծառի կեղեւի եւ նման այլ նյութերի, բոլոր հայտնի գրային համակարգերի նշանները ձգտել են առավելագույն պարզության, եւ դրանցում գծերի հաստությունը, գույնը, չափը խմաստակիր չեն: Որոշիչ է միայն գրանշանի պարզագույն երկրաչափական ձեւը, որն արտահայտվում է միեւնույն հաստությունն ունեցող գծով: Այսինքն՝ տվյալ գրանշանի գրույթը ներկայացնում են միայն երկրորդ տեսակի գործիքները, որոնցով իրագործված գիրը *շյուղ* գործիքի անվամբ կոչվում է *շղագիր*¹⁴⁵: Սակայն հնում գրելու ամենատարածված գործիքը եղեգնյա լայնածայր թանաքային գրիչն էր, որի թողած գիծն ապակամ այն չափով տարբերվում է հորիզոնական եւ ուղղաձիգ ուղղություններով, ուսկողաձիգ գծերը սովորաբար արվում են հաստ, հորիզոնականները՝ բարակ (*գրչագիր*) Սրակից հետետում է մի հնարք. քանի որ բարակ գծերը չափազանց թույլ են ստացվում

¹⁴⁵ Հաճախ շփոթվում է *շղագիր* (*շեղ* գրված) հասկացության հետ: Տե՛ս **Գ. Աճառյան**, *Գրչարհեստը*, էջ 619՝ տողատակում:

դրանց բաց ծայրերը ուժեղացնում են հաստացումներով՝ *գծափակոցներով* (serif), որոնք, ըստ այդմ, չունեն գրույթային արժեք, այլ սոսկ գրչական հնարքներ են:




Պայկական եւ լատինական գրանշանները՝ համապատասխան գրչական դպրոցների բնորոշ գծափակոցներով: ա-ն եւ դ-ն՝ շղագիր (գրույթային), բ-ն եւ ե-ն՝ գրչագիր՝ առանց գծափակոցների, գ-ն եւ զ-ն՝ գծափակոցներով (ընդգծված են հորիզոնական գծափակոցները):

Պետք է նաեւ նկատել, որ թե՛ հայերեն եւ թե՛ լատինատառ լավագույն վիմագիր կոթողային արձանագրությունները վերարտադրում են լայնածայր գրչի տրամաբանության ազդեցությունը կրած տառաձեւերը (տե՛ս վերետում բերված Տրայանոսի սյան եւ Եղվարդի եռանակ եկեղեցու արձանագրությունները), ինչը եւ պատճառ է դառնում թյուր կարծիքի, թե հորիզոնական մասնիկների գծափակոցային՝ կորագծային հատվածները գրույթի մաս են կազմում:


2.1.4.5. Գրանշանների բնորոշ ձեւափոխությունները արագագրության ընթացքում

Ի մի բերենք բնական գործոնների ազդեցության (արագագրության) հետեւանքով ցույցադր ձեւափոխությունների հիմնական տեսակները¹⁴⁶:

Լրացուցիչ տարրեր: Ինչպես տեսանք, գրանշանին կարող են հավելվել մասնիկներ, որոնք փոխառվելու դեպքում նոր համակարգում կոթողայնացման արդյունքում կարող են հայտնվել գրույթի կազմում: Դրանք կարող են որպես *ազի* (terminal) հավելվել գրանշանի վերջում, ինչպես նաեւ որպես հավելյալ մասնիկներ գրանշանների սկզբում եւ կամ դրանց առանձին տարրերի միջեւ, այսինքն՝ որպես ավելորդ գծիկներ, որոնք գոյանում են, երբ գրողը չի հասցնում պոկել գրիչը գրելու մակերեսույթից: Կարելի էր են ունենում հատկապես միջնամասային այն հավելյալ տարրերը, որոնք նպաստում են հիմնական տարրերը լծորդող գալարների գոյացմանը:




Առաջին մասնիկն իրագործելուց առաջ գրիչը ժամանակից շուտ է հավում թղթին՝ առաջացնելով լրացուցիչ մասնիկ (պատկերված է կետագծով), որը հետագայում ներառվում է գրույթի կազմի մեջ (վրաց. *էն*-ի գոյացման փուլերից):




Վերջին մասնիկն իրագործելուց հետո գրիչը ժամանակից ուշ է պոկվում թղթից՝ առաջացնելով լրացուցիչ մասնիկ, որը հետագայում ներառվում է գրույթի կազմի մեջ (վրաց. *բան*-ի գոյացման փուլերից):

¹⁴⁶ Պայմանական նշանների համար տե՛ս «Մեմական գրանշանների հաջորդական ձեւափոխման ընթացքը» բաժինը:

Տարրերի լծորդումներ: Սրանք կարող են դիտվել որպես նախորդների մասնավոր դեպք, երբ առանձին մասնիկներ լծորդվում են լրացուցիչ տարրերով, որոնք գոյանում են դրանց միջև՝ գրիչը թղթից ամբողջովին չպոկելու արդյունքում:



Երրորդ եւ չորրորդ մասնիկներն իրագործելու միջև գրիչը շարունակում է հաված մալ թղթին, սակայն միեւնույն ուղով չանցնելու հետեւանքով, մեկ՝ մոտավորապես ուղղաձիգ գծի փոխարեն գոյանում է փոքրիկ գալար, որն էլ ավելի արտահայտված է դառնում հաջորդ փուլերում՝ աստիճանաբար դիտվելով որպես գրույթի մաս (հայ. *Ծա*-ի գոյացման փուլերից):



Յորիզոնական տարրերի միջև գոյանում են լծորդող աղեղներ, քանի որ գրիչը չեն հասցնում պոկել թղթից (հուն. փոթբառառ *Ըսի*-ի գոյացումը):


Տարրերի պտույտներ: Տարբեր դիրքով մասնիկները տարբեր կայունություն ունեն, այսինքն՝ արագ գրելիս տարբեր հավանականությամբ կաղավաղվեն: Առավել կայուն են հորիզոնական դիրքի մասնիկները, քանի որ գրելու ուղղությամբ՝ համընթաց ուղղված ուժերը դրանց վրա չեն ազդում¹⁴⁷: Մյուս մասնիկներն այս կամ այն աստիճանի աղավաղվում են: Ուղղաձիգ եւ անկյունագծային տարրերը նույն այդ ուժերի ազդեցության տակ շեղվում են սկզբնական դիրքից՝ թեքվելով դեպի ետ, եթե իրագործվում են վերեւից ներքեւ, եւ՝ առաջ, եթե իրագործվում են ներքեւից վերեւ: Շեղման աստիճանը կարող է այնքան մեծ լինել, որ, օրինակ, անկյունագծային մասնիկը արագագրական տառաձեւում կարող է ուղղաձիգ դիրքում հայտնվել, ինչը կարող է դիտվել որպես գրանշանի ամբողջական շեղում, որը հաջորդած փոխառման եւ ապա կոթողայնացման ընթացքում կարող է ամրագրվել եւ նոր գրային համակարգում ելից գրանշանի համեմատ այն արդեն որոշակի անկյան տակ պտտված կլինի:

Սակայն պետք է հաշվի առնել, որ տվյալ գրանշանի վերոնշյալ փոփոխությանը բերած գործոններն ազդում են ամբողջ գրային համակարգի վրա, թեւեւ առանձին գրանշաններ, դրանց ձեւային առանձնահատկություններով պայմանավորված, կարող են ավելի զգայուն գտնվել, քան մյուսները: Կարելու է նաեւ ուշադիր լինել որպեսզի ենթադրյալ պտույտը, որով փորձ է արվում բացատրել գրանշանի ձեւի գոյացումը, իրոք, համապատասխանի գրելու ուղղությամբ ազդող ուժերին: Այլապես անհրաժեշտ է գտնել տվյալ գրանշանի ձեւագոյացման այլ բացատրություն:

Գրանշանների այս կարգի պտույտները պետք է տարբերել այն դեպքերից, երբ պտտված են լինում բոլոր գրանշաններն անխտիր, ինչպիսին է, օրինակ, շումերական պատկերագրերի շրջումը: Այնտեղ պատճառը գրչարհեստի փոփոխումն էր. ուղղաձիգ՝ աջից ձախ այլուներով գրելուն հաջորդել էր ձախից աջ տողերով գրելուն:


¹⁴⁷ Կարելի է ենթադրել, որ ուղղաձիգ գրային համակարգերի դեպքում, ինչպիսին են, օրինակ, չինական կամ մոնղոլական գրերը, առավել կայուն կլինեն ուղղաձիգ մասնիկները:

լու եղանակը¹⁴⁸: Համեմայն դեպս, *առանձին* վերցված գրանշանների՝ որոշ հեղինակների մոտ ընդունելի համարվող կամային պտտումը պետք է անհնար համարվի, քանի որ դրա արդյունքում փոխվում է տառի ճանաչելիությունը, եւ ոչ մի գրող միտումնավոր նման պտույտ թույլ չէր տա:



Յուրաքանչյուր հաջորդ մասնիկն իրագործելուց հետո գրիչը մի փոքր շեղվում է գրելու ուղղությամբ: Նման աղավաղումների կուտակման արդյունքում գրանշանը կարող է շրջվել 90° (ասոր. *Սեմկաթ*-ի գոյացման փուլերից):

Համաչափ արտապատկերումներ: Եթե այբբենական միեւնույն արժեքն ունեցող երկու նշան համաչափ են ուղղաձիգ առանցքի նկատմամբ, կարելի է ենթադրել եզնավարի¹⁴⁹ կարգի ազդեցություն, քանի որ դրա կիրառման դեպքում անհամաչափ գրանշանների դիրքը փոխում էին՝ տողերի ուղղությունները շեշտելու համար: Գրելու ուղղության ամրակայումից հետո անհամաչափ տառերը սովորաբար պահպանում էին գրելու՝ տվյալ ուղղությանը բնորոշ ուղղվածությունը: Թեւեւ կան եւ բացառություններ: Օրինակ՝ եթովպական գրի դեպքում, որն առանց գրանշանների դիրքի փոփոխության փոխել է գրելու ուղղությունը՝ աջից ձախը դարձնելով ձախից աջ: Սակայն այս դեպքում էլ դա տարածվում է *բոլոր* գրանշանների վրա: Եթե արտապատկերումը հորիզոնական առանցքի նկատմամբ է, կարելի է ենթադրել կամային ձեւափոխություն՝ նոր գրանշան ստեղծելու նպատակով, մի հնարք, որը լայնորեն տարածվեց հատկապես Ի դարում՝ հնչյունաբանական նշաններ ստեղծելու համար. օրինակ՝ ՄՀԱ-ի՝ Միջազգային հնչյունական այբուբենի որոշ նշանները:




Նիկանդրեի արձանագրությունը, մ. թ. ա. 2 դար:


Ինչպես տեսնում ենք, Նիկանդրեի հայտնի եզնավարակարգ արձանագրության անհամաչափ տառերն առաջին տողում, որը գրված է ձախից աջ, եւ երկրորդ տողում, որը գրված է աջից ձախ, հակառակ են ուղղված (վերջին կիսատ տողը գրված է շրջված եզնավարի կարգով. այսինքն՝ գրված է՝ շրջելով ոչ միայն գրելու ուղղությունը, այլեւ կրիչը, այլ կերպ՝ շրջելով գրանշանները նաեւ հորիզոնական առանցքի շուրջ):

¹⁴⁸ Л. Оппенхейм, Древняя Месопотамия, М., 1990, с. 191.
¹⁴⁹ Այսպես ենթադրվում է հուն. *βουτροφιδόν* եզրույթը՝ գրելու սկզբում, երբ գրելու աջ եւ ձախ ուղղությունները հերթազայնում են կենտ եւ զույգ տողերի միջև:

Օղակների խզում: Որպեսզի օղակը մաքուր ստացվի, գրիչի հետագծի սկիզբն ու վերջը պիտի համընկնեն, որը հազվադեպ է հաջողվում: Արդյունքում օղակները կամ բացվում են, կամ վերածվում գալարների:




Եթե օղակը սկսում է իրագործվել գրելու ուղղությամբ (աջից՝ ձախ, ստորին կետից), ապա օղակն իրագործելու վերջում գրիչը հատում է օղակի սկզբնական հատվածը՝ գոյացնելով տարբեր աստիճանի ձգվածության (կախված գրելու արագությունից) գալար (գոթ. *Օթալ*-ի գոյացումը):




Եթե օղակը սկսում է իրագործվել գրելու ուղղությանը հակառակ, ապա օղակն իրագործելու վերջում գրիչը կարող է չհասնել օղակի սկզբնական հատվածին, քանի որ այն շարունակում է շարժվել գրելու ուղղությամբ, եւ շրջանագիծը բացվում է՝ վերածվելով պայտի (հուն. *Օւեգա*-յի գոյացման փուլերից):

Ուղիղների կորացում, անկյունների գալարում եւ հարթեցում: Ուղիղ տարրերը, որպես կանոն, կորանում են, անկյունները՝ հարթվում: Ի դեպ, սա տարրերից հատկություն է դառնում գրային համակարգերը թվագրելու համար. առավել կլորավուն գրանշաններով համակարգերն այլ հավասար պայմաններում պետք է որ ավելի երիտասարդ լինեն: Հետագայում նման տարրը կոթողայնացման ընթացքում կարող է կրկին ուղղվել, բայց կարող է եւ փոխարինվել շրջանագծի կամ այլ կորի աղեղով:




Ատամնաձեւ բեկյալի մի կողմի անկյունները վերածվել են գալարների, մյուս կողմիները հարթվել են (հուն. փոթբատառ *Միւ*-ի գոյացումը):



Անկյունակը հարթվել է՝ վերածվելով աղեղի (լատ. *Ցէ*-ի գոյացումը):

2.1.4.6. Գրանշաններին բնորոշ ձեւափոխությունները կոթողայնացման ընթացքում
Ընդհանուր առմամբ, կոթողայնացման ընթացքում գրանշանների ձեւափոխությունները հակադարձ են արագագորության ընթացքում լինողներին. թեք գծերն ուղղվում են, կամայական կորերը փոխարինվում են շրջանագծային աղեղներով եւ այլն: Ստորեւ բերված են դրանցից մի քանիսը:

Տարրերի հեռացում: Գրանշանի որոշ տարրեր՝ սկզբնական կամ վերջնասային, դիտվում են որպես պատահական ազիներ եւ չեն ընդգրկվում կոթողային նոր ձեւերում:




(վրաց. *Սաւ*-ի գոյացման վերջին փուլը):

Երբեմն էլ տառերի որոշ առանձնահատկություններ կարող են վերանայվել գեղագիրների կողմից, եթե խանգարում են գրվածքի իրագործումը:




MMarialRounded տառատեսակի *թ* եւ *ժ* տառերը, հեռացված են տառերի աջ ելուստները, որոնք սովորաբար դժվարություն են ստեղծում շարվածքում:

Կորերի ուղղում եւ անկյունների շեշտում: Փոքր կորությամբ որոշ կորեր փոխարինվում են ուղիղներով:




Կոր գծերը ընկալվել են որպես աղավաղումներ եւ փոխառվելուց հետո փոխարինվել են ուղիղներով եւ հստակ անկյուններով (հուն. *Պի*-ի գոյացումը):

Կորերի շեշտում: Անհավասար կորությամբ կորերը փոխարինվում են շրջանագծերով կամ շրջանագծային աղեղներով:




Պատահական կորությամբ գալարը փոխարինվել է գրեթե կանոնավոր շրջանագծով (հայ. *Ծա*-ի գոյացման փուլերից):

Տարրերի պտույտներ: Անկանոն, ոչ հստակ թեքությամբ տարրերը հաճախ փոխարինվում են հորիզոնական եւ ուղղաձիգ դիրքերի տարրերով:



Անկանոն թեքությամբ տարրերը փոխարինվել են հորիզոնական եւ ուղղաձիգ տարրերով (հուն. *Էփսիլոն*-ի գոյացումը):

Գալարների վերածում ուղիղների: Գրանշանների չափազանց նեղ գալարները կարող են փոխարինվել ուղիղներով:



Նախկինում սուր անկյան շեշտման հետեւանքով գոյացած գալարը կոթողայնացման արդյունքում փոխարինվում է ուղիղ հատվածով (պալմիր. *Գիսել*-ի գոյացման փուլերը):

2.1.5. Ինչպե՞ս պետք է համեմատվեն գրանշանները

Տարբեր գրային համակարգերի տառաձեւերի համեմատությունը կարելուարզույնն է՝ դրանց ծագումնաբանական կապը պարզելու գործում: Այսպես՝ Հր. Աճառյանը կարծում է, որ «աղբյուրները որոշելու համար ուրիշ ապահով միջոց չկա, եթե ոչ հայերենի յուրաքանչյուր տառը համեմատել շրջակա ազգերի այբուբենների համապատասխան տառերի հետ եւ նրանց ձեւական նմանությունից հանել ստույգ եզրակացությունը»¹⁵⁰: Այս դրույթը պետք է լրացնել միայն այն պայմանով, որ **գրանշանները համեմատելիս պետք է նշանակություն տրվի ոչ միայն համարժեք գրանշանների ձեւին, այլեւ պետք է հաշվի առնվեն այդ գրանշանների վայելչագրական առանձնահատկությունները**: Ցավոք, Հր. Աճառյանը թերազնահատում է այլ հանգամանքները հաշվի առնելը. «Ուրիշ ամեն միջոց (պատմական հարաբերություններ, գրական աղբյուրություն, փոխառյալ բառեր, կրոնական միություն, քաղաքական գերիշխանություն եւ այլն) երկրորդական նշանակություն ունեն վճռելու համար այս հարցը»¹⁵¹: Կրոնական հարցերի կարեւորության մասին արդեն խոսվել է սուրբայն, մեր կարծիքով, համեմատությունը պիտի կատարվի՝ բոլոր հանգամանքները հաշվի առնելով: Դա նաեւ ընդհանուր պատմահամեմատական սկզբունքի

¹⁵⁰ Հ. Աճառյան, Նշվ. աշխ., էջ 512:
¹⁵¹ Նույն տեղում, էջ 512:

հետեւությունն է եւ ի վերջո նեղացում է որոնման շրջանակները. մաթեմատիկայի լեզվով ասած՝ յուրատեսակ լրացուցիչ հավասարումներ է հավելում բազմաթիվ անհայտներով հավասարումների համակարգին՝ որոշակիացնելով հնարավոր լուծումների դաշտը, այլապես հնարավոր կարծիքների դաշտը հասնում է անքննելի չափերի (Հր. Աճառյանը բերում է Հայոց տառաձեւերի գոյացման մասին տարբեր հեղինակների 38 կարծիք՝ հաճախ իրարամերժ):

Իսկ համեմատության ընթացքում հիմնական խնդիրը հետեւյալն է. ի՞նչը ինչի՞ հետ պետք է համեմատել. ո՞ր տառը՝ որի՞, եւ ո՞ր տարրը՝ որի՞ հետ: Մասնավորապես, պե՞տք է արդյոք նշանակություն տալ տարբեր հնչյուններ նշանակող նմանաձեւ տառերին: Հր. Աճառյանը կարծում է, որ պետք չէ, քանի որ դրանք «պատահական չլուծադիպության արդյունք» են¹⁵²: Հր. Աճառյանի այս կարծիքը միանգամայն տրամաբանական է, քանի որ բխում է գրային համակարգերի փոխառման սկզբունքից եւ իմաստից. գրային համակարգերը փոխառվում են որպես տեղեկության փոխանակման գործիք, եւ համապատասխանությունը սկզբնաղբյուրին դրա կարեւոր պայմաններից մեկն է: Այդ զաղտնագրային համակարգերում են փոխում գրանշանները՝ մոլորեցնելու համար անցանկալի ընթերցողներին: Թեեւ հնարավոր գտնելով գրանշանների հետագա կամայական փոփոխությունները՝ Աճառյանը հակասում է ինքն իրեն, բայց դա, ինչպես տեսանք, արվում է միայն ու միայն հիմնավորելու համար այն պնդումը, թե դանիելյան գրերը Մաշտոցը չի օգտագործել (ի դեպ, որեւէ կերպ Հր. Աճառյանն այս պնդումը չի փորձում հիմնավորել):

Սակայն համեմատության այս ակնհայտ եւ տրամաբանական սկզբունքը որոշ հետազոտողներ մերժում են: Այսպես՝ Գ. Սեւակը կարծում է, որ մեր այբուբենի ծագումը բացահայտելու գործում անհաջողության պատճառը «այբուբենների ցեղակցությունը պարզելու պատմահամեմատական մեթոդի մեխանիկական կիրառումն» է¹⁵³ (ընդգծումը՝ Գ. Ս.): Հետաքրքիր է, որ նա, ինչպես եւ Հր. Աճառյանը, գալիս է այդ եզրակացությանը՝ ելնելով «մեսրոպյան գրերի հորինվածքի ինքնատիպությունից», որի դեպքում պատմահամեմատական մոտեցման չկիրառելը կարող է արդարացված լինել: Նա գտնում է՝ թեեւ ճիշտ է, որ պատմահամեմատական սկզբունքը որոշակի սահմանափակումներ է դնում համեմատվող առարկաների վրա, սակայն կարծում է, որ գրային համակարգերի դեպքում դա թույլատրելի է, քանի որ կան գրեր, որոնք մյուս գրերի շարքում մնում են մեկուսի եւ չեն կարող դուրս բերվել որեւէ այլ համակարգից, «թեեւ ընդհանուր կերպով կապված են փյունիկյան գրերի հետ», օրինակ՝ եթովպականը, «որը, ի դեպ, ամենից ավելի մոտիկություն ունի մեսրոպյան գրերի հետ»: Նա որեւէ այլ օրինակ չի բերում եւ փաստորեն շրջանցում է այն պարզ հանգամանքը, որ տվյալ գրի նախօրինակի անհայտ լինելը դեռ

¹⁵² Նույն տեղում, էջ 517:

¹⁵³ Գ. Սեւակ, նշվ. աշխ., էջ 167:

չի նշանակում, թե այն գոյություն չի ունեցել եւ իր հետագա դատողություններում փորձում է անհայտ ծագումով գրի միջոցով բացատրել մյուս գրի ծագումը: Գ. Սեւակը տարօրինակ է համարում մի երեւոյթ, որ լիովին բացատրելի է ձեւավորչության տեսանկյունից: Նա գրում է. «Այսպիսով ստացվում է, որ հունարենում իրար բնավ չնմանվող տառերից գոյացել են իրար միանգամայն նման մեր Գ, Դ եւ Դ տառերը: Դրան հակառակ, հունարենում իրար շատ նման Ե եւ Տ տառերից գոյացել են իրար թողորովին չնմանվող մեր Ե եւ Ս տառերը»¹⁵⁴: Այստեղ հարցն այն չէ, թե հունարենից են ծագել համապատասխան տառերը, թե ոչ, այլ այն, որ հետազոտողը տարօրինակ է համարում նման ձեւափոխությունները: Մեկ այլ տեղ էլ նա շփոթում է գրանշանների ձեւավորչական համաձեւացումը (վայելագրական համամեծ գարգացումը) ծագումնաբանական կապի հետ՝ համարելով, օրինակ, հայկական Զ-ն հիշեցնող աղուանական մի տառի եւ հայկական Դ-ն հիշեցնող վրացական մի շարք գրանշանների նմանությունը մաշտոցյան հորինվածքային սկզբունքի արտահայտություն, որը նա հռչակում է որպես «տարբերացման»¹⁵⁵ սկզբունք:

Հր. Աճառյանը գրում է. «Սարգիսյանը կարծում է, որ հայ գիրը հունարենի I ձեւից է առաջացած, ուր ծայրի գծիկների տեղ դրված է մեր Ի-ի թելը...»¹⁵⁶: Վերոբերյայից հետեւում է, որ գրչարվեստից բխած ձեւավորչական տարրերը՝ գծափակոցները, համեմատվում են գրոյթային արժեք ունեցող տարրերի հետ:

Նման մի օրինակ տեսնում ենք Բ տառի քննարկման հատվածում, որտեղ կրկին հավասարության նշան է դրվում Բ-ի երկու աջակողմյան տարրերի կորուսությունների միջեւ, միևնույն վերին տարրի կորությունը գրոյթային է, իսկ ստորին տարրի կորությունը կրկին գրչական տարր է՝ գծափակոց:

Մեկ այլ տեղ էլ Հր. Աճառյանը՝ փաստելով, որ Ը տառը Մաշտոցը կառուցել է Է-ից այլանմանության սկզբունքով, կարծում է, թե դա արվել է պարզապես Է-ի միջնամասի հորիզոնական տարրը վերել բարձրացնելու միջոցով: Թերեւս այստեղ նույնպես նա Ը-ի վերին մասնիկի կորությունը նույնացնում է Է-ի հորիզոնական տարրի գծափակոցի հետ, որը վայելագործեն անընդունելի է:

Հակառակ այս օրինակների՝ վայելագրության ազդեցությունը հաշվի է առնում Ս. Մուրավյովը, սակայն հորիզոնական գծափակոցների կորությունը նա համարում է «իներցիոն»¹⁵⁷, արագագրական, այսինքն՝ գրոյթային, թեեւ սրանք զուտ գեղագրական նշանակություն ունեն (նույնիսկ հակառակը. ինչպես նշվեց վերելում, արագագրությունը հորիզոնական տարրերը կարող է միայն ուղղել՝ ի տարբերություն ուղղաձիգ տարրերի):

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 170:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 181:

¹⁵⁶ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 532:

¹⁵⁷ С. Муравьев, О протосистеме армянского алфавита // ИФЖ, 1980, № 2, с. 226.

Տառարվեստի օրինաչափությունների անտեսումը տառածեւերի հետագուման ընթացքում բնորոշ է ոչ միայն մեր հեղինակներին: Օրինակ՝ քերաբանության հիմնադիր Ի. Գելբը իր որոշ դատողություններում մոռացության է տալիս այդ խնդրի գոյությունը: Հյուսիսսեմական գրանշանների ծագման հարցում նա այն կարծիքին է, որ դրանց պատկերագրական ծագումը գրանշանների անվանումներին համապատասխանող առարկաների նկարներից հիմնավորված չէ: Օրինակ՝ նա գտնում է, որ Ալեֆ նշանը ամենեւին էլ նման չէ ցլի գլխի, այլ պարզապես հետագոտողները ցանկանում են դրանում տեսնել ցլի գլուխ, քանի որ Ալեֆ-ը սեմական լեզուներում նշանակում է «ցուլ»՝ հուշելով, որ նախապես այն ցլի գլուխ է պատկերել: Նա կարծում է, որ փյունիկյան որոշ գրանշաններ սկզբնապես նկարներ չեն եղել, այլ առաջացել են ազատ եւ կամայական ընտրության արդյունքում, եւ իր կարծիքի «լավագույն ապացույց» է համարում հնչյունային զույգեր կազմող գրանշանների ձեւերի համեմատությունը: Նա եզրակացնում է, որ, օրինակ, *hē* եւ *hēṯ* գրանշանները չեն առաջացել տարբեր նկարներից, այլ մեկը ստացվել է մյուսից զծային տարրերից մեկի հեռացման (կամ հավելման) միջոցով¹⁵⁸ (ձախ կողմի զույգերը):

𐤀	hē	եւ	𐤁	hēṯ	𐤂	hē	եւ	𐤃	hēth
𐤄	nūn	եւ	𐤅	mēm	𐤆	nūn	եւ	𐤇	mēm
𐤈	zayin	եւ	𐤉	sāmekh	𐤊	zayin	եւ	𐤋	sāmekh
𐤌	tāw	եւ	𐤍	ṯēth	𐤎	tāw	եւ	𐤏	ṯēth

Առաջին հայացքից այս համեմատությունը տպավորիչ է թվում: Սակայն նայելք, օրինակ, լատինական այբուբենին. այստեղ ունենք *B* եւ *P*, *S* եւ *Z*, հնչյունային զույգերը իսկ հունական այբուբենում Φ եւ Θ գրանշանների զույգերը (ձախ կողմի զույգերը):

B	pē	եւ	P	պե	Θ	pēṯ	եւ	Ϝ	պե
S	սա	եւ	Z	զեսա	W	շին	եւ	I	զայն
Φ	ֆի	եւ	Θ	ֆիսա	Φ	ֆի	եւ	⊕	թես

Կարող է թվալ, թե *B*-ն ստացվել է *P*-ից՝ ներթելում լրացուցիչ կիսակլոր հավելելու միջոցով (կամ հակառակը՝ *P*-ն՝ *B*-ից՝ կիսակլորը հեռացնելով). այս դեպքում նույնիսկ կարող էր հնչյունական հիմնավորում նկատվել. *B*-ն՝ որպես ձայնեղ շրթնային, այս գրային համակարգի ստեղծողին կարող էր կրկնակի հզոր թվալ, եւ դա կարող էր տրամաբանորեն դրդել նրան՝ պատկերելու այն երկու կիսակլորով խուլ

¹⁵⁸ И. Гельб, *Опыт изучения письма*, М., 1982, с. 139.

շրթնային *P*-ի մեկ կիսակլորի դիմաց: Ի դեպ, լատինական գիրն ուսումնասիրողները նույնպես այս փաստն ընդունում են՝ գտնելով, որ այստեղ գործ ունենք այսպես կոչվող բնութավորիչ գրի (անգլ. *Featural scripts*)¹⁵⁹ դրսեւորման հետ. այսպես են կոչվում այն գրային համակարգերը, որոնցում գրանշանների տարրերը վերարտադրում են համապատասխան հնչյութների հատկությունները: Այդ տրամաբանությամբ *S*-ն եւ *Z*-ն, հավանաբար, միեւնույն նշանի հայելային տարբերակներն են: Ճիշտ է, *S*-ն ավելի կորագծային է անկյունավոր *Z*-ի համեմատ, սակայն երբեմն դրանք լիովին հայելային են պատկերվում:

ISUZU

Ճապոնական Իսուզու ընկերության խորհրդանշանը:

Ինչ վերաբերում է հունական Φ -ին եւ Θ -ին, ապա կարող է թվալ, թե մեկը ստացվել է մյուսից՝ 90 աստիճանով պտտելու միջոցով: Սակայն այս գրային համակարգերի պատմությանը ծանոթ ցանկացած մասնագետ գիտի, որ ոչ մի «կարող ես»-ի տեղ այստեղ չկա, քանի որ բոլոր այս գրանշանների ծագումը հայտնի է, եւ դրանք, իրոք, սկզբնապես տարբեր գրանշաններից են առաջացել, ինչպես տեսնում ենք աջ կողմում պատկերված զույգերից: Գրանշանները վերցված են Ահիրամի արձանագրությունից, որը, փյունիկյան հնագույն արձանագրություններից մեկն է: Գրանշանների նմանությունից ոչինչ չի մնում, իսկ դրանց քերաբանական վերլուծությունից պարզ է դառնում, թե ինչպես կարող էին աջ կողմի գրանշաններից գոյանալ ձախ կողմի համապատասխան գրանշանները:

Փաստ է, որ հնչաբանորեն մոտիկ մի շարք գրանշաններ ունեն նման կառուցվածք: Արդյո՞ք դա պատահականություն է: Կարող է եւ այդպես լինել: Սակայն չի թաքցվում նաեւ, որ մենք այստեղ գործ ունենք ձեւավորչական հնարքի հետ, որն ստավել արտահայտված տեսքով հանդես է եկել «Իսուզու»-ի խորհրդանշանում. տառաստեղծը (գեղագիրը), նկատելով երկու գրանշանների հնչյունային նմանությունը, ակամա կամ միտումնավոր ձգտում է նմանություն տեսնել նաեւ դրանց զծապատկերների մեջ, եւ նկատելով դրանք՝ ավելի է ընդգծում: Դա բխում է արվեստի ներքին օրենքներից. գեղեցիկ երեւալու համար հորինվածքը պիտի ունենա ներքին համակարգվածություն, այնպես այն դիտվում է որպես առանձին տարրերի անկազմակերպ, քառսային բազմություն, որը ընկալվում է որպես տգեղություն:

Ի. Գելբի դիտարկումները, սակայն, անօգուտ չեն եւ ելնելով վերոգրյալ դատողություններից՝ կարող են դիտվել որպես արտահայտություն այն բանի, որ նույնիսկ Ահիրամի այդքան հին արձանագրության մեջ գործածված գրանշանները արդեն իսկ ունեցել են գեղագրական որոշակի մշակում, հետեւապես դրանց նախօրինակների գոյացումը պիտի կատարվեր շատ ավելի վաղ: Եթե ճիշտ են Բ. Քոլեսի (Brian

¹⁵⁹ G. Sampson, *Writing systems: methods for recording language*, p. 4.

Colless) վերականգնումները, ապա Ի. Գեյքի բերած զույգերի հնագույն ձևերը կարող են եղած լինել աջ պատկերում բերվածները: Սա, իհարկե, դեռևս վարկած է՝ հիմնավորված չափազանց սակավաթիվ նյութերով, սակայն՝ բավական ճշմարտանման: Այս զույգերի դեպքում արդեն չկան այն բացահայտ օրինաչափությունները, որոնք նկատելի է Ի. Գեյքը, թեև կան դրանց նշույլները, որոնք վարպետ տառաստեղծը կարող էր նկատած եւ ընդգծած լինել:

Այս օրինակները հիմնավորում են, թե որքան կարետոր է, որ գրանշանները համեմատողները կարողանան զանազանել դրանց գրոյթների բնորոշ գծերը ձեռավորչական տարրերից: Որքան կարետոր է պատկերացում ունենալ գեղագրական տարբեր հնարքների մասին՝ տեսնելու դրանց հնարավոր ազդեցությունները գրանշանների ձեւագոյացման վրա:

2.2. ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՆԱԽՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Այժմ փորձենք վերլուծել Հայոց գրերը՝ հաջորդաբար քննելով դրանք վերոթվարկյալ դրոյթների շրջանակում:

Փորձենք պարզել՝ Հայոց այբուբենը փոխառությունն է, թե՞ ոչ: Մակերեսային համեմատությունից մաշտոցյան տառերի նախօրինակները չեն բացահայտվում: Գուցե դրանք կամայական ստեղծված նշաններ են, եւ մաշտոցյան գիրը, իրոք, հեղինակային է Ա. Մարտիրոսյանի գործածած իմաստով: Կարծում ենք՝ ոչ: Մաշտոցյան այբուբենը ներքին ձեւով, այբբենական կարգով, որոշ տառերի (առնվազն՝ Ե, Թ, Ի, Փ) արտաքին ձեւով եւ արժեքով ունի բացահայտ առնչություն հունական այբուբենի հետ: Կան նաեւ վկայություններ, որ Մաշտոցը հետեւել է հունական գրի որոշ հատկություններին. «Եւ յարուցեալ յաղալթիցն՝ Եստեղծ վնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսիւ կերպածեւեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխառելով զհայերէն աթուրթայսն ըստ անսայթաթութեան սիւղաբայից Հելլենացոց»¹⁶⁰ Վավերագրորեն մեզ որոշակի ոչինչ հայտնի չէ մաշտոցյան այբուբենի նախօրինակի մասին, բայց նշվածն արդեն իսկ վկայում է, որ այս դեպքում էլ մենք չենք կարող «հեղինակային» բառը հասկանալ այնպես, ինչպես հասկանում է Ա. Մարտիրոսյանը: Հազիվ թե Մաշտոցը ներառած լիներ իր այբուբենում միայն այդ մի քանի տառերը, իսկ մնացածը հորինած լիներ կամայականորեն: Ուրեմն կարելի է որպէս հիմնական վարկած ընդունել Հայոց գրանշանների փոխառյալ լինելը: Իսկ պարզելու համար, թե որն է եղել դրանց նախօրինակը, պետք է շարունակել հետազոտությունները:

Որպէս հավանական նախօրինակներ՝ բնական է, որ լինեն հարեւան գրային համակարգերը, քանի որ միայն դրանց հետ կարող էին այնքան հաճախ շփվել հայերը, որ իմաստ ունենար փոխառել դրանք: Մինչդեռ, ինչպես նշեցինք զրքի

¹⁶⁰ Սովսեւ Խորենացի, Հայոց պատմութիւն, Գ, ծգ // Սատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2081:

սկզբում, Հայոց գրերի նախօրինակի գոյությունն ընդունող հետազոտողներն այն որոնում են երբեմն այնպիսի գրային համակարգերի շարքում, որոնք սկզբունքորեն չէին կարող նույնիսկ ծանոթ լինել հայկական միջավայրում թե՛ աշխարհագրական, թե՛ քաղաքական եւ թե՛ մշակութային տեսակետից հեռավորության պատճառով, օրինակ՝ հնդկական բրահմի կամ քարոշթի համակարգերը: Քիչ ավելի մոտ է եթովպական գիրը, որն ունի նաեւ որոշ արտաքին նմանություն Հայոց գրի հետ, որի շնորհիվ դրա նախօրինակը լինելու վարկածը ժամանակ առ ժամանակ հայտնվում է հետազոտողների գործերում, եւ այդ պատճառով մենք դիտարկել ենք նաեւ եթովպական գրի եւ Հայոց գրի հարաբերությունները: Այստեղ նշենք, սակայն, որ այդ համեմատության արդյունքը բացասական է, որը կներկայացվի ստորեւ:

Որպէս հիմնական հավակնողներ՝ պետք է դիտարկել նախ եւ առաջ *պարսկական, սեմական եւ հունական* գրերը: Տեսականորեն դրանց թվում կարելի էր դիտել նաեւ լատինականը (համեմայն դեպս, շատ ավելի մեծ հիմնավորությամբ, քան, օրինակ, քարոշթին կամ նույնիսկ եթովպականը), թեւեւ կարծես այդ վարկածը հայտնի չէ հայագիտության մեջ, ու քանի որ, ինչպես կտեսնենք, այն նաեւ սույն հետազոտության արդյունքում չի հաստատվում, դրան մենք չենք անդրադառնա: Թեւեւ, ինչպէս կտեսնենք, որոշ գրանշանների բարեշրջությունը լատինագրում եւ Հայոց գրում ընթացել է նույն կերպ՝ բերելով որոշ տառաձեւերի նմանության:

Իսկ նախորդ երեքը եղել են Հայոց տարածաշրջանի մշտական հարեւանները առնվազն մ. թ. ա. Ե դարից մինչեւ մաշտոցյան ժամանակները, ինչպէս հաղորդում է Կորյունը՝ ավելի քան մեկ հազարամյակ, եւ կարելի է պարզապես պնդել, որ Հայոց տառերի նախօրինակը պիտի լինի դրանցից որեւէ մեկը: Միաժամանակ սկզբից եւեթ պիտի շեշտվի, որ, ինչպէս արդեն նշվել է, իբրեւ նախօրինակ կարող էր հանդես գալ դրանցից միայն մեկը, թեւեւ մյուսներից կարող էին անցած լինել որոշ գրանշաններ:

Այն, որ Կորյունը շեշտում է Հայոց գրերի հունական հատկությունները, դրանք պիտի լինեն նախօրինակների շարքի առաջին տեղում: Հիշենք նաեւ, որ Հայոց կրթողային տառաձեւերը, Էապես տարբերվելով կրթողային հունականից, չափազանց մոտ են հունական փոքրատառերին: Փաստորեն, դրանք շրջակա գրային համակարգերից հայկականին ամենամոտ տառաձեւերն են: Համեմատենք՝ Ե եւ Է, Թ եւ Թ, Ն եւ Կ, Ը եւ Ը, Պ եւ Դ եւ այլն. գուցե առաջին հայացքից նմանությունն այնքան էլ ակնառու չէ, բայց մասնագետները այն նկատել են վաղուց: Սակայն քանի որ հունական տառերի փոքրատառ տարբերակը՝ «մինուսկուլը», ընդունել է իր հանրածանոթ տեսքը մոտավորապես յոթերորդ դարում միայն, այսինքն՝ Մաշտոցից հետո, հունական փոքրատառերի եւ Հայոց գրերի փոխադարձ կապը մերժվել է Մինչդեռ դրանց նմանությունը փաստ է, որը պետք է բացատրվեր:

Դա մասնավորապես կարող է նշանակել, որ Հայոց գրանշանները պարզապես հունական կոթողային (գլխատառ) տառաձեւերի զարգացման մեկ այլ ճյուղն են: Այդ դեպքում, եթե կիրառվի գրանշանների ձեւի վերլուծություն վերելում դիտարկված սկզբունքների շրջանակում, հունական տառաձեւերի փոփոխությունների շարքերում մենք կնկատենք Հայոց տառաձեւերի զգալի մասը, եւ հունական այբուբենը հնարավոր կլինի դիտարկել որպէս հայկականի նախօրինակը: Ստորեւ կտեսնենք, որ այդ համեմատությունն արդյունավետ է եւ հունական տառաձեւերի զգալի մասի ձեւափոխությունների շարքերում հայտնվում են Հայոց տառաձեւերը: Հունական արձանագրայինից ծագած լինելու տպավորություն են թողնում առնվազն *Ա, Գ, Դ, Ե, Զ, Թ, Կ, Մ, Ն, Ը, Ռ, Պ, Ս, Տ, Բ, Փ, Զ* տառերը, այսինքն՝ 17-ը: Այսպիսով, հունական գիրը լուրջ հավակնորդ կարող է համարվել Հայոց գրի նախօրինակը լինելու համար:

Ինչպէս արդէն պարզ դարձավ Հայոց գրերի ուսումնասիրության պատմության բաժնից, հայկական տառաձեւերի հունական ծագման տեսակետն ամենատարածվածն է եւ հիմնավորվում է նաեւ բանասիրական ու քաղաքագիտական տեսանկյունից: Այս կարծիքն ընդունում են, մասնավորապէս, Հր. Աճառյանը, Ա. Արուստիանը եւ ուրիշներ: Հր. Աճառյանը Հայոց գրերէ բոլոր տառերը՝ շուրջ 21, դուրս է բերում հունականից: Սակայն շատ դեպքերում Հր. Աճառյանը գալիս է այդ տեսակետին հակասական դատողությունների արդյունքում: Մասնավորապէս, ընդունելով արագագործության ազդեցությունը գրանշանների ձեւի վրա, նա միեւնոյն ժամանակ այդ մոտեցումը հետետողականորեն չի գործածում: Օրինակ՝ նրան հաջողվում է հայերեն *Բ*-ն նույնպէս դուրս բերել հունական *Β*-ից, չնայած հենց իր իսկ նախորդ դատողությունների տրամաբանությամբ դա հնարավոր չէ: Ընդ որում՝ նա բերում է Յ. Մարկվարտի առարկությունն այդ հարցի վերաբերյալ (թէ այդ դեպքում հայերեն *Բ*-ն կնմանվեր *Β*-ին)՝ գտնելով՝ քանի որ հայերենում հունական կլորները բացվում են, ապա *Β*-ի երկու կլորները կբացվեին, եւ կստացվեր հայկական *Բ*-ն: Սակայն պարզ է (եւ դա յուրաքանչյուրը հետազոտմամբ կարող է ստուգել՝ փորձելով արագ գրել *Β* տառն ունեցող որեւէ բառ), որ իրավացի է Յ. Մարկվարտը եւ իրոք բացվել կարող է միայն ստորին օղակը (կամ միայն վերեւինը՝ կախված ձեռագրից, բայց երկուսը միաժամանակ չեն կարող), ինչպէս եւ լինում է հունական (ռուսական, լատինական) ձեռագրերում *В*: Բանն այն է, որ կլորները բացվում են ոչ այն պատճառով, որ ինչ-որ մեկը որոշել է, թէ դրանք պիտի բացվեն, այլ որովհետեւ այդպէս ստացվում է գրիչի վրա ազդող ուժերի ազդեցությամբ, այսինքն՝ օրինաչափորեն: Ու բացի այդ *Բ*-ի հորիզոնական մասնիկի կլորությունը գրույթային չէ, այլ գրչական, եւ դրա համեմատությունը *Β*-ի ստորին կլորի հետ տեղին չէ:

Մյուս կողմից, եթե հաշվի առնենք այն փաստը, որ հունական այբուբենը, ինչպէս եւ տարածաշրջանի բազմաթիվ այլ այբուբեններ, փյունիկյան այբուբենի

ժառանգորդներն են, իմաստ ունի համեմատել Հայոց տառաձեւերը ոչ միայն հունական, այլեւ նախ եւ առաջ դրա հետ:

Եւ ահա այդ համեմատության արդյունքը (տե՛ս ստորեւ) նույնիսկ ավելի գոհացուցիչ է, քան հունականների դեպքում. գործնականում փյունիկյան բոլոր 22 տառերից դուրս են բերվում Հայոց համապատասխան տառերը: Դեռ ավելին, դուրս են բերվում նաեւ այն երկու տառերը, որոնց համապատասխան հնչյունները հունարենում բացակայում են (բայց կան հայերենում), ուստի եւ դրանք դուրս են մնացել հունական այբուբենից: Եւ ահա դրանցից ծագած տառերը մենք տեսնում ենք Հայոց այբուբենում:

Նման լիակատար նույնացումը կասկածի տեղ չի թողնում, որ Հայոց այբուբենի նախօրինակը լինելու հիմնական հավակնորդը պետք է համարել փյունիկյան գիրը: Իհարկէ, կարելի է ենթադրել, որ նախօրինակը եղել է ոչ թէ փյունիկյանը, այլ մեկ այլ սեմական գիր, օրինակ՝ ուշ արամեականը¹⁶¹: Սակայն արդէն իսկ միջին արամեական տարբեր գրերի վերլուծության արդյունքում պարզվում է, որ դրանցից դուրս են բերվում հայերենի ոչ բոլոր տառերը. գրեթէ անհույս է համեմատել էստրանզերոյի եւ ասորական մյուս գրերի հետ: Ել ավելի վատ արդյունքների ենք հասնում վերլուծելով պահլավական եւ սասանյան գրերը. սրանցից հաջողվում է հաստատապէս ստանալ հազիվ 2-3 տառ: Եւ դա բնական է. դրանք բոլորն էլ, լինելով նույն այդ փյունիկյան (հյուսիսսեմական) գրի ժառանգորդները, արդէն իսկ ներկայանում են որպէս դրա արագագրական ձեւերի զարգացման տարբեր ճյուղեր:

Առավել հետաքրքիր պատկեր է ստացվում, եթե նշված բոլոր (եւ մի շարք այլ) գրային համակարգերի նշանները համեմատվում են մեկ հաջորդականության մեջ՝ կողք կողքի: Այդ պատճառով թեւեւ սույն հետազոտությունը նվիրված է միայն Հայոց տառաձեւերի ստեղծմանը, սակայն հայկական յուրաքանչյուր տառի դեպքում բերվում են դասական հյուսիսսեմական (արեւմտասեմական, փյունիկյան) գրանշաններից ծագած եւ մի շարք այլ գրային համակարգերի գրանշանների գոյացմանը բերած հաջորդական հնարավոր ձեւափոխությունների փնջերը: Այդ փնջերը բերված են առանձին տախտակների ձեւով: Որոշ տախտակներում հայտնվում են մեկից ավելի Հայոց տառերի ծագման շղթաներ:

¹⁶¹ Սեմական լեզուներից փոխառված լինելու կողմնակիցների շարքում պետք է հիշատակել Նաղավարյանին, Հարությունյանին, Փերիխանյանին: Ընդ որում՝ Տաղավարյանն այն կարծիքն է, որ փոխառությունը կատարվել է փյունիկեցիներից առետրական եւ նման այլ շփումների ընթացքում, որը միանգամայն հավանական է թվում: Առետրական շփումների դերը կարեւորում է նաեւ Ի. Գելը (տե՛ս *И. Гельб, Опыт изучения письма*, с. 173).

2.3. ԱՅՐՈՒԲԵՆԻ ԱԿՈՒԼՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2.3.1. Սինայյան գրանշանների ծագումը

Հայոց գրանշանների նախօրինակը որոնելիս հասնում ենք այբուբենի ստեղծման ակունքներին, քանի որ հնագույն պահպանված այբբենական (կամ կիսայբբենական) համակարգը հյուսիսսեմականն է: Սակայն այս հետազոտությունը վերաբերում է միայն հայ գրերի՝ դրանց նախօրինակից ծագելու հարցին և նպատակ չի դնում գրի գոյացման խնդրի քննարկումը: Մեր խնդիրների համար բավական է դիտարկել փյունիկյան դասական գիրը, որը բավական լավ ուսումնասիրված է:

Միեւնույն ժամանակ այդ գրանշանների՝ ստորեւ բերված գրեթե բոլոր սեմական գրանշանների հաջորդական ձեւափոխությունների շղթաների սկզբում դրված են սինայյան գրանշանները, որոնք, սակայն, այսօր դիտվում են սոսկ իբրեւ փյունիկյան գրանշանների առավել հավանական նախորդը: Դրանք այս գրքում հիշատակված են այն պատճառով, որ ընթերցողի մոտ չստեղծվի տպավորություն, թե փյունիկյան գիրն ամեն ինչի սկիզբն է, ու դրանից առաջ ոչինչ չի եղել, այլ պարզ լինի, որ փյունիկյան գիրը եւս գրային համակարգերի հազարամյա բարեշրջության արդյունք է, եւ դրա արմատները կարող են լինել նաեւ այլ վայրերում: Ու նաեւ այն պատճառով, որ հիմքում այն դնելը պարզապէս հնարավորություն է տալիս առավել ամբողջական դարձնել հետազոտությունը՝ ներգրավելով մեկ փնջում, թերեւս, ավելի վաղ առանձնացած հարավսեմական գրային համակարգերի ճյուղը՝ ի դեմս եթովպական գրի, որի հետ որոշ հետազոտողներ փորձում են կապել Հայոց գիրը, եւ որը հավանաբար անմիջապէս բխում է այդ գրանշաններից:

Բայց պետք է հաշվի առնել, որ դեռեւս գոյություն չունի միարժեք ապացույց, որ հենց սինայյան գրանշաններից է ծագել արեւմտասեմական գիրը: Հօգուտ այս վարկածի խոսում են մի շարք փաստարկներ, սակայն առավելապէս՝ վարկածային:



Սերաբիթ է-խադիմ-ի (Serabit el-Khadim) սինայյան արձանագրությունների օրինակներ:

Հարյուր տարի առաջ Ալան Գարդիները (Alan Gardiner) դրանցում առավել հաճախ պատահող քառատառ **𐤀𐤃𐤋** նշանակապակցությունն առաջարկեց կարդալ որպէս **b'it** (*Ba'alat*) «Տիրուհի»: Դրանից հետո եղան եւ այլ գյուտեր, սակայն մինչեւ վերջերս գործը տեղից չէր շարժվում: Իսկ համեմատաբար վերջերս

1993 թ., Ջոն Դարնելը (John C. Darnell) Վադի էլ-Հոլ (Wadi el-Hôl) տեղանքում (Թեբի մերձակայքում) հայտնաբերեց այլ արձանագրություններ՝ հավանաբար մ. թ. ա. մ. դարի, որոնք օգնեցին առաջ գնալ դրանց վերձանման եւ սինայյան վարկածի ապացուցման գործում¹⁶²:

Մյուս կողմից կան եւ այլ վարկածներ: Օրինակ, ըստ Գ. Տուրչանինովի՝ այս գիրը ծագում է մ. թ. ա. Գ-Բ հազարամյակների հյուսիսկովկասյան վանկային գրից, որը ինքուր եւ բերել վաճառված ստրուկները¹⁶³: Հետագայում, ըստ Նրա, այդ վանկային գիրը, որը տարածված է եղել այն ժամանակվա քաղաքակիրթ աշխարհի զգալի մասում, փոխառել են նաեւ սեմական ազգերը, իսկ նրանցից էլ՝ ոչ սեմական ազգերը:

Կա նաեւ Կուրտ Չեթեի (Kurt Sethe) կարծիքը, ըստ որի՝ եգիպտական բաղաձայնական գրանշանների գաղափարի հիման վրա այբուբենը ստեղծել էին *հիբսուները* եգիպտոսին տիրելու ընթացքում¹⁶⁴:

2.3.2. Սեմական գրանշանների հաջորդական ձեւափոխման ընթացքը

Կուսագոտության հաջորդ բաժնի հիմնական մասը նվիրված է հնագույն գրանշաններից հայկական եւ ցեղակից այլ գրերի ձեւավորման ընթացքի վերականգնմանը: Դարկ ենք համարում շեշտել, որ Նյուբի մշտական եւ սկզբունքային սակավության պատճառով մեր կողմից կատարվող բոլոր վերականգնումները սոսկ *աշխատանքային* վիճակ են ներկայացնելու, եւ միայն նոր տվյալները կարող են փոփոխություններն անցնել առաջարկվող գծապատկերներում:

Երկու խոսքով անդրադառնալով գծապատկերների կառուցվածքին՝ սկսելով սինայյան նշաններից: Փոքր, թվակիր սլաքներն ուղղորդներն են: Մեծ սլաքները ցույց են տալիս գրանշանների փոփոխման ուղղությունը: Այդ թվում՝

- *ուղիղ հոծ սլաքներով* պատկերված են գրանշանի՝ բարեշրջման միեւնույն մակարդակի վրա գտնվող տարբերակները,
- *այիքավոր սլաքներով*՝ գրանշանների արագագրացման ուղղությունները,
- *երկգիծ սլաքներով*՝ գրանշանների կոթողայնացման ուղղությունները,
- *երկար կոր կետագծային սլաքներով*՝ ձեւափոխությունների հնարավոր տարբերակները, երբ, օրինակ, տվյալ գրանշանը կարող էր առաջանալ տարբեր ճանապարհներով,
- *ուղիղ կետագծային սլաքներով*՝ վարկածային նախաձեւերը՝ հիմնականում կապված սինայյան (կամ նախասինայյան) գրանշանների հետ:

Կրելով միջանկյալ վերաստուգաբանություններ (հաջորդական արագագրացումներ ու կոթողայնացումներ)՝ գրանշանները ձեւափոխվել են մի քանի հիմնա-

¹⁶² Orly Goldwasser, *How the Alphabet Was Born from Hieroglyphs?* // BAR, 36:02, Mar/Apr 2010.
¹⁶³ Г. Турчанинов, *Открытие и расшифровка древнейшей письменности Кавказа*. М., 1999.
¹⁶⁴ Ст'ю И. Фридрих, *История письма*, М., 1979, с. 100.

կան ճյուղերով՝ կազմելով առանձին, բայց ցեղակից գրային համակարգերի փնջեր Շարադրանքում այդ փնջերը պայմանականորեն անվանվում են *եթովական, հունական, արամեական, հայկական* եւ այլն: Ընդգծենք մի կարեւորագույն հանգամանք. **գծապատկերների վրա պատկերված են գրանշանների եւ ոչ թե գրային համակարգերի ծագման ուղիները:** Այսինքն՝ *պարտադիր չէ, որ սլաքի աջ կողմում գտնվող գրանշանը ծագած լինի այն գրային համակարգից, որին պատկանում է ծախ կողմում պատկերված գրանշանը.* դա նշանակում է միայն, որ ծախ կողմի գրանշանը նշված ուղղորդներով իրագործելը կարող է հանգեցնել աջ կողմի գրանշանի գոյացմանը: Ավելին, ծախ կողմի գրանշանը կարող է ծագած լինել այլ կողմի գրանշանից: Օրինակ՝ գոթական *Օթալ* տառը ծագել է հունական *Օմեգայից*, սակայն պահպանել է վերջինիս ավելի վաղ վիճակը, ուստի եւ *Այն*-ի գծապատկերում հայտնվել է հունական տառից առաջ: Իհարկե, երբ փոխառվում է գրային համակարգը, այն փոխառվում է գրչության կանոններով հանդերձ, քանի որ փոխառողները տեսնում են, թե ինչպես են իրագործում տառերը նրանք, ումից նրանք սովորում են գրել, հետեւապես գրանշանի ձեւի ծագումը կարող է վկայել նաեւ համապատասխան գրային համակարգի ծագման մասին: Բայց կարող են լինել բացառություններ, ինչպես վերոնշյալը, իսկ որոշ գրանշաններ կարող են իրագործված լինել այլ կարգով, որը, սակայն, կարող է համընկնել մեկ այլ գրչական ճյուղում ընդունվածի հետ: Հետեւապես գրային համակարգի ծագման մասին ճիշտ չէ դատել միայն առանձին գրանշանների հնարավոր ծագումից, այլ պետք է դիտել բոլոր գրանշանների ծագումը միասին վերցված: Պետք է հիշել, որ հնարավոր են նաեւ *պուզահեռ ձեւափոխություններ* գրային տարբեր համակարգերում (parallelizm): Օրինակ՝ փյունիկյան *Բեթ* գրանշանի ձեւափոխման ծառի վրա հաջորդաբար ներկայացված են եբրայական, ասորական եւ արաբական տառերը, սակայն դրանք հաջորդաբար չեն գոյացել մեկը մյուսից, այլ յուրաքանչյուրը համապատասխան գրային համակարգից ունեցել է իր զուգահեռ նախածեւը, որից փոխառվել է: Մասնավորապես ընդունված է համարել, որ արաբական գիրը, ամենայն հավանականությամբ, գոյացել է նաբաթեական գրից եւ ոչ թե էստրանգելոյից. այստեղ բերված գծագրերը ամենեին չեն հերքում այդ վարկածը: Եւ նույնիսկ հնարավոր է, որ տարբեր ձեւերը *համամետ* փոփոխման ընթացքում հանգեն միեւնույն ձեւին (convergency): Հատկապես այս երեւույթը դրսեւորվում է գրանշանների *պարզեցման* դեպքում (reductio) որը շատ բնորոշ է արամեական ճյուղին՝ էստրանգելո, արաբական, եբրայական պահլավ, սասանյան համակարգերին, որոնցում մի շարք գրանշաններ գրեթե նույնական են դառնում կամ նույնիսկ վերածվում մեկ գծի կամ կետի, եւ դրանք տարբերելու համար կիրառվում են լրացուցիչ նշաններ՝ կետեր, գծեր եւ այլն:

Պետք է նկատել նաեւ, որ գծապատկերներում գրանշանների՝ միեւնույն ուղղաձիգ շերտում պատկերված լինելը չի նշանակում, թե դրանք համաժամանակ

կակյա նմուշներ են, քանի որ միեւնույն ձեւափոխությունները տարբեր ճյուղերում կարող են տարբեր ժամանակներում կատարված լինել: Սակայն միջանկյալ արագագացման եւ հաջորդող կոթողայնացման փուլերի քանակը որոշ մոտավորությամբ կարող է օգնել տվյալ տառածեւի թվագրմանը, քանի որ կոթողայնացումը ենթադրում է գրչական դպրոցի գոյություն, որի կայացումը պահանջում է որոշակի ժամանակ: Այսպես, օրինակ, հայկական *Այթ*-ի գոյացման եւ փյունիկյան *Ալեֆ*-ի միջեւ կա արագագացման ընդամենը մեկ փուլ, մինչդեռ աղուանական *Այթ* եւ վրացական *Ան* տառերի միջեւ կա երկու փուլ, հետեւապես հնարավոր է (բայց ոչ պարտադիր, քանի որ կարող են եւապես տարբերվել ձեւափոխությունների արագությունները), որ դրանք ավելի ուշ ձեւավորված լինեն, քան հայկական գրանշանը: Իսկ եթե համեմատում ենք հունական *Ալֆա*-ի հետ, ապա հունական տառն առիաարակ համընկնում է փյունիկյանի հետ, իսկ հայկականի հետ մեկ փուլում է գտնվում հունական փոքրատառը: Սակայն դա չի նշանակում, որ հայկական տառն ու հունականը միեւնույն ժամանակ են գոյացել: Նախ՝ մենք հաստատապես գիտենք, որ հունական փոքրատառը ձեւավորվել է արդեն մ. թ. 2-է դարերում. հնում կարող էին լինել փոքրատառը հիշեցնող միայն դիպվածային առանձին նմուշներ: Դրանից թացի՝ գրային ամբողջ համակարգը թվագրելիս չի կարելի դատել միայն մեկ տառով, քանի որ առանձին տառի ուրվագծային զարգացումը կարող է առանձնահատկություններ ունենալ. օրինակ՝ արագագրայնացումը եւ հաջորդող կոթողայնացումը տվյալ տառի դեպքում կարող է եւապես չփոխել տառածեւը: Այսպես՝ *Բեթ* գրանշանի դեպքում նկատում ենք, որ հունական տառը նույնպես անցել է արագագացման եւ կոթողայնացման մեկ փուլ, եւ հայկական ու հունական տառերը հայտնվում են զարգացման նույն փուլում: Իսկ վրացական եւ աղուանական տառերի եւ փյունիկյանի միջեւ անցնում է երկու կամ երեք փուլ (առավել հավանական է՝ երկու), վրացական *մխեդրուլի* տառն էլ գոյանում է եւս մեկ փուլ անց: Հետաքրքիր է, որ ամնվազն *Բեթ* տառի դեպքում բարեշրջության այդպիսի մի փուլ նկատվում է նաեւ սինայյան նշանի եւ հյուսիսսեմականի (փյունիկյանի) միջեւ (եթե, իհարկե, հաստատվի, որ փյունիկյան տառերին նախորդել են հենց սինայյան գրերը, որն ընդամենը հավանական է):

Այն դեպքերում, երբ գրային տվյալ համակարգն ունի ժամանակակից տպագրական իրագործում (դրանք են հունական, լատինական, եբրայական, արաբական, էստրանգելո, վրացական եւ հայկական գրային համակարգերը), դրանց նմուշները նույնպես բերվում են: Աղուանականի դեպքում բերված են ՄՄ 7117 ձեռագրի եւ սինայյան կրկնագրի ձեւերը (կամ դրանցից մեկը, եթե դրանք սկզբունքորեն նույնական են):

Տառածեւերի ձեւափոխության ընթացքը վերլուծելիս պետք է հիշել, որ սեմական գրի ուղղությունն աջից ծախ է, ուստի եւ չի կարելի շփոթել եւ ծախակողմյան

նախօրինակից ստանալ աջակողմյան գրանշան¹⁶⁵: Դրանից բացի՝ պետք է իմանալ, թե որ պահից է փոխվել տվյալ համակարգի գրելու ուղղությունը: Բանն այն է, որ ծախակողմյան եւ աջակողմյան ուղղության նկատմամբ գրանշանների իրագործումը *համաչափ* (symmetric) չէ, քանի որ գրողը, միեւնույնն է, գրում է աջ ձեռքով (սովորաբար): Արդյունքում տարբեր է լինում գրչի անկյունը մակերեսային նկատմամբ, եւ փոխվում են դրա վրա ազդող ուժերը, որն անխուսափելիորեն ազդում է որոշ գրանշանների վրա: Սակայն փորձը ցույց է տալիս, որ գործնականում դա եական չէ, եւ կարելի է կատարել ծախակողմյան նյութի վերլուծություն, եւ միայն վերջում շրջել արդյունքը դեպի աջ: Աղյուսակում շրջման առանցքը նշված է ուղղաձիգ գծով: Նշենք, սակայն, որ եթե գրանշանի նախածեղը համաչափ է (ինչպես, օրինակ՝ *Չայն*, *Սամել* կամ *Այն* տառերի դեպքում), ապա դրանց ձեւափոխության ընթացքը կարող է կախված չլինել գրելու ուղղությունից, եւ այդպիսի դեպքում գծապատկերների թեթեւացման նպատակով երբեմն անտեսվել են հնարավոր միջանկյալ փուլերը եւ միանգամից պատկերվել է վերջնական վիճակը (հատկապես որ, օրինակ, մեր տառերի դեպքում հայտնի էլ չէ, թե երբ է հաստատվել գրելու ներկայիս ուղղությունը. թեեւ դատելով նրանից, որ հնագույն հունարենը նույնպես գրվել է աջից ձախ, կարելի է ընդունել, որ նույնը պիտի լիներ նաեւ մեր ու նաեւ վրացական եւ աղուական գրերի դեպքում):

Նշենք, որ ոչ բոլոր տառերի «ծառերն» են հանգամանայից ներկայացված: Դա կախված է նախ եւ առաջ հիմնական խնդրի՝ Հայոց տառաձեւերի ծագման հետ կապված լինելու աստիճանից, ինչպես նաեւ տվյալ տառի առանձնահատկությունից: Համաշխարհային մշակույթի տեսակետից առավել կարելու նշանակություն ունեն հունական եւ արամեական փնջերը, որոնք ամենաճուղավորվածն են, մեզ համար՝ ընկալանաբար հայկական փունջը, որը ներկայացված է հայկական, վրացական եւ աղուական համակարգերով: Սույն հետազոտության մեջ այս երեքը հաճախ անվանվում են *եռյակ*, *եռյակի այրուքներ*, քանի որ դրանց միավորում է ոչ միայն Մաշտոցի անունը, այլեւ, ինչպես կտեսնենք՝ խորքային ծագումնաբանական կապը:

Նշենք նաեւ, որ Հայոց գրանշաններին անմիջականորեն չվերաբերող ճյուղերը հաճախ տրված են ընդհանուր ձեւով՝ երբեմն բաց թողնելով զարգացման որոշ փուլեր: Նպատակ չի դրվել անխտիր ներկայացնել դիտարկված համակարգերի բոլոր դեպքերը. դա ծավալով գրեթե անիրագործելի խնդիր կդառնար: Մյուս կողմից, աշխատանքի հիմնական նպատակը շարադրվող եղանակի ներկայացումն է, որի յուրացումից հետո կարելի է վերլուծել նաեւ այլ տարբերակների եւ գրանշանների

ձեւադրացումը: Դրանից բացի՝ պետք է նկատի ունենալ, որ երբեմն միեւնույն վերջնական ձեւի գոյացմանը կարող են բերել սկզբնական գրանշանի մի շարք տարբեր ձեւափոխումներ (տե՛ս, օրինակ, ստորեւ *Բեն*-ի գոյացման ճյուղը): Եթե հայտնի չեն գրչության կանոնները (իսկ հնագույն նմուշների համար դրանք, որպես կանոն, հայտնի չեն), ապա հաստատապես վերականգնել դրանց նախածեւերը, անհնար է. կարելի է նշել միայն մի քանի հավանական ուղիներ, որոնցից ներկայացված են առավել հավանական թվացող մեկը կամ երկուսը:

Շեշտենք նաեւ եզրաբանական երկու հարց. ստորեւ «փյունիկյան», «իյուսիսսեմական», «արեւմտասեմական» եզրերը գործածվում են միեւնույն իմաստով: Մենք չենք սահմանափակվել դրանցից որեւէ մեկով, քանի որ նույն բազմատարբերակությունը դիտվում է նաեւ այլ հեղինակների մոտ, եւ հակառակ դեպքում կարող էր տպավորություն ստեղծվել, թե մեզ համար դա հատուկ նշանակություն ունի, մինչդեռ հիմնական ուշադրությունը մենք դարձրել ենք բացառապես տառաձեւերի եւ ոչ թե եզրաբանական խնդիրների վրա: Մի շարք այլ եզրեր՝ «տառ», «գիր», «գրանշան», նույնպես գործածվում են հավասարազոր նշանակությամբ: Թեեւ այս դեպքում պետք է շեշտել, որ աշխատել ենք հիմնականում զանազանել այդ հասկացությունները. «տառ» եզրույթը գործածել ենք առավելապես այբբենական համակարգերի, «գրանշան»-ը եւ «գիր»-ը՝ կիսայբբենականների եւ ոչ այբբենականների դեպքում: Թեեւ վերջինները երբեմն կիրառել ենք նաեւ այբբենականների դեպքում, քանի որ «տառ»-ը նախ եւ առաջ «գրանշան» է:

Մի կարելու հանգամանք էւ: Ստորեւ գծապատկերներում պատկերված գրանշանների արագագրական ձեւերը իրագործված են *նկարելու* եղանակով՝ այնպես, ինչպես դրանք *կարող էին* ստացվել արագագրության ազդեցության տակ: Դա արված է ներկայացնելու համար ձեւափոխությունների միջինացված, ամենաբնորոշ վիճակները: Իրական փորձնական քերաբանական վարժության մի նմուշ տեսանք վերեւում՝ «Փորձագիտական քերաբանություն» բաժնում:

¹⁶⁵ «Поскольку новому письму было дано направление, обратное арамейскому, тот и некоторые его знаки оказались обращёнными вправо» (А. Периханян, К вопросу о происхождении армянской письменности // Переднеазиатский сборник. М., 1966, т. II, с. 113).

3. ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

3.1. ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԱՏԵՂԾՄԱԼ ՀԱՆԳԱՄԱԼՔՆԵՐԸ

Հայոց գրանշանների վերլուծությանն անցնելուց առաջ ցանկանում ենք անդրադառնալ մի շարք հարցերի, որոնք բխում են նախորդ բաժնում շարադրված սկզբունքներից, ու թեև անմիջականորեն կապված չեն այդ վերլուծության հետ, սակայն անհրաժեշտ են պատկերացնելու համար Հայոց գրերի գոյացման քաղաքական, գաղափարաբանական եւ քերականական պայմանները, ինչպես նաեւ դրանց ուսումնասիրության հետ կապված խնդիրները:

3.1.1. Նախամաշտոցյան գրի հարցը

Հայոց գրերի ծագումն ուսումնասիրելիս անհնար է շրջանցել նախամաշտոցյան գրի հարցը: Կարելի է թերեւս նախամաշտոցյան գրի չլինելը դիտարկել որպէս ասիում, որը ենթակա չէ քննարկման, սակայն դա կնշանակի անտեսել աղբյուրներում եղած տասնյակ վկայություններ, որոնք շոշափում են այդ հարցը: Իսկ դա արդեն իր հերթին կբերի գիտական եղանակից հեռանալուն, քանի որ գիտնականի համար չեն կարող լինել «տհաճ» կամ «տաքուստ» հարցեր: Հաշվի առնելով, թէ դա որքան նուրբ խնդիր է, շարադրանքը ցանկանում էինք կառուցել այնպես, որ հետեւելով դատողությունների տրամաբանությանը ընթերցողը ինքնուրույն հանգեր եզրակացության, որ նախամաշտոցյան գիրը եղել է, քանի որ դրա գոյությունը բխում է սույն հետազոտության արդյունքներից: Սակայն, հավանաբար, քննությունը նման տրամաբանությամբ ներկայացնելը չէր նպաստի նյութի ընկալելիությանը, այդ պատճառով էլ որոշեցինք սկզբից եւեթ ներկայացնել խնդրի էությունը: Ենթադրաբար, որ այս հարցին կանդորդառնանք նաեւ շարադրանքի վերջում:

Մենք այստեղ չենք շարադրելու բոլոր այն փաստարկները, որոնք բերված են հոգուտ նախամաշտոցյան Հայոց գրի գոյության: Դրանք կարելի է գտնել օրինակ Ա. Աբրահամյանի «Հայոց գիր եւ գրչություն» աշխատության առաջին բաժնում¹⁶⁶ կամ Արտակ Մովսիսյանի «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը»¹⁶⁷ գրքում: Հակառակ կարծիքներին կարելի է տեղեկանալ Է. Աղայանի «Նախամաշտոցյան

¹⁶⁶ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ.:

¹⁶⁷ Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Եր., 2003, էջ 213-218

տոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի եւ հարակից հարցերի մասին» գրքից¹⁶⁸:

Այստեղ կբնենք միայն դրանցից ամենակարեւորները, որոնք հիմնականում անչլվում են դանիեյան գրերին: Դանիեյան գիրը եղել է այն այբուբենը, որը հայերը այս կամ այն չափով, բայց *հաստատապես* (ըստ Կորյունի վկայության) գործածել են ներկայիս գրերից առաջ¹⁶⁹: Ու թեև դա տեսել է շատ կարճ ժամանակ (երկու տարի կամ նույնիսկ՝ ամիսներ կամ շաբաթներ), փաստի էությունը չի փոխվում. նման գիր եղել է:

Առհասարակ, կարելի է բերել նախամաշտոցյան հայերեն գրերի գոյության (անկախ քննությունից) հետեւյալ կարգի հիմնավորումները՝

- ա. գրի ծագման եւ զարգացման ընդհանուր օրինաչափությունները,
- բ. բանասիրական հիմնավորումները,
- գ. պատմական վկայությունները,
- դ. ձեւային վերականգնումները,
- ե. առկա նմուշները:

Սույն հետազոտության հիմնական նպատակն է՝ անդրադարձը նախավերջին՝ *դ* կետում ներկայացվածին. *ե* կետին հպանցիկ կանդորդառնանք աշխատանքի վերջում: Ինչ վերաբերում է *ա* կետին, ապա, թեև ընդհանուր օրինաչափությունների հատվածում խոսքը մասամբ վերաբերում է գրին առհասարակ՝ անկախ դրա պատկերային, թե հնչյունային լինելուց, սակայն հաջորդ կետերում դատողությունները վերաբերելու են ոչ թե նախամաշտոցյան հայ գրին առհասարակ, այլ միայն այն գրին, որը հետագայում կարող էր հայտնի դառնալ որպես *դանիեյան*:

3.1.1.1. Ընդհանուր օրինաչափություններ

Գիրը՝ որպէս համամարդկային երեւոյթ, ունի իր գոյացման եւ զարգացման օրինաչափությունները, որոնք չեն կարող չգործել նաեւ Հայոց գրի դեպքում: Այդ օրինաչափություններից վկայակոչենք երկուսը:

Առաջին օրինաչափությունը կարելի է ձեւակերպել որպէս *գրի եւ պետականության փոխկապակցվածություն*: Այլ կերպ ասած՝ *պետականությունն անհնար է առանց գրի*, եւ որքան պետություն չի կարող իրագործել իր գործառնայթը՝ կառավարումը, առանց գրի, ընդ որում՝ *ազգային մեծամասնության լեզվով*: Քանի որ պետությունը նախ եւ առաջ *գրասենյակն* է¹⁷⁰: Նույնիսկ համայնական կյանքով ապրող ցե-

¹⁶⁸ Է. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի եւ հարակից հարցերի մասին, Եր., 1977:

¹⁶⁹ Այս հարցին կանդորդառնանք նաեւ «Կրկին նախամաշտոցյան գրերի հարցը» ենթագլխում:

¹⁷⁰ Այս հանգամանքի կարեւորությունը նկատում է Վ. Կուզմիշչեւը «Արեւի որդիների թագաւորությունը» գրքում: Մասնավորապէս. «Но письмо – явление стадияльное, и если с этих позиций рассмотреть случай с Тауантинсуйю, то отсутствие письма у инков требует...

դի առաջնորդին անհրաժեշտ է որեւէ կերպ ամրակայել եղած սննդի, կայքի, անասունների, մարտունակ անդամների թվի մասին տեղեկությունները¹⁷¹: Ամեն ինչ մտապահելն անհնար է, եւ գրի առաջացումն անբաժան է պետական կառուցվածքների գոյացումից, քանի որ հենց այդ պահից է առաջանում տնտեսական, իրավաբանական, վարչական, գաղափարաբանական գործարքների արձանագրման, պահպանման եւ մեծ տարածությունների վրա ու ժամանակի մեջ հաղորդելու անհրաժեշտությունը:

Թեւէ պետական գործառույթի իրագործման ընթացքում գրի վճռորոշ դերը կարող է չափազանցված թվալ, սակայն դժվար չէ նկատել, որ ամենահնագույն պետականությունները՝ եգիպտական, միջագետքյան, չինական, ասպարեզ են գալիս արդեն իսկ գրով հանդերձ: Անշուշտ, հակառակ կարծիքը՝ պետականությունը հնարավոր է նաեւ առանց գրի՝ նույնպես գոյություն ունի: Այս դեպքում սովորաբար բերվում է Ինկերի կայսրության օրինակը: Սակայն հայտնի է, որ ինկերը տեղեկությունը պահելու նպատակով գործածում էին հանգուցակիր պարաններ՝ կիպու: Եիշտ է, ոմանք փորձում են ներկայացնել հարցն այնպես, թե կիպուն գիր չէր մեր կիրառած իմաստով, այլ ընդամենը վիճակագրական տվյալներ պահելու եւ հաղորդելու համար էր գործածվում: Բայց պարզ չէ, թե ինչու ինկերի գիրը պետք է լիներ հենց «մեր իմաստով», եւ ինկերը գրանցեին ոչ թե վիճակագրական տեղեկություն, այլ պատմագրություն եւ կրոնական գրականություն: Գրանցել են այն, ինչ իրենց է անհրաժեշտ եղել: Այդ դեպքում չինական գիրն էլ գիր չէ «մեր իմաստով», բայց, միեւնույնն է, գիր է: Պարզապես ինկերի գիրը մեզ համար անսովոր է, քանի որ «ռաչափ» էր՝ ի տարբերություն մեր «երկչափ» գրի, բայց դա չէր խանգարում կատարել տեղեկության պահպանման եւ փոխանցման դերը: Երբեմն էլ որպես օրինակ փորձում են հնագիտական տվյալներով հայտնի մշակույթները ներկայացնել որպես «ոչ գրաճանաչ» պետություններ¹⁷²: Բայց սա էլ ավելի թույլ փաստարկ է, քանի որ հենց

доказательств. Прежде всего государственное устройство, подобное царству инков, не могло существовать без фиксации устной речи» (В. Кузьмищев, Царство сынов Солнца, М., 1982).

¹⁷¹ «Потребности в письменности обнаруживаются... в государственной жизни – в договорах и сношениях с иноземными государствами (договоры, сопроводительные грамоты), в крупной торговле (надписи на сосудах о содержимом), в новых имущественных отношениях (письменные завещания, надписи, удостоверяющие собственность), в развитии ремесле (подписи имени мастера, заменившие прежние родовые знаки собственности), в общественном почитании знатных умерших (надпись на могиле руса), в развитии языческом культе (пророчество, написанное в храме)» (Д. Лихачёв, Предпосылки возникновения русской письменности и русской литературы // Вопросы истории, 1951, № 12, с. 34).

¹⁷² Հատկանշական է Ա. Խազանովի կարծիքը. «Возникновение письменности, конечно, связано с усложнением общества и возникновением государства. Однако нам известны бесписьменные государства и догосударственные общества, обладавшие письменностью» (А. Хазанов, Кочевники и внешний мир, Алматы, 2002, с. 478). Փաստորեն, ընդունելով գրի առաջաց-

լլի բացակայությունը անհնար է դարձնում այդ կազմավորումների ներքին կառուցվածքի ուսումնասիրումը եւ գնահատումը, թե որքանով է արդարացված դրանք պետություն համարելը:

Կերջապես, յուրաքանչյուր կարող է կատարել մի պարզ մտային գիտափորձ: Պատկերացնենք, որ երկրի ղեկավարող ատյանը որեւէ բան է կարգադրում: Ինչպե՞ս կարող է այդ կարգադրությունը հասնել կատարողներին: Կարգադրությունը կարող է արվել բանավոր, սակայն այդ դեպքում կա՛մ բոլոր նրանք, ում այն ուղղված է, պիտի հավաքվեն միեւնույն տեղում, կա՛մ բոլոր վայրերը պիտի ուղարկվեն այդ կարգադրությունը իմացող մուկետիկներ: Սակայն առաջին դեպքն անհնար է, եթե պետության չափը չի սահմանափակվում մեկ բնակավայրով, իսկ երկրորդ դեպքում ենթադրվում է, որ մուկետիկները պիտի անսխալ հիշեն կարգադրության ամբողջ բովանդակությունը եւ տեղ հասնելուն պես կարողանան ապահովել այնտեղ գտնվող գոնե մեկ անձի կողմից այդ բովանդակության հիշելը, քանի որ իրենք պիտի վերադառնան՝ հաջորդ կարգադրություններն ստանալու համար:

Մի կողմ թողնելով նման պաշտոնյաների անհրաժեշտ քանակի եւ այդ գործընթացի դանդաղության հարցը՝ պետք է նկատել դրա մեկ այլ թերությունը՝ ծայր աստիճան ոչ վավերականությունը: Նույնիսկ եթե պատկերացնենք, որ բոլոր ուղարկվողները ազնիվ են եւ միտումնավոր չեն աղավաղի կարգադրությունը, նրանք կարող են պարզապես սխալվել, իսկ տեղերում այդ կարգադրությունները յուրացնողներն էլ իրենց կողմից լրացուցիչ սխալներ թույլ տան («փչացած հեռախոսի» սկզբունքով): Այս ամենից բացի՝ անհնար կլինի պահպանել այդ կարգադրությունները, ուստի եւ անհնար կլինի ստուգել դրանց կատարման ընթացքը:

Չաշվի առնելով ասվածը, սովորաբար ընդունվում է, որ պետության համար գիրը, իհարկե, անհրաժեշտ է, բայց կարելի է գրել նաեւ օտար լեզվով, եւ նախամաշտոցյան գիրը մերժողները չեն մոռանում հիշել պատմիչների հաղորդած այն տեղեկությունը, որ Չայոց արքունիքում գրում էին պարսկերեն, այսինքն՝ դա է եղել այն ժամանակվա Չայաստանի պաշտոնական գործավարության լեզուն, եւ որ բնակավայրերում եղել են գույքացուցակներ՝ կազմված պարսկական եւ հունական գրերով. «...քանի գտանին եւ միջոցք լեալ պատերապմացն եւ գիր Պարսից եւ Յունաց, որովք այժմ գիրդից եւ գաւառաց, եւս եւ իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, եւ հանուրց հակառակութեանց եւ դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ կրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ապատութեան պայապատութիւն»¹⁷³:

Օտարալեզու գիրն ու լեզուն, իհարկե, կոյուրացներ կարգադրությունների հարդորման եւ պահպանման խնդիրը, սակայն կառաջանային նոր բարդություններ

ման կապը պետության կազմավորման գործի հետ, հեղինակը հայտարարում է, որ կան ոչ գրաճանաչ պետություններ, բայց չի բերում ոչ մի օրինակ:

¹⁷³ Սոփոս Խորենացի, Չայոց պատմութիւն, Ա, գ // Մատենագիրք Չայոց, հտ. Բ, էջ 1753:

(թեեւ հտրեւնացու հաղորդածից դեռ պարզ չէ, թե ինչ լեզվով էին գրում պարսից եւ հունաց գրեթով): Մասնավորապէս, **բանավոր խոսքի վերարտադրման վավերականության խնդիրն այս դեպքում փոխարինվում է օտարալեզու գրավոր խոսքի՝ ժողովրդի լեզվով բանավոր թարգմանության վավերականության խնդրով**: Ու դեռ մի կողմ թողնելով այն, որ պիտի առկա լինեին բավարար թվով երկլեզվյա անծինք, որոնք հավասարաչափ պիտի տիրապետեին երկու լեզվի՝ ե՛ւ օտար (տվյալ դեպքում՝ պաշտոնական), ե՛ւ ժողովրդի մեծ մասին հասկանալի, քանի որ նրանք պիտի գրեին մի՛ լեզվով եւ կարողանային բանավոր թարգմանել այն մեկ այլ՝ ժողովրդի լեզվով: Սրանից հետեւում է, որ եթե նույնիսկ կիրառվում է օտարալեզու գիր, նրա կողքին, միեւնոյնն է, պիտի լինի ինչ-որ մի գիր՝ ժողովրդի լեզվով:

Սրան էլ որոշ հեղինակներ առարկում են՝ ասելով, թե բնակչության առնվազն մի մասը կարող էր երկլեզվյա լինել: Ինչ խոսք, հնարավոր է: Սակայն սա էլքերում է մեկ այլ դժվարություն: Բանն այն է, որ օտար լեզվին տիրապետողները, հնարավորություն ունենալով շփվել պետական այլալեզու «գրասենյակի», այն է՝ բարձր խավերի հետ, հասարակության մեջ կգեղեցնեին ավելի բարձր դիրք, քան միայն մայրենի լեզվին տիրապետողները, իսկ դա ժամանակի ընթացքում կարող էր հանգեցնել լեզվափոխության (language shift), քանի որ ստորին խավի ներկայացուցիչները ձգտում են յուրացնել վերնախավի լեզուն՝ նրան մոտենալու եւ հետագայում դրա մեջ ընդգրկվելու հույսով¹⁷⁴: Բայց մեր դեպքում նման երեւոյթներ չեն եղել: Մեզ հայտնի չէ որեւէ տեղեկություն այն մասին, որ հայերը լեզվափոխության վտանգի տակ են եղել: Ընդհակառակը՝ հին ժամանակների համար մենք ունենք Ստրաբոնի հայտնի վկայությունն այն մասին, որ Հայոց երկիրը միալեզու էր: Իսկ խնդրո առարկա դարաշրջանի համար էլ ունենք Պատմահայր Մովսեսի վկայությունն այն մասին, որ պարսից լեզվին տիրապետողները երկրում շատ չէին, քանի որ Վռամշապուհ արքան «...ոչ փոքր ինչ կրէր աշխատութիւն յաղագս քարտուղարի. քի միւս զնաց Մեսրոպ յարթունական դրանէն՝ ոչ քոք ի ճարտարաց գտանէր անդ ի դարաց, քան քի պարսկականան վարէին գրով»¹⁷⁵: Իրոք, եթե արքայական հրամանները գրվում էին պարսկերեն, ուրեմն յուրաքանչյուր բնակավայրում պիտի լինէր պարսկերենին առնվազն մեկ-երկու տիրապետող: Այդ դեպքում մայրաքաղաքում կլինեին հարյուրավոր, եթե ոչ հազարավոր պարսկագետներ, իսկ արքունիքում՝ արքայի շրջապատում՝ նվազագույնը մի քանի տասնյակ, այն էլ լավագույններից լավագույնները: Իսկ ստացվում է, որ արքայի կողքին, Մեսրոպից բացի, ուրիշ լավ պարսկագետ չի եղել: Նույնիսկ եթե սա չափազանցություն է, ապա հազիվ թե իրականությունից շատ է հեռու, եւ կարող ենք արձանագրել, որ այն ժամանակվա Հայաստանում պարսկական տիրապետության շուրջ 20 տարուց հետո պարսկերենին գրեթե չէին տիրապե-

¹⁷⁴ Н. Вахтин, *Условия языкового сдвига* // Вестник молодых ученых. Сер.: Филологические науки, № 1, СПб., 2001, с. 11-16.

¹⁷⁵ Մովսես խորենացի, *Հայոց պատմութիւն*, Գ, Ծր // Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2079:

տում: Այսպիսով, այո՛, Հայոց պետությունում պարսկական գիրը գործածվել է, սակայն, թերեւս շատ սահմանափակ ծավալներով: այն սոսկ Հայոց եւ պարսից արքունիքների միջեւ հարաբերությունների կամ որոշ տեղական գույքային արձանագրությունների գիրն է եղել, բայց չէր կարող ներպետական գրագրության լեզվի դեր կատարել:

Ինչ վերաբերում է մյուս լեզուներին, ապա որպես ներպետական պաշտոնական լեզուներ կարող էին հանդես գալ ասորերենն ու հունարենը: Սակայն դրանց էլ վրեթե ոչ ոք չէր տիրապետում: ԶԷ՝ որ հենց այդ հանգամանքի բերումով ժողովրդի կողմից եկեղեցական ծեսի լեզուներ հունարենն ու ասորերենը չընկալելու պատճառով էր առաջ եկել Հայոց գիր ունենալու խնդիրը: Այսպիսով, քանի որ պետականությունն ու ազգային լեզվով գիրը, իրոք, անբաժանելի են մեկը մյուսից, եւ քանի որ ոչ ոք չի կասկածում, որ Մաշտոցից առաջ Հայոց պետություն (այսինքն՝ պետություն, որի բնակչության հիմնական մասի լեզուն հայերենն էր) եղել է, ուրեմն ստիպված ենք հաշտվել այն տրամաբանական մտքի հետ, որ **նախամաշտոցյան հայ գիր չէր կարող չլինել, այսինքն՝ եղել է**: Այլ հարց է, թե՛ ինչ գիր: Դեռ այդ հարցի բացահայտմանն է ուղղված սույն հետազոտությունը:

Երկրորդ օրինաչափությունը վերոհիշյալ «գիրը հետեւում է պետական գաղափարաբանությանը» սկզբունքն է: Դրանից հետեւում է, որ եթե, իրոք, Հայոց գրի ստեղծումը կապված լինէր քրիստոնեության ընդունման հետ, ստիպված ենք արձանագրել, որ Հայոց այբուբենը պիտի ակնհայտորեն լինէր կա՛մ հունական գրի (ավետարանների գրի) հիմքով, կա՛մ ծայրահեղ դեպքում, հաշվի առնելով Հայքում ասորի հոգեւորականության մեծ ազդեցությունը՝ ասորական: Այդպես եղավ դպտիների ու վրթերի դեպքում, որոնց տառերի կեսից ավելին համընկնում է հունական տառերին: Իսկ մեր դեպքում ստացվում է, որ Հայաստանն ընդունում է քրիստոնեություն, իսկ որպես գիր՝ Սուրբ Գրքի գրի հետ կապ չունեցող գրային մի համակարգ: Ուրեմն եթե նման փաստ կա, ապա այն պիտի չափազանց լուրջ հիմք ունենա:

Կորյունի գիրքը տալիս է դրա բացատրությունը: Ինչպես հիշում ենք, Հայոց գրերի անհրաժեշտությունը Մաշտոցը հիմնավորում էր քարոզչական անհրաժեշտությամբ: Ժողովուրդը հեռու էր քրիստոնեական գաղափարներից եւ, ըստ եության, զրադաշտական էր, քրիստոնյաների լեզվով ասած՝ կռապաշտ էր, *հեթանոս* (այն է՝ ազգայնական), որը եւ «պարզել էր» Մաշտոցը Գողթան գավառ կատարած իր այցելության արդյունքում. քրիստոնեությանը հետեւում էր, կարծես թե, միայն կառավարիչը: Պետք էր շտապել, այլապես տեղի կունենար ապստամբություն եւ վերադարձ ավանդական կրոնին: Եւ, իրոք, ընդամենը կես դարից պակաս էր մնում մինչեւ Ավարայրի ճակատամարտը, որի գաղափարական հիմքը քրիստոնեական հավատի պաշտպանությունն էր: Եւ որպես Հայոց այբուբեն ոչ հունական գիրն ընդունելը կարող է ունենալ այն բացատրությունը, թե պարզապես ժամանակ չկար երբ գիրն անցնելու, եւ պետք էր ընդունել այն գիրը, որն ամենից լայն էր տարածված

երկրում: Իսկապես, նոր գրին անցնելը պահանջում է որոշակի ժամանակ: Մեր ժամանակներում գրային համակարգը փոխող պետությունների օրինակը (Ադրբեջան, Ուզբեկստան) ցույց է տալիս, որ դրա համար անհրաժեշտ է մոտ տասը տարի: Դա դեռ այն պայմաններում, երբ կան արագընթաց փոխադրամիջոցներ ու կապուտիներ, այդ թվում՝ Համացանց, որոնք օգնում են տարածել նոր գիրը ամբողջ երկրում, պատրաստել ուսուցիչներ: Հին Հայքում, որը շուրջ 300 հազ. քառ. կմ տարածք ուներ՝ լեռներով ու ձորերով կտրատված, եւ չկային այսօրվա կապի միջոցները, անհամեմատ ավելի շատ ժամանակ (առնվազն՝ քսան տարուց ոչ պակաս) կպահանջվեր նոր գիրը տարածելու համար: Մի կողմից՝ նախածեռնողներն այդքան ժամանակ չունեին, մյուս կողմից՝ Կորյունի պատմությունից ստացվում է, որ այդ ժամանակը անհրաժեշտ էլ չի եղել: Նոր գրի տարածումը կատարվել է ակնթարթորեն՝ Իսկ դա կարող է նշանակել, որ այդ գիրն **իր հիմքում լրիվ նոր չի եղել:**

3.1.1.2. Բանասիրական հիմնավորումներ

Հարցի բանասիրական կողմին չենք անդրադառնա, քանի որ այս խնդիրը լայնորեն քննարկվել է, եւ մասնագետների կարծիքներին կարելի է ծանոթանալ դրան նվիրված ծավալուն գրականությունից: Նշենք միայն, որ, ինչպես եւ պատմական վկայությունների դեպքում է, այստեղ էլ բանավեճերը շատ հաճախ հռետորական են եւ ուղղված են ոչ թե իսկությունն ապացուցելուն, այլ ընթերցողին համոզելուն:

3.1.1.3. Պատմական վկայությունները

Պատմական վկայությունները բազմաթիվ են. դրանց նույնպես կարելի է ծանոթանալ վերոհիշյալ հեղինակների գրքերում: Երբեմն դրանք աղբյուրների ուղիղ հաղորդումներ են, որոնք, սակայն, հետազոտողներից շատերը նախընտրում են շրջանցել: Երկու ամենահայտնի օրինակ միայն: Այսպես՝ Փիլոստրատոս պատմիչը, որն ապրել է մոտավորապես 170–247 թթ., իր *Թիանացի Ապոլոնիոսի կենսագրության* մեջ հաղորդում է, որ Պամփիլիայում բռնել էին մի հովվազ, որի ոսկե մանյակի վրա «...*հայերեն գրերով գրված էր՝ Արշակ Թագավորը՝ Նիսայի աստծուն*»¹⁷⁶: Թվում է՝ չափազանց հստակ հաղորդում է, սակայն քանի որ հիշյալ ստեղծագործության մեջ կան նաեւ հեքիաթային պատմություններ, այս վկայությունը վստահելի չի համարվում: Հր. Աճառյանը, վկայակոչելով նաեւ Հ. Հյուբշմանին, կարծիք է հայտնում, որ գրածը չափազանց անորոշ է. «*Ո՞րն է այն Արշակ թագավորը: ... Արշակ՝ եթե իրոք պատմությունը ճշմարիտ է, ավելի Պարթեւ թագավորի անուն պետք է լինի և այն մակագրությունն էլ ավելի պահլավերեն քան թե հայերեն: Արեւմտյան մի հեղի*

¹⁷⁶ Սրա հունարեն գրվածքը տարբեր հրատարակություններում փոքր ինչ տարբերվում է Այսպես, ըստ **Flavii Philostrati**, ... C. L. Kayser, Turici, 1844, էջ 23՝ «...*ἐπιγράμματο Ἀρμενίοις γράμματα ΒΑΣΙΛΕΥΣ ἈΡΣΑΚΗΣ ΘΕΩΙ ΝΥΣΙΩΔΙ*», ըստ Ն. Ալիխեանի՝ «...*ἐπιγράμματο Ἀρμενίουσ γράμματα Βασίλειός Ἀρσάκης θεῶ Νυσίω*» (Հ. Ն. Ալիխեան, *Ս. Սաշտոց վարդապետ*, Վիեննա, 1949, էջ 227):

նակի համար շատ հեշտ էր շփոթել հայ եւ պարթեւ ազգերը, մանավանդ այն ժամանակ, երբ ապրում էր Փիլոստրատոսը»¹⁷⁷:

Թիանացի Ապոլոնիոսի կենսագրության ռուսական հրատարակության խմբագիր Ե. Ռաբինովիչը ծանոթագրություններում նշում է, որ «*հավիվ թե Փիլոստրատոսը նկատի ուներ Հայոց թագավորական տան որոշակի ներկայացուցիչ*»¹⁷⁸ (թարգմանությունը մերն է): Իրոք, տվյալ դեպքում խնդիրը Արշակ թագավորի նույնակալացումը չէ. այստեղ այդ անվամբ ներկայացված է *պարպապես հայ* թագավոր: Այնուհանդերձ, Հայոց *Արշակ* թագավորը, իրոք, եղել է ու թեւեւ կարծատեւ, բայց թագավորել է մ. թ. 34–35 թթ., հետեւաբար եղել է հենց Թիանացի Ապոլոնիոսի ժամանակակիցը: Իհարկե, կարելի է ասել, որ այն ժամանակներից մինչեւ Փիլոստրատոսը շուրջ մեկուկես դար էր անցել, եւ դժվար է խոսել նրա ոճի ու աղբյուրների հավաստիության մասին, սակայն այդ տրամաբանությամբ մենք չենք կարողանա օգտվել նաեւ այլ հին աղբյուրներից (օրինակ՝ Հերոդոտոսից), որոնցում հաճախ իրական դեպքերի կողքին խոսվում է առասպելական իրողությունների մասին: Ինչ վերաբերում է Հր. Աճառյանի այն ակնարկին, թե արեւմտյան հեղինակը հեշտությամբ կարող էր շփոթել հայ եւ պարթեւ ազգերին, ապա, ինչ խոսք, դա էլ կարող էր լինել: Բայց դա նշանակում է *եւս մի* ենթադրություն անել՝ թե այն ժամանակվա կրթված մարդը կարող էր շփոթել իրեն ժամանակակից ազգերին: Այսինքն՝ խնդիր է դրված նույնիսկ ոչ թե ապացուցել Փիլոստրատոսի տեղեկության սխալականությունը, այլ պարզապես դրա անվստահելիության տպավորություն ստեղծել: Եւ դրա համար Հր. Աճառյանը հիմնվում է սոսկ սեփական կասկածանքների վրա. «*ավելի Պարթեւ*», քան *հայ*, «*ավելի պահլավերեն. քան թե հայերեն*» եւ այլն:

Մյուս օրինակը. Վարդան Պատմիչն ընդունում է, որ դանիեյան գրերը հայերեն են եղել, եւ գրում է, թե Լեւոն թագավորի ժամանակ գտնվել է մի դրամ, որի վրա այդ գրերով գրված էր հայ կռապաշտ թագավորի անունը. «*Եւ պի լեալ է հայերեն գիր ինոցն՝ վկայեցաւ ի ժամանակս Լեւոնի արքայի. պի գտաւ դրամ ի Կիլիկիա, հայերեն գրով դրոշմեալ պանուն կռապաշտ թագաւորացն Հայկականց*»¹⁷⁹:

Մ. Չամչյանը (նրան համամիտ է նաեւ Հր. Աճառյանը) չի ընդունում այդ տեղեկությունը հետեյալ տրամաբանությամբ. «*Եթե այդ տառերը հայերեն էին, ինչպիսի՞ տառեր էին, որ Վարդանը կարողացավ կարդալ թագավորի անունը. եթե Մեսրոպյան գրերի նման էին, ուրեմն եւ Մեսրոպյան գրեր էին, իսկ եթե նրանցից տարբեր էին, հապա ինչպե՞ս կարողացավ Վարդանը կարդալ*»¹⁸⁰: Նման դատողությունները չեն կարող չզարկնալ «*Եթե Մեսրոպյան գրերի նման էին, ուրեմն եւ Մեսրոպյան գրեր էին*». փյունիկյան

¹⁷⁷ Հ. Աճառյան, *Հայոց գրերը*, էջ 434:
¹⁷⁸ **Филострат Флавий**, *Жизнь Аполлония Тианского*, М., 1985, с. 281.
¹⁷⁹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 50:
¹⁸⁰ Շստ՝ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 435:

տառերն էլ նման էին հունական տառերին, բայց հունական չէին: Այն, որ մետրոպոլիտ կոչվող գրերի առնվազն *մի մասը* կարող էր մետրոպոլիտ առաջ լինել, ուստի եւ Վարդանի կարող էր հեշտությամբ կարողալ դրանք, Մ. Չամչյանի մտքով չի էլ անցնում: Իհարկե, մենք ոչինչ չգիտենք՝ այդ մետաղադրամի մասին որեւէ բան պնդելու համար, պարզապես պետք է նշել, որ Մ. Չամչյանի տրամաբանությունը խոցելի է:

3.1.1.4. Ձեւագոյացման վերակառուցումներ

Ինչպես ասվեց վերեւում, վերարտադրման ընթացքում գրանշանները աղավաղվում են: Տվյալ լեզվի կրողների շրջանում այդ աղավաղումները չեզոքացվում են գրչական դպրոցի պահպանողականությամբ, որը պահպանում է գրերի կանոնավոր կոթողային ձեւերը: Բայց եթե աղավաղված ձեւերը փոխառության արդյունքում կանոնավոր են դառնում մեկ այլ լեզվի համար, դրանք արդեն պահպանվում են այս նոր լեզվի գրչական դպրոցի կողմից: Այսպես գոյանում է գրային համակարգերի ծագումնաբանական ծառը, որի տարբեր ճյուղերում գտնվում են ազգակից համակարգեր: Սակայն, ինչպես տեսանք, աղավաղումներն էլ պատահական չեն, այլ պայմանավորված են գրչարհեստի ընդհանուր մեխանիկական օրինաչափություններով եւ գրչության դպրոցների թելադրած գրանշանների մասնիկների իրագործման հերթականությամբ, որոնց հետեւանքով փոփոխությունները նույնպես օրինաչափ են ընթանում, եւ ազգակից նշանները փոփոխվում են զուգահեռաբար:

Դա նշանակում է, որ Հայոց այն տառերի ձեւերը, որոնք (հատկապես որոշ գրատեսակներում) համընկնում են այլալեզու գրային համակարգերի *նույնարժեք* գրանշաններին (այդ թվում՝ նաեւ նախամաշտոցյան շրջանի), կարող են դիտարկվել իբրեւ յուրատեսակ նմուշներ, որոնք բացահայտում են տվյալ գրանշանի՝ որոշակի նախածեւից առաջանալու հանգամանքը: Այսինքն՝ դա հնարավորություն է տալիս վերականգնել տվյալ գրանշանի նախնական հնարավոր վիճակները: Եւ եթե վերականգնված նախածեւերը *համակարգորեն* համընկնում են որեւէ այլ գրային համակարգերի գրանշանների հետ, կարելի է խոսել այդ նախածեւերից դրանց բարեշրջական գոյացման մասին: Ստորեւ այս եղանակի կիրառմամբ բացահայտված են Հայոց տառածեւերի ծագումնաբանական առնչությունները ազգակից, հին այբբենական բազմաթիվ այլ համակարգերի հետ, այդ թվում՝ փյունիկյան եւ հին հունական (մ. թ. ա. 11-9-րդ դդ.) գրանշանների հետ: Պետք է նշել, որ 19-րդ դարում նման եզրակացությունների էին հանգել մասնավորապես, Ի. Հարությունյանցն ու Ն. Տաղավարյանը, թեւ նրանք նկատի չէին ունեցել գրանշանների ձեւագոյացման օրինաչափությունները: Պարզապես Հայոց որոշ տառածեւերի եւ փյունիկյան արագագրի ձեւերի նմանությունն ակնհայտ է: Եթե դրանք ստեղծված լինեին Մաշտոցի կողմից, ինչպես ասում են *ex nihilo*՝ ոչնչից, ապա նմանություն չէր լինի կամ այնքան հազվադեպ կլիներ, որ այն հնարավոր կլիներ բացատրել պատահական զուգահիշականությամբ:

3.1.1.5. Առկա նմուշները

Նախամաշտոցյան Հայոց գրի նմուշներ հաստատապես հայտնի չեն (այլապես խնդիր էլ չէր լինի): Բայց եւ չի կարելի ասել, որ դրանց հայտնաբերումը անհավանական է: Նույնիսկ եթե մի կողմ թողնենք երջանիկ պատահականությունները, որոնց շնորհիվ ապագայում կարող են հայտնաբերվել նոր գրավոր հուշարձաններ, որոշ նմուշներ կարող են բացահայտվել նաեւ արդեն իսկ առկա նյութում:

Սակայն նախ պետք է պարզել, թե ինչ ենք որոնում եւ ինչ ենք ակնկալում գտնել: Սովորաբար, երբ որպես ապացույց պահանջում են նմուշներ ցույց տալ, չեն փորձում պատկերացնել, թե դրանք ինչ կարգի նմուշներ պիտի լինեն: Այլ գրային համակարգերի օրինակներով կարելի է ենթադրել, որ դրանք կարող են լինել բարի, խեղդեղենի, փայտի, մետաղի, պնակիտի, մագաղաթի կամ պապիրուսի վրա գրված ինչ-որ նյութեր: Սակայն պետք է հիշել, որ դրանք ունեն պահպանման տարբեր ժամկետներ, եւ յուրաքանչյուրը բնորոշ է միայն որոշակի խավի կամ մասնագիտության ներկայացուցիչների:

Ինչպես ասվեց, *մեկ ազգը կարող է միաժամանակ գործածել գրային տարբեր համակարգեր*՝ կախված հաղորդակցվողների համար դրանց պիտանելիությունից: Մինչդեռ սովորաբար բավարարվում են՝ շեշտելով, որ պետական գրագրությունը *«պարսկականաւն վարդին գրով»*՝ բացարձակապես չիետաքրքրվելով, թե ինչ գիր էին այն ժամանակ գործածում քրմերը, դիվանագետները, առետրականները¹⁸¹, գիտնականները, բնակավայրերի տեղական կառավարիչները եւ այլն, որոնց պարզապես անհրաժեշտ էր գոնե ամենաընդհանուր նշումներ կատարել: Նկատենք նաեւ, որ նույն այդ *պարսկական* գրով գրված հայկական փաստաթղթեր մեզ նույնպես չեն հասել:

Չունենալով ուղղակի փաստարկներ՝ կարելի է սակայն համոզված լինել, որ, օրինակ, քրմությունը հագիվ թե գործածեր դանիելյան գիրը (եթե այն փյունիկյան գրի ժառանգորդն էր): Առավել հավանական է, որ քրմերը գործածեին պատկերագրային բառավանկային ինչ-որ մի գիր, որի վերջին հետքերը մեզ են հասել Արարատյան թագավորության տարիների պատկերագրերի, ինչպես նաեւ «նշանագիրք իմաստնոց» ցուցակների տեսքով: Ճիշտ է, այդ կարգի գրերին բնորոշ է սկզբունքային բարդություն, բայց կրոնավորները բոլոր ժամանակներում եղել են պահպանողականության կրողները, եւ դրանից բացի՝ հենց յուրացման դժվարությունը հասարակ մարդկանց աչքում այդ գրին տիրապետողներին կարող էր լրացուցիչ խորհրդավորություն հաղորդել, որն անհրաժեշտ է ցանկացած կրոնի ներկայացուցչին: Ի վերջո, կրոնավորը սկզբունքորեն շտապելու կարիք երբեք չի ունեցել եւ կարող էր դանդաղ տարեցտարի յուրացնել այն տաճարային դպրոցում:

¹⁸¹ Հմմ. Կ. *Лоукотка, Развитие письма*, М., 1950, с. 79.

Սրանից հետեւում է, որ դանիւնայան գիրը այս նպատակով չէր գործածվի, եւ այդ գրով դիցաբանական բնույթի գրվածքներ գտնել՝ Գիլգամեշի հերոսապատումի կամ Ոդիսականի կարգի, հավանաբար՝ չենք կարող ակնկալել: Իսկ քանի որ գիտությունը հին աշխարհում բրնձի պատկերացումն էր, հազիվ թէ դանիւնայան գրով ստեղծված լինէին նաեւ գիտական գրքեր:

Հազիվ թէ դանիւնայան գրերով գրեին նաեւ պետական փաստաթղթեր: Մաշտոցի օրոք պալատական գրագրության լեզուն պարսկերենն էր, դրանից առաջ էլ, դատելով, մասնավորապէս, Արտաշէս թագավորի թողած արձանագրություններից¹⁸², այդ դերը, ամնվազն մասամբ, կատարել է արամեերենը: Դա չի հակասում մայրենի լեզվով գրի գոյության եւ դրա՝ պետականությունից անբաժան լինելու մասին դրույթին. պաշտոնական եւ հանդիսավոր արձանագրությունները կարող էին լինել այլալեզու, իսկ աշխատանքային լեզուն, հատկապէս տեղերում լինէր հայերենը¹⁸³:

Ու եւս մի խավ՝ առեւտրականները, որոնք կարող էին հաշվապահական կարիքների համար գործածել դանիւնայան գրերը: Սակայն այս կարգի նյութերը պետք է որ գրվէին ոչ երկարակյաց նյութերի՝ մագաղաթի, նույնիսկ՝ պնակիտների վրա:

Առկա նմուշների հարցին մեկ անգամ եւս կանդորառնանք գրքի վերջում, սակայն պարզ է, որ նախամաշտոցյան (դանիւնայան) գրով բնագրերի մեզ հասնելը չափազանց անհավանական է. դրանց հիմնական գործածողները՝ տեղական վարչության պաշտոնյաները եւ առեւտրականները, հազիվ թէ գրառում կատարած լինէին դիմացկուն նյութի վրա:

3.1.2. Դանիւնայան եւ մաշտոցյան գրերի հարաբերությունը

Դանիւնայան գրերի հարցը, թեւեւ նախամաշտոցյան գրերի ընդհանուր հարցի մասն է կազմում, առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ դրանց գոյությունը հաստատում են մեր պատմիչները: Եւ այստեղ հիմնական տեղ են գրավում երկու այլ հարցեր. արդյո՞ք դրանք, թեկուզ եւ թերի, բայց հայկականն հին գրեր էին, այսինքն՝ դրանցով գրել են հայերեն, թե՞ ոչ, եւ արդյո՞ք դրանք օգտագործվել են Մաշտոցի կողմից:

Պարզ է, որ հնարավոր է չորս տարբերակ.

- ա. այդ գրերը հայկական չեն եղել, եւ Մաշտոցը դրանք չի օգտագործել.
- բ. այդ գրերը հայկական չեն եղել, բայց Մաշտոցը դրանք օգտագործել է.
- գ. այդ գրերը հայկական են եղել, բայց Մաշտոցը դրանք չի օգտագործել.
- դ. այդ գրերը հայկական են եղել, եւ Մաշտոցը դրանք օգտագործել է:

¹⁸² К. Тревер, *Очерки по истории культуры древней Армении*, М.-Л., 1953, с. 169.

¹⁸³ Որպէս օրինակ կարելի թերել եւ այն փաստը, որ դեռ վերջերս Խորհրդային Հայաստանում պետական գրագրության զգալի մասը կատարվում էր ռուսերեն, բայց որպէս աշխատանքային լեզու գործածվում էր նաեւ հայերենը:

Նախկինում բավական հաճախ ընդունվում էր չորրորդ տարբերակը (ինչպէս տեսանք Վարդան Պատմիչի օրինակով): Սակայն նորագույն ժամանակներում հատկապէս Հր. Աճառյանից հետո, հայագիտության մեջ ամրապնդվեց առաջին տարբերակը: Հիմնական դեմ կարծիքները ձեւակերպել է Հր. Աճառյանը:

1. «**Եթէ Դանիւնայան գրերը պակասավոր եւ հայերեն լեզվին անհարմար էին, նշանակում է, թէ հայերեն լեզվի տառերը չէին**»¹⁸⁴:

Սա Ստ. Մալխասյանի միտքն է, որը Հր. Աճառյանը համարում է «իմաստուն»: Ի պատասխան այս պնդմանը՝ կարելի է ասել, որ այստեղ շփոթված են տարբեր հասկացություններ՝ գրային համակարգով ներկայացվող լեզուն եւ ներկայացման որակը: Այսօր էլ գործածվող գրային համակարգերի մեծ մասը նույնպէս կատարյալ չէ. իսկ այնպիսի գիր, ինչպիսին անգլիականն է, առհասարակ դժվար է այբբենական անվանել: Ինչպէս նկատել է Ի. Դյակոնովը. «անգլերենում առանձին վերցրած տառն այլեւ ոչնչի չի համապատասխանում, եւ միայն ամբողջական դրանց համադրությունը ներկայանում է որպէս միասնական բառային նշան՝ յուրատեսակ երկրորդային բառագիր»¹⁸⁵: Այնուամենայնիվ, անգլիացիները կիրառում են այդ անհարմար եւ թերի գրային համակարգը եւ գրում են անգլերեն: Նույնը կարելի է ասել նաեւ հնագույն գրերի մասին: Թերի էին ե՛ւ փյունիկյան, ե՛ւ հունական, ե՛ւ ասորական, ե՛ւ պարսկական գրերը: Խոսքը վերաբերում է ոչ թէ այդ համակարգի որակին, այլ նրան, որ Մաշտոցից առաջ կարող էր եղած լինել որեւէ անհարմար, թերի, ոչ բաւական այբուբեն, որով սակայն գրում էին հայերեն:

2. «**Ինչպէ՞ս կարող է լինել, որ մի ազգ կամ մի լեզու այբուբեն ունենա, մի ժամանակ գործածի եւ այդ գրականությունն այնպէս ջնջվի, որ նրանից մի գիրք, մի տետրակ կամ աննշան մի արձանագրություն անգամ չմնա**»¹⁸⁶:

Մեզ չեն հասել նաեւ եւ դարի սկզբում գրված մետրոպատառ հնագույն նմուշներ: Մենք չունենք Մաշտոցի ինքնագիրը, իր ձեռքով գրված որեւէ նմուշ: Այդ դեպքում ինչպէ՞ս կարելի է պահանջել, որ պահպանված լինէին էլ ավելի հին գրի նմուշներ: Եւ դ. սկզբի մասին մնացել են միայն պատմիչների վկայություններ, սակայն դա մեզ չի խանգարում վստահ լինել, որ այդ դարում Հայոց գիրը եղել է:

Տարբեր գիտություններում փաստարկների հավաստիությունը հաստատվում է տարբեր եղանակներով. կան գիտություններ (օրինակ՝ աստղագիտությունը), որոնց դեպքում որեւէ ենթադրույթի ապացույցը հաճախ հիմնվում է անուղղակի փորձերի եւ այլ գիտություններից՝ ֆիզիկայից, քիմիայից ստացված տվյալների վրա, բայց դրանցից այդ գիտությունների գիտականությունը չի նվազում: Տվյալ

¹⁸⁴ Հ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, էջ 452:

¹⁸⁵ И. Дьяконов, *О письменности II* Редакторский текст к книге Д. Дирингера «Алфавит», М., 1963, с. 25.

¹⁸⁶ Հ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, էջ 455:

դեպքում որեւէ գրային համակարգի նմուշների բացակայությունը չի կարող վճռորոշ փաստարկ համարվել դրա գոյության դեմ: Տարբեր երկրներում գրել են տարբեր նյութերի վրա: Եւ եթե, օրինակ, Միջագետքում գրեթե բոլոր դեպքերում թե՛ պաշտոնական նպատակներով, թե՛ կենցաղում գործածվել է միեւնույն եւ չափազանց դիմացկուն գրչարհեստը՝ գիրը կավե սալիկների վրա, ապա այլ տեղերում կարող էր այլ բան ընդունված լինել: Այսպես՝ միջնադարյան Ռուսաստանում համեմատաբար դիմացկուն նյութի՝ մագաղաթի վրա, գրել են միայն կարեւոր փաստաթղթեր, մինչդեռ կենցաղային նպատակներով, անձնական նամակագրության, ամուսնական գրառումներ ստեղծելու կամ սեւագրի համար սովորական է եղել չափազանց անշուք, ոչ երկարակյաց կեչակեղեւի վրա գրելը (կեչակեղեւ գրություններ, берестяные грамоты): Եւ պատահական չէ, որ դրանցից շատ քիչ նմուշներ են պահպանվել, որոնք էլ ի դեպ, համեմատաբար վերջերս են հայտնաբերվել:

Կեչակեղեւ գրություններին այլ երկրներում մոտավորապես համապատասխանում են, օրինակ, պնակիտները: Սա էլ ավելի խախտու կրիչ էր, եւ եթե կեչակեղեւը պարզապես երկարակյաց չէր, ապա պնակիտի գրվածքը սկզբունքորեն ջնջելի էր, եւ մեզ միայն հրաշքով են հասել պնակիտների տառածեւեր, օրինակ՝ Պոմպեյքում, երբ Վեզուվի ժայթքումից մարդիկ հապճեպորեն թողել են իրենց տները: Նույն շարքից էին նաեւ կապարե սալիկների վրա կատարվող գրությունները:

Ամեն ինչ չէ, որ մեզ է հասել նաեւ Միջագետքից: Այսպես, գրեթե չի պահպանվել մ. թ. ա. 1-ին հազարամյակի գրավոր նյութ՝ ամուսնին վերաբերող, որի պատճառն անհայտ է¹⁸⁷: Սակայն անուղղակի տվյալների շնորհիվ հաջողվում է այդ մասին որոշ պատկերացում կազմել¹⁸⁸: Մեզ չեն հասել նաեւ պետական գրագրության կարեւոր նմուշներ: Լ. Օպենհայմի կարծիքով՝ պատճառը կարող էր լինել դրանց մագաղաթյա լինելը¹⁸⁹, մագաղաթը, անշուշտ, շատ ավելի անկայուն նյութ է կավե սալիկների համեմատ: Նույնը վերաբերում է նաեւ եգիպտական նյութին, որի պատճառն է կամ մագաղաթյա գրվածքները գրեթե չեն հասել, եւ եգիպտագիտությունը ստիպված է զիջավորապես հիմնվել քարի վրա փորագրված նյութի վրա¹⁹⁰: Գետնաբար որեւէ դարաշրջանից գրային նմուշների բացակայությունը չի կարող անվա-

րապահորեն դիտվել որպես տվյալ դարաշրջանում գրի եւ գրչության բացակայության ապացույց¹⁹¹:

Կա մի կարեւոր հանգամանք եւս, որը, սակայն, մինչ այժմ, որքան մեզ հայտնի է, չի նկատվել. եթե դանիելյան գիրը դրվել է մաշտոցյան այբուբենի հիմքում, ապա անգամ դրանով գրված նյութեր գտնվելու դեպքում հստակ թվագրման բացակայության պատճառով (իսկ այն մեծագույն հավանականությամբ բացակայելու է, քանի որ նույնիսկ թվագրված լինելու դեպքում վիճահարույց է լինելու դրա թվագրության համակարգը եւ մնայու են միայն հնագիտական թվագրման ոչ հուսալի եղանակները) դրանք կարող են հայտարարվել մաշտոցյան:

3. «Ինչպե՞ս կարող է լինել, որ այս հայկական համարված այբուբենը ամեն տեղ անհետ կորչում է Հայաստանի մեջ, ուր գործածված պիտի լիներ, իսպառ աներեւութանում է եւ մնում է միայն Միջագետքի մի ասորու մոտ»¹⁹²:

Չր. Աճառյանի այս պնդմանը կարելի է առարկել հետեւյալը. մեր պատմիչները չեն էլ պնդում, թե Հայոց գիրը չի պահպանվել Հայքի տարածքում, այլ ընդամենը հայտնում են, որ այն եղել է Դանիել Ասորու մոտ:

Հաճախ կարելի է լսել նաեւ այսպիսի հարց՝ **եթե հայերը Մաշտոցից առաջ էլ են գիր ունեցել, ապա ինչո՞ւ այդ մասին պատմիչները տեղեկություն չեն թողել**:

Նախ, ինչպես գիտենք, իրականությունը տրամագծորեն հակառակ է. Հայոց երեք հնագույն պատմիչներն էլ թե՛ եւ չափազանց անորոշ կերպով, բայց վկայում են Հայոց հին գրի գոյության մասին («գոն նշանագիրք հայերէն լեզուոյս»): Իսկ եթե ավելի ընդարձակ շարադրանք է ակնկալվում, ապա պետք չէ մոռանալ, որ կարող էին լինել րազմաթիվ քաղաքական պատճառներ, որոնք հնարավորություն չեն տվել պատմիչներին ավելի հստակորեն արտահայտվել: Ավելին, կարելի է զարմանալ, որ վկայություններն այդ մասին առհասարակ հասել են մեզ գոնե այդ անորոշ տեսքով:

Սակայն դանիելյան գրերի հայկական լինելու դեմ ամենալուրջ փաստարկն այն է, որ դրանց մասին հիշատակելիս պատմիչներն անվանում են դրանք «այլոց դպրությանց»: Սովորաբար դա հասկացվում է «ոչ հայկական»: Սակայն նման ըմբռնումը ժամանակակից մարդու պատկերացումների՝ քրիստոնեական դարաշրջանի արշալույսի օրերին ապրող քրիստոնյաներին վերագրելու արդյունք է: Այո՛, «ուրիշ դպրություն» ասելով՝ Կորյունը, հավանաբար, իրոք նկատի է ունեցել «այլազգի

¹⁸⁷ «The lack of any written evidence for first-millennium trade is not easily explained. It may be suggested that the entire trade was in Aramaic hands and that these merchants used papyrus and leather as writing material. After all, only a very small fraction of the private legal acts was recorded in cuneiform on clay even during the Neo-Babylonian period when this technique continued to be used mainly by the temple administrations of Sippar, Ur, Babylon, and others. More difficult even than the problem of the traders is the question of the merchandise handled by them, and the geographical extent of trading. We do not have answers to these questions». (A. Leo Oppenheim, *Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization*, Chicago, 1964, p. 94).

¹⁸⁸ Л. Оппенхейм, *Древняя Месопотамия. Портрет погибшей цивилизации*. М., 1990, с. 75.

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 84:

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 143:

¹⁹¹ «Clay, which was used for the several cuneiform systems, happens to represent, especially when fired, the best – that is, the cheapest and most durable – writing material yet utilized by man, while papyrus, parchment, leather, wood, metal, and stone survive mainly by chance. Climatic conditions, the nature of the soil, and the ever-present human factor often wiped out such materials completely. Where the system of writing changed from one using clay to one for which more perishable materials were used, entire periods are blacked out for us. The disappearance of the last phases of Mesopotamian civilization is a good example of such a situation...» (A. Leo Oppenheim, *Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization*, p. 229).

¹⁹² Չ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, էջ 455:

դեպքում որեւէ գրային համակարգի նմուշների բացակայությունը չի կարող վճռորոշ փաստարկ համարվել դրա գոյության դեմ: Տարբեր երկրներում գրել են տարբեր նյութերի վրա: Եւ եթե, օրինակ, Միջագետքում գրեթե բոլոր դեպքերում թե՛ պաշտոնական նպատակներով, թե՛ կենցաղում գործածվել է միենույն եւ չափազանց դիմացկուն գրչարհեստը՝ գիրը կավե սալիկների վրա, ապա այլ տեղերում կարող էր այլ բան ընդունված լինել: Այսպես՝ միջնադարյան Ռուսաստանում համեմատաբար դիմացկուն նյութի՝ մագաղաթի վրա, գրել են միայն կարեւոր փաստաթղթեր, մինչդեռ կենցաղային նպատակներով, անձնական նամակագրության, առեւտրական գրառումներ ստեղծելու կամ սեւագրի համար սովորական է եղել չափազանց անշուք, ոչ երկարակյաց կեչակեղեւի վրա գրելը (կեչակեղեւ գրություններ, берестяные грамоты): Եւ պատահական չէ, որ դրանցից շատ քիչ նմուշներ են պահպանվել, որոնք էլ, ի դեպ, համեմատաբար վերջերս են հայտնաբերվել:

Կեչակեղեւ գրություններին այլ երկրներում մոտավորապես համապատասխանում են, օրինակ, պնակիտները: Սա է՛լ ավելի խախտու կրիչ էր, եւ եթե կեչակեղեւը պարզապես երկարակյաց չէր, ապա պնակիտի գրվածքը սկզբունքորեն ջնջելի էր, եւ մեզ միայն հրաշքով են հասել պնակիտների տառածեւեր, օրինակ՝ Պոմպեյքում, երբ Վեզուվի ժայթքումից մարդիկ հապճեպորեն թողել են իրենց տները: Նույն շարքից էին նաեւ կապարե սալիկների վրա կատարվող գրությունները:

Ամեն ինչ չէ, որ մեզ է հասել նաեւ Միջագետքից: Այսպես, գրեթե չի պահպանվել մ. թ. ա. 1-ին հազարամյակի գրավոր նյութ՝ առեւտրին վերաբերող, որի պատճառն անհայտ է¹⁸⁷: Սակայն անուղղակի տվյալների շնորհիվ հաջողվում է այդ մասին որոշ պատկերացում կազմել¹⁸⁸: Մեզ չեն հասել նաեւ պետական գրագրության կարեւոր նմուշներ: Լ. Օպենհայմի կարծիքով՝ պատճառը կարող էր լինել դրանց մագաղաթյա լինելը¹⁸⁹, մագաղաթը, անշուշտ, շատ ավելի անկայուն նյութ է կավե սալիկների համեմատ: Նույնը վերաբերում է նաեւ եգիպտական նյութին, որի պապիրուսե կամ մագաղաթյա գրվածքները գրեթե չեն հասել, եւ եգիպտագիտությունը ստիպված է գլխավորապես հիմնվել քարի վրա փորագրված նյութի վրա¹⁹⁰: Հետեւաբար որեւէ դարաշրջանից գրային նմուշների բացակայությունը չի կարող անվե-

¹⁸⁷ «The lack of any written evidence for first-millennium trade is not easily explained. It may be suggested that the entire trade was in Aramaic hands and that these merchants used papyrus and leather as writing material. After all, only a very small fraction of the private legal acts was recorded in cuneiform on clay even during the Neo-Babylonian period when this technique continued to be used mainly by the temple administrations of Sippar, Ur, Babylon, and others. More difficult even than the problem of the traders is the question of the merchandise handled by them, and the geographical extent of trading. We do not have answers to these questions». (A. Leo Oppenheim, *Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization*, Chicago, 1964, p. 94).

¹⁸⁸ Л. Оппенгейм, *Древняя Месопотамия. Портрет погибшей цивилизации*. М., 1990, с. 75.

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 84:

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 143:

րապահորեն դիտվել որպես տվյալ դարաշրջանում գրի եւ գրչության բացակայության ապացույց¹⁹¹:

Կա մի կարեւոր հանգամանք եւս, որը, սակայն, մինչ այժմ, որքան մեզ հայտնի է, չի նկատվել. եթե դանիեյան գիրը դրվել է մաշտոցյան այբուբենի հիմքում, ապա անգամ դրանով գրված նյութեր գտնվելու դեպքում հստակ թվագրման բացակայության պատճառով (իսկ այն մեծագույն հավանականությամբ բացակայելու է, քանի որ նույնիսկ թվագրված լինելու դեպքում վիճահարույց է լինելու դրա թվագրության համակարգը եւ մնալու են միայն հնագիտական թվագրման ոչ հուսալի եղանակները) դրանք կարող են հայտարարվել մաշտոցյան:

3. «Ինչպե՞ս կարող է լինել, որ այս հայկական համարված այբուբենը ամեն տեղ անհետ կորչում է Հայաստանի մեջ, ուր գործածված պիտի լիներ, իսպառ աներեւութանում է եւ մնում է միայն Միջագետքի մի ասորու մոտ»¹⁹²:

Հր. Աճառյանի այս պնդմանը կարելի է առարկել հետեւյալը. մեր պատմիչները չեն էլ պնդում, թե Հայոց գիրը չի պահպանվել Հայքի տարածքում, այլ ընդամենը հայտնում են, որ այն եղել է Դանիել Ասորու մոտ:

Հաճախ կարելի է լսել նաեւ այսպիսի հարց՝ եթե հայերը մաշտոցից առաջ էլ են գիր ունեցել, ապա ինչո՞ւ այդ մասին պատմիչները տեղեկություն չեն թողել:

Նախ, ինչպես գիտենք, իրականությունը տրամագծորեն հակառակ է. Հայոց երեք հազույն պատմիչներն էլ թեեւ չափազանց անորոշ կերպով, բայց վկայում են Հայոց հին գրի գոյության մասին («գոն նշանագիրք հայերեն լեզույս»): Իսկ եթե ավելի ընդարձակ շարադրանք է ակնկալվում, ապա պետք չէ մոռանալ, որ կարող էին լինել բազմաթիվ քաղաքական պատճառներ, որոնք հնարավորություն չեն տվել պատմիչներին ավելի հստակորեն արտահայտվել: Ավելին, կարելի է զարմանալ, որ վկայություններն այդ մասին առհասարակ հասել են մեզ գոնե այդ անորոշ տեսքով:

Սակայն դանիեյան գրերի հայկական լինելու դեմ ամենալուրջ փաստարկն այն է, որ դրանց մասին հիշատակելիս պատմիչներն անվանում են դրանք «այլոց դպրությանց»: Սովորաբար դա հասկացվում է «ոչ հայկական»: Սակայն նման ըմբռնումը ժամանակակից մարդու պատկերացումների՝ քրիստոնեական դարաշրջանի արշալույսի օրերին ապրող քրիստոնյաներին վերագրելու արդյունք է: Այո՛, «ուրիշ դպրություն» ասելով՝ Կորյունը, հավանաբար, իրոք նկատի է ունեցել «այլազգի

¹⁹¹ «Clay, which was used for the several cuneiform systems, happens to represent, especially when fired, the best – that is, the cheapest and most durable – writing material yet utilized by man, while papyrus, parchment, leather, wood, metal, and stone survive mainly by chance. Climatic conditions, the nature of the soil, and the ever-present human factor often wiped out such perishable materials were used, entire periods are blacked out for us. The disappearance of the last phases of Mesopotamian civilization is a good example of such a situation...» (A. Leo Oppenheim, *Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization*, p. 229).

¹⁹² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 455:

դպրություն», բայց դա դեռ չի նշանակում «ոչ հայկական»: Բանն այն է, որ հաճախ դավանանքն անհրաժեշտ ու երբեմն բավարար հատկանիշ է դիտվում ազգային պատկանելությունը որոշելիս: Մեր օրերում նույնպես տեսնում ենք այդ մոտեցումը: Օրինակ՝ Բոսնիայի բնակիչներին անվանում են «մահմեդական»՝ գործածելով այդ բառը նաև ցեղանվան իմաստով. եզդիները ջանք չեն խնայում ապացուցելու, որ «եզդի»-ն ոչ միայն դավանանքի, այլև ժողովրդի անուն է, եւ իրենք մահմեդական քրդերից տարբեր ազգ են, չնայած որ խոսում են գրեթե միեւնույն լեզվով: Այս աշխարհընկալումը հատուկ է եղել նաև մեր ժողովրդին, ինչի վկայությունն է «հայ քրիստոնյա» բառակապակցության գոյությունը¹⁹³: Ուստի չի կարելի բացառել, որ Կորյունի համար գրադաշտ հայերի (քրիստոնյա քարոզիչների եզրույթով՝ «հեթանոսների») դպրությունը, որն այն ժամանակ արդեն շուրջ մեկ դար պիտի որ իրոք «թաղված» լիներ, նույնքան օտար էր, որքան եւ ասորականը կամ հունականը, կամ գուցե ավելի օտար, քանի որ վերջիններս թեւ օտար էին, սակայն գոնե քրիստոնյա էին:

Եւ վերջապես, չէ՞ որ Գրիգոր Պարթեւն ինչ-որ բան իրոք այրել է: Դա պատմական անհերքելի փաստ է, որի հետ պիտի հաշվի նստի յուրաքանչյուր պատմաբան: Թեեւ հասկանալի է նաև շատերի ցանկությունը՝ շրջանցել այդ տիպի փաստը: Բայց, ցավոք, դա բնորոշ է բոլոր հեղափոխություններին: Հիշենք. «Իսկ անդէն վաղ՝ վաղակի թագաւորն ինքնիշխան հրամանաւ, եւ ամենեցուն հաւանութեամբ, գործ ի ձեռն տայր երանելոյն Գրիգորի, զի պառաջագոյն փայրենական հնամեացն նախնեացն եւ զիւր կարծեալ աստուածսն չաստուածս անուանեալ, անյիշատակ առնել, ջնջել ի միջոյ: Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն վարաւքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ, երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ պրագինսն Անահտական դիցն, եւ որ յերազմոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, զայրի գիտութեան բրնագ, անուանեալ Դիւան գրչի Որսվզի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ, բակեալ այրեալ աւերեալ բանդեցին» (ընդգծումները մերն են)¹⁹⁴:

Ապա. «Եւ որք դիմեալ հասեալ էին զգաստացեալ վարաւքն, սուրբ Գրիգոր թագաւորան հանդերձ, փշրէին ցոսկի պատկերն Անահտական կանացի դիցն. եւ ամենեւին ցտեղին բանդեալ վատնէին, եւ ցոսկին եւ վարծաթն աւար առեալ: Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, եւ բանդէին վճանեական մեհեանն դատերն Արամալդայ ի Թիլն յաւանի: Եւ զգանձս երկոցուն մեհեանցն աւարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն Աստուծոյ թողուին տեղեալքն հանդերձ»¹⁹⁵ Եւ այլն:

¹⁹³ «...вероисповедание в средневековых условиях выступало как бы чехлом для всего массива идеологической культурной традиции... Это положение характерно для большинства этносов эпохи феодализма, но для армян – в высшей степени» (տե՛ս Ս. Արություն, *Народные механизмы языковой традиции* // Язык. Культура. Этнос. – М., 1994, с. 5-12).

¹⁹⁴ Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց*, ԵԸ // Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 1674:

¹⁹⁵ Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց*, ԵԹ // Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 1680:

Վերորերայից պարզ է դառնում, որ հազիվ թե այն օրերից մեզ որեւէ ձեռագիր հասներ, հետեւաբար հնագրական նյութի բացակայությունը որպէս փաստարկ ներկայացնելը գիտական վեճին անօրյեկտիվության երանգ է հաղորդում:

3.1.3. Ի՞նչ նպատակով Մաշտոցը ստեղծեց Հայոց այբուբենը

Թվում է, թե սա ավելորդ հարցադրում է, քանի որ պատասխանն ակնհայտ է. *Մաշտոցյան գիրը ստեղծվել էր քրիստոնեական քարոզչությունն ծավալելու նպատակով*: Այս մասին խոսվել է նաև նախորդ գլխում: Երբեմն հետազոտողները նույնիսկ դասում են այն այսպէս կոչվող «առաքելական գրերի» շարքին՝ դնելով դրանց շարքում նաև ղպտական, գոթական, սլավոնական եւ նման այլ գրերը: Սակայն քանի որ այս դրույթը շատ խնդիրներ է կանխորոշում, հարկ կա անդրադառնալ դրան: Ի վերջո, այդ գիրը կարող էր ստեղծվել նաև այլ խնդիրներից ելնելով, օրինակ՝ պետական գրագրության նպատակով (դիցուք՝ փոխարինելու համար արքունիքում գործածվող պարսկերենը) կամ բանաւիյուսական որեւէ նյութի պահպանման, կանոնարկման նպատակով, որի համար ստեղծվեց ավետարայի գիրը, կամ որեւէ այլ նպատակով: Եւս մեկ անգամ համոզվելու համար հիշենք աղբյուրների հաղորդած միայն մի քանի տվյալ:

«Չի ի վաղնջուց, յորմէ հետեւ առին նոքա զանուն քրիստոնեութեանն, լոկ միայն իբրեւ վկրաւնիս իմն մարդկութեան յանձինս իւրեանց՝ եւ ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ վնդորութիւն իմն մարդկութեան ի հարկէ: Ոչ էթէ որպէս պարտն էր՝ գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հեյլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատե: Իսկ որք արտաքոյ բան զգիտութիւն արուեստին էին այլ խառնադանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն եւ կամ շինականութեանն, էթէ զցայգ եւ զցերեկ նստեալ վարդապետացն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ պորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն եւ ոչ մի ոք, եւ ոչ մի բան, եւ ոչ կէս բանի, եւ ոչ դոյն յիշատակ ինչ, եւ ոչ նշմարանս ինչ զոր լսէին, եւ ոչ կարէին ինչ ունել ի մտի»¹⁹⁶: Այստեղ Փավստոսը հաստատում է, որ քարոզչության խնդիր կար, քանի որ ժողովրդը հավատով չէր ընկալել քրիստոնեության գաղափարները, այլ հարկադրված: Առանց քարոզչության անհնար էր միավորել ամբողջ ազգը՝ դիմագրավելու համար պարսկամետ գործիչների կողմից նախապատրաստվող շրջադարձին դեպի իրանական (ոչ վաղ անցյալում՝ գրեթե նաև հայկական) կրոնը: Մինչեւ Ավարայր մնում էր կես դարից էլ պակաս ժամանակ, բայց եկեղեցու հայրերը հավանաբար սպասում էին դրան ամեն րոպէ: Եւ իզուր չէր Մաշտոցը գործունեությունն ծավալում՝ մտահոգված լինելով հատկապէս Գողթան կողմերում՝ Իրանին առավել մոտիկ գավառում տիրող վիճակով: «Իսկ

¹⁹⁶ Փավստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, Դ, ԺԳ // Մատենագիրք Հայոց, հտ. Ա, էջ 294:

երանելոյն վաղվադակի պաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկաներ պաւառռովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ պամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, եւ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնա-պանդութիւն Զրիստոսի մատուցանէր»¹⁹⁷: Իսկ երբ գրերն արդէն կային, զբաղվել են ավետարանների թարգմանությամբ եւ քարոզմամբ. «Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ պաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել...»¹⁹⁸: Այսպիսով, Յայոց գիրը նախատեսվում էր գործածել նախ եւ առաջ քարոզչական նպատակներով, ինչն էլ եւ արվել է:

3.1.4. Արտակարգ եւ լիազոր դեսպանը

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի բնորոշ է գրական լեզվի ոճային իր տարբերակը: Պետք է նկատել, որ լեզուն փոխվում է շատ ավելի արագ, քան կարելի է պատկերացնել: Նույնիսկ բան-երեսուն տարվա ընթացքում այն կարող է զգալիորեն փոխվել. հայտնվում եւ գործածական են դառնում նոր բառեր, դարձվածքներ, մյուսները անհետանում են կամ ստանում նոր երանգ կամ իմաստ: Եւ երբ խոսում ես ինն ժամանակների մասին՝ գործածելով այդ ժամանակների բնորոշ բառապաշարը, շարադրանքին հաղորդվում է յուրատեսակ խորհրդավորություն եւ առասպելականություն: Բայց բավական է համապատասխան հասկացությունները կոչել այսօրվա անուններով, խորհրդավորության բողն անհետանում է, իսկ դեպքերը ստանում են կյանք եւ դառնում հասկանալի ու շոշափելի:

Նախկինում, երբ կրկին ու կրկին կարդում էինք Կորյունի երկը համակվում էինք զգացողությամբ, որ մինչեւ վերջ չենք հասկանում նկարագրվող իրադարձությունների էությունը: Ինչո՞ւ է Կորյունը շրջանցել կարեւորագույն հարցերը՝ կապված այբուբենի ստեղծման կազմակերպչական ընթացքի հետ, օրինակ՝ աշխարհահոգ խորհրդի բնարկած հարցերը, դանիելյան գրերի որպիսության, դրանք վերջնական այբուբենում ներառել-չներառնելու, Միջագետքում Մաշտոցի հանդիպումների եւ կատարած աշխատանքի էության եւ մանրամասների հետ կապված եւ այլ հարցեր: Եւ մի օր, դա կարծես թե հասկանալի դարձավ. հերթական անգամ թերթելով Կորյունի գիրքը՝ հանկարծ նկատեցինք մեր օրերի պաշտոնական մարմինների հաղորդագրություններից ծանոթ երանգներ՝ գրել ընդհանուր բառերով ու չորոշակիացնել, խոսել երկրորդական բաների մասին՝ շրջանցելով կարեւորները: Եւ հանկարծ մեր առջեւ հայտնվեց մեկ այլ Կորյուն, ոչ թե Կորյուն պատմիչ էւ Մաշտոցի կենսագիր, այլ Մաշտոցի... մամլո քարտուղար, իսկ Մաշտոցի վարքի գլուխները ներկայացան որպես առանձին մամլո հաղորդագրություններ, միայն շատ ավելի ուշ միավորված, խմբագրված եւ հրատարակված որպես մեկ հատոր: Ու, թերեւս,

¹⁹⁷ Կորին, Վարք Մեսրոպայ Վարդապետի, Ե, // Մատենագիրք Յայոց, հտ. Ա, էջ 235:
¹⁹⁸ Նույն տեղում, ԺԱ, էջ 240:

հենց այս իմաստով պետք է հասկանալ Կորյունի «ամընթերակաց» եզրույթը, որը նա կիրառում է իր մասին խոսելիս:

Ահա Վարքի յոթերորդ գլուխը.

«Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի եւ միաբանութեամբ սրբոյն Սահակայ, եւ հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր զնայր ի հինգերորդ ամի Վռամշապիոյ արքային Յայոց, եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Եղեսիա կոչի, եւ երկրորդին Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականաւքն եւ իշխանաւքն քաղաքաց պատահեալ, եւ բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ ըստ Զրիստոսի անուանելոցն կարգի:

Իսկ աշակերտասէր վարդապետին վտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, կոմանս յասորի դպրութիւնն կարգէր [ի քաղաքին Եղեսացոց], եւ կոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր»¹⁹⁹:

Ժամանակակից գրասենյակային լեզվով եւ անվանումների ժամանակակից համարժեքներով դա կինչեր մոտավորապես այսպես.

«Թագավոր Վռամշապուհ Արշակունու հրամանով եւ Ամենայն Յայոց Կաթողիկոս Սահակ Առաջինի համաձայնությամբ, նրա թագավորության հինգերորդ տարվա ընթացքում Մաշտոցը մի խումբ պատանիների ուղեկցությամբ աշխատանքային այցով մեկնեց Սիրիա: Ջերմ հրաժեշտի արարողությանը ներկա էր Ամենայն Յայոց Կաթողիկոս Սահակ Առաջինը: Այցի ընթացքում Մաշտոցն այցելեց Եղեսիա եւ Ամիդ քաղաքները, որտեղ արժանացավ հյուրասեր ընդունելության այդ քաղաքների եպիսկոպոսների՝ Բաբիլասի եւ Ակակիոսի կողմից, որոնք ջերմորեն դիմավորեցին հայկական պատվիրակության անդամներին: Նրանց ուղեկցում էին այդ քաղաքների հոգեւոր եւ գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչները: Այցելության ծրագրի շրջանակներում հայ պատվիրակության անդամների մի խումբ՝ Սիրիայի գրականագետների հետ փորձի փոխանակման նպատակով մասնակցեց Եղեսիայում կազմակերպված միջոցառումներին, իսկ մյուս խումբը Նույն նպատակով ուղեւորվեց Սամուսատ»:

Սա կատակ չէ, թեւս ոմանց մոտ դա կարող է ժպիտ առաջացնել, իսկ մյուսների մոտ՝ վրդովմունք: Պարզապես, եթե Կորյունի գրվածքին նայում ենք այս դիրքերից, ապա պարզ է դառնում, որ այն չի էլ ենթադրում որեւէ ներքին, այսպես ասած «ծառայողական» տեղեկության հաղորդում: Եւ մենք պարզապես պիտի շնորհակալ լինենք, որ գոնե այսքանը մեզ հաղորդել են: Իսկ թե ինչ է կատարվել իրականում, մենք, ինչպես եւ մեր օրերի քաղաքական իրադարձությունների դեպքում, պիտի

¹⁹⁹ Նույն տեղում, Ե, էջ 237:

փորձենք կարդալ տողերի միջեւ: Դա չի նշանակում շահարկումներ կատարել եւ հեռանալ փաստացի նյութից: Խոսքը վերաբերում է *փաստերին չհակասող եւ դրանցից տրամաբանորեն բխող* հետեւություններին, որոնց շնորհիվ վերականգնված պատկերը եղելությունից շեղված կլինի ոչ ավելի, քան մեր օրերի իրադարձությունների մասին մեր կռահումները՝ հիմնված պաշտոնական հաղորդագրությունների վրա, այսինքն՝ բավական մոտ կլինի իրականությանը:

Մինչդեռ հաճախ հետազոտողները բեւեռացնում են իրենց ուշադրությունը պատմիչների նկարագրած դեպքերի արտաքին կողմի վրա կամ փորձում են գտնել միակ ճշմարիտ աղբյուրը: Յուրաքանչյուր պատմիչի տեղեկություն կարող է այս կամ այն չափով շեղվել իրականությունից, պատմիչը մարդ է՝ մարդուն բնորոշ բոլոր հատկություններով. նա կարող է սխալվել, կարող է բարձրացնել մեկին եւ նսեմացնել մյուսի ներդրումը եւ այլն: Սակայն տարբերվելով մանրուքներում աղբյուրների տեղեկությունների խճանկարը կարող է իրականությանը բավական մոտ պատկեր կազմել: Միայն մեկ օրինակ բերենք: Խոսելով Վահրիճի մասին, որը թագավորի իրամանով բերեց դանիելյան գրերը՝ Յր. Աճառյանը նկատում է, որ ըստ Կորյունի ու Փարպեցու՝ Վահրիճը լոկ հրովարտակը տարել է Չաբեյին եւ նշանագրերը բերել Չայաստան. «*Չաբեյը, ըստ հանձնարարության Վառաձապուհի, գնաց Դանիելի մոտ, սովորեց գրերը եւ Վահրիճի հետ ուղարկեց թագավորին*»: «*Սակայն հորենացին այնպես է պատմում, որ իբրեւ թե Վահրիճը եւս Չաբեյի հետ գնացել է Դանիելի մոտ սովորելու եւ նույն գրերը միասին բերել են թագավորին*»²⁰⁰: Սրանից Յր. Աճառյանը եզրակացնում է. «*հորենացու պատմած այս տեղեկությունը թյուրիմացության արդյունք է եւ իբրեւ հակառակ Կորյունի ու Փարպեցու՝ անընդունելի*»²⁰¹: Նախ՝ հորենացու տեղեկությունը էական տարբերություն չունի Կորյունի եւ Փարպեցու հայտնածից. կարելի էր պարզապես նկատել, որ հորենացին «մի քիչ այլ կերպ է ներկայացնում նույն դեպքը»: Մյուս կողմից՝ երկու տեղեկությունները միմյանց չեն հակասում. Կորյունի ու Փարպեցին, ճիշտ է, չեն տեղեկացնում, որ Վահրիճը նույնպես գնացել է Դանիելի մոտ, բայց նրանց շարադրածից չի էլ հետեւում, որ նա չի ուղեկցել Չաբեյին: Ուրեմն կարող էր եւ ուղեկցած լինել: Իսկ մյուս կողմից էլ, եթե չէր ուղեկցել, ուրեմն ինչպե՞ս էր Վահրիճը իմացել դանիելյան գրերը եւ հաղորդել Մեսրոպին. չէ՞ որ, ըստ Կորյունի ու Փարպեցու, սովորողը Չաբեյն է եղել, մանավանդ եթե հաշվի առնենք, որ զրային համակարգ յուրացնելն այնքան էլ հեշտ բան չէ. մեկ երկու օրում չես սովորի: Ի դեպ, այս հանգամանքին հետազոտողները սովորաբար ուշադրություն չեն դարձնում՝ կարծելով, թե Դանիելը կարող էր ուղարկել հայերին տառերի ցուցակ կամ գիրք: Դետո ինչպե՞ս պիտի դրանք օգտագործեին Մեսրոպյան ու Սահակը. հնչյունային զրի նշաններն առանց դրանք կրողի խոսք են ու համար:

²⁰⁰ Յ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 108:

²⁰¹ Նույն տեղում:

Այնուհետեւ Յր. Աճառյանը նկատում է, որ Չայաստանի տեղեկության համաձայն՝ անձամբ ինքը՝ Դանիել եպիսկոպոսն է եկել Չայաստան եւ Սահակի ու Մեսրոպի հետ երկու տարի աշխատակցել նույն գրերը փորձելու համար: Նա որակում է սա որպես «սխալ տեղեկություն», որի վրա ծանրանալը բոլորովին ավելորդ է: Սակայն ի՞նչ անհնարին բան կա նրանում, որ Դանիելը եկած լինի Չայաստան: Թերեւս, իրոք դժվար է պատկերացնել, որ Դանիելը Չաբեյի հետ եկել է Չայաստան, հանդիպել Սահակին ու Մեսրոպին, գուցե նաեւ Վառաձապուհին եւ այդ մասին Կորյունը ոչինչ չի գրել: Սակայն սա էլ բոլորովին չի հակասում դեպքերի տրամաբանությանը, իսկ Կորյունը հազար ու մի պատճառ կարող էր ունենալ՝ չհիշատակելու համար այդ դեպքը (տե՛ս վերեւում): Վերջապես, Դանիելը կարող էր ավելի ուշ գալ. դիցուք՝ մի քանի շաբաթ անց, եւ այդ մասին Կորյունը կարող էր չգրել, բայց մեկ այլ աղբյուր կարող էր հիշատակել: Իր գրքի սկզբում Յր. Աճառյանը գրում է. «*...պետք է մտածենք, որ հետին աղբյուրների մեջ գտնված նոր տեղեկություններից գոնե ոմանք քաղված են հին վավերական աղբյուրներից. ուստի եւ իբրեւ այդպիսիք՝ թանկագին եւ վստահելի մատուցողներ են*»²⁰²: Սակայն, որպես կանոն, նա իր այդ տրամաբանությանը չի հետեւում: Իսկ մի տեղ էլ նկատում է. «*Եթե խնդիրը ներքին պահանջներ ունենար, այն ժամանակ հնարավոր էր թերեւս լսել հետին պատմիչներին. բայց այսպիսի պահանջ չկա*»²⁰³: Կարծում ենք՝ հենց այստեղ այդ ներքին պահանջը կար, քանի որ պետական գիր ընդունելը կարեւորագույն խնդիր է, եւ Դանիելը գուցե անձամբ է ցանկացել իր իմացածը հայտնել Սահակին ու Մեսրոպին:

Այսպես հետազոտողները հաճախ իրենց ուշադրությունը բեւեռում են Դանիելի հետ կապված դեպքերի վրա՝ անտեսելով նրա անունը ստացած գրերի որպիսության խնդիրը: Ի միջի այլոց, ինչպես կտեսնենք, նա որեւէ կերպ չի մասնակցել այդ գրերի ստեղծմանը. *նրա դերը սուկ քաղաքական է եղել*:

Կարելու դիտարկումներ ունի այս մասին Ա. Մարտիրոսյանը՝ շարադրված իր «Մաշտոց» աշխատության մեջ: Նա նույնպես տարակուսում է, որ կարեւորագույն հարցերի մասին խոսելիս Կորյունն ամենուրեք կիրառում է «ուրումն», «գումն», «մի» քառերը, եւ հարց է տալիս. «*Ովքե՞ր էին դրանք: Գամակ անորոշություն*»: Բերում է նաեւ Յ. Մարկվարտի տարակուսական բառերը. «*Շատ տարօրինակ է, որ հայերը ոչ միայն դանիելյան այբուբենի որպիսության, այլեւ նրա տիրոջ անձնավորության մասին համարյա թե ոչինչ չուներն ասելու*»²⁰⁴:

Սակայն ահա թե ինչպես է փորձում վերականգնել իրականությունը Ա. Մարտիրոսյանը: «*Իրականում ինչո՞վ էր սքանչելի «աշխարհահոգ խորհուրդը, ի՞նչ ներդրություններ են կրել նրանք*»²⁰⁵, - հարց է տալիս նա: Եւ շատ համոզիչ կերպով եզրա-

²⁰² Յ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 6:

²⁰³ Նույն տեղում, էջ 491:

²⁰⁴ Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 193:

²⁰⁵ Նույն տեղում, էջ 181:

կացնում է, որ բարձրաստիճան հոգեւորականներից բաղկացած խորհուրդը «կարող էր միայն մերժել կամ ընդունել հայկական այբուբենի գաղափարը ... եւ ոչ թե պարզվեր այբուբենի ստեղծման գործնական խնդրով ... դեռ ոչ մի ժողով այբուբեն չի ստեղծել, այլ եկեղեցու պաշտամունքի մեջ հունարենն ու ասորերենը հայերենով փոխարինելու, հայերենը եկեղեցու պաշտոնական լեզու դարձնելու մասին» պիտի ընթանար քննարկումը²⁰⁶: Եւ ահա խորհուրդը մերժել է այդ առաջարկը:

Դրանից հետո Սահակն ու Մաշտոցը դիմել են արքային, խորհրդի որոշմանը հակառակ, խնդիրը լուծելու ուղիներ գտնելու հույսով: Արքան պատմել է նրանց Դանիել եպիսկոպոսի մասին: Ա. Մարտիրոսյանը գրում է. «Նկատենք, որ դանիելյան պատումը ե՛լ սկզբից, ե՛լ վերջից քնազրի հետ շարակցական եպրեր չունի»²⁰⁷: Ապա շարունակում է. «Այն հորինվել է հենց իր՝ Կորյունի կողմից, կամ նրանից առաջ եւ ընդգրկվել Կորյունի պատմության մեջ, «ի նշանաւոր գիտակացն քաղելով»²⁰⁸: Այս ամենից հետո նա գալիս է այն եզրակացության, որ դա մտցված է քնազրի մեջ քաղաքական նպատակներով: ««Վարք Մաշտոցին» ուղղված է ասորիների դեմ, բայց ասորականության պայմաններում»²⁰⁹: Այո՛, Հայոց առաջնորդները գիտակցում էին, որ ասորիների մեծագույն ազդեցության պայմաններում եկեղեցու ղեկավարման գործին պետք է դիվանագիտական մոտեցում ցուցաբերել եւ ոչ թե հակադրվել: Այդ իսկ պատճառով նրանք ջանացել են հարցը ներկայացնել այնպես, թե ասորիների առնվազն մի մասը, ի դեմս Դանիել եպիսկոպոսի, աջակցում է այդ գործին: Ցավոք, Ա. Մարտիրոսյանը, խնդրի դիվանագիտական կողմը նրբորեն բացահայտելուց հետո այս հանգամանքը չի նկատում եւ կարծում է, որ «ասորի եպիսկոպոսը չէր կարող հոգ տանել հայ ազգային զրի մասին», հետեւապես «դա պարզ հորինվածք է»²¹⁰:

Սակայն ամեն ինչ այդքան պարզ չէր: Հավանաբար, ասորիների մի մասը, իրոք, դեմ չի եղել հայերենը պաշտոնական լեզու դարձնելու գաղափարին. հազիվ թե նույնիսկ արքան հոգեւորականության միարժեք արտահայտված կարծիքին դեմ գնար. դա կրեբեր անկանխատեսելի հետեւանքներով առճակատման: Մյուս կողմից՝ ասորական հոգեւորականների դիրքորոշման վրա ազդում էր ոչ միայն իրենց հույն գործընկերների հետ Հայաստանը ազդեցության տակ պահելու խնդիրը, այլեւ ընդհանուր վտանգը, որը գալիս էր Իրանի կողմից. Հայաստանում գրադաշտության վերահաստատումը կհարվածեր բոլոր կողմերին եւ քրիստոնեությանն առհասարակ: Հետեւապես «դանիելյան հատվածի» նպատակն էր ասորականության տատանվող մասին սիրաշահելը:

²⁰⁶ Լույն տեղում, էջ 182:

²⁰⁷ Լույն տեղում, էջ 188:

²⁰⁸ Լույն տեղում, էջ 194 (մեջբերումը՝ Կորին, Վարք Մաշտոցի, ԻԸ):

²⁰⁹ Լույն տեղում:

²¹⁰ Լույն տեղում, էջ 196:

Իհարկէ, կարող է հարց առաջանալ մի՞թե ասորի հոգեւորականներն այդքան միամիտ էին, որ Կորյունի մի գրքով բավարարվեին ու հաշտվեին Հայաստանը կորցնելու հետ: Հատկապես, եթե պատմիչն իր գործը կատարել է, այսպես ասած, ուշացած՝ post factum. տվյալ դեպքում, եթե Կորյունն իր գիրքը գրել է նկարագրվող դեպքերից հետո: Հետեւաբար պետք է ենթադրել, որ այն, ինչ մենք այսօր կարդում ենք նրա գրքում, ինչ որ կերպ պարբերաբար հաղորդվում էր հոգեւորականությանը իրական ժամանակի կարգով՝ իրոք որպես առանձին հաղորդագրություններ: Այսինքն՝ այն, ինչ հաղորդում էր Կորյունը, պիտի ճշտիվ համապատասխաներ իրականությանը: Պետք է գիտակցել, որ այդ իրադարձությունների մասնակիցները (ի տարբերություն մեզ) լավ գիտեին, թե ինչի մասին է խոսքը: Իսկ Մաշտոցի մահից հետո, երբ Հայոց գիրն արդէն կայացած փաստ էր, Դանիելի մասին իրականությանը չհամապատասխանող պատմությունը Մաշտոցի վարքում ներառելն արդէն ժամանակավորէ կլիներ ու անիմաստ: Դա նշանակում է, որ Դանիել եպիսկոպոսի մասին պատմությունը չի կարող հորինված լինել: Անկասկած, նա իրական դեմք էր, ու թերեւս բավականին հայտնի, որպեսզի իմաստ ունենար նրան դիմելը: Մյուս կողմից՝ հասկանալի է նաեւ այն, թե ինչու էր անորոշ ներկայացվում նրա գտնվելու վայրը: Թերեւս Դանիելն իրոք ապրում էր Հայաստանից դուրս կամ առնվազն ծայրամասային գավառներում ու գործի բերումով (օրինակ՝ քարոզչական գործունեության պատճառով) հաճախակի փոխում էր իր տեղը: Հենց նման դաշնակից էր պետք Սահակին եւ Մաշտոցին, հեղինակավոր մի անձ, որպեսզի նրա կարծիքը լքի ունենար, իսկ ինքը գտնվեր հայաստանյան իր ազգակիցներից հեռու, որպեսզի վերջիններս չկարողանային նրա վրա ճնշում գործադրել: Հնարավոր է նաեւ, որ Հաբեյը, որ, ըստ խորենացու, դիմել էր Վռամշապուհին, արել էր դա հենց Դանիելի նախաձեռնությամբ նրա՝ Միջագետքում եղած ընթացքում: Մենք պատճառ չենք տեսնում՝ կասկածելու խորենացու տեղեկություններին, թեեւ դրանց եւ Կորյունի տեղեկությունների միջեւ առանձին անհամապատասխանություններ կան, սակայն հիմնական գիծը հետեւողական է, ու բացի այդ՝ սուտը ձեռնտու չէր հայերին. ցանկացած սուտ կարող էր իրենց դեմ օգտագործվել:

Արդ՝ այս ենթադրության շրջանակներում կարելի է ընդունել, որ Դանիելի կողմից ինչ-որ գրային համակարգից օգտվելու մասին առաջարկ է եղել: Եւ հավանաբար դա եղել է այդ պահին Հայաստանի տարածքում առավել տարածված համակարգի գործածման առաջարկը, կամ Դանիելի համաձայնությունը՝ հայկական կողմից հնչած այդ առաջարկության վերաբերյալ: Ու թերեւս՝ դա կարող էր արվել Մ. Աբեղյանի նկատած եւ արդէն հիշատակված այն դատողությամբ, որ եթե որպես հիմք ընդունվեր ասորական այբուբենը, ապա այն կարգելվեր Արեւմտյան Հայաստանում, իսկ հունականի ընդունվելու դեպքում՝ արեւելյան մասում, իսկ

այսպես ոչ մի կողմ իրենց պարտված չզգաց, եւ Հայոց գիրը տարածվեց Հայաստանի բոլոր մարզերում:

Դրանից հետո այդ համակարգը, ինչպես եւ հաղորդում է Կորյունը, գործադրվում է երկու տարվա ընթացքում՝ «ամս երկու»²¹¹: Հավանաբար, դա հաջողվում է արքայի, Դանիելի եւ նրան կողմնակից ներեկեղեցական կուսակցության հեղինակության շնորհիվ: Սակայն այդ հեղինակությունն ամենագոր չէր, եւ շուտով ասորի հոգեւորականությունը կարողանում է կասեցնել հայալեզու դպրոցների աշխատանքը:

Մնում էր վերջին միջոցը՝ բանակցել Սամուստի ու Եղեսիայի վերադաս հոգեւորականության հետ հարցը «վերելից» լուծելու հույսով: Իսկ որպէս հայկականացման ծրագրի ընդհատման պաշտոնական հիմնավորում՝ հայտարարվում է «յակարծագիտ» գրերի ոչ «բաւական» լինելը եւ «մանաւանդ» այն, որ դրանք «յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան», հիմնավորումներ, որոնք կրկին համապատասխանում էին իրականությանը. այդ դպրությունների մասին արդեն խոսվել է, իսկ ինչ վերաբերում է սիդորաներ-կապերին, ապա սա սովորաբար դիտվում է որպէս դանիելյան գրերի համակարգում ձայնավորների բացակայության ակնարկ: Սակայն պետք է նկատել, որ այստեղ, թերեւս, դեր ունի հոգեբանական գործոնը. լռելյայն ենթադրվում է՝ քանի որ Դանիելը ասորի էր, ուրեմն գիրն էլ ասորական էր, հետեւաբար՝ ոչ հնչյունավորված: Սակայն սիդորաները, այսինքն՝ վակերը ձայնավորի եւ բաղաձայնի կապեր են, եւ դրանք կազմելու համար պետք են երկուսն էլ: Եւ եթե սրան հավելենք, որ Դանիելի գիրը ասորական չէր, այլ «նշանագիրք հայերէն լեզուոյս» (Ղազար) «յայլոց դպրութեանց թաղեալք», այդ դեպքում հասկանալի կլինի, որ պակասել կարող էին թե՛ ձայնավորները եւ թե՛ բաղաձայնները: Ու կրկին, ինչպէս կտեսնենք, գործ ունենք ճշմարտության հետ:

²¹¹ Այս երկու տարին առաջացնում են ժամանակագրական խնդիրներ, որոնց համար առաջարկվել են տարբեր լուծումներ: Դրանց կարելի է ծանոթանալ անվանի հայագետ Արտաշես Մաթեւոսյանի գրքում՝ նվիրված այս եւ հարակից խնդիրներին (Ա. Ս. Մաթեւոսեան, Կորիւնի Մեսրոպ Մաշտոցի պատմութեան ձեռագրի մի թղթի տեղափոխութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, 1990 (Հայագիտական մատենաշար «Բազմավեպ», թիւ 32)): Այստեղ հեղինակը մանրակրկիտ վերլուծում է խնդիրները եւ առաջարկում նոր սրամիտ լուծում: Նա գալիս է այն եզրակացության, որ արդեն ե դարում սխալմամբ տեղափոխվել է Կորյունի գրքի երկու թերթը եւ դրանք սկզբնական դիրք տեղափոխելու դեպքում խնդիրները վերանում են: Դրանից բացի Ա. Մաթեւոսյանն անում է եւս մի եզրահանգում, ըստ որի. «...վերջնականապէս լուծուեց Դանիելեան գրերի առեղծուածը, որս կեղծ պորութիւնը, որ այնպէս սրբագործում էր միջնադարեան հայ մատենագրութեան մէջ եւ լուսպատկարում նոր ժամանակներում՝ բանասիրութեան որոշ շրջաններում: Ապատագրում է Մեսրոպ Մաշտոցը՝ իր փառքը յանիրաւի կիսողից եւ դառնում իր գիւտի միանձնեայ տերը ...» (նշվ. աշխ., էջ 11): Սակայն հարկ է ուշադիր լինել, որ Ա. Մաթեւոսյանի խմբագրմամբ, միեւնույն է, վերանում է սոսկ երկու տարվա ընթացքում դանիելյան գրերի գործածումը, բայց ոչ՝ դրանց գոյության փաստը, իսկ սույն՝ գրանշանների արտաքին ձեւին վերաբերող հետազոտության տեսակետից էականը հենց այս վերջինն է:

Բանակցելու ուղեւորվում է Մաշտոցը: Եւ այստեղ բացվում է նրա դիվանագիտական տաղանը: «Ինչպե՞ս իր բանակցությունների մէջ հաջողության հասավ Մաշտոցը, դժվար է ասել», - գրում է Ա. Մարտիրոսյանը²¹²: Բայց, կարծում ենք, դա առանձնապէս դժվար չի կրահել. դրա հնարավոր փաստարկների մասին մենք արդեն ասել ենք: Հավանաբար, եկեղեցու հայրերն այդ փաստարկները համոզիչ գտան, եւ որպէսզի հարվածի տակ չհնեն նորադարձ Հայաստանի քրիստոնյա ապագան, նրանք համաձայնեցին ընդառաջ գնալ Մաշտոցի խնդրանքին: Հավանաբար, նրանց համաձայնության մասին փաստաթղթերը հենց այն ավետագրերն էին, որոնք նա վերցրել էր Սամուստի եպիսկոպոսից, ներկայացրել Եղեսիայի եպիսկոպոսին եւ նրանից վերցնելով՝ դրանք բերել Հայաստան: «Թերեւս Եղեսիայի եպիսկոպոսը համաձայնություն էր տվել Մաշտոցին, եթէ միայն Սամուստի եպիսկոպոսը դեմ չլինէր... Եւ դրա համար Մաշտոցը գնաց Սամուստ, որտեղ եւ առիթ ունեցավ հանդիպելու գրիչ Գռուիանոսին», - եզրակացնում է Ա. Մարտիրոսյանը²¹³: Անշուշտ, բանակցությունները գրավում էին ոչ ամբողջ ժամանակը, եւ կարելի էր զբաղվել նաեւ գրերը կատարելագործելու հարցերով: Իսկ գեղագրի գործը դրանց շարքում պետք է վերջինը լինէր, եւ, թերեւս, մեր այբուբենն իր ամբողջականությունը ստացավ հենց Սամուստում:

Ինչչեւ, խնդիրը լուծված էր. բանակցությունները հաջողվել էին, եւ հայաստանյան ասորի հոգեւորականությունը դրանք չէր կարող անտեսել: Դա հաղթանակ էր, եւ բնական է, որ «պաւուրս տաւնական ուրախութեամբ անցուցանէին»²¹⁴:

Մեզ հայտնի չէ, թե կայի՞ն արդոյք այն ժամանակվա Հայքում դիվանագիտական աստիճաններ եւ դրանք շնորհելու կարգեր, սակայն եթե կրկին խոսենք այսօրվա եպրերով, ապա Մաշտոցն, անկասկած, կունենար արտակարգ եւ լիակոր դեսպակի աստիճան: Դա է վկայում ոչ միայն նրա առաքելության հաջող ավարտը, այլեւ այն, որ նրան ընդունում էին բարձրագույն աստիճանների հոգեւոր եւ աշխարհիկ իշխանավորները: Չմոռանաւք նաեւ Մաշտոցի դիվանագիտական եւս մեկ հաջողությունը՝ Թեոդոսիոս կայսեր կողմից ընդունելության արժանանալը եւ Հունահայաստանում հայալեզու դպրոթյուն հիմնելու թույլտվություն ստանալը: Այսպիսի գործունեությունը ենթադրում է նաեւ բարձրագույն դիվանագիտական պաշտոն. հավանաբար այն համարժեք էր այսօրվա արտաքին գործերի նախարարի պաշտոնին:

3.1.5. Եզրակացություններ

Նախքան հայերենի յուրաքանչյուր գրանշանին առանձին-առանձին անդրադառնալը, ելնելով նախորդ դատողություններից, հարկ է նշել գրի եւ գրչության պատմությունից, վերլուծման պատմահամեմատական եղանակից եւ վայելչագրության

²¹² Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 191:
²¹³ Նույն տեղում:
²¹⁴ Կորին, Վարք Մեսրոպայ Վարդապետի, Թ, // Մատենագիրք Հայոց, հտ. Ա, էջ 240:

օրենքներից բխող հետեւյալ պայմանները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել Հայոց այբուբենի ծագումնաբանությունը քննելիս:

Հաշվի առնելով մաշտոցյան այբուբենի մի շարք տառերի բացահայտ (Ե/Է, Թ/Յ, Լ/Լ, Ի/Մ/Կ, Փ/Փ), իսկ մյուսների հավանական համապատասխանությունը հունական եւ սրան ցեղակից լատինական, կյուրեղյան եւ այլ այբուբենների տառերին (Ա/ա, Բ/Բ, Գ/Գ, Չ/Չ/Չ/Յ, Ն/ն, Պ/ռ, Զ/զ)՝ այն պետք է համարել փոխառություն:

Հայտնի է, որ **մաշտոցյան գիրը ստեղծվել էր քրիստոնեական քարուղչություն ծավալելու նպատակով**: Սակայն եթե նկատի ունենանք «գիրը հետեւում է գաղափարաբանությանը» սկզբունքը, որը կիրառելի է մի ժամանակաշրջանում, երբ պետությունները հայտնվում են կրոնական մեծ ազդեցության տակ, եւ այն, որ **նոր այբուբենի հիմքում կարող է դրվել ոչ թե տարբեր այբուբեններից կամայականորեն արված ծաղկաբառ, այլ միայն մեկ գրային համակարգ**, ուրեմն Հայոց այբուբենը պիտի ստեղծված լիներ կամ հունական, կամ ասորական հիմքի վրա: Հավանական չէ այն տեսակետը, որ այսօրվա տառերը նախապես այլ ձեւ են ունեցել եւ հետագա աղավաղման արդյունք են, քանի որ գրավոր հուշարձանները, թեեւ սակավաթիվ, հայտնի են արդեն Ե դարից: Հավանական չէ նաեւ դրանց միտումնավոր ձեւախեղումը, քանի որ **գիրը ոչ թե գաղտնագրման համակարգ է, այլ գործիք լայն վանգվածների հաղորդակցման համար**, եւ նախօրինակ այբուբենի տառաձեւերին առավելագույնս հետեւելը գործնական անհրաժեշտություն է: Հետեւապես մաշտոցյան տառերը հունականից տարբեր, թեեւ դրան ազգակից այլ նախօրինակ են ունեցել:

Որպեսզի Հայոց այբուբենի հիմքում դրվեր որեւէ այլ գրային համակարգ, այդ քայլը պիտի լրջագույն հիմնավորում ունենար: Նման հիմնավորում կարող էր համարվել Հայքում այն ժամանակ հունականից ավելի լայնորեն տարածված որեւէ գրի առկայությունը, որին անցնելը գործնականում ավելի հեշտ ու արագ, ուստի եւ արդարացված կլիներ: Այդ համակարգի նախօրինակը լինելու միակ թեկնածուն **դանիեյան** կոչված գիրն է, որը պատմիչների հաղորդմամբ առնվազն որոշ ժամանակ որպես Հայոց գիր է ընկալվել, ու թերեւ՝ ոչ առանց լուրջ հիմքերի: Հետեւապես պետք է եզրակացնել, որ այդ գրային համակարգը **կարող էր լինել** հենց այն այբուբենը, որը Մաշտոցի կողմից դրվել է Հայոց այբուբենի հիմքում:

Այդ գրի նմուշները մեզ առայժմ հայտնի չեն, ընդ որում՝ լինելու դեպքում էլ դրանք կարող են շփոթվել մաշտոցյան տառերի հետ, քանի որ դրված են վերջինիս հիմքում: Սակայն այդ գրի տառաձեւերը **որոշ մոտավորությամբ** հնարավոր է վերականգնել, դրանք պիտի որ ծագած լինեն այլ այբուբենների հետ միեւնույն բնից, եւ դրանց ձեւատեղծումը պիտի ընթացած լինի գրի զարգացման ընդհանուր օրինաչափությունների շրջանակում:

3.2. ՀԱՅՈՑ ՏԱՂԵՐԻ ՔԵՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց հին գրանշանները վերակազմելու համար անհրաժեշտ է համեմատել հնարավոր ազգակից գրային համակարգերը՝ գծագրելու այն ձեւերը, որոնք կարող էին լինել միասնական այբուբենների ծառի առանձին ճյուղերի հիմքում, այսինքն՝ գտնել այն տառաձեւերը, որոնք միավորում են տարբեր ճյուղերը: Այդ գործում պիտի օգնեն վերելում դիտարկված ձեւագոյացման օրինաչափությունները, նաեւ այն, որ գրանշանների ձեւի վրա միշտ ազդում են երկու հակառակ գործընթացներ. մեկը՝ ուղղված գրանշանների ձեւափոխմանը՝ արագագործությունը, մյուսը՝ պահպանմանը, որը գրչության դպրոցն է. այն ապահովում է գրանշանների կայունությունը դարերի ընթացքում:

Փոխառությունների դեպքում փոխվում է նաեւ գրչական դպրոցը, եւ **եթե փոխառված է արագագրական ձեւը, այն կարող է ենթարկվել գրանշանների ձեւի կարգավորմանը՝ կորոնդայնացմանը, որի ընթացքում նախորդ գրի արագագրական ձեւերը կարող են դառնալ նոր գրի կանոնավոր ձեւը**, հետեւապես **գրանշանները համեմատելիս ոչ միայն պիտի նշանակություն տրվի համարժեք գրանշանների ձեւին, այլեւ պիտի հաշվի առնվեն այդ գրանշանների վայելչագրական առանձնահատկությունները**:

Սրանցից բացի՝ կան եւ մի շարք այլ սկզբունքներ՝ կապված գրանշանների վայելչագրական փոփոխման հետ, որոնք կդիտարկվեն հետագայում: Ստորեւ ներկայացված են Հայոց գրանշանների բարեշրջման քերաբանական վերակազմությունները: Բաժինը բաղկացած է երկու խոշոր մասերից՝ դանիեյան գրերի վերակազմությանը եւ մաշտոցյան հավելյալ գրերին վերաբերող: Պետք է, սակայն, հաշվի առնել, որ, ինչպես ստորեւ բերված վերակազմությունն է ցույց տալիս, դեռ նախամաշտոցյան շրջանում, բացի հյուսիսսեմական համակարգից անմիջականորեն ածանցված 22 գրանշաններից, կարող էր լինել նաեւ գրչական որոշ տարբերակների գործածություն հնչյունային այլ արժեքներով: Այդ արժեքները կարող էին դրանց տրված լինել նաեւ Մաշտոցի կողմից: Դա խնդրի էությունը քիչ է փոխում. բոլոր դեպքերում դրանք այբբենական համարված չէին լինի եւ այբուբենի մեջ ներառվել են Մաշտոցի կողմից: Դրանից բացի՝ այդ համակարգում գործածվել են եւս երեք կամ չորս տառեր՝ **ՃԷ** (գուցե նաեւ՝ **Յո**), **ԽԷ** եւ **Փիւր**: Ընդ որում՝ վերջին երկուսը թերեւս համարվել են այբբենական. մեր կարծիքով՝ դա բխում է դանիեյան գրերի համար ամենահավանական թվից՝ 24: Սակայն սրանք մենք ներառել ենք երկրորդ՝ «լրացուցիչ» տառերի բաժնում՝ հիմնական համարելով փյունիկյան դասական այբուբենից սերված գրանշանները: Դանիեյան այբուբենի ձեւերը, այսպիսով, կազմում են ստորեւ բերված փյունիկյան յուրաքանչյուր գրանշանի ճյուղավորման մեջ այն ձեւերը, որոնք տրված են նախքան դրանց կորոնդայնացումը՝ հայկական տառերի ներկայիս ձեւերով, որպես կանոն՝ հայելային ձեւերի տեսքով: Եթե ընդունում


ենք, որ գրի ուղղությունը արդեն փոխվել էր մինչև Մաշտոցը, ապա կարելի է բերել դրանց ներկայիս «ուղիղ» ձեւը: Սակայն հնագույն ժամանակներում դրանք պիտի որ, ինչպես եւ հունական գրերը, աջից ձախ լինեին:

3.2.1. Դանիելյան գրերը

3.2.1.1. Այբ

Սեմական Ալեֆ-ն ընդարձակ ճյուղավորում է ունեցել: Ալեֆ-ի բարեշրջման ընթացքի նկարագրումը սկսել ենք սինայյան ցլի պատկերներից: Ի տարբերություն սինայյան այլ գրանշանների՝ այս նշանի՝ փյունիկյան համապատասխան գրանշանի նախորդը լինելը, չնայած Ի. Գելբի կարծիքի²¹⁵, բավական համոզիչ է: Թեեւ մեր ինդրի տեսակետից այդ ենթադրության ճիշտ կամ սխալ լինելն էական չէ:

ԱԼԵՖ



²¹⁵ St' u И. Гельб, Опыт изучения письма, М., 1982, с. 139.
126

Չնագույն ձեւից հավանաբար հենց ամենասկզբում ճյուղավորվել են առևակա երեք տարբերակներ: Դժվար է վստահորեն ասել, թե որն է եղել հնագույնը. երեք տարբեր անկյան տակ խաչվող գծերից բաղկացած այս նշանի սկզբնական տարբերակը կարող էր լինել հայտնիներից յուրաքանչյուրը: Այդ պատճառով դրանք պետք է հենց տարբերակներ համարել, քանի որ դրանք պայմանավորված են ոչ այնքան արագագրական աղավաղումներով, որքան առավելապես գրանշանների՝ այն ժամանակներին բնորոշ իրագործման անփութությամբ: Սակայն հաշվի առնելով այն, որ եբրայական-եթովպական ճյուղի ձեւը կարծես թե հաստատում է այդ գրանշանի՝ ցլի գլխի պատկերից ծագած լինելու վարկածը, իսկ Նաբաթեական ճյուղի ձեւաստեղծումը ցույց է տալիս պատկերված նախածեւը, կարելի է ենթադրել, որ հենց այս՝ ցլի գլխին առավել նման տարբերակն է (վերին երկու գծերի ելուստները հավանաբար պատկերել են ցլի եղջյուրները) հնագույնը:

Ինչպես տեսնում ենք, արամեական փնջում նախ այն սկսել է ընկալվել որպես որոշակի բեկվածքով խաչ \lt , այլ ոչ թե որպես ուղղաձիգ ճյուղ, որին աջից գազաթով հավում է անկյունակը: Թեեւ, ինչպես տեսնում ենք գծագրից (երկար կոր կետագիծ սլաքը), խաչը կարող է անմիջականորեն բխել Նաե Նախնական ցլի գլխի պատկերից: Գրանշանն այդ ընկալմամբ կոթողայնացման արդյունքում վերածվում է կանոնավոր խաչի. այսինքն՝ ուղղաձիգ ճյուղը բեկվում է, եւ դրա վերին հատվածն իրագործվում է անկյունակի ստորին ճյուղի հետ մեկ շարժումով, իսկ ստորին հատվածը՝ անկյունակի վերին ճյուղի հետ: Չաջորդ փոխում սա էլ է ենթարկվում արագագրական աղավաղման, որի արդյունքում գոյացած ձեւը մենք տեսնում ենք մ. թ. ա. II - մ. թ. I դարերի նոր պունիկյան արձանագրություններում (Լեպտիս, Չանդրու-մետ): Խաչի ձեւափոխման տարբերակները արդեն դիտարկված էին վերելում: Այստեղ ներկայացված են դրանց իրական մարմնավորումները:

Չունական ճյուղում կան որոշ բարդություններ: Պետք չէ կարծել, թե հույները փյունիկյան գրանշանը ավելի քան 90° պտտել են ժամացույցի սլաքի ուղղությամբ այնպես, որ ուղղաձիգ մասնիկը դարձել է հորիզոնական, իսկ անկյունակն ուղղվել է ճիշտ վերել: Ինչպես արդեն ասվել է, նման պտույտը առանձին վերցրած գրանշանի դեպքում անհավանական է. պտույտը պիտի բնական լինի, այսինքն՝ պայմանավորված լինի գրելու ընթացքում առաջացող ազդակներով, ինչպես, օրինակ՝ սեմական Շամեկ-ի՝ որոշ գրերում շրջման դեպքում: Մյուս կողմից, այդ դեպքում պարզ չէ, թե ինչու ստորին մասնիկը ոչ միշտ է հորիզոնական լինում: Դրանից բացի՝ համակարգային մոտեցումը պահանջում է, որ նույնը կատարված լիներ մյուս գրանշանների հետ եւս: Եւ վերջապես, ըստ «խնայողության» սկզբունքի, իմաստ չունի ենթադրել կամայական միջամտություն (եւ դեռ պարզ չէ՝ ինչով պայմանավորված), եթե նույնը կարող է բացատրվել առանց դրա: Ավելի հավանական է թվում, որ ուղղագիծ մասնիկը, տարբեր գրողների մոտ տեղաշարժվելով, վերջապես հասնում է

անկյունակի լայնագույն մասին՝ փակելով այն կափարիչի պես: Իսկ հորիզոնակա-
կին մոտ մասնիկը հորիզոնական դիրք է գրավում հետագա կոթողայնացման ար-
դյունքում:

Մի կարելու դիտարկում եւս: Մենք ելնում ենք այն ենթադրությունից, որ եթե
գրելու ուղղությունը փոխվել է ձախից աջ, ապա պիտի փոխվեր նաեւ գրանշան-
ների ուղղությունը: Սակայն այս տառը բացառություն է կազմում: Այն, ի տարբե-
րություն մյուսների, հաճախ միեւնույն տողի մեջ ունի ե՛ւ աջ, ե՛ւ ձախ տարբերակ-
ները՝ անկախ գրելու ուղղությունից: Օրինակ՝ վերելում բերված եզնավարի կար-
գով իրագործված Նիկանդրեի արձանագրությունը, որի վերին տողի առաջին *ալ-
ֆան* ստորին անկյունակով ուղղված է դեպի աջ, հաջորդը գրեթե համաչափ է, եր-
րորդն ուղղված է արդեն դեպի ձախ, եւ նույն ուղղությամբ՝ դեպի ձախ ուղղված
են նաեւ հաջորդ տողի *ալֆաները*, թեւեւ մյուս անհամաչափ տառերը (օրինակ՝
կյու, *էփսիլոն*, *ռո* եւ այլն) նույնիսկ երրորդ՝ շրջած տողում հստակ հետեւում են
գրի ուղղությանը:

Հավանաբար, սրա պատճառը տառի սկզբնական գրույթի որոշակի համաչափ-
փոփոխումն է, երբ գրողը նշանակություն չի տվել հորիզոնական մասնիկի ճիշտ դիր-
քին: Առհասարակ, տառերի հայելային իրագործումը տարածված երեւոյթ է ոչ մի-
այն հունական պատմական գրում, այլեւ, օրինակ, կիրիլյան²¹⁶, նաեւ՝ հայկական
գրերում: Դրանք կարող են ունենալ տարբեր պատճառներ՝ անփոփոխություն, գիրը
ծեւավորելու հնարքի դրսեւորում²¹⁷ եւ այլն: Նման բան հետագայում տեսնում ենք
հայկական *Ֆ*, *Շ* տառերի դեպքում, որոնց դեռ կանդաղառնանք:

Ալեֆի բարեշքման ճյուղերում առանձին, մեկուսացված դիրք ունեն եթով-
պական եւ եբրայական (արամեական) քառակուսի գրերը: Փաստորեն դրանք
հեշտությամբ ածանցվում են անմիջապես ցլի գլխի պատկերագրերից՝ ծառայե-
լով որպէս փաստարկ այն տեսակետի, որ փյունիկյան գրանշանը նույնպէս ծա-
գում է այդ նույն պատկերագրից, ոչ թե կամայական նշան է, որում փորձում են
անպայման տեսնել ցլի գլուխ: Միաժամանակ սա հաստատում է նաեւ, որ գրա-
նշանի հնագույն ձեւը հենց այդ ցլանմանն է, որը մենք տեսնում ենք ոչ թե Ահիրա-
մի կամ Յեհիմիլի ավելի վաղ արձանագրություններում, այլ փյունիկյան ավելի
ուշ արձանագրություններում: Չարմանալին այն է, որ փյունիկյան գրանշանն
ավելի է նման ցլին, քան եթովպականն ու եբրայականը, սակայն վերջինները չեն
կարող ծագել փյունիկյանից: Ընդ որում՝ եբրայական նշանն առավել մոտ է ցլի գլ-
խի պատկերին. փաստորեն այն դրա գրեթե ճշգրիտ տարբերակն է, սակայն գր-
չական մշակումը թույլ չի տալիս նկատել դա: Իսկ եթովպական գրանշանը գոյա-

ցել է միջանկյալ արագագրային աղավաղման եւ հաջորդած կոթողայնացման
արդյունքում, որը համոզիչ է՝ հյուսիսսեմական տարածաշրջանից հարավսեմա-
կանին անցնելու փաստից ելնելով:

Գծագրում հստակորեն առանձնանում է նաեւ հայկական գրերի փունջը: Սա
քիտում է *Ալեֆի* այն տարբերակից, որից ածանցվել է հունական ճյուղը՝ այն ուղ-
ղորդներով, որոնցով գոյացել է նաեւ լատինական փոքրատառը: Միաժամանակ
այդ տարբերակը եւ հայկական ճյուղը կապող երկար, կոր կետագիծ սլաքով շեշտ-
ված է այն հանգամանքը, որ պարտադիր չէ՝ հայկական ճյուղը փոխառված լինել
հենց հունականից. ոչինչ չի խանգարում, որ փոխառությունը կատարված լինել
ուղիղ գծով նույն աղբյուրից: Ինչպես ասվեց, հայերեն գրանշանը տեղաբանորեն
համընկնում է լատինական փոքրատառին՝ լինելով դրա կոթողայնացված տար-
բերակը: Ու կրկին ցանկանում ենք շեշտել (հաջորդ տառերին անդրադառնալիս
մենք այդքան հաճախ չենք շեշտելու դա, բայց այստեղ կրկնում ենք եւս մեկ ան-
գամ), որ *դա չի նշանակում, թե Հայոց տառը վերցված է լատիներենից, այլ ըն-
դամենը, որ այն ծագում է նույն նախածեւից՝ միեւնույն ուղղորդներով կա-
տարված*: Իսկ հայերեն փոքրատառի գոյացմանն արդեն կարելի է հետեւել ձե-
ռագրային նյութերով:

Գծագրում չի տեղավորվել *Այբ*-ի եւս մի հետաքրքիր տարբերակ, որը հայտնի
է Տեկորի արձանագրությունից՝ *Ա*: Այս *Ա*-ում աջ ճյուղի բնորոշ «կղզյակը» բաց-
ված է: Սրանում պետք է ենթադրել այն նույն «վերաստուգաբանման» արդյունքը,
որը տեսնում ենք նաեւ սասանյան *Յե*-ի դեպքում (տե՛ս ստորել): Մինչդեռ երբեմն
հայագետները մեծ նշանակություն են տալիս այս, թերեւս, «վրիպակ» ձեւին՝ համա-
րելով այն սկզբնական²¹⁸:

Հր. Աճառյանը տեսնում է *Ա* տառի՝ փյունիկյան *Ալեֆ*-ի հետ նմանություն՝ մեր-
թելով, սակայն, դա ժամանակային հեռավորության պատճառով²¹⁹:

Հետաքրքիր է, որ Հայոց *Ա* տառի ձեւը կրկնվում է հունականից շատ ավելի ուշ
գոյացած այբանական Բյուրակուլյե այբուբենում՝ *Բ*:

Վրացական տառը անմիջականորեն է գոյացել Հայոց տառի նախածեւից:
Ավելի հետաքրքիր է աղուանական տառի ձեւավորման ընթացքը: Սովորաբար հե-
տազոտողներն այս տառածեւում տեսնում են հայերենի մեծատառ *Ձ*-ն: Ինչ խոսք,
դրանք լիովին համընկնում են, եւ դա հիմք է դառնում պնդելու, թե Մաշտոցը վերց-
րել է իր կողմից մի քանի տարի առաջ ստեղծած գրանշանը եւ տվել դրան այլ ար-
մեք: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, աղուանական տառը, իրոք, կապվում է հայերեն

²¹⁶ А. Житенёва, Зеркальные начертания в кириллических источниках X-XV вв., Автореферат, М., 2003.

²¹⁷ В. Струве, Происхождение алфавита, Петроград, 1923, с. 36.

²¹⁸ Կ. Ղաֆադարյան, Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը եւ մետրոպոլիտան արձանագրության առաջին տառածեւերը // ՊԲՀ, ԳՎ 2, 1962, էջ 39-54:

²¹⁹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 518:

տառի հետ, սակայն բոլորովին այլ ճանապարհով: Եւ աղուանական տառի բնորոշ օղակը համապատասխանում է ոչ թե 2-ի կլորակին, որը, ի դեպ, կարող էր եւ առանց օղակի ստացվել (տե՛ս ստորեւ), այլ 4-ի աջ ճյուղի «կղզյակին», իսկ 2-ի հորիզոնական գծին համապատասխանող մասնիկը արագագրական ավելորդ ազդի հետագա կոթողայնացման ընթացքում գրույթի մաս դիտելու արդյունք է:


Այսպես հանգիստ, առանց խորհրդապաշտության, առանց հատուկ միջամտության կամ բռնության ինքնաբար գոյացել են նախօրինակ *Ալեֆ*-ի բոլոր ժամանագորդները: Այսպես (կամ մոտավորապես այսպես) են գոյացել դրանց՝ այդքան տարբեր թվացող ժառանգորդ ձևերը, որոնք միմյանցից, պարզվում է, տարբերվում են ոչ ավելի, քան, օրինակ, նախահնդեւրոպական **bhrāter*-ը, ռուսերեն *брат*-ը, աֆղաներեն *wror*-ը, ալբաներեն *vta*-ն, լիտվերեն *brólis*-ը կամ, վերջապես, հայերեն *եղբայր*-ն ու նաեւ *աղբեր*-ը, *ապեր*-ը, *ապե*-ն եւ *ապ*-ը, որոնք եւս ներկայացնում են նույն նախածեւի բնական փոփոխման տարբեր աստիճաններ: Միայն այս դեպքում գործ ունենք հնչյունային երեւույթների հետ, եւ փոփոխման պատճառները մարդու՝ հնչյունների արտաբերման համակարգի առանձնահատկություններն են, իսկ ինդրո առարկայի դեպքում գործ ունենք գծապատկերային երեւույթների հետ, եւ փոփոխման պատճառները մարդու՝ ձեռք-գրիչ-թուղթ մեխանիկական համակարգի առանձնահատկություններն են:

3.2.1.2. Բեւ

Այս տառի զարգացումները բավական պարզ են: Հայկական տառը գոյանալու համար ընդամենը պիտի ինչ-որ կերպ բացվեր եռանկյունու ծախ գագաթը: Իսկ դա կարող էր լինել ցանկացած դեպքում, երբ այս գագաթում գրիչը պոկվում է թղթից (մագաղաթից, պնակիտից): Արդյունքում *բեւ* տառը, ինչպես տեսնում ենք, կարող էր գոյանալ բազմաթիվ ձևերով:

Նկարում պատկերված են դրանցից երեքը: Այլ դեպքերում, երբ այդ գագաթը գրիչը սահելով է անցնում, այն, ամենայն հավանականությամբ, կկլորացնի գագաթը, իսկ դա արդեն կբերի հունական *Β*-ի եւ գրային այլ համակարգերի համաստիճան գրանշանների գոյացմանը: Ընդ որում *Β*-ի վերին կիսակլորը կգոյանա *Բեթ*-ի եռանկյունու հաշվին, իսկ ստորին կիսակլորը՝ գրչի թողած լրացուցիչ մասը բույծ գծի հաշվին:

Վերելում՝ փորձագիտական քերաբանության բաժնում գետնորված փորձերի կան օրինակից պարզ է դառնում, թե փյունիկյան գրանշանը ինչպիսի ձեւափոխություններ կարող էր կրել:



Հատուկ նկատենք, որ այս եւ մնացած բոլոր այլ տառերի դեպքում դրանց համաչափության հետ կապված պայմանը խիստ է դրվում: Նախածեւ տառերի ձեւափոխությունները վերականգնելիս պետք է հիշել, որ դրանք ներկայացնում են գրելու աջից ձախ ուղղությունը, հետեւապես վերականգնվում են շրջվելու պայմանով: Պետք է նկատել, որ գրանշանների արագագրացման եւ հաջորդող կոթողայնացման փուլեր երկու են արդեն իսկ սինալյան գրանշաններում, որը պատկերված է համապատասխան սլաքներով, թեւ այդ ընթացքը չի մանրամասնեցված: Մասնավորապես, սեռք է ենթադրել, որ այս գաղափարագրի նախնական ձեւը եղել է փակ ուղղանկյունը, իսկ շատ նմուշներում դիտվող գծի ընդհատումը, արագագրությամբ պայմանավորված, անճշտություն է, որի շեշտումը բերել է փյունիկյան հնագույն գրանշանի ձեւավորմանը:

Այստեղ ներկայացված է նաեւ ռուսական *Б* տառի ծագումը: Պարզորոշ երեւում է աղուանական եւ ռուսական տառերի գրույթային նույնությունը: Տեսականորեն ռուսական տառը կարող էր գոյանալ առնվազն երկու ճանապարհով, որոնք եւ ներկայումս են: Սովորաբար ընդունված է այն կարծիքը, որ սլավոնները փոխառել են ռուսական այբուբենը, երբ հունարենում կատարվել է [p] - [վ] հնչյունափոխությունը, ռուսի հունական *Β*-ն կիրառվել է ռուսական [վ]-ի համար, իսկ ռուսական [բ]-ի համար այբուբենի հեղինակի (հավանաբար՝ Կիրիլի) կամայական միջամտությամբ ներդրվել է նոր *Б* նշանը: Իհարկե, տեսականորեն սա չի կարելի բացառել, սակայն իրական գծանկարից երեւում է, որ ռուսական տառը պարզապես հունական *Β*-ի փոփոխում մի տարբերակն է: Սրանից կարող է հետեւել, որ սլավոնները հունական փոքր փոխառել են անցումային փուլի ընթացքում, երբ այն դեռ չէր ավարտվել, երբ

Յ-ն արդեն գործածվում էր [վ]-ի համար, սակայն երբեմն էլ [բ]-ի, այսինքն՝ միջին հունարենի ձեւավորման սկզբնական փուլում. միայն այդ դեպքում սլավոնական այբուբենում կարող էին միաժամանակ հայտնվել այդ երկու ձեւերը: Քանի որ միջին հունարենը սկսել է ձեւավորվել արդեն Դ դարում, դա հնարավորություն է տալիս մոտավորապես թվագրել սլավոնների կողմից հունական այբուբենի փոխառման պահը Դ-2 դարերով, որը համընկնում է «ժողովուրդների մեծ վերաբնակեցման» ժամանակաշրջանին, եւ սլավոնական պետականության կայացման նախաշեմն է (ե դար) ու կրկին հաստատում է գրի եւ պետականության անբաժան կապը: Սրանից հետեւում է նաեւ, որ հենց կիրիլագիրը պետք է համարել ռուսական հնագույն գրային համակարգը, իսկ չափազանց ոճավորված գլագոլագիրը՝ ածանցյալ, չնայած որ ներկայումս առավելապես ընդունված է հակառակ կարծիքը:


Մյուս ճյուղերի ձեւագոյացումը, թերեւս, խնդիրներ չի հարուցում: Պետք է նկատել, որ վրացական եւ աղուանական գրերը հայտնվում են հունական փնջում եւ ենթադրում միջանկյալ արագագոյացում (հատկապես՝ միտերոլին), մինչդեռ հայկական Բեն-ը թխում է անմիջապես փյունիկյան նախածեւից:

3.2.1.3. Գիւմ

Սա չափազանց պարզ գրանշան է: Բավականին պարզ է նաեւ զարգացումների հաջորդականությունը: Աղուանական գրանշանը հայկականի հետ նույն զարգացման աստիճանի վրա է, թեւէ ձեւով համընկնում է լատինականի հետ: Որոշ չափով տարօրինակ է աղուանական տառի ստորին մասնիկը: Այն կարելի է բացատրել որպես ՄՄ 7117 ձեռագրում լավ երեւացող ազի, որին հետագայում տրվել է չափազանցված նշանակություն: Վրացական տառն արդեն ենթադրում է միջանկյալ փոփոխ առկայություն եւ ածանցվում է հայկական տառածեւից:

Հայոց տառի կապը *Գիւմել*-ի ժառանգորդ հունական *Գամմայի* հետ բավական նկատելի է²²⁰: Սրա օգտին է խոսում նաեւ այն, որ հին գրելաձեւերում Գ-ի գլխիկը զգալիորեն փոքր է, եւ համապատասխանաբար հորիզոնական գիծն էլ՝ շատ բարձր: Սակայն ժամանակի ընթացքում այն, հավանաբար, Դ-ի կառուցվածքի ազդեցության տակ իջել է ներքեւ: Վրացականում այդ գիծն առհասարակ իջել է ներքեւ, թեւէ արդեն այլ պատճառով: Հավանաբար, դա կատարվել է արագագրության ակդեցության տակ՝ կրճատելու համար կապը հաջորդ տառի հետ՝ գոյացնելով ստորին մասնիկի ծայրից բարձրացող թեք կորագիծ, որն էլ արդեն կոթողայնացման ժամանակ բերվել է հորիզոնական դիրքի:

²²⁰ Տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայ գրի եւ գրչության պատմություն*, էջ 59-60, Գր. Աճառյան Հայոց գրերը, էջ 520:




Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել *Էտրանգել* տառի ձեւագոյացմանը: Առաջին հայացքից այն գրեթէ չի տարբերվում փյունիկյան տառի կառուցվածքից, սակայն չի կարող անմիջապես նրանից ծագած համարվել, քանի որ եապես տարբերվում է նրանց դիրքը (անկյունակի գագաթը փյունիկյանում ուղղված է դեպի աջ վերեւ, իսկ ասորականում՝ աջ ներքեւ, այսինքն՝ տարբերվում է մոտ 90 աստիճանով), մինչդեռ, ինչպես ասվել է վերեւում, նման շրջումն անհավանական է, իսկ դա նշանակում է, որ պիտի եղած լիներ կոթողայնացման միջանկյալ փուլ: Եւ իրոք, նման միջանկյալ դիրք ցույց է տալիս պալմիրական տառը, որի հետագա արագագրայնացման արդյունքում արդեն գոյանում են մյուս համակարգերի համապատասխան տառերը:

Ըստ այդմ ասորական տառի թեւերը ծագումնաբանորեն գրեթէ ոչ մի կապ չունեն դրանց նմանվող փյունիկյան գրանշանի տարրերի հետ, քանի որ մասամբ համապատասխանում են փյունիկյան տառի երկու թեւերի միջեւ գոյացած գալարի կոթողայնացված տարբերակին:

3.2.1.4. Դա

Այս տառը լուրջ դժվարություններ չի հարուցում: Եթէ ճիշտ է սինայյան համապատասխան գրանշանից դրա ծագման վարկածը, ապա այն ենթադրում է արագագրացման եւ հետագա կոթողայնացման փուլ արդեն նախասինայյան փուլում, որի որոշ վկայություններ կարծես թե կան: Հետագայում արագագրացման հետեւանքով այդ նշանը նույնիսկ վերականգնում է իր նախասինայյան ձեւը որպես լատ. գլխագիր Դե-ն:



Ինչպես երևում է գծագրից, հայկական **Ղա**-ի ծագումը փյունիկյան նախածեւից բավական ակնհայտ է, թեւէ, ցավոք, միջանկյալ ձեւեր գրային ոչ մի համակարգում չեն պահպանվել: Չարմանալիորեն հենց այս տառի ծագումը **Յր.** Աճառյանը համարում է շատ դժվար: Առհասարակ այս տառին նվիրված հատվածը նրա վերլուծությունների, թերեւս, ամենահակասական մասն է: Այստեղ է, որ ուսումնասիրողը ներկայացնում է գրանշանների վերլուծության սկզբունքները, որը մենք գրեթէ ամբողջությամբ արդեն մեջբերել ենք որպես ճիշտ մոտեցումների օրինակ, եւ հենց այս հատվածում էլ նա կարծես մոռանում է իր իսկ սկզբունքները: Օրինակ՝ երբ հնարավոր է համարում այս տառի՝ հնչունային այլ արժեք ունեցող նախօրինակից առաջանալը: Իսկ հետո մերժում է այդ տարբերակը՝ ելնելով նրանից, որ փյունիկյան **Ղ**-ն «բաց բերան» ունի, իսկ **Ղ**-ն՝ փակ, մինչդեռ հայկական տառերի դեպքում այդ բացվածությունը հակառակն է: Եւ դա այն դեպքում, երբ հենց ինքն ընդունում է, որ հայկական տառերում փակ գծերը բացվում են: Իսկ հետո նկատելով, որ իր ենթադրած նախածեւից (պահլավական) ստացվող **Ղ**-ն չունի հորիզոնական աջ ելուստը, նա տարակուսում է, թե ինչպես այն կարող էր ծագած լինել: Իրոք, **Յր.** Աճառյանն իրավացի է, որ այն չէր կարող կամայականորեն հայտնվել՝ մոռանալով իր իսկ հռչակած սկզբունքը, որ «*եթէ տեսնում ենք, որ մի գծի ծայրին մի ավելորդ պոչ է ավելացել (օրինակ վենդական **Ղ** գրի պոչը), սա էլ կարող ենք մեկնել աճման կամ վարդարուն գրելու հասարակ սկզբունքով*»²²¹: Սկզբունք, որը լիովին կօգնէր բացատրել **Ղ**-ի հորիզոնական գիծը: Ինչպես երևում է գծագրերից, հայկական տառը կարող է գրանալ առնվազն երկու դեպքում: Երկու դեպքում էլ տառի վերին պայտը կգոյանա

²²¹ **Յր.** Աճառյան, *Յայրց գրերը*, էջ 522:

Ղալեթ-ի վերին գագաթի կլորացման հետեւանքով, մինչդեռ հորիզոնական ելուստը կարող է լինել է՛ւ **Ղալեթ**-ի հորիզոնական տարրի կրճատման, է՛ւ տեղաշարժի արդյունք, բայց էւ կարող է լինել մակարոյծ գծի կրթողայնացման հետեւանք:

Յետաքրքիր է աղուանական եւ եթովպական տառերի գրեթէ նույնականությունը եւ վրացական տառի հայելայնությունը նախորդների նկատմամբ: Վերջինը կարելի է բացատրվել դրա նախածեւի որոշ պտույտով (30°-40°-ից ոչ ավելի), որի պատճառով հետագա գրիչներին հորիզոնականին առավել մոտ է թվացել հարեւան կողմը, որի արդյունքում այս տառը վրացերենում շրջվել է հորիզոնական առանցքի նկատմամբ:

Ուշագրավ է նաեւ եթովպական տառի ձեւը, որը հիշեցնում է հայկական **Ձ**-ն՝ հայելային արտապատկերմամբ: Սա այն տառերից է, որոնց շնորհիվ եթովպական գիրը որոշ հեղինակներին թվում է **Յայրց** գրի նախօրինակ, մինչդեռ, ինչպես տեսնում ենք, այս տառը կապ չունի հայկական **Ձ**-ի հետ եւ օրինաչափորեն ծագում է հենց այն նախածեւից, որին համապատասխանում է նաեւ հնչմամբ: Յետաքրքիր է գալարի ուղղությունը. հիշենք, որ եթովպական գիրը ստեղծվել է որպես աջից ձախ գիր եւ հետո առանց գրանշանների դիրքը փոխելու վերածվել է ձախից աջ գրի: Եւ ահա այդ գալարի ուղղությունը լիովին համապատասխանում է դրա գրության ուղղությանը:

Իսկ պունիկյան **Ղալեթ**-ն ու վրացական միսեդրուպի **Ղոն**-ը, իրոք, հայելային տարբերակներ են: Ղետք է նաեւ ուշադրություն դարձնել, որ միսեդրուպին գտնվում է պունիկյան փնջում եւ ոչ թե հայկականում: Յետագայում կտեսնենք, որ դա բավականին հաճախ դիտվող փաստ է, որը թույլ է տալիս ենթադրել, որ վրացական երկու այբուբեններն իրականում գրչական տարբեր դպրոցներ են ներկայացնում, ուստի եւ, հավանաբար, սկզբնապես պետական տարբեր կազմավորումների գիր են եղել:

3.2.1.5. Եչ

Սա այն տառերից է, որոնց սինայյան նախածեւերի հետ համապատասխանեցումները բավական համոզիչ են: Ինչպես եւ բազմաթիվ այլ տառերի դեպքում, այստեղ եւս եթովպական ճյուղը բավական մեկուսացված է մյուսներից, որը միանգամայն բնական է դրա նաեւ աշխարհագրական հեռավորության պատճառով. այն հեռու է գտնվում այբուբենի ծագման ենթադրյալ տարածքից՝ Սինայի թերակղզուց:

Հայկական **Եչ**-ն անմիջականորեն ծագում է փյունիկյան գրանշանից եւ հունական փոքրատառ-ի՝ «միսոսկուպ»-ի հետ զարգացման միեւնույն աստիճանի վրա է գտնվում, թեւէ դրանց միջեւ դարեր են ընկած: Ներկայացված ուղիով **Յայրց** տառի գրվածքն հնարավորությունը հաստատում են լատինական նույնաձեւ տառի արագագրական տարբերակը՝ Մեծ Ալբուրնից՝ **Ե**²²², ինչպես նաեւ մ. թ. ա. Ե դարի՝ **Ե**²²³ եւ **Գ** դարի՝ **Ե** հունական արագագրերը:

²²² Նմուշը՝ **Д. Дирингер**, *Алфавит*, М., 1963, рис. 284.

²²³ Նմուշը՝ **Д. Дирингер**, նշվ. աշխ., рис. 237.

Սա ամենաբեղմնավոր փյունիկյան գրանշաններից է. միայն լատինական գրուս այն ունեցել է հինգ ժառանգ՝ F, U, V, W, Y: Հատկանշական է, որ այս գրանշանից առնվազն երկու անգամ ստեղծվել է նոր տառ նույն հնարքի՝ կրկնության միջոցով. մեկ անգամ այդպես ստեղծվել է հայկական Վ-ն (որին էլ անցել է սեմական գրանշանի անունը՝ Fուլ՝ հայերենում՝ Վել), իսկ մյուս անգամ՝ շատ ավելի ուշ (մոտավորապես՝ ԺՁ դարում), բայց բոլորովին անկախ՝ լատինական W-ն: Հայոց Վ տառի ծագումը, որպես կրկնագրության հետեանք, հաստատվում է նրանով, որ հնագույն գրություններում երկու ճյուղերն էլ գրեթե նույն բարձրությունն ունեն՝ [225]: Սա հիմնավորվում է ոչ միայն գծագրական, այլև հնչյունաբանական փաստարկներով²²⁶. Նշված սկզբունքով այդ տառերի ծագման հնարավորությունը ընդունում են շատերը, մասնավորապես՝ Հր. Աճառյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Փերիխանյանը և ուրիշներ:



Վաղի էլ Հոյի արձանագրություններից:
Fուլ-ը հորիզոնական դիրքում է եւ կատարված է ոչ թե կլորավուն, այլ շեղանկյուն գլխով:

Թեև Fուլ-ի ծառում հայկական Fիւն-ը ներկայացված է որպես Fուլ-ի զարգացման հաջորդ փուլ, սակայն այն կարելի է դիտել նաև որպես փյունիկյան տառի տարբերակ. համենայն դեպս, տարբերությունը դրանց միջև ավելին չէ, քան, օրինակ, Ալեֆ-ի երեք տարբերակների միջև (տե՛ս վերելում): Այդ դեպքում այլևս բոլորովին կարիք չկա դիտելու այդ տառը որպես պահլավականից ծագած՝ արհեստական մասնիկի հավելմամբ, ինչպես կարծում է Ա. Փերիխանյանը²²⁷:

Դժվարություն է ներկայացնում վրացական միտղոսի: Այն չի կարող գոյացած լինել եռաճյուղ խուցուրի տառի՝ 90°-ով շրջման արդյունքում, քանի որ, ի տարբերություն եռաթել այլ տառերի շրջման (ՀԷ-ի, ԽԵթ-ի, Սաւել-ի), այս դեպքում շրջումը կատարվում է գրելու ուղղությանը հակառակ: Սակայն աստիճանավորովի արագագրական նախաձեռնից հեշտ չէ դուրս բերել այն: Բանն այն է, որ այդ տառն էլ թի է տարբերվում եռաթել խուցուրից: Միակ տարբերությունն այն է, որ աստիճանավորովի երկրորդ՝ աջ հորիզոնական մասնիկն ավելի ցածր է, քան ձախը, որը հնարավորություն է տալիս այդ տառը մոտ 45°-ի տակ թեքված համարել: Դա նախա

²²⁵ Սահակ Կամարական իշխանի՝ Տելորի տաճարի (Ե դար) արձանայան մուտքի ճակատակալ քարին փորված շինարարական արձանագրության տառաձեռը (Կ. Ղաֆաղարյան, Տելորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը եւ մետրոսայան այբուբենի առաջին տառաձեռերը // ՊԲՀ, 3⁴ 2, 1962, էջ. 42):

²²⁶ Ա. Периханян, Նշվ. աշխ., էջ 117:
²²⁷ Նույն տեղում:


դրյալ է ստեղծում ենթադրելու, որ, վայելչագրական որոշ խնդիրներից ելնելով (օրինակ՝ տառի երկարությունը կրճատելու նպատակով), վայելչագիրը կարող էր այդ տառը 45°-ով ուղղել դեպի աջ եւ ոչ թե ձախ՝ սկզբնական դիրքին, եւ տառը կգրվեր այժմյան դիրքը: Գուցե միջանկյալ դիրքեր ունենալով՝ կարելի էր ավելի լավ բացատրություն գտնել, սակայն առայժմ սա տվյալ երեւոյթի, թերեւս, լավագույն բացատրությունն է: Եթովպական գրանշանը, ինչպես եւ շատ այլ դեպքերում, մեկուսացված է եւ լավ է պահպանել սկզբնական սինայյան ձեւը. մնացած բոլոր ձեւերը թխում են արդեն իսկ բացված փյունիկյան ձեւից:

Արամեական ճյուղը, ինչպես եւ շատ այլ տառերի դեպքում, չափազանց պարզեցված է եւ շատ դեպքերում գրեթե վերածվել է մեկ գծի՝ փոքր դարակով՝ ձախից: Գուցե դա տառանկան հետադարձ ազդեցությունն է տառաձեռի վրա. կարելի է ենթադրել, որ գրիչները փորձել են այն պատկերել կեռիկի ձեւով, թեւս սկզբնապես այն գամի տեսք է ունեցել:

1.2.1.7. Չա եւ Չա

Այս գրանշանի զարգացումը, փյունիկյան փուլից սկսած, բավական ակնհայտ է, սակայն դրա հնարավոր կապը սինայյան նախաձեռերի հետ այնքան էլ պարզ չէ: Հազիվ թե նման անցումը հնարավոր է բացատրել արագագրությամբ, մասնավորապես որ այդ մասնակներում (մ. թ. ա. ԺԷ-ԺԵ դդ.) արագագրական գրչարհեստով կատարված այբուբենի նմուշներ կարծես թե չունենք:

ՉԱՅՆ



Գիմնականում դրանք քարի վրա քերծվածքներ են, որոնց դեպքում դիտարկվող օրինաչափությունները չեն գործում, քանի որ գրիչը քարի վրայով հավասարաչափ չի սահում տարբեր ուղղություններով: Ավելի հավանական է, որ դա պայմանավորված լինի ոճական պարզեցմամբ:

Սակայն ինչպես կարող էր գոյանալ եթովպական ձեւը՝ անհասկանալի է: Այս ակ հավանական թվացող տարբերակը 90°-ով շրջումն է, բայց թե ինչ ուժերի ազդեցությամբ դա կարող էր լինել՝ դժվար է պատկերացնել առանց միջանկյալ ձեւերի ծանոթանալու:

Հայոց տառը կարող էր ձեւավորվել առնվազն երկու տարբերակով, որոնք բերված են գծագրի վրա: Առաջին տարբերակով ձեւավորման հնարավորությունը հաստատվում է ե՛ւ հունական՝ **ΞΞ**, ե՛ւ հռոմեական՝ **Λ** արագագրերի համապատասխան տառաձեւերի գոյությամբ: Հունական **Α** դարի արագագրերից մեկում տեսնում ենք երկրորդ տարբերակին համապատասխանող ձեւ, որն ամբողջովին համապատասխանում է մեր **Զ**-ին՝ **Ζ**: Ինչպես երեւում է, հայերեն փոքրատառը սկզբունքորեն կարող էր ինքնուրույն ծագել նախաձեւից եւ ոչ թե կորթոլայինից (մեծատառից): Երկու դեպքում էլ ստորին գալարի արտահայտված լինելը վերածում է այն **Զ**-ի: Հատկանշական է, որ հունարեն համարժեքն էլ է ունեցել այդ երկու արժեքները, բայց հաջորդաբար. [δ] *δεντα*՝ հին հունարենում եւ [α] *Ζηουα*՝ նոր հունարենում: Դրանով այս տառը նմանվում է հունական *Ρետա*-ին (*ϕηουα*-ին): *Ρետ*-ին նվիրված մասում նկատեցինք, որ ինչուսային այդ անցումը հունարենում կարող էր բերել սլավոնական այբուբենում գրչական երկու տարբերակների այդ երկու ինչուսային արժեքները վերագրելուն: Թերեւս, հունարենի ինչուսային տարբերակները, որոնք այդ ժամանակահատվածում պետք է որ զուգահեռաբար գործածվեին, կարող էին ազդեցություն թողնել նաեւ Հայոց այբուբենի վրա, եւ Մաշտոցն այդ տառի գրչական երկու տարբերակներին կարող էր հաղորդել հունական միմյանց հաջորդած ինչուսային արժեքները:


3.2.1.8. Ըթ եւ Է

Խեթ տառի՝ սինայյան նախաձեւից առաջանալու վարկածը բավական համոզիչ է: Պարզ չէ եթովպական գրանշանի ծագումը: Ամենայն հավանականությամբ, այս տեղ էլ գործ ունենք 90°-ով շրջման հետ, բայց կրկին անհայտ պատճառով: Փյունիկյան գրանշանից հետո ձեւափոխություններն ընդհանուր առմամբ հասկանալի են: Հունական եւ լատինական տառերը գոյացել են պարզեցման արդյունքում: Մյուսների դեպքում բացահայտ է արագագրական ձեւափոխությունը:

Դատելով **Ըթ** - *Էտա* տառանունների համապատասխանությունից, որը նկատել է Հր. Աճառյանը²²⁸, հնագույն հայերենում այս գրանշանից գոյացած **Ը** տառով նշանակվել է [է] ինչուսը, ինչպես որ դա արվել է նաեւ հունարենում: Սակայն աստիճանաբար բառասկզբի [է] ինչուսը մի շարք բառերում դարձավ [ը], ինչպես դա երևում է [ը]-ից սկսվող բառերի ծագումից, օրինակ. *ընկոյ* > *engouz, *ընծայ* > *eng'hai:

²²⁸ Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Եր., 1971, էջ 564:

ընկենու > *seng, *ընթանալ* > *senth, *ընդեր* > *entero²²⁹: Նույնանալով գաղտնավանկի ինչուսին: Բայց այդ նույն տառով այլ տեղերում պիտի պատկերվեր նաեւ [է] ինչուսը, որը խախտում էր այբբենական սկզբունքը:



Ինտիքը լուծելու համար, հավանաբար, **Ե**-ի առավել անկյունավոր (այսինքն՝ ավելի իրն) գրչատեսակներից մեկն ընդունվեց որպես [է]-ի գրանշան: Իսկ **Ը**-ն մնաց [ը] ինչուսը նշանակելու համար, ինչպես եւ ավանդաբար հաստատվել էր: Նման եղանակով նոր ժամանակներում Երոպայում լատիներենի համար **V**-ի կլորավուն գրչական տարբերակը ընդունվեց որպես [ու]-ի գրանշան՝ **U**: Նկատենք, որ Հր. Աճառյանը ճիշտ հակառակ կարծիքի էր՝ գրելով, թե «...Մեսրոպը, ներկայացնելու համար **Ը** ձայնը՝ օգտագործեց է տառը...»²³⁰:

Վերջապես, չի կարելի բացառել (սա նույնիսկ ավելի հավանական է թվում, թանի որ նվազեցնում է կամայական միջամտության անհրաժեշտությունը), որ **Է**-ի նշանը գոյացած լինի *խեթ*-ի մեկ այլ տարբերակից, որից գոյացել է նաեւ աղուանական *են*-ը:

3.2.1.9. Թռ


Այս գրանշանը հատուկ դժվարություններ չի առաջացնում՝ սկսած սինայյան գրից: Ի տարբերություն այլ գրանշանների՝ սրա ձեւափոխությունները գրեթե մեկ փուլից են ներկայացնում:

Եթովպական ճյուղը կրկին բավական մեկուսացված է, սակայն սկիզբ է առնում փյունիկյան ձեւից եւ ոչ թե սինայյան: Այստեղ նկատվում է միջանկյալ

²²⁹ Նույն տեղում:
²³⁰ Հր. Աճառյան, *Հայոց գրերը*, էջ 517:

կոթողայնացում, որի արդյունքում փյունիկյան կլոր տառը վերածվում է ուղղանկյան. եթովպական գրի հեղինակը հավանաբար փյունիկյան գրանշանի կլորությունը համարել է աղավաղման արդյունք եւ վերականգնել է դրա «կանոնավոր» ձեւը: Դետագայում այն նույնպես պարզեցվել է՝ կորցնելով միջնամասի խաչի հորիզոնական գիծը (ի տարբերություն մյուս ճյուղերի ուղղաձիգ գծի):

ՏԵՏ



Այս գրանշանի գրեթե բոլոր ձեւափոխություններն ընթացել են ելից ձեւի երկու կիսակլորներից մեկի բացման ուղղությամբ եւ գալարի գոյացմամբ՝ տարբեր ուղղություններով, որոնցով դրանք տարբերվում են մեկը մյուսից: Այսպես՝ հունական փոքրատառը եւ հայկական *թռ*-ն փոխադարձ համաչափ են հորիզոնական առանցքի նկատմամբ (հունական տառը պատկերված է առանց ուղղաձիգ առանցքի նկատմամբ հայելային արտապատկերման, քանի որ այն գոյացել է հունական մեծատառից եւ ոչ թե փյունիկյանից՝ գրելու ուղղությունը ձախից աջ հաստատվելուց հետո):


Վրացական տառը միակն է, որ ենթարկվել է 90°-ով շրջման: Թեւ տեսակաւոր են չի կարելի բացառել, որ այն առաջացած լինի եթովպական ճյուղից (այս ինքն՝ այնպիսի նախածեւից, որում ընկել է հորիզոնական գիծը եւ ոչ թե ուղղաձիգը): Սակայն հաշվի առնելով, որ այդ դեպքում այն միակը կլիներ հարեւան գրային համակարգերի շարքում, դա քիչ հավանական է թվում: Վրացական տառի առանձնահատկությունը՝ կապված աջ ելուստի դիրքի հետ, դժվար է բացատրվում: Սպասելի էր, որ այն կցված կլինի ուղղաձիգ գծի վերին ծայրին՝ կազմելով ձախ կորագծի շարունակությունը: Այն երեւի թե պետք է բացատրել ուղղաձիգ տարրի դեպի վեր շարունակվող ելուստի գոյությամբ, որին գրանշանի կոթողայնացման ընթացքում չափազանց մեծ նշանակություն է տրվել, կամ ենթադրել արագազրացման/կոթողայնացման եւս մեկ փուլ: Պարզություն չի մտցնում նաև

մխեղրուկի տառը. արդյոք աջ կողմից աղեղի՝ օղակի վերին մասում ուղիղ անկյան տակ կցվելը հետեւում է ասոմթավրուկի համապատասխան լուծմանը, թե՛ դրա վերին մասում գտնվելը վկայում է, որ այն բխում է անմիջապես այս տառի չափապանված նախածեւից: Հաշվի առնելով, որ շատ դեպքերում մխեղրուկին ունենում է ասոմթավրուկից անկախ ծագում, մենք հակված ենք այս տարբերակին, հատկապես որ մխեղրուկի նման տառերում, որոնցում օղակին կցվող տարրը հորիզոնական դիրք ունի (օ, օյ), կցումն ուղիղ անկյան տակ է (շառավիղի ուղղությամբ)՝ ի տարբերություն ուղղաձիգ կցումների (ծ, Ծ, Թ, Թ), որոնց դեպքում կատարվում է ելուստի եւ օղակի սահուն լծորդում:

3.2.1.10. ԻՆ

Մեծ հավանականությամբ գրանշանը ծագում է սինայյան պատկերագրից: Գրային համակարգերի մեծ մասում այն էապես պարզեցվել է՝ հունական գրում հասնելով պարզ ուղղաձիգ գծի վիճակին, իսկ ասորական եւ եբրայական համակարգերում չնչին ստորակետի: Այս գրանշանը մի խնդիր է հարուցում՝ կապված արաբական գրանշանի ուղղության հետ, քանի որ այն ենթադրում է փյունիկյան հայտնի նշանների հայելային ձեւի գոյություն, որը ուշ նմուշներում կարծես թե չի հանդիպում: Սակայն այն կա քանաանյան գրանշաններում, եւ չի բացառվում, որ արաբականը միակն է, որ պահպանել է այդ ձեւը:

ՅՈՂ



եթովպականը կրկին ներկայանում է որպես առանձին ճյուղ: Պետք է միայն նկատել, որ արդի եթովպական գրանշանը կարող էր առաջացած լինել առավել կոթողային տեսք ունեցող *գրիզգ* գրանշանից, բայց կարող էր եւ անմիջականորեն ծագել փյունիկյան ձեւից՝ պահպանելով վերականգնվող միջանկյալ ձեւը:

Հայերենը թերեւս միակն է, որ պահպանել է փյունիկյան նշանի միջին հորիզոնական թելը: Ուշագրավ է համապատասխան հայկական *Ի* տառի՝ միջնադարյան

գրություններում դիտվող ստորին խաղիկը, որը կարող է փյունիկյան ստորին թելին համապատասխանող հնագույն ձեւի հետքը լինել՝ ²³¹։

Անհրաժեշտ է սակայն նկատել, որ աղուանականի եւ վրացական աստվածաբանության հորիզոնական թելն ամենեւին էլ չի համապատասխանում փյունիկյանի վերին հորիզոնականին, այլապես որպես փյունիկյանի նկատմամբ հայելային ձեւ ուղղված կլիներ դեպի աջ եւ ոչ թե ձախ։ Որքան էլ տարօրինակ է, բայց, հավանաբար, դա փյունիկյան տառի ուղղաձիգ ճյուղին է համապատասխանում, որը փոխել է իր դիրքը միջանկյալ կոթողայնացումից հետո։

Վրացական մսեղրուկին կրկին այլ նախօրինակ ունի։

3.2.1.11. ԿԵՆ

Այսօր արդեն մեծ հավանականությամբ կարելի է ընդունել, որ այս գրանշանն առաջացել է ձեռքի ափը պատկերող նշանից։



Հայկական գրանշանը կարող էր առաջած լինել առնվազն երկու ճանապարհով՝ Տախտակի վրա պատկերված վերին ուղին իր հաստատումն է գտնում հունական արագագրերում, ստորին ուղին՝ տառի **Կ** ձախից հայտնվող լրացուցիչ գիծը՝ որը ձեռագրերում։ Սա առաջին գրանշանն էր, որի գոյացման ընթացքը մեզ հաջողվել է բացատրել։ Նախապես թվում էր, թե ամեն ինչ հասկանալի է. նախ հաջորդաբար իրագործվել են վերին երկու տարրերը, հետո՝ ներքեի ուղղաձիգը, եւ պարզապես արագագրության հետեւանքով չի իրագործվել ստորին թեք տարրը։ Սակայն այս բացատրությունը հաշվի չի առնում, որ փյունիկյան տառը ձախակողմյան է, իսկ այս շրջվելուց հետո գրանշանն այնքան էր տարբերվում հայկականից, որ դժվար էր

²³¹ Գ. Մնացականյան, Հայկական տառատեսակներ, Եր., 1979։

պատկերացնել, թե դրանից կարող էր առաջանալ հայկական տառը։ Միակ տարբերակն այն էր, որ կողքի երկու ելուստները միանային արագագրական լծորդման հետեւանքով, եւ երբ մենք հայտնաբերեցինք կապող օղակ հանդիսացող համապատասխան ձեւը միջին փյունիկյան գրում, դա եղավ մեր դատողությունները հաստատող փաստարկը։ Հետաքրքիր է, որ այս դեպքում եթովպական գիրը պարզապես հայելային է դառնում հայկականի նկատմամբ, որը հորիզոնական առանցքի նկատմամբ գրեթե հայելային գրանշանի համար բնական է։

Եւ կրկին խնդիր է հարուցում աստվածաբանությունը։ Այն չափազանց նման է հայկականին, եւ բանասերները սովորաբար սրանով լիովին բավարարվում են։ Սակայն Կ-ի երկու ճյուղերի վերին լծորդումը անհասկանալի է մնում։ Ինչպես երեւում է պատկերված հնարավոր նախաձեւից, բնական կլիներ, եթե ստորին ելուստը լիներ ոչ թե ուղղաձիգ, այլ թեք՝ օղակի շառավղով ուղղված։ Այլապես այդ տառը տեղաբանորեն հնարավոր չէր լինի իրագործել։ Մնում է կրկին ենթադրել, որ այս գրանշանը կոթողայնացնելիս, բավական էական միջամտություն է կատարվել եւ տառի ստորին ելուստն օղակին ուղղաձիգ շոշափող է դարձվել։


3.2.1.12. Ղատ եւ Լին

Այս գրանշանը ցեղակից համակարգերում երկու հիմնական ձեւ ունի՝ հունականը եւ լատինականը։ Սակայն սրանից ոչ մեկը չի համապատասխանում փյունիկյան նախաձեւին։ Լատինականի հետ այն նույն ուղղվածությունը ունի, մինչդեռ պիտի հայելային լիներ, իսկ հունականի նկատմամբ այն շրջված է մոտ 60°, որը հազիվ թե լիներ բարեշրջական պտտման ճանապարհով։ Սրա հնարավոր նախօրինակ հանդիսացող հնագույն սինայյան նշաններն ունեցել են ամենատարբեր ուղղվածություն, այդ թվում՝ լատինականի հայելային ձեւը, որից այն կարող էր առաջացած լինել։ Սակայն սրանց բոլորի ամենաբնորոշ հատկությունը երկու թելերի անհավասարությունն է ու նաեւ կորությունը։ Ուրեմն պետք է կա՛մ ենթադրել չպահպանված կամ լրացված նախաձեւի գոյություն, կա՛մ հետագա կոթողայնացնողների «ժողովրդական ստուգաբանական» վերականգնում։ Միեւնույն ժամանակ, գրանշանների արագագրական ազինների կոթողայնացման հաշվին էլ կարող էին գոյանալ բոլոր դիտվող ձեւերը։ Այդ հնարավոր անցումները պատկերված են տախտակի վրա։

Սակայն որոշ նմուշներ, օրինակ, փյունիկյան **ԼԼ**-ն²³², վկայում են, որ այստեղ նույնպես սկզբունքը չի խախտվել, եւ կամայական միջամտության կարիք չի եղել։ Այնպիսի գրանշանի հորիզոնական տարրը նախ կարող էր շրջվել՝ կապվելով հայտնի գրանշանին, ապա ընկալվել որպես կապակցող տարր եւ վերջապես վերափոխվել կրկին որպես հորիզոնական մասնիկ, բայց՝ հակառակ ուղղված։

²³² Նմուշը՝ Դ. Дирингер, նշվ. աշխ., рис. 137.

ԼԱՍԵՐ




Նույն կերպ կարող էր գոյանալ հունական տառը. ստորին տարրի նվազման պահին նախորդ գրանշանի հետ կապակցող գծն ընկալվել է որպես գրանշանի բաղադրիչ եւ հետագա կրթողայնացման ժամանակ երկարացվել՝ համաչափության հասնելու նպատակով: Լատինական արագագրերում կան Լ-ի կատարումներ ճիշտ մեր Դ-ի ձեւով ԼԼ:

Վրացական եւ աղուանական տառաձեւերն այստեղ լուրջ խնդիրներ չեն հարուցում: Դեռ ավելին, հաստատում են նաեւ լատինականի առաջնալը լրացուցիչ մասնիկների կրթողայնացման ճանապարհով: Օրինակ, ինչպես երեւում է, այդ ընթացքում գրիչը երկու անգամ է անցնում միեւնույն գծով, եւ գոյանում է գալար, որը դեր չի խաղում լատինական եւ հայկական տառերի դեպքում, բայց աղուանականի եւ հատկապես վրացականի դեպքում ստանում է գրույթային արժեք. միայն սրանով կարող է բացատրվել վրացերենի օղակը: Ինչ վերաբերում է արաբականին, ապա, ինչպես տեսնում ենք, այն կարող էր գոյանալ թե՛ նույն կերպ, ինչպես լատինականը, եւ թե՛ մի որեւէ հնագույն սինայյան ձեւից, որն արդեն կունենար ոչ թե՛ գրչական, այլ պատկերային տարբերակի արժեք:

3.2.1.13. Մեն

Սա ամենից քիչ խնդիրներ հարուցող տառերից է: Գրեթե կասկած չեն հարուցում ո՛չ սինայյան՝ ջուր նշանակող պատկերագրից առաջնալը, ո՛չ էլ հետագա ձեւափոխումները: Եթովպական ճյուղը կրկին առանձին է: Ինչպես եւ այլ դեպքերում, չափազանց մոտ են հունական փոթրատառն ու հայկական մեծատառը:



Աղուանականում այս տառը գոյացնում է հայկական 2-ին նման եւս մի գրանշան՝ որոշ ուսումնասիրողների մոտ առաջացնելով այն կարծիքը, թե այն պետք է դիտել իբրեւ Մաշտոցի կողմից 2-ից կամայականորեն պատրաստված տառ, սակայն, ինչպես տեսնում ենք, 2-ի հետ այն կարող է ծագումնաբանական ոչ մի կապ չունենալ: Միտերոպին այս տառի դեպքում կարող է գոյացած լինել թե՛ ասումթավրուլիից եւ թե՛ անմիջապես նախաձեւից:

3.2.1.14. Նու

Սա նույնպես պարզ գրանշան է: Հավանաբար առաջացել է օձի սինայյան պատկերներից (հմմ. տառի եթովպական անունը՝ *Նահաս* «օձ»): Չարգացումներն էլ, ինչպես երեւում է պատկերից, առանձնապես բարդ չեն: Գրանշանը ձեւափոխության ընթացքում առավելապես ենթարկվել է պարզեցման՝ սասանյան եւ եբրայական գրերում հասնելով գրեթե մեկ գծի աստիճանի:




Հայկական տառը ճիշտ համապատասխանում է լատինականին, թեև սովորաբար դա չի գիտակցվում ձեւավորչական առանձնահատկությունների պատճառով: Հայկական տառի ծախ ճյուղի եւ հորիզոնական ելուստի միջեւ ստացվող անկյունը համապատասխանում է լատինականի ծախ գագաթին, իսկ երկու ճյուղերի ստորին կիսաշրջանագծային լծորդումը՝ ստորին գագաթին: Հունական եւ լատինական որոշ գրություններում հենց այդպես էլ իրագործվում է: Օրինակ՝ մ. թ. ա. հունական ω նմուշը, թեև այն մոտ 45° աստիճանով շրջված է:

Աղուանական տառը լիովին նույնանում է հայկականին. դա հատկապես ակնհայտ է ՄՄ 7117 ձեռագրի նմուշում: Վրացականի դեպքում դժվար է բացատրվում աջ ճյուղի լծորդումը վերեւից (սպասելի էր ներքեւից լծորդումը), թեև նման կործրայնացումը միջանկյալ ձեւավորության դեպքում հնարավոր է պատկերացնել:

3.2.1.15. Ծա

Սրա հնագույն սեմական նախորինակը առայժմ չի հաջողվում գտնել: Սակայն փյունիկյանից սկսած՝ զարգացումները բավականին պարզ են:



Այս տառի ժառանգները հիմնականում պահպանել են փյունիկյան տառի եռահարկ կառուցվածքի հետքերը: Որոշ համակարգերում՝ ասորականում, արաբականում, եթովպականում, գրանշանը կանոնավորապես շրջվել է 90° աստիճանով՝ գրելու ուղղությամբ:

Տարօրինակ է եթովպական տառի զարգացման երկարությունը. ինչպես տեսնում ենք, մյուս տառերը, որպես կանոն, բխում են սեմական հնագույն ձեւերից եւ ավելի կարճ զարգացման արդյունք են: Դա կարող է նշանակել, որ եթովպական

ճյուղի զարգացումն էլ բավական երկար է եղել: պարզապես գրչական դպրոցի պահպանողականության հետեւանքով տառերի մեծ մասը չի ձեւավորվել, թեև եղել են բացառություններ, որոնցից է հենց վերոնշյալը:


Վրացական միտերոպիի դեպքում շրջված տառի երրորդ մասնիկը վերածվել է գալարի եւ հայտնվել նախորդ երկուսի տակ: Ուղղաձիգ դիրքը պահպանել են երրայական, հունական, հայկական տառերը, թեև հայկականը կորցրել է առաջին (վերին) հորիզոնական մասնիկը: Հունական փոքրատառը եւ հայկական մեծատառը ծագում են գրչական նույն բնից, թեև գծապատկերի վրա պատկերված են տարբեր ճյուղերում, քանի որ հունական փոքրատառը՝ որպես կանոնավոր «մի-նուսկուպյին» տառ, ձեւավորվել է արդեն նոր ժամանակներում, մինչդեռ հայկականի դեպքում այն եղել է դրանից առաջ ու, հավանաբար, դեռ այն ժամանակ, երբ գրելու ուղղությունն աջից ծախ է եղել:

Վրացական ասոմթավրուլին եւ աղուանականը բացահայտորեն նույն զրույթն են ներկայացնում. նրանց վերին մասնիկը դեռ պահպանում է արագագրական նախաձեւի գոգավորությունը, որը կորել է հայկականի մեջ՝ ստանալով հակառակ ուղղություն:

3.2.1.16. Ո

Ունական համոզիչ է թվում այս տառի՝ «աչք» պատկերող սինայյան գրանշանից ծագումը: Ինչպես եւ սպասելի է, շրջանագիծը գրեթե ամենուրեք բացվել կամ հավիվել է լրացուցիչ մասնիկներով: Բացառություն է կազմում եթովպական գիրը որին այս գրանշանն անցել է անփոփոխ: Անփոփոխ անցել է նաեւ հունականին, որպես *Օմիկրոն* (ստորեւ պատկերում չի ներառվել):

ԱՅՆ



Արամեական ճյուղն առհասարակ կորցրել է շրջանագծային բոլոր հատկանիշները: Հունական փոքրատառը եւ մխեղրուլին փոխադարձաբար ստացել են համաչափ ձեւեր: Հատուկ ուշադրության է արժանի հունական *Օւտգա*-ն: Այն, որ սա *Օսիկրոս*-ի (այսինքն՝ *Այն*-ի) ժառանգն է, գրեթե ոչ ոք չի կասկածում: Սակայն սովորաբար *Օւտգա*-ի ծագման մեջ փորձում են տեսնել արհեստական միջամտության հետքեր: Այսպես՝ մեծատառը դիտում են որպես ընդգծված *Օսիկրոս*: Իբր ընդգծել են՝ շեշտելու համար հնչյունի երկար լինելը, իսկ փոքրատառը դիտում են որպես երկու փոքր *Օսիկրոս*-ների կրկնություն: Սակայն այս բացատրությունը համոզիչ չէ, որովհետեւ այդ դեպքում սպասելի էր նույն հնարքի կիրառումը նաեւ մյուս երկար ծայնավորների դեպքում, մինչդեռ երկար [ε:]-ի համար գործածվել է *խէթ*-ը, իսկ հին հունական մնացած հինգ երկար ծայնավորներն առհասարակ չեն ունեցել սեփական գրանշաններ. ավելի հավանական է, որ հետազոտողները նման ենթադրությամբ իրենց այժմյան պատկերացումները եւ գործելակերպը վերագրում են հին հույներին: Իսկ գոթական *Օթալ*-ի գոյությունը հաստատում է առաջարկվող վերակազմությունը եւ բացատրում «ընդգծման» ծագումը: Ինչ վերաբերում է երկու *Օսիկրոս*-ներով փոքրատառ *Օւտգա* ձեւավորելուն, ապա կարելի է այստեղ եւս կրկնել նախորդ փաստարկը. այլ տառերի դեպքում նման հնարք չի կիրառվել: Դրանից բացի, որպեսզի երկու *Օսիկրոս*-ներից գոյանար փոքրատառ *Օւտգա*-ն, անհրաժեշտ կլիներ լրացուցիչ արագագրական աղավաղում: Սակայն, ինչպես երեւում է բերված պատկերից, նույն արդյունքին կարող է հանգեցնել նաեւ մեկ *Օսիկրոս*-ի աղավաղումը (Օկկամի սկզբունքը): Վերջապես, դա հաստատվում է նաեւ մխեղրուլիի գոյությամբ:

3.2.1.17. ՊԷ

Այս գրանշանի հնագույն հայտնի ձեւերը՝ փյունիկյանները, անկյունավոր չեն: Սակայն այդ ձեւը ենթադրվում է, քանի որ հունական հնագույն ձեւերը ուղղանկյուն են: Հնարավոր է երկու տարբերակ. կա՛մ հնագույն ձեւը եղել է ուղղանկյուն, բայց մեզ հասել է աղավաղված կլորավուն ձեւը, կա՛մ էլ անկյունավոր ձեւերը «ժողովրդական» կոթողայնացման արդյունք են: Համենայն դեպս, արդեն արամեական քառակուսի տառատեսակի ծախս վերին խաղիկի գոյությունը հուշում է, որ այն սրածայր գագաթի գալարածե իրագործման արդյունք է: Սակայն եթե ճիշտ է սինայյան գրանշանից դրա ծագելու ենթադրույթը, ապա փյունիկյան գրանշանն իրոք պիտի կլորավուն լիներ կամ ունենար ընդամենը մեկ սուր գագաթ: Բացի այդ՝ երկու ճյուղերն էլ պիտի որ հավասար լինեին, ինչպես հունականն է. հունականի այդ հատկությունը սկզբնական է եւ ոչ թե կոթողայնացման արդյունք:




Մյուս գրանշանների զարգացումը հիմնականում օրինաչափ է: Ուշագրավ է աղուանական եւ եբրայական քառակուսի տառաձեւերի նույնականությունը: Խնդրահարույց է մխեղրուլի ձեւի գոյացումը. *պ*-աձեւ գրանշանի 90° աստիճանով շրջումը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ անհավանական է: Դրա համար գրողը պիտի սկսեր տառի իրագործումն աջ ճյուղից, որը տարօրինակ է: Մնում է ենթադրել, որ ինչ-ինչ պատճառով այդ ճյուղը որոշ գրատեսակներում չափազանց բարձր էր ստացվում (դա որոշ չափով հաստատվում է ասոմթավրուլիի աջ ճյուղի բարձրությամբ), եւ դրա պատճառով գրիչներն այս գրանշանը դիտարկել են ավելի շատ որպես ուղղաձիգ դիրքից թեքված, քան թե որպես հորիզոնական դիրքից ելած:

3.2.1.18. Ծա

Այս տառի սինայյան նախաձեւն առայժմ նույնպես չի գտնվում, թեեւ փյունիկյան գրանշանից սկսած՝ դրա զարգացումը հիմնականում կանոնավոր է: Միեւնույն ժամանակ այս տառի բարեշրջությունը ներկայացնում է ամենամանրագրական թվացող զարգացումների օրինակը. անհնար է թվում, որ բեկյալներից բաղկացած նախաձեւը կարող է վերածվել Ծ-ի պես կլորավուն նրբագեղ տառի: Հատկանշական է գրելաձեւերի մեծ մասում պահպանված ծախս թեւի ուղղահայաց տարրը, որը սովորաբար ընկալվում է որպես վայելչագրական տարր (գծափակոց), մինչդեռ սա փյունիկյան գրանշանի համապատասխան տարրի մնացորդն է:

Որոշ խնդիր է առաջանում աղուանական տառի դեպքում: Թվում է՝ այն գոյացել է *Շադե*-ի ծախսակողմյան ձեւից, մինչդեռ հայերենի եւ վրացերենի նման պետք է գոյացած լիներ շրջված ձեւից: Գուցե, սա մասնավոր բացառություն է, ինչպիսին պատահում է եւ հայերենի դեպքում (ունենք «հակառակ» Չ, Ֆ եւ այլն), բայց հնարավոր է նաեւ, որ այն առաջացել է շրջված՝ աջակողմյան ձեւից. նախաձեւի կառուցվածքը տալիս է այդ հնարավորությունը, թեեւ աղուանական տառի աջ ստորին գոգավորությունը բնականորեն է ստացվում *Շադե*-ի աջ անկյունակից:

ԾԱԴԵ




3.2.1.19. ԶԷ

Եթե ճիշտ է սինայյան գրանշանին համապատասխանությունը, ապա եթովպականը եւ փյունիկյանը այն պահել են գրեթե անփոփոխ: Մոտ է սկզբնաձեւին նաեւ լատինականը: Մյուսները այս կամ այն չափով հեռացած են. պահպանվել է միայն մի կիսակլորը: Զետաքթի է, որ այն անփոփոխ անցել է նաեւ արդւանականին. այդ ձեւով ներկայացված է ՄՄ 7117 ձեռագրում, սակայն կրկնագրում տեսնում ենք այս տառի խաչաձեւ տարբերակը, որով այն նույնանում է վրացականին: Հավանաբար, խաչի վերածումը կատարվել է կիսակլորների բացման միջոցով, ճիշտ այնպես, ինչպես հայկական Փ-ից (որը լիովին նույն գծագրությունն ունի) գոյացել է փոքրատառ փ-ն՝ միջնամասի հետագա փոքրացման արդյունքում:

Այն, որ Հայոց Զ-ն այս տառի ժառանգորդն է, կարող է տարօրինակ թվալ: Այս տառը մեր այբուբենում տեղադրվել է հունական X-ի դիմաց եւ համապատասխանեցված է նաեւ լեզվական փոխառություններում: Սակայն այն, որ մեր տառը համապատասխանում է Կոֆ-ին թե՛ հնչմամբ եւ թե՛ գրանշանով, կասկած չի թողնում այս տառերի ազգակցության վերաբերյալ: Նոր պունիկյան արձանագրություններում պատահում են Կոֆ-ի մի քանի գրելաձեւեր, որոնք լիովին հաստատում են նման անցումը՝ Ք: Հունական X-ին նմանությունը պետք է համարել պատահական. ինչպես կտեսնենք ստորեւ, հունական X-ին ազգակից Հայոց գրում այն նույնպես կա, եւ դա հենց Խ-ն է:


ԿՈՖ



Թեւ հայկական տառի մեջ նույնպես խաչ է նկատվում, որի պատճառով էլ հավանաբար Մաշտոցն այն համապատասխանեցրել է հունական X-ին, սակայն դրա ծագումը տարբեր է վրացականից ու արդւանականից եւ մակարոյծ ազիի կոթողայնացման արդյունք է:

3.2.1.20. ՐԷ ԵՒ ՌԱ

ՌԵՇ



Եթե ճիշտ է փյունիկյան գրանշանի՝ սինայյան նախաձեւից առաջացած լինելու վարկածը, ապա սրա եռանկյունին համապատասխանում է մարդու կիսադեմին, իսկ գագաթը՝ քթի ծայրին: Ընդհանուր առմամբ այս գրանշանի ձեւափոխությունները դժվարություն չեն հարուցում: Այն, որ այս գրանշանը վերածվել է հայերեն Ր-ի, դժվար չէ պատկերացնել. դրա ապացույցը մեզ տալիս է նոր պունիկյան գրանշանի՝

ծիշտ մեր տառի ձևը՝ **Դ** (բնականաբար՝ հայելային տարբերակով): Սակայն ինչ վերաբերում է **Դ**-ին, ապա այն կարող էր գոյանալ ե՛լ որպես կրկնագրություն, ե՛լ որպես նույն **Դ**-ի հետագա զարգացման արդյունք՝ լատինական **R**-ի օրինակով: Ինչպես տեսանք, կրկնագրությունը կիրառվել է **Վ**-ի ու թերես (տե՛ս ստորել)՝ նաեւ **Յ**-ի դեպքում, եւ որպես գրչական տարբերակ այն դիտելը ավելի բնական կլիներ ու նախընտրելի: Թե երկուսից որն է իրագործվել, առայժմ հնարավոր չէ պարզել նյութի սակավության պատճառով:

3.2.1.21. ՍԷ

Բխում է փյունիկյան **Շիւ**-ից: Թե որն է դրա նախածեղը, դժվար է հաստատապես ասել: Հետաքրքիր է նմանությունը եգիպտական «ծաղկաման» գաղափարագրին (որից՝ դպտական **Շայ** տառը) ու հատկապես՝ չինական **Շաւ**-ին (լեռ) **山**. համընկնում է ոչ միայն ձևը, այլեւ անունը. իսկ ծայնավորը համընկնում է սլավոնական, վրացական, հայկական համապատասխան տառանունների ծայնավորի հետ: Արդյոք պատահական է: Շատ համակարգերում այն գրեթե անփոփոխ պահպանել է իր եռագագաթ կառուցվածքը, որը ջնջվել է միայն հայկական ճյուղում, հունական փոքրատառում, լատինականում: Ուշագրավ է, թե ինչպես են արաբ. **Շիւ**-ը եւ **Սաւեկ**-ից ստացվող արաբ. **Սիւ**-ը վերածվել նույնական եռաճյուղ նշանների, որոնք զանազանվում են սոսկ տարբերիչ կետերով:

Շիւ




Հ. Մնացականյանի գրքում բերված է միջնադարյան մի տառածեղ, որն ունի աջ միջին ելուստ՝ **Ս**, որը կարող է դիտվել որպես երրորդ ճյուղի մնացորդ: Ցավոք, այս նմուշի աղբյուրը գտնել չհաջողվեց՝ համոզվելու համար, որ դա իրոք **Ս** տառն է, այլ ոչ թե, օրինակ, **ՍԻ** կցագրություն: Աղուանականի դեպքում տառն սկսել է նմանվել

հայերեն **Ն**-ին, միևնույն, ինչպես երեւում է, դա սոսկ պատահականություն է: Ինչ վերաբերում է կրկնագրի տառածեղի աջ ճյուղի լծորդմանը վերեւից եւ ոչ թե ներքեւից, ինչպես ՄՄ 7117 ձեռագրինը, ապա այստեղ տեսնում ենք նույն ձեւափոխությունը, որի մասին խոսվեց վրացական նույնաձեւ **Նար**-ի դեպքում:

3.2.1.22. Տիւ

Փյունիկյան **Թաւ**-ի բնականոն, թեեւ ոչ ակնհայտ զարգացումն է: Այս տառը գրեթե անփոփոխ է մնացել եթովպականում եւ հունականում. վերջինի դեպքում միայն կրճատվել է խաչի վերին թելը, սակայն այն նորից հայտնվում է փոքրատառ լատինականում: Խաչի հետքերը պահպանվել են նաեւ արամեական ճյուղում:

Հայկական ճյուղում խաչից գրեթե ոչինչ չի մնացել: Դրա հետքը դեռ կարելի է տեսնել աղուանականի մեջ, իսկ միսեդոնյանի ձևը, թերես, ամենից անհավանական զարգացումն է դրսեւորում. առաջին հայացքից դժվար է պատկերացնել, որ խաչի պես պարզ ձևը կարող է վերածվել նման բարդ պատկերի, սակայն եստրանգելոյի ձևը, զբաղեցնելով ճիշտ միջին դիրքը խաչի եւ **Տար**-ի միջեւ, հաստատում է նման անցման հնարավորությունը: Հայկական **Տիւ**-ը կարող է գոյացած լինել առնվազն երկու ճանապարհով: Մի դեպքում այն ներկայանում է որպես խաչի սոսկ ուղղաձիգ մասնիկի կորագծային տարբերակ, միևնույն հորիզոնական թելը նվազելով կարող էր նույնացվել կապակցող գծի հետ եւ կրթողայնացման ընթացքում վերացվել:



Մյուս տարբերակով հորիզոնական թելը կարող էր միանալ ուղղաձիգ մասնիկի վերնամասին՝ ընդգծելով ամբողջ գրանշանի այլբաձեւությունը: Նման ձեւափոխությունը հաստատվում է նաեւ հունական եւ լատինական (մասնավորապես՝ Դոմպեյքի պնակիտների) արագագրերի գոյությամբ՝ **Դ**: Ավելի ուշ, շարվածքը բարելավելու պահանջից ելնելով, տառի միջին ուղղաձիգ մասնիկը թեթևել է դեպի ետ՝ նմանվելով լատինական **S**-ին (թեեւ, ինչպես տեսանք, դրա հետ ոչ մի ծագումնաբանական կապ չունի) եւ գոյացնելով այժմյան ձևը:

3.2.2. Դանիեյան գրերի աղյուսակը

Որպես Նախորդ վերլուծության արդյունք՝ աղյուսակում բերված է դանիեյան գրերի հնարավոր կազմը՝ գրանշանների վերականգնված ձևերով: Բնականաբար, սա սոսկ ենթադրական վերականգնում է, բայց կատարված լինելով բազմաթիվ ազգակից ձեւերի համեմատությամբ՝ այս ձեւերը բավական հավանական են: Թեւեւ չի բացառվում, որ իրականում դրանք ավելի մոտ են եղել փյունիկյան Նախօրինակին, իսկ գուցե հակառակը՝ ավելի նման են եղել այժմյան ձեւերին:

Տառանունը	Վերականգ. արագագր. Նախաձեւը	Գրչական տարբերակներ	Տառանունը	Վերականգ. արագագր. Նախաձեւը	Գրչական տարբերակներ
Այբ	Ա		Մեն	Մ	
Բեն	Բ		Նու	Ն	
Գիմ	Գ		Շա	Շ	
Դա	Դ		Ո	Ո	
Եչ	Ե		Պե	Պ	
Վեւ (Բիւն)	Վ	Կ	Օա	Օ	
Չա (Չա)	Չ	Չ	Քե	Ք	
Ըթ (Է)	Ը	Է	Դե (Ռա)	Դ	Ր
Թո	Թ		Սե	Ս	
Ին	Ի		Տիւն	Տ	
Կեւ	Կ		Խե	Խ	
Դատ (Լիւն)	Դ	Լ	Փիւր	Փ	

3.2.3. Հայոց «լրացուցիչ» տառերը

Վերոնշյալ 22 տառերը կազմում են Նախամաշտոցյան այբուբենի կորիզը: Կարող է հարց առաջանալ, թե ինչպես էին այդ 22 տառերով հայերն արտահայտում մնացած 14 հնչյունները: Պետք է ասել, որ մեծ դժվարությամբ. իզուր չէ, որ հին Հայոց գրերը համարվել էին պակասավոր (թեւեւ ավելի ոյուրին, քան, օրինակ, գրբային պահլավերենի դեպքում, որի 13 գրանշանները արտահայտում էին 24 հնչյուն): Հայտնի են զանազան այբուբեններում այդ խնդրի լուծման տարբեր ձևեր: Նախ որոշ հնչյուններ կարող էին առհասարակ չնշել, բայց ընթերցողները կռահելն դրանց գոյությունը եւ ճիշտ արտասանելն: Այդպես է վիճակը սեմական գրային շատ համակարգերում մինչ այսօր, թեւեւ որոշ ամենապատասխանատու հնչյուններ ինչ-որ կերպ լրացուցիչ «հուշվում» են: Նույնիսկ մեր այսօրվա Հայոց գրում մինչև

վերջ չի լուծվել այդ հարցը. մենք ունենք գաղտնավանկի ք-ի խնդիրը, որի արտասանական կանոնը չիմանալու դեպքում կարելի է կարդալ *ձեռնըպահ, ձեռնըտու* կամ *տոմըս*: Բացի այդ, ինչպես ասվեց «Ինչ սկզբունքով են ստեղծվում նոր գրի նշանները» բաժնում, կարող էին կիրառվել երկգրություններ, ինչպիսիք են, օրինակ, անգլերենում *ch* եւ *sh* երկգրությունները չ-ի եւ շ-ի համար: Մեր դեպքում, ինչպես տեսանք *Իհւն*-ի մասին խոսելիս, դա կարող էր լինել, օրինակ, *ււ* երկգրության կիրառումը Վ-ի համար: Որ այս երկգրությունը Նախամաշտոցյան է, կարող է վկայել այն, որ կազմված է հենց արագագրական (փոքրատառ) *Իհւն*-ներից եւ ոչ թե կոթողային, այլապես Վ-ի փոխարեն կունենայինք, մոտավորապես, այսպիսի մի տառ՝ *ԻԷ*: Այս կրկնագրությունը (գուցե եւ *ՄԷ*-ն, եթե ապացուցվի *Ռ*-ի կրկնագիր լինելը) Մաշտոցը կարող էր դարձնել ինքնուրույն տառ: Այսպիսով, Նախամաշտոցյան գրում կային հնարավորություններ՝ արտահայտելու ավելի շատ հնչյուններ, քան տառերն էին, ինչպես որ դա արվում է նաեւ ժամանակակից բազմաթիվ այբուբեններում: Սակայն թերությունները չափազանց շատ էին: Օրինակ՝ Ը տառը, հավանաբար, բառասկզբում ընթերցվում էր կամ [ը], կամ [է], իսկ բառամիջում միայն [է]. (ծ) եւ [զ] հնչույթներն արտահայտվում էին միեւնույն տառով, որը կարող էր ունենալ թե՛ Չ եւ թե՛ Չ տեսքը, սակայն ձեւերը չէին զանազանվում եւ այլն:

Ստորեւ բերված են այն տառերը, որոնք «դանիեյան» միջուկից դուրս են: Նախապես տրված են այն երեք տառերը, որոնք, հավանաբար, եղել են արդեն Նախամաշտոցյան փուլում:

3.2.3.1. ԽԷ եւ Փիւր

Այս տառերը չեն բխում հնագույն սեմական համակարգից: *Խ*-ի աղբյուրը կարող էր լինել հունական *Χ*-ն, հատկապես որ, ինչպես տեսանք, Հայոց *Բ*-ն սրանից չի ծագել: Վերեւում արդեն դիտարկվել էր խաչի ձեւափոխությունների շարքը, որում, իրոք, հայտնվում է Հայոց *Խ*-ն՝ *Ϡ* *ϡ*: Սակայն աչքի է ընկնում այն հանգամանքը, որ հայերեն *խաչ* բառի (որը, ըստ Աճառյանի, բուն Հայոց բառ է) առաջին հնչյունը [խ] է, եւ սա հնարավորություն է տալիս ենթադրել, որ գործ ունենք սկզբնահնչյունության հետ: Հետեւապես այս տառը կարող է հայկական ծագում ունենալ, իսկ հունականը՝ հայերենից փոխառություն լինել: Հունական տառի՝ հայերենից փոխառյալ լինելու օգտին է խոսում նաեւ այն փաստը, որ այդ տառը (ու նաեւ Փ-ն, տե՛ս ստորեւ) Նախապես սկսել են կիրառվել արեւելահունական գավառներում²³³: Բոլոր դեպքերում այս տառը պիտի հայտնվեր հայերենում վաղ շրջանում, որպեսզի հասցներ ենթարկվել նման ձեւափոխության: Եթե այն Մաշտոցի կողմից փոխառվել հունարենից, կպահպաներ իր կոթողային խաչաձեւությունը:

²³³ И. Фридрих, История письма, с. 131.

Այն, որ հունական գրում Փ-ն հայտնվել է X-ի հետ միաժամանակ եւ կրկին արեւելյան գավառներում, կասկած է առաջացնում, որ այդ տառը նույնպէս կարող է սկզբնահնչունային ծագում ունենալ եւ ստուգաբանվել հայերէն, թեւէ դա չի կարող արդէն նույնքան համոզիչ երեւալ: Այսպէս՝ հայերէնում ունենք «փեղկ» եւ «փեռեկեք» բառերը («երկատեք» իմաստով), որոնք սկսվում են Փ-ով, իսկ Փ-ի ձեւը, իրոք, միջին գծով երկատված շրջան է եւ կարող էր «երկատեք» բառի պատկերագիրը լինել: Եթէ ենթադրությունը ճիշտ է, ապա սա կրկին բնիկ հայերէն գրանշան է, իսկ հունականը՝ փոխառություն: Այդ դեպքում տարօրինակ է, որ այս տառը, որը թերեւս X-ի հետ միաժամանակ եւ միեւնոյն ուղղով պիտի հայտնվէր Հայոց այրուքներում, վերջինից տարբերվում է աղավաղման աստիճանով. այսինքն՝ բոլորովին աղավաղված չէ: Սա կարող է մի քանի գործոնի ազդեցության հետեւանք լինել, նախ՝ այն կարող էր պարզապէս ավելի քիչ աղավաղվել, քան X-ն, քանի որ արդէն իսկ կլորավուն հիմք ուներ, եւ այդ պատճառով Հռոմի հետ կողմից կոթողայնացման ժամանակ կարող էր լիովին վերականգնել իր սկզբնական տեսքը, հատկապէս որ Հայոց այրուքներում այն համապատասխանեցված էր հենց հունական Փ-ին՝ ի տարբերություն հունական X-ի, որին համապատասխանեցվեց Կաֆ-ից ծագած հայկական Զ-ն, իսկ հայկական X-ն այսպիսով մնաց առանց հունական ավելի կանոնաձեւ համարժեքի եւ կոթողայնացման ժամանակ առավելագույն չափով պահպանեց իր արագագրացման ընթացքում ստացած ձեւափոխությունները:

Եթէ *Խ* եւ *Փ* գրանշանների՝ նշված ճանապարհով գոյացումը հաստատվի, դա կնշանակի, որ հնագույն ժամանակներում Հայոց մեջ կատարվել է ինքնուրույն հնչյունային գիր ստեղծելու կամ սեմական գրի կատարելագործման փորձ:

3.2.3.2. ԳԵ

Բացահայտորեն նույն դպտական *Չանցալ*՝ **Ճ** տառն է: Հր. Աճառյանը մերժում է այս փոխառությունը շատ թույլ փաստարկով, թէ դպտական տառն ունի [ջ] արժեքը եւ ոչ թէ՛ [ճ]²³⁴, մինչդեռ սրանք հաճախ են փոխարինում իրար տարբեր բարբառներում: Դա երեւում է իր իսկ Արմատական բառարանից: Օրինակ՝ *ջորի* բառի դիմաց Աճառյանը տալիս է. Վն. *ճորի*, Գոր. *Հմշ. ճորի*, Դրբ. *ճո՛րէ*, Շմ. Սլմ. *ճէորի*, *Չթ. ճիյէ*, Մկ. *ճիւրը՛*, *ջուր* բառի դիմաց՝ Հմշ. *ճուր*, Գոր. Դրբ. Մկ. Մրդ. Շմ. Սլմ. Վն. *ճիւր*, *Չթ. ճոյ*, *քաջ* բառի դիմաց՝ Մշ. *քաճ*, Տփ. *քա՛ճկիր* եւ այլն: Նա նաեւ բերում է Յ. Մարկվարտի կարծիքը, որ Ե դարում Հայոց եւ դպտիների միջեւ հարաբերություն չկար: Սակայն շարադրվող վարկածի շրջանակներում փոխառումը կարող էր կատարվել ավելի վաղ, երբ հարաբերություններ կային:

Հետաքրքիր է, որ Ե տառը *Ջ*-ից տարբերելու համար լայնորեն կիրառվում է «ճանճի Ե» ճշտող բանաձեւը (երբեք չեն ասում, օրինակ, «ճակատի Ե» կամ «ճուտի Ե»)

²³⁴ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 538:

Սովորաբար ենթադրվում է, որ խոսքը «ճանճ» միջատին է վերաբերում: Սակայն, գուցէ, բերված արտահայտության մեջ հրաշքով պահպանվել է այդ տառի սկզբնական *ջանջա* անվանումը, որը միայն հետագայում է սկսել ընկալվել որպէս «ճանճ» միջատը:

3.2.3.3. ԺԵ, Զա, ԶԵ, Զո

Այս տառերի ձեւերում նկատվում է մի հատկություն. դրանք հիշեցնում են հորիզոնական առանցքի նկատմամբ շրջված *Գ, Շ, Ե, Ծ* տառերը, որոնք նշանակում են համապատասխանաբար մոտիկ հնչյուններ՝ կազմելով *Գ-Ժ, Զ-Շ, Զ-Ե, Զ-Ծ* զույգերը:



Մաշտոցյան այրուքների հայելային գրանշանները:

Տարօրինակ կարող է թվալ առաջին զույգը. հայերէնում *Գ* եւ *Ժ* հնչյունները հարազատ չեն ընկալվում: Օրինակ, ռուսերէնում դա սովորական անցում է՝ *без-безжаты, дорога-дорожный* եւ այլն: Սակայն պետք է հիշել, որ Մաշտոցի ժամանակներում Հայաստանը գտնվում էր պարթեական ազդեցության ոլորտում, իսկ պահպանվեցին այդ անցումը նույնպէս նկատվում է: Դա երեւում է, օրինակ, պահպանվեցին փոխառված բառերում. ունենք *բագին* – *բաժին*, *ոյժ* – *առոյգ*, *տոյժ* – *տուկանք*, *արգ* – *արժեք*:

Զ – *Շ* զույգի դեպքում, թվում է, թէ օրինաչափությունը խախտված է եւ շրջումը կատարվել է ոչ թէ հորիզոնական առանցքի, այլ համաչափության կենտրոնի շուրջ 180°, սակայն չի բացառվում, որ *Շ*-ի սկզբնական ձեւը հենց հայելային տարբերակն է եղել (տե՛ս նմուշը ստորեւ), որը, ի դեպ, ավելի տրամաբանական է աջակողմյան գրի դեպքում, քանի որ հին տառաձեւերում, օրինակ՝ (**Շ**)²³⁵ ստորին վերջույթը ուղղված էր ոչ թէ վերեւ, այլ դեպի հետ (հենց գրելու ուղղությունն էր, որ աստիճանաբար բերեց այդ վերջույթի վերացմանը ժամանակակից ձեւերում): Մյուս կողմից, ունենք հայելային շրջված *Զ*-ն՝ Գանձասարի տաճարի հարավային պատի կենտրոնական մասի արձանագրություններից մեկում, որը պատկերված է որպէս հայելային *Չ*²³⁶:

Առհասարակ, ուղղաձիգ առանցքի շուրջ գրանշանները հաճախ են շրջվում. դա թերեւս կապված է մարդու մարմնաբանական որոշ առանձնահատկությունների հետ հատկապէս մանուկ հասակում գիրը յուրացնելիս:

²³⁵ Ձեռ. Էջմ. Գ¹ 1958, 128ա: Տե՛ս **Գ. Յովսէփեան**, *Զարտեպ հայ հնագրութեան II «Շողակաթ»*, Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածո, գիրք Ա, Վաղարշապատ, 1913, տախտակ ԺԹ:

²³⁶ Տե՛ս նաեւ **Ս. Բարխուդարյան**, *Դիվան հայ վիմագրության*, պր. 5, Արցախ, Եր., 1982, էջ 44, արձանագր. 92:



Գանձասարի տաճարի հարավային պատի կենտրոնական մասի արձանագրություններից մեկը: Արտատվող Չ տառը գտնվում է պատկերի գրեթե կենտրոնում «...ԽԱՉԻՆ...» բառում:

Բացի այդ, քանի որ այս տառի նախորինակը՝ սամէք-ը, համաչափ է եղել, երկու ուղղությամբ իրագործման տարբերակները մոտավորապես համագոր պետք է եղած լինեին, եւ միայն ժամանակի ընթացքում կարող էր հարթել այս կամ այն տարբերակը:

Տ. Կոր այս նշանագիր՝ ձայնեալ ըստ այլ լեզուաց Քէ, Գէ, ԷՖՖէ, չիք ՚ի մեր բարբառ. այլ փոխանակ նորին վարեմք զասուդ Էք, երբեմն և Լ, ու որպէս և լատինք թէպէտև ունին Բ, բայց զյունական բառս գրեալս ասուիւք Փ, վերածեն ՚ի Ժ, րի հնչելով Ք: Իսկ եբբայեցիք և այլ արևելայք՝ Է զի տարբերեն Ք, և Է զի Ժ: Ի մեզ յեա Ժա, կամ Ժք գարու ՚ի լատինացւոց սոխն կիլիկեցիք՝ զայլոց բառս գրումել Ք նշանա գրով. զոր օրինակ.

- ՓԱՐՍԱՆԳ. ՏԵՍ ՓԵՐՍԵԱՆ, ԼԲՍԵԱՆ:
- ԵՐԺ. ԿԲ:
- ՓԱՐՏ. Տ. ՓԱՐՏ, ԿՈՄԱՏ: ՈՒՒՒՐ:
- ՓԻՉԻԳԱՅ կամ ՓԻՉԻԳԱ. ՓԻՉԻԳԱ. ՓԻՉԻԳԱԿԱՆ. Տ. ՓԻՍԿԵՆ, ԲՆԱԿԵՆ (գի. տուրի):
- ՓԻԼԻՍՈՓՈՍ. ՓԻԼՈՍՈՓՈՍ. Տ. ՓԻԼԻՍՈՓՈՍ. որ և ՓԻԼՈՍՈՓՈՍ. Իմաստասեր. Յեառ երէց Փիլիսոփոս. այսինքն երա. ժիւռ. ՅԻԼՍ. ԳԵՂ. Ի Բ. Ի ԵՒ. ԵՒ:

Դրվագ՝ Հայկազյան լեզվի Լոր բառգրքի էջից:

Նախանուշի համաչափության պատճառով երկու հայելային տարբերակներ ստացած գրանշանի մեկ այլ նմուշ է տալիս հայերեն Ֆ-ն՝ արդեն միջնադարում գոյացած հունական Փ-ի արագագրական ձևից: Հետաքրքիր է, որ հայկազյան լեզվի Լոր բառգրքում հայտնվել են երկու տարբերակները միաժամանակ:

Սակայն, ինչպես տեսնում ենք, Չ-ի եւ Ց-ի համար սպասվող ձևերը որոշ չափով հեռու են այսօրվա կրթողայիններից: Թեեւ՝ այս զույգերի գոյությունը հաստատվում է միջնադարյան պահպանված ձևերով՝ Չ՝ Ք, եւ Ծ՝ ճ, Ծ՝ Ժ եւ Ց՝ Գ²³⁷:

Չ-ի ծագումը Ծ-ից հաստատում է նաեւ վրացական Չան-ի կառուցվածքը 936 թ. չորրորդ տարեթվի արձանագրության²³⁸. Մ, որտեղ այն փաստորեն նույն շրջված Ծ-ն է եւ նույնպես ունի [ջ] արժեքը: Թերեւս Չան անվանումն էլ պահել է ղպտական Չանքա-ի անվան հետքը: Հետագայում այս տառը գրեթե կորցնում է իր նմանությունը հայկական Ծ-ի հետ, եւ շեշտվում է դրա խաչածեղծությունը, ապա մխտորակի գրատեսակում այն գրեթե վերածվում է կեռխաչի, իսկ դրա այբբենական տեղը (ինում, հավանաբար, այբուբենի վերջում), համապատասխանելով հայկական խաչածեղծ ընկալվող Զ-ին, հաստատում է, որ Մաշտոցի օրոք այն նույնպես որպես խաչ էր ընկալվում:

Ցավոք, աղուանական համապատասխան տառն այնքան էլ պարզ չի հաջողվում նույնականացնել նյութի սակավության պատճառով. կրկնագրում դրա երկու հավանական համարժեքները՝ Չայ-ը եւ Չայն-ը, բացակայում են, իսկ ՄՄ 7117-ից դատելով՝ սրանցից ոչ մեկն այբբենական կարգով չի համապատասխանեցվում հայկական Չ-ին: Նկարվածքով Չայն-ը հիշեցնում է ուշ բոլորգիր Զ-ն, եւ, գուցե, իրոք դա նույն տառն է, որը զուգահեռ նույնական զարգացում է ունեցել եւ հայկական այս ուշ ցուցակում հայտնվել է կրթողայինի տեղում: Դա կարող է հիմնավորվել այդ տառի գործածության չափազանց ցածր հաճախականությամբ (ի դեպ, շատ ցածր հաճախականություն ունի նաեւ վրացական Չան-ը), եւ հայկական գրերի ցուցակը կազմողը պարզապես չի գտել կրթողայինի կիրառման դեպք ու տեղադրել է բոլորգիրը: Ի դեպ, եթե այս ենթադրությունը ճիշտ է, ուրեմն աղուանական գրի գործածումը հասել է մինչև փոքրատառերի գոյացման դարաշրջան, եւ նման գրվածքներ, գուցե, նույնպես կգտնվեն:

Եւ հենց այստեղ պետք է հիշել նշանավոր «վերբազոյնն եւ վայնազոյնն, վկարճն եւ վերկայնն, կառանձինն եւ վկրկնաւորն» արտահայտության երրորդ զույգը: Հայտնի է, որ եղել են կարծիքներ, թե «կրկնավորը» երկու մասից բաղկացած [ս] ինչու էր նշանակող ՈՒ գրությունն էր, իսկ «առանձինը»՝ մնացած բոլորը²³⁹: Այդ կարծիքին առարկել է Հր. Աճառյանը՝ նկատելով, մասնավորապես, որ «դժվար թե կորյունը մի միակ ու-ի համար առանձին բաժանմունք ստեղծեր (կրկնաւոր) եւ մնալիս բոլոր տառերն անվաներ առանձին...»²⁴⁰: Նա կարծում է, որ «եթե աչքի առաջ

²³⁷ Հ. Մնացականյան, Հայկական տառատեսակներ, Ե., 1979:
²³⁸ Ո. ՆՉՄԵԼՈՎ, Հայկական լեզուի ճիշտագրություն, Ե., 1973 (Ի. Աբուլաձե, Վրացական գրչության նմուշներ, Թբիլիսի, 1973) էջ XI:
²³⁹ Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականության սկիզբը, Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 33-35:
²⁴⁰ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 122:

բերեիև կրկնել բառի հնագույն հայերեն նշանակությունը, որ է «ծալել, ոլորել»²⁴¹, ապա կհասկանայինք, որ Կորյունը նկատի է ունեցել «կլոր փայտյալներ ունեցող տառերը, ինչպես ժ, Թ, Ծ, Զ եւ այլն», իսկ առանձին բառով՝ Ռ, Ս, Լ, Բ եւ այլն, որոնք «ուղիղ, շիտակ, անջատ ու մենակ կանգնած են»²⁴¹: Սակայն Զր. Աճառյանի առաջարկը համոզիչ չէ, քանի որ եթե «կրկնավորը» հասկանանք «ծալված», ապա Ռ-ն կամ Ս-ն նույնպես «ծալված» են: Պետք է համաձայնվել Լ. Սադոյանի հետ, որը նույնպես չի ընդունել այդ բացատրությունը՝ նշելով միաժամանակ Զր. Աճառյանի միանգամայն ճիշտ նկատած հանգամանքը՝ «կրկնավոր» բառն իր հնագույն իմաստով վերցնելու անհրաժեշտության մասին²⁴²:

Լ. Սադոյանն այն կարծիքն է հայտնում, որ «եթե մի «առանձին» պարզ պատկեր է ոչ թե գիծ «ծալել», դարձնել, շրջել իր որևէ կողի վրա (պահպանելով պատկերտողի բարձրությունը), ապա այն «կլորվի» 180° եւ տեղի կունենա երկու նույնանկար պատկերների «կրկնավորում»²⁴³: Այսպիսով, նա ճիշտ ձեռով նկատում է, որ «կրկնավոր» բառի մեջ պետք է տեսնել «համաչափ, symmetric» իմաստը: Սակայն նկատելով այդ կարեւոր փաստը՝ նա շարժվում է այլ ուղղությամբ: Լ. Սադոյանն այն հեղինակներից է, ովքեր Կորյունի՝ «իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր եւ սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր» արտահայտությունը տառագիրորեն հասկանում են որպես պնդում այն մասին, որ «Մեր տառերի ձեւերը եւս ըստ այսմ՝ Մաշտոցին են»²⁴⁴: Սրանից հետո նա, նկատելով Զայոց տառաձեւերի շարքում համաչափ զույգերի առկայությունը, հեռու տանող եզրակացությունների է հանգում: Մասնավորապես, փորձում է մի շարք տառեր բխեցնել Բ տառաձեւի համաչափ ձեւափոխությունների միակցումից: Այսպես՝ Տ տառի կառուցվածքում (բնականաբար հնագույն՝ ուղիղ միջին տարրով տարբերակում) նա տեսնում է 180° շրջված երկու Բ, իսկ Փ տառի դեպքում՝ ուղղաձիգ առանցքի նկատմամբ շրջված երկու Բ՝ անտեսելով այս տառի շրջանաձեւ տարրից ոչ միայն ներթեւ, այլև վերեւ բարձրացող միջին ուղղաձիգ տարրը, ինչպես նաեւ Փ-ի բացահայտ նույնությունը հունական Փ-ի հետ, սակայն չի մեկնաբանում այդ հարցը:

Առհասարակ Լ. Սադոյանը, լինելով Զայոց տառերի վարպետ վայելչագիր, անսպասելիորեն չափազանց մեծ տեղ է տալիս դրանց մեջ նկատած գծապատկերային օրինաչափություններին՝ երբեմն հաշվի չառնելով այդ տառերի հնագույն որոշ ձեւեր կամ աչքաթող անելով այն հանգամանքը, որ *անհրաժեշտ է պնդական գրանշանների գրոյթները եւ դրանց գեղարվեստական կատարման ձեւերը*: Եւ արդյունքում նա հայտնվում է Ս. Մուրավյովի հետ նույն ծուղակում: Այսպես՝ հայերեն և

²⁴¹ Զ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, էջ 121-123:
²⁴² Լ. Սադոյան, *Զայոց մեսրոպաստեղծ այբուբենը* // ՊԲԶ, Գ² 2, 2005, էջ 58-86:
²⁴³ Նույն տեղում, էջ 72:
²⁴⁴ Նույն տեղում, էջ 59:

եւ Ղ տառերի նկարվածքները նա կրկին դիտում է որպես 180° շրջված ձեւեր՝ անտեսելով այն փաստը, որ հնագույն օրինակներում ունենք Լ-ի՝ աջ ճյուղի զգալիորեն բարձր՝ գրեթե միևնույն տառերի վերին գիծը տարբերակ, որի դեպքում արդեն ոչ մի համաչափություն չի մնում: Իհարկե, դա կարելի է դիտել որպես սկզբնական մտահղացման աղավաղում (հատկապես՝ որ այս տարբերակները շատ ավելի սակավաթիվ են, քայց եւ չեն կարող անտեսվել), սակայն նույն հաջողությամբ կարելի է աղավաղում դիտել եւ ներկայիս ձեւը՝ որպես հիմք դիտելով երկար ճյուղով տարբերակը: Նման օրինակներից են Ծարի Ս. Գրիգոր մատուռի մուտքի բարավորի ստորեւ բերված արձանագրության տառաձեւերը (ԺԳ դար):



Ծարի Ս. Գրիգոր մատուռի մուտքի բարավորը:

ՋԻՆԵՑԻ

Այստեղ հետաքրքիր են ոչ միայն երկար աջ ճյուղով Լ-ն, այլև հայելային Ը-ն²⁴⁵.

3.2.3.4. Դո, Յի

Այս տառերի ծագումն անորոշ է: Սրանց ձեւը, թվում է, բխում է մեկը մյուսից, իսկ որոշ գրելաձեւերում դրանք գրեթե համընկնում են: Մեծատառ Դ-ն զգալիորեն հիլեցնում է լատինական փոքրատառ *h*-ի արագագրական ձեւը: Գայթակղություն է առաջանում ենթադրելու, որ Դ-ն *h*էթ-ի մեկ այլ զարգացման արդյունք է, որը կրկ-

²⁴⁵ Տե՛ս նաեւ *Դիվան հայ վիմագրության*, պր. 5, Արցախ, էջ 223, արձանագր. 794:

նել է լատինական *H* տառի զարգացման ուղին, իսկ *Յ*-ն՝ *Գ*-ից ածանցյալ: Այս կարծիքին էր նաեւ Ն. Տաղավարյանը²⁴⁶: Գր. Աճառյանն այս վարկածը մերժում է, փյունիկյան տառի [խ] հնչման պատճառով: Մինչդեռ բացի լատինականի օրինակից, սրա օգտին է խոսում նաեւ այն, որ հունական հնագույն արձանագրությունում եւս այն ունի [h] արժեքը:

Գ-ի նախօրինակ կարող էր եղած լինել նաեւ դպտական *Յորի*-ն՝ **2**, որը Գր. Աճառյանը կրկին մերժում է. այս անգամ ձեւի պատճառով, թեւեւ հենց ձեւի հետ կարծես թե խնդիր չկա: Ի դեպ, համընկնում է նաեւ անվան ծայնավորը: Նկատենք, որ նմանություն ունի նաեւ դպտական *խայ*-ը՝ **Բ**, ու թեւեւ սա ունի [խ] արժեքը, սակայն որոշ գրվածքներում պատահում են սրան շատ նման ձեւեր: Համենայն դեպս, դպտական ծագման դեպքում սա, ինչպես եւ *Ծ*-ն պիտի նախամաշտոցյան լինի:

Սակայն ճշմարտանման է թվում նաեւ Գր. Աճառյանի կարծիքը, որն այդ տառերը համարում է Մաշտոցի կողմից կատարված իրանական փոխառություն: Ունենք *ԴԷ*-ից ծագած սասանյան նշանը **2**, որը բավական նման է միջնադարյան հայերեն ձեւերին՝ **Գ**: *Յ*-ի դեպքում ենթադրվում է սասանյան **3** կամ պահլավական **4** նշաններից մեկի կրկնագրություն, ինչպես դա արվել է նաեւ Ավեստայի գրում [յ]-ն [ի]-ից տարբերելու համար: Որ *Յ*-ն իրոք բաղկացած է իրար վրա դրված երկու կիսակլորից, եւ որ ներկայիս *Յ* թվանշանը հիշեցնող ձեւը երկրորդական է, երեւում է միջնադարյան մի շարք նմուշներից՝ գրչագրային՝ **3**, եւ արձանագրային՝ **3** որոնք թեւեւ սակավաթիվ են, բայց եւ այնպես կան: Սկզբունքորեն կարող էր փոխառությունը կատարվել գրեթե նույնական էստրանգելո գրանշանից, սակայն քիչ հավանական է, որ մի տառը Մաշտոցը վերցնէր պարսկական գրից, մյուսը՝ ասորական, մանավանդ որ ասորականում *Գ*-ի համար նախօրինակ արդեն չկա:

Այս լուծումը հարուցում է մեկ այլ հարց. թե՞ իրանական եւ թե՞ ասորական գրերը ձախակողմյան են, եւ տրամաբանական կլիներ որպես նախօրինակ տեսնել սրանց հայելային տարբերակները, հատկապես որ երկուսի վերջույթներն ուղղված են դեպի ձախ, եւ հարմար կլիներ շրջել դրանք: Սակայն սա պետք է դիտել որպես բացառություն՝ պայմանավորված նրանով, որ գործ ունենք երկու առանձին տառերի փոխառության հետ, այլ ոչ թե ամբողջական գրային համակարգի բնականոն զարգացման: Բացի այդ՝ կա եթովպական գրի օրինակը, որի դեպքում գրի ուղղությունը փոխվել է (թերեւս՝ կամային միջամտությամբ) առանց գրանշանների ուղղության փոփոխման: Բոլոր դեպքերում (անկախ այն բանից, թե այս տառերը ներմուծել է Մաշտոցը, թե դրանք արդեն գործածվել են նրանից առաջ), դրանց ուղղությունից հետեւում է, որ դրանք ներառվել են Հայոց գրում արդեն իսկ գրի ուղղությունից փոխվելուց հետո:

²⁴⁶ Ն. Տաղավարյան, *Ծագումն հայ տառից*, Վիեննա, 1895, էջ 33:

Եւ դա սպասելի է. ուղղությունը պիտի փոխվեր եզնավարի կարգի միջոցով, հետեւապես դա պիտի կատարված լիներ վաղուց՝ գրային համակարգի բնականոն զարգացման արդյունքում: Այդ կերպ գրի ուղղությունը գրանշանների ուղղությամբ հանդերձ փոխվել էր նաեւ հույների մոտ. երկու ազգերն իրենց գրչությամբ կարծես թե համաքայլ են շարժվել. դրա վկայությունն են թե՛ ավանդական պատմությունները եւ թե՛ գրանշանների գծապատկերային վերլուծության արդյունքները:

Մի քիչ տարօրինակ է, որ *Յ*-ի դեպքում գրանշանի կրկնությունը արվել է ոչ թե մեր *Կ*-ի (կրկնակի *Լ*) օրինակով՝ կողք կողքի, այլ մեկը մյուսի վրա՝ ուղղաձիգ: Գուցե՞ նման գրությունը գոյություն է ունեցել արդեն իրանականում: Կարելի է նաեւ ենթադրել, որ սկզբնապես այդպես էլ եղել է, սակայն հետագայում արագագրության ազդեցության տակ գրանշանը շրջվել է 90°-ով: Ուրեմն նման փոփոխությունների ենթարկվելու համար այս երկգիծը նույնպես պետք է լիներ արդեն իսկ նախամաշտոցյան գրում, քանի որ գրեթե Մաշտոցի ժամանակներից մենք ունենք Հայոց գրերի օրինակներ, որոնցում *Յ*-ն արդեն այսօրվա տեսքն ունի: Վերջապես, մնում է մեկ այլ, ավելի թույլ տարբերակ. այդ շրջումը կամայական կերպով արել է Հռոփանոսը՝ գուցե, ունենալով ինչ-որ նախադրյալ՝ ի դեմս Մաշտոցի տված նմուշի: Կամ որպես գեղագիր՝ զգալով, որ կողք կողքի դրված այդ գրանշանը՝ եռանյուն է երկբացվածք, ներդաշնակ չի լինի մյուսներին, կատարել է այդ փոփոխությունը: Հայոց գրերում գրեթե չկան երկբացվածք տառեր. այդպիսիք կարող են համարվել միայն *Թ*-ն, *Խ*-ն, *Պ*-ն եւ *Փ*-ն: Սակայն առաջիններն ավելի ճիշտ կլիներ մեկուկես բացվածքով համարել, իսկ *Փ*-ի կլորակը ավանդաբար փոքր էր արվում, մինչդեռ *Յ*-ի դեպքում կատարվելու լիարժեք երկբացվածք տառ (մոտավորապես շրջված *Պ*-ի նման, բայց հավասար ճյուղերով): Այս տառի վայելչագրական կողմը քննում է նաեւ Գր. Աճառյանը, սակայն նրա բացատրությունը, թե Մաշտոցը կրկնել է պահլավական տառը, այն խոշորացնելու համար, անհամոզիչ է. կրկնելու պատճառ կարող էր լինել միայն գործառնության խնդիրը, տվյալ դեպքում հնչյունաբանականը:

3.2.4. Վեց այբուբենների համեմատական աղյուսակ

Ի մի բերելու համար նախորդ վերլուծությունը եւս մեկ անգամ անդրադառնանք մեզ համար առավել հետաքրքրություն ներկայացնող *փյունիկյան*, *հունական*, *հայկական*, *վրացական*, *աղուանական* եւ *եթովպական* գրերի ծագումնաբանական կապերին: Ստորեւ դրանք զուգահեռ ներկայացված են աղյուսակում: Գրանշանները՝ դրված ըստ փյունիկյանի կարգի՝ որպես մնացած հինգի նախօրինակի: Եթովպական գրանշաններից բերված են միայն պարզ ձեւերը՝ փյունիկյան գրանշաններին համապատասխանողները՝ առանց հնչյունավորման նշանների: Քանի որ եթովպական այբուբենի հաջորդականությունը սկզբունքորեն տարբերվում է առաջին հինգի հաջորդականությունից, դրա գրանշանների կարգը խախտված է:

Օրյունիցան		Գունարան		Հայրագան		Վրացական		Արգենտական		Հարավսեանական	
Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ
Համար		Համար		Համար		Համար		Համար		Համար	
1. Այնժ	Կ	1. Այնժ	ԱԱ	1. Այնժ	ԱԱ	1. Այնժ	ԱԱ	1. Այնժ	ԱԱ	1. Այնժ	ԱԱ
2. Ընթ	Գ	2. Ընթ	ԲԲ	2. Ընթ	ԲԲ	2. Ընթ	ԲԲ	2. Ընթ	ԲԲ	2. Ընթ	ԲԲ
3. Ղեմել	Ղ	3. Ղեմել	ԳԳ	3. Ղեմել	ԳԳ	3. Ղեմել	ԳԳ	3. Ղեմել	ԳԳ	3. Ղեմել	ԳԳ
4. Դաշտ	Ճ	4. Դաշտ	ԴԴ	4. Դաշտ	ԴԴ	4. Դաշտ	ԴԴ	4. Դաշտ	ԴԴ	4. Դաշտ	ԴԴ
5. Դե	Յ	5. Դե	ԵԵ	5. Դե	ԵԵ	5. Դե	ԵԵ	5. Դե	ԵԵ	5. Դե	ԵԵ
6. Դա	Կ	6. Դա	ԿԿ	6. Դա	ԿԿ	6. Դա	ԿԿ	6. Դա	ԿԿ	6. Դա	ԿԿ
7. Զայն	Ի	7. Զայն	ԻԻ	7. Զայն	ԻԻ	7. Զայն	ԻԻ	7. Զայն	ԻԻ	7. Զայն	ԻԻ
8. Խնթ	Է	8. Խնթ	ԷԷ	8. Խնթ	ԷԷ	8. Խնթ	ԷԷ	8. Խնթ	ԷԷ	8. Խնթ	ԷԷ
9. Թնտ	Թ	9. Թնտ	ԹԹ	9. Թնտ	ԹԹ	9. Թնտ	ԹԹ	9. Թնտ	ԹԹ	9. Թնտ	ԹԹ
10. Զոյ	Չ	10. Զոյ	ՉԻ	10. Զոյ	ՉԻ	10. Զոյ	ՉԻ	10. Զոյ	ՉԻ	10. Զոյ	ՉԻ
11. Թափ	Կ	11. Թափ	ԿԿ	11. Թափ	ԿԿ	11. Թափ	ԿԿ	11. Թափ	ԿԿ	11. Թափ	ԿԿ
12. Լամել	Ը	12. Լամել	ԸԸ	12. Լամել	ԸԸ	12. Լամել	ԸԸ	12. Լամել	ԸԸ	12. Լամել	ԸԸ
13. Մեմ	Կ	13. Մեմ	ԿԿ	13. Մեմ	ԿԿ	13. Մեմ	ԿԿ	13. Մեմ	ԿԿ	13. Մեմ	ԿԿ
14. Լուկ	Կ	14. Լուկ	ԿԿ	14. Լուկ	ԿԿ	14. Լուկ	ԿԿ	14. Լուկ	ԿԿ	14. Լուկ	ԿԿ
15. Աստել	Ք	15. Աստել	ՔՔ	15. Աստել	ՔՔ	15. Աստել	ՔՔ	15. Աստել	ՔՔ	15. Աստել	ՔՔ

Օրյունիցան		Գունարան		Հայրագան		Վրացական		Արգենտական		Հարավսեանական	
Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ	Մեջ	Չեջ
Համար		Համար		Համար		Համար		Համար		Համար	
16. Օմիկրոն	Օ	16. Օմիկրոն	ՕՕ	16. Օմիկրոն	ՕՕ	16. Օմիկրոն	ՕՕ	16. Օմիկրոն	ՕՕ	16. Օմիկրոն	ՕՕ
17. Քե	Ք	17. Քե	ՔՔ	17. Քե	ՔՔ	17. Քե	ՔՔ	17. Քե	ՔՔ	17. Քե	ՔՔ
18. Ասն	Մ	18. Ասն	ՄՄ	18. Ասն	ՄՄ	18. Ասն	ՄՄ	18. Ասն	ՄՄ	18. Ասն	ՄՄ
19. Կոպպա	Փ	19. Կոպպա	ՓՓ	19. Կոպպա	ՓՓ	19. Կոպպա	ՓՓ	19. Կոպպա	ՓՓ	19. Կոպպա	ՓՓ
20. Ռո	ՔՔ	20. Ռո	ՔՔ	20. Ռո	ՔՔ	20. Ռո	ՔՔ	20. Ռո	ՔՔ	20. Ռո	ՔՔ
21. Սիգմա	Տ	21. Սիգմա	ՏՏ	21. Սիգմա	ՏՏ	21. Սիգմա	ՏՏ	21. Սիգմա	ՏՏ	21. Սիգմա	ՏՏ
22. Տա	Թ	22. Տա	ԹԹ	22. Տա	ԹԹ	22. Տա	ԹԹ	22. Տա	ԹԹ	22. Տա	ԹԹ
23. Էթա	Վ	23. Էթա	ՎՎ	23. Էթա	ՎՎ	23. Էթա	ՎՎ	23. Էթա	ՎՎ	23. Էթա	ՎՎ
24. Ֆի	Փ	24. Ֆի	ՓՓ	24. Ֆի	ՓՓ	24. Ֆի	ՓՓ	24. Ֆի	ՓՓ	24. Ֆի	ՓՓ
25. Խի	Ք	25. Խի	ՔՔ	25. Խի	ՔՔ	25. Խի	ՔՔ	25. Խի	ՔՔ	25. Խի	ՔՔ
26. Փսի	ՎՓ	26. Փսի	ՎՓ	26. Փսի	ՎՓ	26. Փսի	ՎՓ	26. Փսի	ՎՓ	26. Փսի	ՎՓ
27. Օմեգա	Օ	27. Օմեգա	ՕՕ	27. Օմեգա	ՕՕ	27. Օմեգա	ՕՕ	27. Օմեգա	ՕՕ	27. Օմեգա	ՕՕ

Ի հայկական գրանշանների անունների հայերեն տառադարձումները մոտավոր են:

Քանի որ հնչյունավորման այս եղանակը եթովպական գրում ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ եթովպական Ադույիս նավահանգիստը կարետոր դեր էր ստանձնել հռոմեա-հնդկական առևտրական ուղու վրա, ենթադրվում է, որ այն փոխառվել է հենց հնդկական գրային համակարգերից, որոնք, ինչպես նշվեց, հետետում են նույն սկզբունքին: Թեև՝ այս տեսակետը միակը չէ:

Այբբենական կարգը տարբերվում է հյուսիսսեմականից: Գրելու ուղղությունն է ձախից աջ. սա դիտվում է որպես հունական ազդեցության արդյունք, թեև հնագույն արձանագրություններում ուղղությունը աջից ձախ է՝ գրանշանների նույն ուղղվածությամբ:

Սովորաբար, ծագումը դեռևս համարվում է ոչ լիովին պարզաբանված: Դե-տագոտողների մեծ մասն առավել հավանական է համարում, որ երկու համակարգերն էլ ծագում են մեզ չհասած հյուսիսսեմական մի համակարգից, որի գոյության մասին են հուշում ուզարիթյան եւ փյունիկյան հնագույն համակարգերը: Կա նաեւ կարծիք, որ հարավսեմական գիրը հյուսիսսեմականի զարգացման հետագա աստիճանն է: Իսկ վերետում տեսանք, որ եթովպական գրանշանների զգալի մասը, իրոք, բխում է փյունիկյան գրից:

Ինչպես տեսնում ենք, եթովպական գրանշաններից մի քանիսը ձեւերով համընկնում են հայկական տառերին: Այս փաստը նկատի ունենալով՝ որոշ հետազոտողներ (Գ. Սեւակ²⁴⁷, Գ. Պրոխորով²⁴⁸, Ա. Բեքերի²⁴⁹) փորձել են դա բացատրել ծագումնաբանական կապով եւ Հայոց գրանշանները բխեցնել եթովպականներից: Դա ինչ-որ չափով հնարավոր է գտել նաեւ Ն. Մառը²⁵⁰:

Իրոք, եթովպական գրանշաններով կարելի է նույնիսկ ամբողջական հայերեն բառեր շարել: Ահա Գ. Սեւակի օրինակները.

ԼՈՐ ՓՈՒ ԶՈՐԴ ԴՂՈՐԴ ՄՈՒ ԶՈԼ ԶՅ-
ՂՈՐԴ ԿՕՂԾՊՅՐ ՊՅՐՓԾ, Կ ՍԵԼՈՐ ԲՈՂ
ԿԼՈՐ ՓՈՐ ՓՈՔՐ ՓՈՐՓՐՈՂ ԶՈԼ ՌՈՄ

Նկատելի է, որ տառաձեւերն այս օրինակներում զգալիորեն ոճափոխված են՝ ժամանակակից հայ տառաստեղծական սկզբունքների համաձայն: Ավանդական եթովպական տառաձեւերով դրանք կունենային մոտավորապես այսպիսի տեսք՝ **ՍԿԼՈՐ ԿՎԶԿՊԿՐ ՓՈՔԵՐ**, այսինքն՝ այնքան էլ նման չէին լինի Հայոց տառերին: Բայց եւ այնպես սա, ինչ խոսք, տպավորիչ է: Սակայն՝ միայն առաջին հայացքից:

²⁴⁷ Գ. Սեւակ, նշվ. աշխ.:

²⁴⁸ Г. Прохоров, *Глаголица среди миссионерских азбук* // Труды Отдела древнерусской литературы. СПб., 1992. Т. XLV, с. 178-199.

²⁴⁹ Ayele Bekerie, *Historical Overview of Ethiopic Writing System's Possible Influence on the Development of the Armenian Alphabet* // International Journal of Ethiopian Studies, Vol. 1, № 1 (Summer/Fall 2003), p. 33-58.

²⁵⁰ Н. Марр, *Древнеармянский алфавит и сирийское письмо* // ИФЖ, 2005, №2, с. 37.

Բանն այն է, որ Հայոց տառերին նման գրանշաններ կարելի է գտնել նաեւ գրային այլ համակարգերում, օրինակ՝ հնդկական բրահմի համակարգում, լատինական գրում եւ այլն: Մյուս կողմից, նույն եթովպական գրանշանների շարքում կարելի է նկատել ոչ միայն հայկական, այլեւ լատինական *T, P, O, H, X*, հունական *A, Λ, Φ, Ψ* եւ այլ տառեր: Ահա եթովպական գրանշաններով գրված մի քանի բառեր. հունարեն՝ **ΑΛΦΑ, ΨΑΛΜΑ**, ռուսերեն՝ **НАРОЦЪ**, անգլերեն՝ **HYPERTEXT, WARE**: Մի՞թե դա կարող է նշանակել, որ այս լեզուների գիրը նույնպես ծագել է եթովպական գրից:


Նման «բառեր» կազմելը կարող է հաջողվել միայն, եթե խախտվում է գրանշանների համեմատության «նույնարժեքության» սկզբունքը, որի մասին խոսվեց Դր. Աճառյանին նվիրված բաժնում, եւ համաձայն որի՝ **գրային համակարգերը համեմատելիս պետք է դատել ոչ միայն ըստ արտաքին նմանության, այլեւ ըստ հնչյունային արժեքի**²⁵¹: Այս սկզբունքը ենթադրում է, որ եթե երկու գրային համակարգերն ունեն ծագումնաբանական կապ, ապա այն կարող էր գոյանալ միայն փոխառության ճանապարհով, երբ փոխառվելիք գրի նշաններով գրանցվում էին մեկ այլ լեզվի հնչյուններ: Իսկ այդ դեպքում գրանշանները չեն կարող կամայականորեն գործածվել:

Կարո՞ղ էր Մաշտոցը վերցնել *դակիեյան* գրերի տեսքով իրեն հասած եթովպական որեւէ գրվածք եւ դրանից կամայական սկզբունքով ընտրված գրանշաններին տալ իր ուզած կամայական հնչյունային արժեքը: Տեսականորեն, այո՛, կարող էր: Շատ ավելի ուշ՝ ԺԹ դարասկզբում նման բան արեց հյուսիսամերիկյան հնդկացիական *չիրոկի* ցեղի առաջնորդ Սիբվայան, որն իր ցեղի համար ստեղծեց վանկագիր այբուբեն՝ օգտագործելով լատինական եւ այլ գրանշաններ՝ պատահական սկզբունքով վերցված: Օրինակ՝ նրա ստեղծած այբուբենում *A*-ն նշանակում է *go*, *D*-ն նշանակում է *σ*, *W*-ն՝ *ja*, *T*-ն՝ *i* եւ այլն: Սակայն նման կերպ վարվելու պատճառը չափազանց պարզ էր. Սիբվայան նախապես գրագետ չէր եւ նույնիսկ առաքելավորներից (միսիոներներից) նվեր ստացած իր անգլերեն այբբենարանը կարողալ չգիտեր: Մինչդեռ մի քանի լեզվի տիրապետող Մաշտոցի համար նման գործելակերպը տարօրինակ կլիներ:

Եւ եթե նույնիսկ հնչյունային գրային համակարգերի ստեղծման տրամաբանությանը հակառակ՝ Մաշտոցն իրոք Հայոց գիրը ստեղծեւ պատահական գրանշաններ հորինելով կամ պատահականորեն ընտրելով որեւէ նախօրինակից, որը գործնականում նույնն է, ապա նա կարող էր ընտրել դրանք ոչ միայն եթովպական, այլեւ, օրինակ, հնդկական քարոշթիի գրանշանների շարքից (մի բան, որ, ինչպես տեսանք, հնարավոր է գտնում Ա. Մուշեղյանը), կամ հնդկական բրահմիի

²⁵¹ «...պետք չէ այլանիշ տառերը համեմատել նմանաձեւ տառերի հետ եւ նրանց մեջ ծագման նույնություն ենթադրել» (տե՛ս Դ. Աճառյան, *Հայոց գրերը*, էջ 517):


գրանշանների թվից (եթե դրանք հասնեին իրեն «դանիեյան» գրերի տեսքով): Ստորեւ բերված է այդ գրով գրված Աշուկա արքայի հայտնի արձանագրությունից մի հատված:




Բրահմի գրում տեսնում ենք Ծ, Ի, Փ, Դ, Տ, Ն, Մ, Ծ, Ե տառերը հիշեցնող գրանշաններ, իսկ եթե սրան ավելացնենք Նաեւ գրանշանները պտտելու եւ շրջելու հնարավորությունը, որը չի բացառում Գ. Սեւակը, ապա կարող ենք տեսնել Նաեւ Յ, Ը, Ը, Ա, Պ, Զ եւ այլ տառեր: Այսպես, կիրառելով Գ. Սեւակի մոտեցումը, բրահմի գրի նշաններով նույնպես կարելի է գրել հայերեն տարբեր բառեր.

ՃՎՅԳ ՃԻԱՅՆ ԴԵՐՎՍՎՆ

Մաշտոցը կարող էր օգտվել Նաեւ եբրայական գրից, որը, ի տարբերություն հնդկական կամ եթովպական մշակութային տարածքների, անմիջականորեն մեր կողքին էր: Ստորեւ բերված են եբրայական բառակուսի գրով *Կոֆ, Յեհ, Լամնո, Զաֆ, Այն, Ռեշ* տառերը: Առաջին հայացքից դրանք ոչ մի կապ չունեն Գայոց տառածեղծի հետ.



Սակայն բավական է դրանք պտտել ու դիտել հայելային տեսքով եւ կայարգվի, որ դրանք բավականին նման են Գայոց Ե, Ը, Ն, Մ, Յ, Լ տառերին:



Ավելորդ է ասել, որ եթե սրանք էլ իրենց հերթին շրջենք, մենք հավելյալ կունենանք Նաեւ Բ, Դ, Ռ տառերը: Այսպիսով՝ ունենք մաշտոցյան տառերի Նախօրինակի եւս մի թեկնածու: Կարծում ենք, թեկնածուների այս բազմությունն արդեն իսկ խոսուն փաստարկ է մեր այն պնդման, որ գրանշանների ձեւերը վերլուծելիս եւ համեմատելիս չի կարելի առաջնորդվել միայն դրանց արտաքին նմանությամբ:

Ինչ վերաբերում է նմանության պատճառներին, ապա դրանք մի քանիսն են: Նախ՝ գրային համակարգերը հաճախ բաղկացած են երկրաչափական պարզագույն ձեւերից, իսկ դրանք պատահականորեն կարող են համընկնել: Մյուս կողմից

Ե՛ւ հայկական, ե՛ւ հատկապես եթովպական գրանշաններն ունեն հորիզոնական գծիկներ՝ կցված պարզ հիմքին: Սակայն Գայոց տառերի դեպքում դրանք գրույթի բաղկացուցիչ տարրեր են (որոնց ծագումը, ինչպես տեսանք, յուրաքանչյուր դեպքում ունի իր բացատրությունը), միևնույն եթովպական գրի դեպքում դրանք ձայնավորի ցուցիչներ են (ըստ եուզյան տարբերիչ նշաններ), քանի որ եթովպական գիրը *արուզիդա* է: Այսպես՝ գրանշանի միջին մասում աջից կցված գծիկը նշանակում է, որ գրանշանի հիմք-բաղաձայնը պետք է ընթերցել *ս*-ով, իսկ եթե գծիկը ներքետում է՝ *ի*-ով: Օրինակ՝ *Ռ* տառը հիշեցնող գրանշանը նշանակում է *bu*, որտեղ *ս* հնչյունին համապատասխանում է *Ռ*-ի հորիզոնական մասնիկը, իսկ *Ռ* տառը հիշեցնող հիմքը համապատասխանում է *b*-ին:

Սակայն Գ. Սեւակը, իմանալով սա, շարունակում է պնդել իր տեսակետը՝ գտնելով, որ հայկական այբուբենի «նույն խմբի տառերի» դեպքում առանձին մասնիկների տեղափոխությամբ ստացվում են նոր տառեր. օրինակ՝ Գ. Սեւակի համար *Ը*-ն, *Բ*-ն եւ *Ը*-ն նույն նշանն է՝ հորիզոնական գծի տարբեր դիրքով, միևնույն եթովպական գրում տարբերիչ մասնիկի դիրքի փոփոխումը բերում է հիմքային գրանշանի *հնչյունային արժեքի կանոնավոր փոփոխմանը*: Այսինքն՝ գրանշանի ձեւավորչական կառուցվածքից Գ. Սեւակը բխեցնում է տառի ծագումը: Այդ նույն տրամաբանությամբ լատինական *F* եւ *E* կամ ռուսական *Ռ* եւ *Н* տառերը եւս «նույն խմբից» են, սակայն դրանք բոլորովին տարբեր ծագում ունեն. սա հայտնի փաստ է եւ կասկած չի հարուցում: Ի դեպ, ինչպես տեսանք, Ս. Մուրավյովը նույնպես փորձել էր նման դիտարկումներում օրինաչափություն գտնել: Գայոց այբուբենը լատինականից եւ հունականից ավելի շատ գրանշաններ ունի, այդ իսկ պատճառով հայկական համակարգում գծապատկերային նման խմբերն ավելի շատ են նկատվում:

Վերջապես, նմանության հարցում մեծագույն ազդեցություն է թողնում այն ժամանակվա գրչարհեստի ընդհանուր հնարքների կիրառումը, հատկապես՝ այն-նաձայր գրչով իրագործվող հորիզոնական մասնիկների ծայրերի հաստացումները՝ *գծափակոցները* (անզլ. serif):

3.2.4.2. Գայոց եւ հունաց գրերի հարաբերությունը

Ներկայումս առավելապես տարածված է այն վարկածը, որ հույները փոխառել են իրենց գիրը հյուսիսսեմական ցեղերից եւ կատարելագործել են այն՝ ավելացնելով ձայնավորների համար հատուկ գրանշաններ եւ օգտագործելով դրա համար սեմական այն տառերը, որոնց համապատասխան հնչյունները հունարենում բացակայում են: Դրանք են *Ալէֆ*-ը՝ [ա]-ի, *Յոդ*-ը՝ [ի]-ի, *Իււ*-ը՝ [ու]-ի, *Յե*-ն՝ [ե]-ի եւ *Այն*-ը՝ [ո]-ի համար: Սակայն, եթե պարզվում է, որ Գայոց գրանշանները նույնպես անմիջականորեն դուրս են բերվում այդ նույն հյուսիսսեմական գրից, հարց է առաջանում ինչպես է ստացվել, որ ե՛ւ հայերենում, ե՛ւ հունարենում ձայնավորները ծագում են սեմական *միեւնույն* տառերից: Պատահականությունն այստեղ բացառվում է, քանի

որ խոսքը ոչ թե մեկ, այլ բոլոր ձայնավորներին է վերաբերում: Թերեա, կարելի է ասել, որ Յող-ը, Խաւ-ը եւ մասամբ Ալէֆ-ը արդեն իսկ սեմական լեզուներում կիրառվել են որպէս *matres lectionis*՝ երկար [ի]-ի, [ու]-ի եւ [ա]-ի համար: Սակայն նախ՝ դա չի արվել հետետողականորեն ու երբեմն, օրինակ, [ա]-ի համար կիրառվել է ոչ միայն Ալէֆ-ը, այլեւ Դէ-ն, իսկ Խաւ-ը գործածվել է ոչ միայն [ու]-ի, այլեւ [ե]-ի համար, իսկ մյուս կողմից, միեւնոյնն է, մնում են Այն-ի գործածումը [օ]-ի, ու, թերեա, նաեւ *խթ*-ի գործածումը [է]-ի համար:

Ստացվում է, որ այբուբեններից որեւէ մեկում նախ դրանք պետք է անրապակցվելն էւ նոր հետո փոխառվելին: Թվում է, թե առավել հավանական է, որ փոխառյալ լինի հայկականը: Եւ բնականաբար դա պիտի կատարված լիներ հնագույն շրջանում, քանի որ ավելի ուշ շրջանի հունական գրանշաններից ոչ բոլոր տառերն են դուրս բերվում: Սակայն այդ դեպքում չի բացատրվում *Կոֆ* եւ *Ծաղէ* (Բ եւ Յ) տառերի՝ Հայոց այբուբենում հայտնվելը: Եիչտ է, դրանք դեռ պահպանվում են հնագույն հունական այբուբեններում, սակայն քանի որ հունարենում բացակայում են համապատասխան հնչյունները, դրանք չէին կարող փոխառվել հույներից իրենց արժեքով հանդերձ: Դրանից բացի՝ Հայոց տառանուններն ավելի մոտ են սեմականներին, քան հունականներին:

Պետք է ասել, որ ըստ Մ. Դյունանի՝ հունական անվանումները կարող են ավելի հին լինել եւ ածանցյալ հնագույն փյունիկերենից: Դրանով կարող էր բացատրվել, որ, օրինակ, ունենք հունական *Գամմա*, որը կարող էր ծագել *Գամալ*-ից («ուղտ»), եւ *Ռո՝ Ռոշ*-ից («գլուխ»), իսկ հետագայում արամեերենի ազդեցության տակ սեմական անունները կարող էին փոխվել՝ դառնալով *Գիմել*, *Ռեշ* եւ այլն: Սակայն հայկականի եւ հունականի հարաբերություններն այդ փաստն առանձնապէս չի փոխում, քանի որ արամեականի ազդեցության տակ կարող էին փոխվել նաեւ հայկական անունները, մինչդեռ հունականները կարող էին ավելի հավատարիմ մնալ ավանդույթին: Որպէս դրա հետեւանք՝ կարելի է տեսնել ոչ միայն Հայոց տառանունների հնչյունափոխությունը, այլեւ կրճատումը:

Այս հակասությունները կարող են հաղթահարվել, եթե ընդունենք, որ փյունիկյան գրից անմիջականորեն փոխառվածը հնագույն հայերենն է, եւ հենց *հայերենում է առաջին անգամ կատարելության հասցվել այբուբենի զաղափարը՝ ձայնավորների հավելման շնորհիվ*, իսկ հունական գիրն ածանցյալ է հայերենից: Սրանով կարող է բացատրվել նաեւ այն փաստը, որ չի վկայված հունական գրի զարգացման մի այնպիսի փուլ, որ ձայնավորների համար նշաններ գործածված չլինեին²⁵²: Այդպէս կարող էր լինել այն դեպքում, եթե դրանք հասնեին հույներին պատրաստի վիճակում:

Ձայնավորների խնդրին ավելանում է վերելում նշված Փէ, Թաւ, Բաֆ գրանշանների խնդիրը: Սրանք նշանակում են շնչեղ խուլ [փ], [թ], [բ] հնչյունները,

²⁵² И. Фридрих, *История письма*, с. 128.

սակայն հայկականում հայտնվել են ոչ շնչեղ խուլ [պ], [տ], [կ] հնչյունների դիմաց: Գր. Աճառյանն այս փաստն օգտագործում է՝ հիմնավորելու համար Հայոց տառերը հունական համապատասխան գրանշաններից ստեղծված լինելու մասին իր դրույթը, քանի որ նույնը տեսնում ենք նաեւ հունարենում²⁵³. «...ի՞նչ բան ի նկատի պիտի առնենք [Մտերոպը] գրերի հնչո՞ւմը, թե՛ նրանց հին ծագումը: Տարակույս չկա, որ միայն հնչման հետ գործ ունենա, որովհետեւ հնագրագետ չէր՝ տառերի հին վիճակը որոնելու եւ իր գրերը նրանց վրա կաղապարելու համար»²⁵⁴: Լիովին համամիտ լինելով, որ Մաշտոցն, իրոք, հնագրագետ չէր, նշենք, որ դա անհրաժեշտ էլ չէր, քանի որ Հայոց տառերի ձեւերի գոյացումը, շարադրված վարկածի համաձայն, կատարվել է օրինաչափորեն, ուստի եւ խնդիրը տեղափոխվում է այլ հարթություն. այդ ինչպե՞ս է, որ ե՛ւ հունարենում, ե՛ւ հայերենում տեսնում ենք նույն երեւույթը: Ինչ վերաբերում է հունականին, ապա Թ. Գամկրելիձեն դա բացատրում է հունական այբուբենի հեղինակի նրբագույն բնագրով, որը նույնացրել է գրանշանները ոչ թե ըստ հնչման, այլ ըստ համապատասխան լեզուներում դրանց կարեւորության: Թեեւ՝ պարզ չէ, թե ինչ պիտի շահեր հունական այբուբենի հեղինակը նման փոխատեղման արդյունքում, եւ որն էր առհասարակ այդ կարեւորության չափանիշը:

Սակայն եթե ընդունում ենք հունական գրի՝ հայկականից փոխառված լինելու ենթադրույթը, ապա դա հնարավորություն է տալիս այս երեւույթի մեջ տեսնել հնագույն հայերենի բարբառային տարբերությունների ազդեցությունը: Իհարկե, մեզ այսօր ոչինչ հայտնի չէ այն ժամանակներում հայերենի բարբառների մասին հնչյունաբանական վերականգնումներ կատարելու համար, սակայն շնորհիվ Դիոնիսիոս Թրակացու Անանուն մեկնողի²⁵⁵ ժամանակագրորեն գոնե որոշ չափով մոտ շրջանի համար մեզ հայտնի են բարբառային այդ կարգի երեւույթներ: Եթե, օրինակ, փյունիկյան գիրը փոխառվեր Հայոց մի բարբառում, որում *բապուկ* բառը հնչում էր [խազուկ], ապա դրա առաջին տառը բնականորեն կներկայացվեր փյունիկյան Փէ-ով, որը շնչեղ խուլ էր: Սակայն եթե հարեան բարբառում դրան համապատասխաններ [պազուկ] ձեւը, ապա նախորդ բարբառում ձեւավորված ուղղագրության պահպանման դեպքում նույն փյունիկյան Փէ-ն արդեն համապատասխանության մեջ կմտներ [պ]-ի՝ ոչ շնչեղ խուլի հետ, եւ եթե հույները փոխառեին գիրն այս վերջին բարբառը կրողներից, ապա իրենց մոտ փյունիկյան Փէ-ն (այսինքն՝ արդեն հուն. *Ռ-ն*) կստանար նույն՝ ոչ շնչեղ խուլ [պ]-ի արժեք. ինչը եւ առկա է:

Հատկանշական է, որ գիրը հայերից փոխառելու մասին հիշողությունը պահպանվել է երկու ազգերի գրականության մեջ, եւ դա կարելի է դիտել որպէս այս

²⁵³ Т. Гамкрелидзе, *Алфавитное письмо и древнегрузинская письменность*, Тбилиси, 1989.
²⁵⁴ Գ. Աճառյան, *Հայոց գրերը*, էջ 529:
²⁵⁵ Ար. Դարիբյան, *Ժողովրդական լեզվի մի հնագույն վկայության մասին*, // ՍՍՍՄ ԳԱ հայկական ֆիլիալ, Տեղեկագիր, Գ⁴ 4-5, Երեւան, 1940, էջ 81:

վարկածի եւս մեկ լրացուցիչ եւ անկախ փաստարկ: Այսպէս, հունական առասպելի համաձայն՝ հույներն իրենց գիրը ստացել են փյունիկեցի Կադմոս թագավորից: Սովորաբար սա դիտվում է որպէս փաստարկ՝ հօգուտ հունական գրի փյունիկյան ծագման. Կադմոս բառը փյունիկերենում նշանակում է «արեւելյան»: Հավանաբար, դրանում պահպանվել է հիշողությունն այն մասին, թէ որ կողմից է այբուբենը հասել Յելլադա: Սակայն Կադմոս անունով հերոս կա նաեւ հայկական ավանդության մեջ. ըստ Խորենացու՝ նա Հայկ նահապետի թոռն է: Հայոց երկիրը հույների նկատմամբ նույնպէս արեւելքում է, եւ նույնիսկ ավելի մեծ ճշտությամբ, քան Փյունիկեն, որը Հունաստանի համեմատ ավելի շուտ հարավային երկիր պիտի ընկալվեր: Միայն սա կարող էր պատահականություն դիտվել, սակայն Խորենացին, պատմելով Արամ նահապետի մասին, գրում է, որ նա, արշավելով դեպի արեւմուտք, այսինքն՝ հույների ուղղությամբ, երկար ժամանակ մնացել է այդ կողմերում (Փոքր Ասիայում) եւ հրամայել է այդ երկրների ժողովուրդներին սովորել հայերեն. «...հրաման տայ ընկալչաց աշխարհին՝ ուսանել զիսօսս եւ զլեզուս հայկական...»²⁵⁶:

Ի դեպ, նկատենք այս հաղորդման կարեւորությունը մեկ այլ տեսակետից եւս: Բանն այն է, որ եթէ գիրն անցել է հույներին հայերից, ուրեմն հայերին այն անցել է պետական մակարդակով եւ ինչ-որ ժամանակ գործածվել է որպէս պաշտոնական եւ կարգավորվել է որոշակի գրչական դպրոցի կողմից, այլապէս հունական տառածուներն այդքան հարագատ չէին մնա փյունիկյան նախածեւին: Խորենացու այս հաղորդումը հաստատում է նման դպրոցի գոյությունը հնագույն անցյալում:

Նշենք նաեւ, որ իսկական այբուբենի ստեղծման առաջնությունը հույներից վերցնելու առաջարկը նոր չէ: Որոշ հետազոտողներ (նախ եւ առաջ՝ Ֆ. Միլները²⁵⁷) գտնում են, որ այբուբենը հույներին է հասել ոչ թէ ծովով, այլ Փոքր Ասիայի ժողովուրդների՝ լիկիացիների, լյուդիացիների տարածքով, եւ նրանց գրերը ոչ թէ հունականից են ածանցյալ, այլ նախորդում են դրան: Նման կարծիք է հայտնել նաեւ Ի. Դյակոնովը²⁵⁸: Բայց այս տեսությունը համարվել է չապացուցված՝ տվյալների անբավարարության պատճառով: Կարծում ենք՝ վերոբերյալ վերլուծությունը կարելի է դիտել որպէս այդ վարկածի իրավացիության լրացուցիչ փաստարկ:

3.2.4.3. Հայոց, վրաց եւ աղուանից գրերի կապը

Հայոց, վրաց եւ աղուանական այբուբենների՝ փյունիկյանից ծագած միջուկների գծապատկերային վերլուծությունից պարզվում է գրանշանների նախօրինակների ստորեւ աղյուսակում բերված պատկերը (Փ - փյունիկյան, Հ - հնագույն հունական) Այն, անշուշտ, մոտավոր է, քանի որ երբեմն տվյալ գրանշանը կարող է բխեցվել երկու

²⁵⁶ Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն*, Ա, Ժդ // Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 1790:
²⁵⁷ F. Miltner, *Die entwicklungsgeschichtliche Stellung der kleinasiatischen Alphabete*, «Forschungen und Fortschritte», Bd. 14, 1938, S. 407; И. Фридрих, *История письма*, М., 1979, с. 130:
²⁵⁸ И. Дьяконов, *Комментарий // И. Гельб, Опыт изучения письма*, М., 1982, с. 305.

կամ ավելի նախօրինակներից: Թէ իրականում որ տարբերակն է իրագործվել, գուցե՝ հնարավոր է որոշ չափով ճշտել՝ միայն լրացուցիչ պատմական, աշխարհագրական եւ այլ գործոնները հաշվի առնելով, թեւս առանց հնագրական նյութի հազիվ թէ երբեւէ դա հնարավոր լինի անել բավարար հուսալիությամբ: Պետք է հիշել նաեւ, որ գծապատկերների վրա ներկայացված են ոչ թէ գրային համակարգերը, այլ գրչական հարաբերությունները, եւ պնդել, թէ տվյալ գրային համակարգը որից է առաջացել, հնարավոր է միայն մասամբ՝ նկատի ունենալով գործոնների ամբողջությունը:

Գրանշանը	Հայ	Վրաց		Աղուան
		Ասումթ.	Մխտեր.	
Ալեֆ	Փ, Հ	Հայ	Հայ	Հայ
Բեթ	Փ, Հ*	Հ	Ասումթ.	Հ
Գիմել	Փ, Հ	Հայ	Հայ	Փ
Դալեթ	Փ, Հ	Փ	Փ	Փ
Կե	Փ, Հ	Աղվ.	Ասումթ.	Փ
Էալ	Փ, Հ	Փ, Հ	Ասումթ.	Փ, Հ
Չայն	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ
Խեթ	Փ, Հ	Հ	Փ	Փ, Հ
Յետ	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ
Յող	Փ	Հ	Հ	Հ
Քաֆ	Փ, Հ	Հայ	Հայ	Հայ
Լամեդ	Փ	Փ	Ասումթ.	Փ
Մեմ	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ
Նուն	Փ, Հ	Հ, Հայ	Հ, Հայ	Հ, Հայ
Սամեկ	Փ, Հ	Հայ	Հայ	Փ
Այն	Փ, Հ	Հ	Փ, Հ	Հ, Հայ
Պե	Փ, Հ	Հայ	Հայ	Փ
Ծադե	Փ	Փ	Փ	Փ
Կոֆ	Փ, Հ	Փ	Փ	Փ
Ռեշ	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ	Փ, Հ
Շին	Փ	Փ	Փ	Փ
Թաւ	Փ, Հ	Փ	Հայ	Փ

* Խոսքը վերաբերում է ոչ թէ հանրահայտ Թ-ին (Թ-ից հայկական Բ-ն չի բխում), այլ հնագույն նշանին, որն այս եղանակով կարող է լինել հայկական Բ-ի գրչական տարբերակը: Ցավոք, նմուշների սակավության պատճառով դժվար է որոշակիորեն հասկանալ դրա ուրվագծի տրամաբանությունը:

Հայկական տառերի դեպքում, ինչպէս տեսնում ենք, գրանշանների մեծ մասը կարող էր գոյացած լինել թէ՛ փյունիկյանից եւ թէ՛ հնագույն հունականից: Սակայն անուվազն երեքը՝ Լամեդ-ը, Ծադե-ն եւ Շին-ը ու, գուցե՝ նաեւ Բեթ-ը կարող էին անցնել հայերենին միայն փյունիկյանից, քանի որ հունականը, նույնիսկ հնագույնը չունի համապատասխան ընտրող հատկությունները: Բացի այս՝ Կոֆ-ը, թեւս գծային հատկություններով կարող էր փոխառված լինել հունականից, բայց, ինչպէս ասվեց, վր կարող փոխառվել դրա հնչումը, քանի որ այն բացակայում էր հունարենում:

Չտեսապես փոխառությունը կատարվել է փյունիկյանից: Կրացական եւ աղուանական այբուբենների դեպքում պատկերն արդեն նույնքան միարժեք չէ: Թեև սրանց դեպքում նույնպես նախօրինակների մեծ մասը պիտի որ փյունիկյանն ու հնագույն հունականը եղած լինեն, սակայն մի շարք գրանշաններ կարող են փոխառված լինել հայկականից, իսկ վրաց ասոմթավրուլիի *Չե*-ն, թվում է, թե պիտի փոխառված լինի աղուանականից: Դիտվող պատկերը կարող է բացատրվել նրանով, որ այս երեք այբուբենները զարգացել են գրչական դպրոցների չափազանց սերտ շփումների պայմաններում: Սակայն այն, որ գրանշանների մեծ մասը ծագում է փյունիկյանից կամ հայկականից, մինչդեռ միայն հունականից կարող են ծագած լինել շատ քիչ տառեր, ինչպես նաև կովկասյան այդ ազգերի աշխարհագրական դիրքը Փյունիկեի նկատմամբ՝ Հայքի թիկունքում, որը նվազեցնում է անմիջական փոխառության հավանականությունը, ստիպում է ենթադրել, որ դրանք փոխառված են հենց հնագույն հայկականից (*երբ այն դեռ արագագրական չէր*), իսկ հունական գրչությամբ բացատրվողները հետագա ազդեցությունների արդյունք են:

Ինչպես տեսանք, սա կրկին հաստատում է, որ փյունիկյան գիրը պիտի որ Հայք հասած լինի արձանագրային, այլ ոչ թե արագագրական վիճակում, քանի որ այն պիտի դեռ այդ վիճակում փոխանցվեր կովկասյան ազգերին, եւ որ այդ ընթացքում այն *ինչ-որ ժամանակ ունեցել է պաշտոնական կարգավիճակ*: Կարելի է նաև այն փաստը, որ դատելով վերլուծությունից՝ մխտորուլիի տառերի միայն փոքր բանակությունը կարող է դիտվել որպես ասոմթավրուլիից անմիջականորեն ածանցյալ, մինչդեռ մյուս տառերը թիւում են ծագումնաբանական ծառերի այլ ճյուղերից եւ կարող են փոխառություններ դիտվել փյունիկյանից, հունականից կամ հայկականից: Դա կանկած է հարուցում, որ մխտորուլին ոչ թե հայտնի ասոմթավրուլիի, այլ մեկ այլ՝ մեզ չհասած կոթողային, ինքնուրույն այբուբենի արագագրական տարբերակն է, որը միայն հետագայում է ազդեցություն կրել ասոմթավրուլիից:

3.2.4.4. Հայոց եւ վրաց գրերի հարաբերությունը

Գրային համակարգերի շարքում հայերիս համար առավել հետաքրքրական են մեր հարեանների՝ վրացիների գրերի ծագման հանգամանքները, որոնք հայկական աղբյուրները նույնպես կապում են Մաշտոցի հետ: Ինչպես հայտնի է, վրաց հեղինակները կտրականապես մերժում են Մաշտոցի կողմից վրաց գրերի ստեղծման դրույթը: Դա հիմնավորվում է նախ վրացական ավանդությամբ²⁵⁹, ապա՝ նաև որոշ դատողություններով: Այսպես՝ վրացական այբուբենը բավական կատարյալ է, ու հազիվ թե այն կարողանար ստեղծել մեկը, ում համար այդ լեզուն մայրենի չէր²⁶⁰:

²⁵⁹ Ռ. Պատարիձե, *Վրացական գլխատառերը* // «Սևաթորի», 1972, № 1-3, 6-9, ըստ «Կովկասագիտության պրոբլեմներ», № 2, Եր., 1976, էջ 161:

²⁶⁰ Т. Гамк्रेлидзе, *Алфавитное письмо и древнегрузинская письменность*, Тбилиси, 1989, с. 303.

Այսպիսով, ունենալով իրենց գրերի ստեղծման մասին ներըմբռնողական համոզմունքներ, վրաց հեղինակները պնդում են, թե վրաց գիրը ստեղծվել է Ե դարից շատ ավելի վաղ: Օրինակ, ըստ Ռ. Պատարիձեի, դա եղել է մոտավորապես մ. թ. ա. ե-9 դարերում փյունիկյան հիմքի վրա: Նման մոտեցում նկատվում է նաև Ե. Մաճավարիանիի մոտ: Սովորաբար դա բերում է հնչյունային տարբեր արժեքներով տառերի նմանության վրա չարդարացված բեւեռացմանը, գրանշանների ձեւավորման որոշ հնարքներին ծագումնաբանական արժեքի վերագրմանը (մի բան, որը, ինչպես տեսանք, բնորոշ է նաև Հայոց գրերն ուսումնասիրողներին): Այնուամենայնիվ, վրաց հեղինակները տառերի ձեւագոյացման ընթացքում կարելոքում են նաև գրչարհեստի դերը՝ չառաջարկելով, սակայն, վերլուծության որեւէ համակարգային անաչառ սկզբունք, եւ բնականաբար անհաջողության են մատնվում:

Մինչդեռ, հոգուտ վրացական գրի հնագույն ծագման, կան լուրջ փաստարկներ: Բացի վերոբերյալ վերլուծությունից կարելի է հիշատակել այն, որ փյունիկյան *Խա*-ին համապատասխանող վրացական *Վին*-ը այբուբենում գտնվում է վեցերորդ տեղում: Նույնիսկ հունարենում, որից հաճախ բխեցնում են վրացական այբուբենը, համապատասխան գրանշանը՝ *Դիզամմա*-ն, այդտեղ էր միայն հնագույն շրջանում ու թեւեւ ծագում էր նույն *Խա*-ից, սակայն շուտով հեռացվեց այդտեղից, քանի որ կորցրեց իր հնչյունային արժեքը՝ պահպանելով միայն թվայինը, իսկ հետո էլ փոխարինվեց *Սոիզմա* կցագրությամբ:

Սակայն առաջարկվող վերլուծական եղանակների կիրառումը ցույց է տալիս, որ միեւնույնն է, փյունիկյան համապատասխան տառերից վրացական գրանշանների մեծ մասն անմիջականորեն դուրս չի բերվում (այդ թվում եւ *Վին*-ը), այլ ենթադրվում են միջանկյալ վիճակներ: Փյունիկյանից անմիջականորեն փոխառված լինելը անհավանական է նաև աշխարհագրական առումով. Վիրքի եւ սեմական աշխարհի միջեւ գտնվում էր Հայոց լեզուն կրողների հոծ տարածքը, եւ ինչպես տեսանք, դա իր հետքը թողել է վրաց տառերի ծագումնաբանության վրա:

Թեւեւ՝ վրացական մշակույթը միշտ եղել է նաև հունական մշակույթի ազդեցության ոլորտում, հետեսապես հունական գծով ազդեցությունը նույնպես հավանական է, եւ տեսականորեն փոխառությունը կարող էր լինել նաև հնագույն հունականից, որում *Խա*-ը (*Դիզամմա*-ն) դեռ նույն վեցերորդ տեղում էր: Այդ դեպքում դա կարող էր լինել առնվազն մինչեւ մ. թ. ա. 403 թ., երբ աթենական ուղղագրությունը փոխարինվեց միլեթյան ուղղագրությամբ եւ ձեւավորվեց հունական դասական հանրահայտ այբուբենը²⁶¹: Թ. Գամկրելիձեի կարծիքով՝ հոգուտ հունականից փոխառված լինելուն խոսում է նաև այն, որ վրացական այբուբենի 15-րդ տեղում, որում փյունիկյանում գտնվում է *Սամեկ*-ը, իսկ հունականում *Քսի*-ն, հայտնվել է վրացական *Յե*-ն՝ թվային նույն (60), բայց հնչյունային բոլորովին այլ արժեքով: Հունական

²⁶¹ И. Фридрих, *История письма*, М., 1979, с. 132.

գրանշանի [բս] արժեքը վրացերենում ավելորդ է եւ ըստ Թ. Գամկրելիձեի՝ հենց դա է դարձել պատճառը, որ այդ տեղը հատկացվել է [յ] արժեքով տառին. նա իրավա-
ցիորեն նկատում է, որ եթե փոխառությունը կատարվեր սեմականից, վրացական-
նում մենք կտեսնեինք դրան հնչյունապես մոտ վրացական համարժեքը²⁶² [ս]: Սա-
կայն ամեն ինչ այդքան պարզ չէ, քանի որ, ինչպես տեսանք վերլուծությունից, փյուն-
նիկյան *Սամել*-ը վրացական այբուբենում ամենայն հավանականությամբ ժառան-
գորդ թողել է, եւ դա *Շին*-ն է՝ [շ] արժեքով. ճիշտ ինչպես եւ *Յայոց* գրի դեպքում, եւ
թե ինչն է եղել պատճառը, որ այն հայտնվել է այբուբենի ոչ «հունական», այլ «լրա-
ցուցիչ» մասում՝ պարզ չէ: Նկատենք նաեւ, որ *Յէ* տառի ճակատագիրը հետագա-
յում էլ հարթ չեղավ. նոր վրացական այբուբենից այն հեռացվեց:

Կա եւս մեկ կարեւոր խնդիր՝ կապված 18-րդ տառի հետ: Թվային արժեքով (90)
սա համապատասխանում է հունական՝ փյունիկյան *Կոֆ*-ից ծագած *Կոպպա*-ին, որի
թվային արժեքը, սակայն, 100 էր. բայց անսպասելիորեն սրան համապատասխա-
նեցված է վրացական *ժան*-ը՝ [ժ] արժեքով: Թ. Գամկրելիձեն այս փաստն էլ է մեկ-
նաբանում որպես հունարենից փոխառության վկայություն, քանի որ հունարենում
Կոպպա-ն ու չ հունարենում չունեն հնչյունային արժեք:

Սակայն սա այն սակավաթիվ դեպքերից է, երբ վրացական տառը՝ *ժան*-ը՝
Կ իր ձեւով ամբողջովին համընկնում է համապատասխան փյունիկյան տառի՝
Շառէ-ի՝ **Խ** հետ (գրելու ուղղության փոփոխման հետեւանքով ուղղաձիգ առանցքի
նկատմամբ շրջված), մինչդեռ սրանից առաջացած հունական *Սան*-ից՝ **Մ** այն չի
կարող բխել, քանի որ բեկյալ թեւն արդեն տեղաշարժվել է ուղղաձիգ ճողի գագաթ:
Յնչյունային արժեքն էլ թերեւս բացատրելի է. փյունիկյան հնչյունը, հավանաբար,
եղել է [ս]-ի եւ [ծ]-ի միջեւ, քանի որ հայերենում դրան համապատասխանեցվել է
հենց *Տ*-ն, իսկ հնագույն հունական այբուբենում նա ունեցել է [ս]-ին մոտ արժեք եւ
հետագայում սկսել է արտահայտվել սեմական *Սամել*-ից գոյացած *Սիզմա*-յով: Մի-
աժամանակ չի բացառվում, որ հնագույն վրացերենում այսօրվա [ժ]-ն շատ ավելի
փափուկ է հնչել, եւ այն հնարավոր են գտել նշանակել *Շառէ*-ով: Մինչդեռ անհավա-
նական է թվում, որ այսօրվա [ժ]-ն երբեւէ նմանվեր [բ]-ին (*Կոպպա*-ին համապա-
տասխանելու համար): Թեեւ՝ անվամբ կարծես թե համապատասխանում է հունա-
կանին. սակայն սա կարելի է բացատրել հունական հետագա ազդեցությամբ, որի
գոյությունն անիմաստ է ժխտել: Ու բացի այդ՝ փյունիկյանում հենց *Շառէ*-ն ունի 90
թվային արժեքը: Այնպես որ պետք է ընդունել, որ վրաց տառը համապատասխա-
նում է հենց *Շառէ*-ին եւ հնագույն սեմական այբբենական տեղում է գտնվում ոչ մի-
այն *Վին*-ը, այլեւ *Շառէ* ժան-ը: Ուրեմն այդ տառը կարող էր անցնել վրացական այ-
բուբեն կամ փյունիկերենից, կամ հայերենից:

²⁶² Т. Гамкредидзе, *Նշվ. աշխ.*, էջ 274:

Փորձելով բացատրել *Վին* տառի՝ վեցերորդ տեղում գտնվելը եւ որոշ տառերի
բացահայտ հնագույն ուրվագծերը՝ Թ. Գամկրելիձեն ենթադրում է, թե վրաց տառե-
րի ստեղծողն ուսումնասիրել է հին գրային համակարգերը, այդ թվում՝ հնագույն
հունականը, դրանցից վերցրել է վրացականի կարգը, մի տեսակ արհեստականո-
րեն «հնացրել» նորաստեղծ համակարգը՝ ստեղծելու համար «ուրույն» ազգային
համակարգ²⁶³: Մի կողմ թողնելով վերելում շարադրված նկատառումները գրային
համակարգերի ստեղծման տրամաբանության վերաբերյալ, որոնք արգելում են
նման «հնացումները», գրանշանների կամայական այլ ձեւափոխությունները, նկա-
տենք եւս մի հանգամանք, որն աչքաթող է արվում թե՛ վրացական եւ թե՛ հայկա-
կան գրերի ստեղծումն ուսումնասիրելիս: Դա այն է, որ այբուբենն առանց այդ լե-
զուն եւ գիրը կրողի մեռած պատկեր է: Եթե մենք ունենք որեւէ գրություն (օրինակ՝
Ֆեստյան սկավառակը), բայց չգիտենք ո՛չ այդ գրության լեզուն, ո՛չ դրա նշանների
արժեքները, մենք չենք կարող օգտագործել այն: Եթե Ե դարում վրացական տառե-
րի հեղինակը (ով էլ նա լիներ) որեւէ գրադարանում նույնիսկ գտներ հունական
հնագույն այբուբենի գրանշանների ձեւերը (յուրատեսակ «դանիդյան գիր»), նա չէր
կարող իմանալ, թե *Բաւ*-ը (*Դիզանմա*-ն) հնչյունային ինչ արժեք ունի, քանի որ դա
չէին հիշում արդեն նույնիսկ իրենք՝ հույները, ինչի պատճառով էլ հենց հրաժարվել
էին այդ գրանշանից (դրա տեղը հետագայում զբաղեցրեց *Սոհզմա*-ն, որն ուներ մի-
այն թվային արժեք՝ 6): Միայն նորագույն ժամանակներում հարյուրավոր մասնա-
գետների կողմից կատարված լեզուների համեմատական վերլուծությունից է, որ
հաջողվել է վերականգնել (այն էլ՝ ոչ միշտ վստահորեն) այս կամ այն գրանշանի ար-
ժեքը, իսկ 15 կամ 25 դար առաջ, առանց բազմաթիվ լեզուների գրային համակար-
գերի համեմատության, առանց երկլեզվյան արձանագրությունների վերծանման եւ
այլ եղանակների կիրառման, դա անհնար էր: Իհարկե, չի կարելի լրիվ բացառել, որ
այդ դարերում էլ կային այնպիսի գիտնականներ, որոնք ամեն ինչ գիտեին: Սակայն
երբ կարդում ես հույն հեղինակների՝ Չերոդոտոսի, Դիոնիսիոսի եւ այլոց (այն ժա-
մանակվա հայտնի գիտնականների) գործերը, պարզ է դառնում, որ նրանք բավա-
կան պարզունակ պատկերացում ունեին գրի ստեղծման մասին եւ ամենաշատը
կարող էին առասպելներ պատմել, թե ով ումից էր փոխառել գիրը, կամ առաջարկե-
ին հնչյունների մակերեսային դասակարգում: Այսինքն՝ նրանց ապրած ժամանա-
կաշրջանում գրի ակունքներն արդեն կորած էին, իսկ մերօրյա մասնագետների
կողմից քննարկվող հնչյունագիտական եւ հնչյունաբանական խնդիրների մասին
նրանք պատկերացում էլ չունեին: Այնպես որ միայն *Վին* տառի գտնվելը վեցերորդ
տեղում՝ *իր արժեքով հանդերձ* (դեռ չհաշված մյուս փաստարկները), բավական է
թվում՝ տեղափոխելու համար վրացական գրերի ստեղծումը շուրջ մեկ հազարա-
մյակով դեպի ետ:

²⁶³ Т. Гамкредидзе, *Նշվ. աշխ.*, էջ 301-302:

Այսպիսով, հունական գիրը հազիվ թե լինի վրացական գրի նախորինակը՝ Սակայն, ինչպես ցույց է տալիս գծապատկերային-քերաբանական վերլուծությունը, փյունիկյան գրից էլ ոչ բոլոր վրացական տառերն են անմիջականորեն հետևում: Եւ նախորինակի դերում թե՛ քերաբանական եւ թե՛ աշխարհագրական տեսակետից բնականորեն կարող էր լինել հնագույն Հայոց գիրը: Միեւնույն ժամանակ, ինչպես տեսանք, որոշ վրացական գրանշաններ ենթադրում են միջանկյալ կործողայնացման փուլ: Այդ կապակցությամբ կարելու է, որ վրացական ավանդությունը վերագրում է վրաց գրի ստեղծումը Փառնավազ թագավորին, որն ապրել է մ. թ. ա. ԳԲ դարերում: Հավանաբար, նրա օրոք ժողովրդական գիրը ստացել է պետական կարգավիճակ եւ կանոնարկվել է՝ ստանալով կոթողային ձեւ: Մինչեւ այդ պահը, այսինքն՝ առնվազն երեք դար վրացական գիրն անցել է տարերային գործածման ուղի, որը եւ բերել է տառերի մեծ մասի էական փոփոխմանը: Բոլոր դեպքերում առանց հնագիտական նոր նյութի վրացական գրանշանների կրած ձեւափոխությունների հաջորդականությունը եւ միջանկյալ ձեւերը հազիվ թե հաջողվի հուսալիորեն վերականգնել:

Միեւնույն ժամանակ, պետք չէ հաշվից հանել այն, որ հայկական եւ վրացական համակարգերի որոշ նմանություններ կարող էին գոյանալ եւ ավելի ուշ, որպես հարեան համակարգերի փոխազդեցությունների արդյունք: Դա նկատում է նաեւ Թ. Գամկրելիձեն²⁶⁴՝ տարակուսելով միայն ազդեցության ուղղության հարցում եւ կապելով այն երկու համակարգերի ստեղծման տարեթվի հետ, թեեւ պարզ է, որ փոխազդեցությունը կարող էր լինել զարգացման տարբեր փուլերում:

3.2.4.5. Հայոց եւ աղուանից գրերի հարաբերությունը

Ինչպես տեսանք, կիրառված եղանակները բացահայտում են, որ աղուանական այբուբենի նախորինակը նույնպես եղել է փյունիկյան այբուբենը, թեեւ միջնորդավորված: Միջնորդավորվածության օգտին է խոսում սեմական նախորինակից հայերենի համեմատ ավելի զգալի հեռացումը: Աղուանական այբուբենի հետազոտմանը խոչընդոտում է նյութի սակավությունը: Միևայի կրկնագիրը շատ բան տվեց, բայց նյութը, միեւնույն է, անբավարար է:

Գործը զգալիորեն բարդացնում է նաեւ այն, որ դեռեւս կասկածանք են հարուցում աղուանական մի շարք տառերի հնչյունային արժեքները եւ անգամ ձեւը, որը մեզ առայժմ հայտնի է ընդամենը 1-2 օրինակով: Մինչեւ վերջին ժամանակներու աղուանական տառերի ձեւի մասին կարելի էր հիմնականում դատել՝ Մատենադարանի ՉՎ 7117 ձեռագրի նյութից ելնելով: Կրկնագրի վերծանման շնորհիվ հաջողվեց ավելի լավ հասկանալ աղուանական գրույթների տրամաբանությունը, թեեւ դրանց եւ ՄՄ 7117 ձեռագրի նյութը համեմատելիս պարզ է դառնում, որ երբեմն

²⁶⁴ Т. Гамк्रेлидзе, *նշվ. աշխ.*, էջ 304:

վերջինները վերարտադրում են դրանց ձեւի բարեշրջման ավելի վաղ վիճակը, հետեւապես եւ դրանք ավելի կարելու են նախորինակները վերականգնելիս:

Աղուանակում տեղ են գտել այնպիսի տառեր, որոնք ենթադրաբար համապատասխանում են փյունիկյան տառերին: Արդյունքում կարելի է արձանագրել, որ, չնայած հավանական միջանկյալ կործողայնացման, որին ենթարկվել են աղուանական տառերը, փյունիկյան հիմքը դեռեւս բավական նկատելի է:

Նկատելի է նաեւ, որ աղուանական տառերը հիմնականում դասավորված են հայկականի հերթականությամբ: Լրացուցիչ տառերը դեռեւս անհայտ սկզբունքով դասավորված են դրանց միջեւ: Եւ թվում է, թե այստեղ մտահղացվել էր նույն հնարքը, որը նաեւ հայկական այբուբենի դեպքում էր իրականացվել: Այդ է վկայում, մասնավորապես, աղուանական **ԶՕԿԿՕԿ** [ծ-յ-յ-ր²⁶⁵, մուճուր]՝ «սուրբ» բառի առաջին **Զ** Սակ տառի հայտնվելը նույն՝ 29-րդ տեղում (թեեւ այս դեպքում այն արդեն եռանկյան զագաթում չէ, եւ եռանկյուն չի էլ գոյանում): Նույն շարքի նկատառումներով է, թերեւս, բացատրվում նաեւ այբուբենի տառերի թիվը՝ 52՝ տարվա շաբաթների թվով, հայկական 36-ի դիմաց՝ ըստ տասնօրյակների թվի:

Նկատվում է նաեւ հնչյունային որոշակի սկզբունք: Այսպես՝ *Չայ*-ը կից է *Ծի*-ին, *Ձայ*-ը՝ *Չատ*-ին, *Ծաւ*-ը՝ *Տայն*-ին, թեեւ այս համապատասխանությունները կարող են եւ թվացյալ լինել:

Ինչ որ, առայժմ չբացահայտված դիրքային օրինաչափությունների առկայությամբ են, հավանաբար, բացատրվում նաեւ հայկական այբբենական կարգի համեմատ որոշ շեղումները: Օրինակ, եթե *Ը*-ի կամ *Դ*-ի համար աղուաներենում կարծես թե համարժեքներ չկան, իսկ հայկական *Յ*-ի համարժեքը՝ աղուանական **Դ Յուդ**-ը, բավականին համոզիչ կերպով համապատասխանեցված է փյունիկ. *Յոդ*-ին եւ հուն. *Յոտ*-ին հանգող վրաց. **Կ** *Ին*-ին, ապա աղուաներեն **Տ Ձա**-ի եւ **Չ Ձայն**-ի հնչյունաբանորեն մոտ, հայկական *Ձա* եւ *Չէ* տառերի հետ համապատասխանությունից դուրս գտնվելը դժվար է այլ կերպ բացատրել: Այս երկուսին գուցե կարելի է հավելել նաեւ *Փէս*-ը, եթե հաստատվի դրա հնչյունային վերականգնումը՝ որպես [չ]²⁶⁶, քանի որ այն տրամաբանական կլիներ տեսնել հայերեն *Ղատ*-ի դիմաց (անունն էլ թերեւս պետք է ճշտվի որպես *Ղես*)²⁶⁷:

²⁶⁵ Ծ. ალექსიძე, კავკასიის აღმანათლებელი და მწერლობა, ვნა და მწერლობა, თბ., 2003 (Z. Alexidze, *Caucasian Albanian Script, Language and Literature*, Tbilisi, 2003), էջ 155:

²⁶⁶ J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J. Mahé, *The Caucasian Albanian Palimpsests of Mt. Sinai*, V. 1., էջ 11-9; Alexidze Z., *Discovery and Decipherment of Caucasian Albanian Writing*, Bull. Georg. Natl. Acad. Sci. Vol. 175, No 1, Tbilisi, 2007, p. 164.

²⁶⁷ Նկատենք, սակայն, որ այս տառի արժեքի վերականգնումը որպես [չ], կասկածելի է: Լախ, ինչպես նշում են հեղինակները, նյութը սակավ է, դրանից բացի՝ *Խամ* եւ *Փէս* տառերը շատ նման են, ուստի հեշտությամբ կարող էին շփոթվել, եւ վերջապես՝ *Փէս*-ն անմիջապես հաջորդում է *Դեն*-ին, որի արժեքն է հենց [p]:

Փյունիկյան բոլոր տառերը (22) աղուանական այբուբենում (ինչպես եւ երկու կի մյուս երկու այբուբեններում) ունեն իրենց ածանցյալները, թեկուզ եւ ոչ միայն իրենց տեղերում: Մասնավորապես, ի տարբերություն վրացականի, աղուանականում փյունիկ. *Բաւ*-ից սերված տառն արդեն ոչ թե իր սկզբնական 6-րդ տեղում է, այլ հայկական *Վել*-ի տեղում (տե՛ս աղյուսակը):

Հայկական տառերի ձեւավորման մոտավոր թվագրման համար կարելի է ելք տա գործել հայկական այբուբենում փյունիկ. *Կոֆ* եւ *Ճարե* տառերի գոյության վերաբերյալ, ինչպես նաեւ հայկական որոշ տառերի՝ հունական համարժեքներից չբխելով (եթե նակ՝ հայ. *Բեն*-ը հուն. *Բետա*-ից, հայ. *Ին*-ը հուն. *Յոտա*-ից եւ այլն), որը ձեւավորվել է ժամանակը տանում է դեպի հունական հնադար կամ ավելի վաղ: Վրացական այբուբենի դեպքում օգնում է *Վին* եւ *Ճան* տառերի՝ իրենց հնագույն տեղում գտնվելը:

Ցավոք, աղուանական այբուբենի դեպքում տառերի՝ մաշտոցյան այբուբենի կարգով մեզ հասած դասավորությունը հնարավորություն չի տալիս այն օգտագործել աղուանական այբուբենի ձեւավորման թվագրման համար: Բայց փյունիկյան նախօրինակներից մինչեւ աղուանական գրությունները տանող շղթաների (եթե աղյուսակը) համեմատաբար ավելի մեծ երկարությունը վկայում է, որ աղուանական այբուբենը ձեւավորվել է ավելի ուշ՝ հավանաբար, վրացականի հետ մոտավորապես նույն ժամանակահատվածում:

Այսպիսով, աղուանական այբուբենը նույնպես բազմաշերտ է: Գետաբերության տվյալ փոկում բացահայտված է նրա միջուկը, որը հյուսիսսեմական (փյունիկյան) գրի բնական բարեշրջության արդյունք է: Այդ միջուկի մի շարք տառերն առաջացումը վրացականի հետ ծագումնաբանական միեւնույն ճյուղից՝ միջամերկրադարձայնացմամբ, ուրվագծում է եռյակի սահմաններում *վրացա-աղուանական երթախումբը*: Այլ կերպ՝ այդ երկու այբուբենները պիտի որ բխած լինեն մեկ ընդհանուր միջանկյալ գրից: *Հավանաբար, դա եղել է Հարավային Կովկասի՝ Կորի ձեռնարկների տարածքներն ինչ-որ ժամանակ միավորող պետական կազմավորման գիրը*, որի անկումից հետո այդ գիրը, կորցնելով պաշտոնական կարգավիճակը, երթարկվել է ժողովրդական հետագա գործածման եւ արագազրկման ուղի:

Նկատենք, որ աղուանական այբուբենի հայկական հատկությունը՝ հայերեն գրերի՝ այբբենական կարգով դասավորվածությունը, հաստատում է Կորիների վերաբերյալ յուրությունը. «*Նա կարգեալ եւ հաստատեալ կշռեր*»²⁶⁸ աղուանից լեզվի տառերը:

3.3. ՀԱՐԱՎԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպես արդեն նշել ենք ներածության մեջ, այս հետազոտության հիմնական ելքը տակը Հայոց գրանշանների արտաքին ձեւի, այն է՝ գծապատկերային ստատիկ հատկությունների ուսումնասիրումն է եւ ոչ թե բանասիրական խնդիրների լուծումը:

²⁶⁸ Կորին, Վարդ Մաշտոցի, Ժ2:

կնիտիանդերձ, քանի որ դրանք մի շարք կետերում համընկնում են, անհրաժեշտ է դրանց նույնպես անդրադառնալ: Միեւնույն ժամանակ, ինչպես եւ նշել ենք, այդ խնդիրները այնքան լավ են քննարկվել, որ Նոր բան գրեթե հնարավոր չէ ասել, եւ մեր եզրատակն է եղած կարծիքների շարքում մատնանշել այն դրույթները, որոնք մեր պատկերային վերլուծությունների հետ կազմում են մեկ, ներքուստ փոխկապակցված համակարգ:

Բանասիրական խնդիրների զգալի մասն առնչվում է նախամաշտոցյան գրեթե մեկ, որոնց ստիպված ենք եղել կրկին անդրադառնալ: Դրանից բացի՝ թվարկենք նաև Գր. Ամառյանի մատնանշած ութ խնդիրները՝

- տառերի թիվը,
- այբուբենի հորինվածքը,
- գրության ուղղությունը,
- տառերի ձեւը եւ նրանց ծագումը,
- տառերի հաջորդականությունը,
- տառանունները,
- տառերի հնչումը կամ արժեքը,
- տառերի տեսակները եւ զարգացումը:

Նկատենք, որ վերոնշյալ կետերից մի քանիսը կա՛մ դուրս են սույն հետազոտության խնդիրներից, կա՛մ էլ արդեն իսկ այս կամ այն կերպ քննարկվել են, օրինակ՝ գրի ուղղությունը: Տառերի հնչումն առանձին ոլորտ է, եւ այստեղ քննարկվել է անբավարար, որքանով առնչվում է տառաձեւերի խնդրին: Իսկ վերջին կետը վերաբերում է տառարկեստի հարցերին, եւ այլ բնույթի հետազոտության նյութ պետք է լինի: Վերջապես, չորրորդ կետին նվիրված է սույն հետազոտությունն ըստ էության: Առաջած կետերին կանդրադառնանք ստորեւ:

3.3.1. Կրկին նախամաշտոցյան գրերի հարցը

Մենք արդեն տեսանք, թե ինչպիսի բնական պարզությամբ են Հայոց տառերը ընդ մաշտոցյան դարաշրջանից դարձել առաջ գործածությունից դուրս եկած փյունիկյան գրի նշաններից: Կրկին վերադառնալով այս հարցին՝ նախ վերհիշենք Գր. Ամառյանի խոսքերը, որոնք արդեն բերվել են. «*Այն հեղինակները, որոնք հայերեն գրերին տալիս են փյունիկյան, արամեական կամ պալմիրական ծագում, հավանում են Դանիելյան գրերի գոյության, որով չափապանց մոտենում են կամ նույնիսկ թունդանակակից են դառնում այն գրերին*»: Բայց որովհետեւ մեզ համար Դանիելյան երկ գիր ու գրականություն գոյություն չունի, ուստի հայ գրերն էլ չեն կարող փյունիկյան պալմիրական կամ արամեական ծագում ունենալ»²⁶⁹:

²⁶⁹ Գր. Ամառյան, նշվ. աշխ., էջ 510:

Ինչպես տեսնում ենք, դանիելյան գրերի հարցն առանցքային տեղ է զբաղեցնում նախամաշտոցյան գրի հարցում: Ըստ Յր. Աճառյանի՝ էթե չլինի դանիելյան գրերով պայմանավորված հազարամյա կամուրջը մաշտոցյան գրերի եւ փյունիկյան գրի միջեւ, առաջիններին անհնար կլինի վերագրել փյունիկյան ծագում: Սակայն սույն հետազոտությունը հնարավորություն է տալիս հիշյալ կամուրջը կառուցել հակառակ ուղղությամբ: Այն է՝ էթե գծապատկերային, ձեւակազմական վերակառուցումը բացահայտում է Յայոց գրերի ծագումը փյունիկյան գրից, ապա դա հավանական է դարձնում արդեն դանիելյան գրերի՝ հայկական գրեր լինելը եւ դրանց ներառումը Մաշտոցի կողմից Յայոց այբուբենի կազմում: Ընդ որում՝ այս դեպքում շնորհիվ վերլուծության՝ գծապատկերային բնույթի այդ կապն ակներեւ է:

Վերելում բերված ընդարձակ մեջբերման մեջ Յր. Աճառյանն ասում էր, որ «Մեսրոպին մասնակի գյուտ վերագրելու գաղափարը առաջին անգամ ծագում է Յայոց մեջ՝ Ժ դարում», եւ հռետորաբար հարցնում. «*Փրավացի՞ է արդյոք մի կողմ գցել հնագույն եւ գրի գյուտին ժամանակակից պատմիչներին եւ 600 կամ 800 տարի հետո եկող անձերի պատմածին կարեւորություն տալ ... էթե խնդիրը ներքին պահանջներ ունենար, այն ժամանակ հնարավոր էր թերեւս լսել հետին պատմիչներին. բայց այսպիսի պահանջ չկա*»²⁷⁰: Պատասխանի համար հանգուցային միտքն այստեղ «ներքին պահանջ» գաղափարն է: Այսինքն, քանի որ տվյալ դեպքում Յր. Աճառյանի տեսակետին ավելի հարմար են հնագույն պատմիչների տեղեկությունները, նա առաջարկում է բավարարվել դրանցով՝ «ներքին պահանջ» չգալով այլ տեղեկությունների: Սրանով նա փաստորեն շրջանցում է աշխատության ամենակարգում աղբյուրների արժեքի մասին արտահայտած իր այն միտքը, որ «*Պետք է ընդունել, թե Ե դարի այն համատարած մեծ գրական շարժման ժամանակ եղել են նաեւ ուրիշ մատենագիրներ, որոնց աշխատությունները ժամանակը չի հասցրել մեզ: ... հետին աղբյուրները ... կարող էին սրանցից շատ բան փոխ առնել. էթե իրենք մեկ առ մեկ չեն հիշում փոխառությանց տեղերը, ապացույց չէ, թե ձեռքի տակ չեն ունեցել: Այս նկատումով կարող ենք եւ պետք է մտածենք, որ հետին աղբյուրների մեջ գտնված նոր տեղեկություններից գրեն ոմանք բաղված են հին վավերական աղբյուրներից, ուստի եւ իբրեւ այդպիսի թանկագին եւ վստահելի մնացորդներ են: Չետեսքար պետք չէ, որ ամեն մի այդպիսի նոր տեղեկության հետ վարվենք կատարյալ արհամարհանքով...*»²⁷¹: Հատկապես որ այդ հետին տեղեկության արժեքն աճում է նրանով, որ այն հաստատվում է բազմաթիվ աղբյուրներով: Իհարկե, բազմաթվությունն էլ հիմք չի կարող համարվել. ի վերջո, դրանք կարող են բխել ոչ թե ինչ-որ անհայտ հնագույն աղբյուրից, այլ բոլորն էլ կարող են հետեւած լինել որեւէ հեղինակի անհիմն ենթադրությանը: Սակայն էթե մենք ունենք նաեւ հետազոտական այլ եղանակով ստացված փաստարկներ, դրանք կբարձ-

²⁷⁰ Յ. Աճառյան, *Յայոց գրերը*, էջ 491:

²⁷¹ Նույն տեղում, էջ 6:

րացնեն այդ տեղեկությունների հավաստիությունը: Հատկապես, որ այս հարցում հետագա հեղինակների հաղորդածը չի էլ հակասում հնագույն պատմիչների հաղորդածին: Կորյունը, խորենացին եւ Ղազարը չեն ասում, թե դանիելյան գրերը չեն օգտագործվել Մաշտոցի կողմից. *նրանք այդ հարցը պարզապես չըջանցում են:*

Ավելին, էթե նույնիսկ պատմական աղբյուրները մեզ ոչինչ չհաղորդեին դանիելյան գրերի մասին, միեւնույնն է միջանկյալ մի համակարգի գոյությունը անհրաժեշտաբար հետեւում է մաշտոցյան տառերի գծապատկերային վերլուծությունից: Սա հիշեցնում է մեկ այլ դրվագ գիտության պատմությունից: Արդեն մեր օրերում լուծվեց գենային կրդի բացահայտման խնդիրը, որը, թեեւ թվում է, թե գիտության բոլորովին այլ՝ բնագիտական ճյուղին է պատկանում, սակայն իր եւությամբ քիչ է տարբերվում քննարկվող խնդրից: Երկու դեպքում էլ գործ ունենք այլազման համակարգերի հետ. պարզապես, այդ դեպքում այլազմվում են *ամիսաթթուներ*, իսկ մեր դեպքում՝ *բառեր*: Սակայն կենսաբանները ոչինչ չգիտեին այդ համակարգի մասին. չգիտեին նույնիսկ, որ այն պետք է գոյություն ունենար, եւ անհրաժեշտ եղավ մեծ քնագետ Գեորգի Գամովի հանճարեղ կռահումը, որ ամիսաթթուներն ինչ-որ այլազման համակարգով պետք է համապատասխանեն ԴՆԹ-ի «բառերին», եւ խնդիր դրվեց որոնել այդ համակարգը՝ «բառարանը»: Եւ, ինչպես գիտենք, խնդիրը լուծվեց, ու Գամովի կռահումը լիովին հաստատվեց: Իսկ մեր դեպքը որքան ավելի հեշտ է. մեզ *հաստատապես* հայտնի է դանիելյան գրերի եղելության փաստը:

Եւ «մասնակի» գյուտի հարց էլ չկա. բոլոր «հետին աղբյուրներն» էլ Մաշտոցին Յայոց գրի *միակ* հեղինակն են համարում: Ընդամենը դրանք նշում են Մաշտոցի կատարած գործի մանրամասները. «մասնակի» բառը պատկանում է Յր. Աճառյանին: Ինչպես ասվեց վերելում, Վուլֆիլան էլ հունական գրին ընդամենը 5-7 տառ է ավելացրել, սակայն համարվում է գոթական այբուբենի *միակ* հեղինակը: Տարբերությունը սոսկ այն է, որ Վուլֆիլան իր ազգի համար հարմարացրել է այլազգի գիրը, իսկ Մաշտոցը կատարելագործել է արդեն իսկ հայկական հին գիրը, մինչդեռ այն հայի անունը, ով Յայոց լեզվի համար խոր անցյալում հարմարեցրել է փյունիկյան գիրը, մեզ անհայտ է մնում: Սակայն նա, որը աշխարհում առաջին լիահնչյուն գրի հեղինակի հանճարեղությամբ հանդերձ, ստեղծել էր ոչ կատարյալ այբուբեն: Այժմ մի՞ թե նվազում է Մաշտոցի ներդրումը, էթե պարզվում է, որ նրան հաջողվել է, շարունակելով իր հանճարեղ նախնու գործը, կերտել ներկայիս Յայոց կատարյալ այբուբենը: Եւ բոլորովին անտեղի է Յր. Աճառյանի հեզմանքը, թե դանիելյան գրերը Մաշտոցի կողմից գործածելը կնշանակեր, թե Կորյունը պիտի խոսեր ոչ թե *«ասքանայան ապգ»*-ի, այլ *«ատորական ապգ»*-ի գրերի մասին, քանի որ անկախ ամեն ինչից՝ Մաշտոցը ստեղծում էր *Յայոց* գիրը: Նկատենք նաեւ, որ Յայոց մաշտոցյան գրին («նոր» Յայոց գրին) նախորդած «հին» Յայոց գրի գոյությունը ենթադրելը գիտության տեսակետից ոչ մի արտառոց բան չի պարունակում: Այսպես՝ Ի. Գեյլը

գրային համակարգերի ժամանակագրական ծառի վրա տեղ է տալիս *հայկական պատկերագրին* (Armenian pictographic)՝ թվագրելով այն մ. թ. ա. ԺԴ դարով²⁷²:

Եւ վերջապես, առկա նմուշների մասին: Կրկնենք, մեզ գրեթե չեն հասել նույն իսկ մեսրոպատառ գրի հնագույն նմուշներ, հետեւապես նախամաշտոցյան գրավոր հուշարձաններ գտնելն էլ ավելի դժվար է: Բայց դա չի նշանակում, թե վիճակն անհույս է: Նախ կա հավանականություն, որ հայաստանյան ժայռապատկերների որոշ նշաններ, որոնք երբեմն չափազանց հիշեցնում են հայկական (երբեմն էլ՝ սիւնայյան, հին եթովպական, փյունիկյան) գրանշաններ, իրոք, այդ նշաններն են ներկայացնում: Քանի դեռ հակառակը չի հաստատվել, պետք չէ անտեսել այդ հնարավորությունը: Սովորաբար նրանք, ովքեր ժայռապատկերները կապում են մաշտոցյան գրերի հետ, ենթադրում են, թե Մաշտոցը, ծանոթ լինելով այս նշաններին, օգտագործել է դրանք իր այբուբենում: Սակայն, ինչպես տեսանք, Հայոց տառերը բխում են փյունիկյանից, հետեւապես հնարավոր է հակառակը. եթե ժայռապատկերների նշանները նման են Հայոց տառերին, ապա կարող են հին Հայոց, այսինքն՝ դանիելյան գրերի նմուշները լինել: Մինչդեռ սովորաբար հայագետները այս տարբերակը առհասարակ չեն դիտարկում, քանի որ ժայռապատկերները թվագրվում են մ. թ. ա. ժամանակաշրջաններից ոչ ուշ:



Մ տառը հիշեցնող նշան: Գեղամա լեռներ: Փ կամ Թ տառը հիշեցնող նշան: Արագած: Ո տառը հիշեցնող նշան: Գեղամա լեռներ²⁷³:

Մյուս կողմից, հին Հայոց գրերի՝ փյունիկյանից փոխառված լինելը դեռ չի նշանակում, որ դրան նախորդած փոփոխված բաղաբաղաբաղական ազդեցությունը չէր կարող ունենալ հակառակ ուղղություն, եւ չի կարելի բացառել, որ հայկական ժայռապատկերների առանձին նշաններ կարող են լինել սիւնայյան որոշ նշանների նախորդները²⁷⁴: Դա հատկապես հնարավոր է այն ենթադրույթի շրջանակներում, ըստ որի

²⁷² I. Gelb, *A Study of Writing*, Chicago, 1963, p. xi.
²⁷³ Ժայռապատկերների լուսանկարները սփրով տրամադրել է Կարեն Թոխաթյանը:
²⁷⁴ Հիշողությունն այն մասին, որ ինչ-որ փոփոխված հնդեգրական համակարգերն ազդել են սեմականների վրա, թերեւս, պարունակվում է այն զրույցում, ըստ որի առաջին (պելասգյան) այբուբենը կոմանկները Հունաստանից տարել են Եգիպտոս, որտեղից ավելի ուշ Կադմոսն այն վերադարձրել է Բեոտիկա (Տե՛ս P. Грейвс, *Мифы Древней Греции*, М., 1992, с. 142).

այդ հնագույն այբուբենը²⁷⁵ ստեղծվել է սիւնայյան հանքերում աշխատողների բազմազգ միջավայրում: «Տառերի անունները» ենթադրվում կիսոսվի փյունիկյան որոշ տառանունների հնարավոր հայկական ծագման մասին, իսկ ստորեւ բերված է պատկերային նմանության մի քանի օրինակ:



Մարդու պատկեր Գեղամա լեռներից: Գրեթե նույնական է Կարի էլ-Հուի գրանշանին (աջից): Այծի պատկեր Գեղամա լեռներից: Նման է սիւնայյան եւ սաբեյան գրանշանի՝ [զ]: Արեւածաղի պատկեր Գեղամա լեռներից: Նույնական է փյունիկ *Զաֆ*-ին:

Բացի այդ՝ պետք է հաշվի առնել, որ հայկական ժայռապատկերները դեռ քիչ են ուսումնասիրված, եւ չի կարելի բացառել, որ այս դաշտում դեռ կարող են նոր գյուտեր եւ վերլուծություններ լինել:

Տեսականորեն նմուշների մեկ այլ խումբ կարող են ներկայացնել «նշանագիրք իմաստնոց» ցուցակների որոշ գրանշանները: Սրանք բազմաշերտ հավաքածուներ են, եւ այս հանգամանքը հուսադրում է, որ դրանցում կարող են պահպանված լինել հնագույն նմուշներ: Դրանց մի մասը կարող է զուգահեռներ ունենալ Արարատյան թափափորության շրջանի գրային մի շարք հուշարձաններում, որոնցից մի քանիսի համար արդեն առաջարկվել են հայերեն վերծանություններ²⁷⁶: Սրանց մյուս՝ զգալի մասը, որը Ա. Արաբիանյանն անվանում է Կիլիկյան խմբի նշանագրեր, եւ հավանական հեղինակ է համարում Կարդան Արեւելցուն (~1200-1271), ինչպես համոզիչ կերպով ցույց են տվել Հր. Աճառյանը եւ Ա. Արաբիանյանը, մաշտոցյան տառերից բաղկացած փակագրություններ են՝ ստեղծված որպես համառոտագրություններ: Ընդ որում՝ դրանց մի մասն էլ արտահայտում է քրիստոնեական գաղափարներ (*Աբրահամ, աղանդ, կռապաշտ* եւ այլն) եւ չի կարող նախաքրիստոնեական լինել կամ Հայոց լեզվի, գրի եւ ուղղագրության այնպիսի առանձնահատկություններ (օրինակ՝ ստեղծված են *օ* գրանշանի հիման վրա կամ բուրբաղի տառերով), որոնք ի

²⁷⁵ Օռլի Գոլդվասերն այդ այբուբենն առաջարկում է անվանել «սերաբիթյան»՝ սիւնայյան Սերաբիթ էլ-Խադիմ տեղանքի անունով, որտեղ՝ փիրուզի հնադարյան հանքերի շրջակայքում հայտնաբերվել են դրա գրանշանների նմուշները (Orly Goldwasser, *How the Alphabet Was Born from Hieroglyphs // Biblical Archaeology Review*, 36:02, Mar/Apr 2010).
²⁷⁶ Ա. Մովսիսյան, *Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը*, Եր., 2003, էջ 22; Յ. Կարազեղեան, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*. Սեպագիր տեղանուններ, հտ. 1, գիրք 1, Եր., 1998, էջ 51:

հայտ են եկել Ժ-ԺԲ դարից հետո եւ դրանից առաջ չեն կարող թվագրվել: Սակայն շարադրվող վարկածի շրջանակներում, երբ ենթադրվում է մաշտոցյան գրերի հիմքը կազմող դանիելյան գրերի նախամաշտոցյան ծագումը, դրանց նմանությունը մաշտոցյան տառածեւերին արդեն չի կարող դիտվել որպէս *վերջնական* փաստարկ՝ Մաշտոցի կողմից ուշ ստեղծված լինելու պատճառով: Դրանց մի մասն առնվազն կարող է լինել քրիստոնեական, բայց նախամաշտոցյան, իսկ որոշ փակագրություններ՝ նույնիսկ նախաքրիստոնեական: Ավելին, նույնիսկ *o* տառը պարունակող փակագրություններն արդեն չեն կարող *անվերապահորեն* համարվել ուշ ժամանակի այլ միայն այն դեպքում, երբ *o*-ն փոխարինում է *աւ* երկգրությամբ: Բանն այն է, որ ինչպէս տեսանք, հայերեն *Ռ*-ն ծագում է հնագույն *Այն*-ից, որը պարզ կլորակ էր, այսինքն՝ ձեւով համընկնում էր հայկական կլոր *o*-ին: Թեւեւ այս դեպքում եւս մի խնդիր է առաջանում՝ կապված այն հանգամանքի հետ, որ կլորակը գործածվում է նաեւ որպէս կրճատման նշան, եւ եթէ բառը պարունակում է *Ռ*-ն, դեռ պարզ չէ, թէ տվյալ դեպքում կլորակը ներկայացնո՞ւմ է այդ *Ռ*-ն, թե՞ կրճատման նշան է: Օրինակ՝ *գործ* բառի *ԳՕԺ* նշանագիրը որոշ, թեւեւ փոքր հավանականությամբ կարող է կասկածի տեղ թողնել: Ե՛ւ *զ* ե՛ւ *ծ* տառերը պատկանում են դանիելյան միջուկին: *Օ*-ն կարող է կրճատման նշան լինել, սակայն կրճատման մի նշան՝ *պատիվ*, այս նշանագրում արդեն կա, ու թվում է՝ այստեղ *o*-ն ներկայացնում է հենց *Ռ*-ն: Թեւեւ՝ չի կարելի նաեւ բացառել, որ սա ուշ ժամանակի նշան է, որում պարզապէս *ո*-ն սխալմամբ ներկայացված է կլոր *o*-ով, հատկապէս որ նշանագիրը բացահայտորեն բոլորգիր տառերով է կատարված:

Սակայն բոլորգիր, այսինքն՝ արագագրական տառի առկայությունը նույնպէս դեռ *վճռականորեն* չի կարող բացառել նախամաշտոցյան ծագումը, քանի որ նախ կարող է բացատրվել հնագույն արագագրական ձեւի գոյությամբ, որը կարող էր *կանխել* տվյալ տառի *ապագա* բոլորգիր ձեւը, ապա չի կարելի բացառել, որ ուշ ժամանակներում պարզապէս նոր ձեռագրով ձեւափոխված լինեն հնում ընդունված կրճատագրությունները:

Այդ մասին Ա. Աբրահամյանը գրում է. «*Չի՞ կարող պատահել, որ Վարդան Արեւելցուց առաջ գոյություն ունեցած լինելը հայկական նշանագրերի նախնական մի այլ ցուցակ՝ թարգմանված կամ փոխառված շատ հնում, անգամ Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության ժամանակ եւ վետեղված նրա հավելվածում: Անհավանական չէ, բայց այդ դեպքում մենք պիտի ընդունենք, որ հին ցուցակի նշանագրերը հիմնավորապէս ձեւափոխվել են 13-րդ դարում գործածական բոլորգիր տառերի հիման վրա, իսկ այդ՝ անկարելի է*»²⁷⁷: Ինչպէս տեսնում ենք, Ա. Աբրահամյանը սկզբունքորեն հնարավոր է համարում, որ այդ նշանագրերը

ստեղծված լինեն ԺԳ դարից շատ ավելի վաղ, սակայն, հակառակ դրան, անմիջապէս հայտարարում է, որ դա «անկարելի է»՝ չպարզաբանելով, թե ինչու չէին կարող *նշանագրերը հիմնավորապէս ձեւափոխվել ԺԳ դարում գործածական բոլորգիր տառերի հիման վրա*: Խնդիրն այնքան էլ միարժեք չէ: Մի կողմից՝ բոլորգիր գրատեսակը, ինչպէս ասվել է «Ինչու՞» են փոխվում տառածեւերը» գլխում, արագագրական գրի տեսակներից է, որոնք կանոնարկվեցին, երբ գրի իրագործման արագությունն ավելացնելու անհրաժեշտություն եղավ, երեւոյթ, որ հատուկ էր այդ ժամանակվա ամբողջ աշխարհին (դրա հետագա արագացման արդյունքը դարձավ նոտրգրի ստեղծումը, իսկ ավելի ուշ՝ ձեռագրի, որը կապված էր նաեւ գրչարհեստի հետագա զարգացման հետ, եւ վերջապէս խնդրի սկզբունքային լուծումը տվեց տպագրությունը), եւ համառոտագրությունների կարիքը, բնական է, որ առաջանար միայն այս ժամանակաշրջանում: Սակայն, մյուս կողմից, թեւեւ երկաթագիրը դանդաղ գրատեսակ է, դրա կիրառման դեպքում համառոտագրություններ նույնպէս պետք էին, քանի որ այն հիմնականում գործածվում էր առավել թանկ նյութի՝ մագաղաթի վրա գրելիս, երբ պահանջվում էր տեղի խնայողություն՝ ի տարբերություն բոլորգրի, որը սկսեց տարածվել համեմատաբար ավելի էժան թղթի հետ միաժամանակ. թերեւս՝ թղթի տարածումը հենց արագության խթանիչներից մեկն էր: Այսպիսով, համառոտագրությունը պետք էր նաեւ հին ժամանակներում, թեւեւ այլ պատճառով:

Իհարկէ, եթէ նշանագիրը փոխած լինի իր ձեւը, դա արդեն այլ նշանագիր է, եւ պարզ չէ՝ արդո՞ւք մենք իրավունք ունենք այն նախամաշտոցյան համարել: Մի խոսքով, բազմաթիվ եւ տարաբնույթ հարցեր կան, որոնք, ցավոք, մինչ այժմ, որքան մեզ հայտնի է, չեն քննարկվել:

Միեւնույն ժամանակ, եթէ փակագրությունը պարունակում է այն տառերը, որոնք շարադրված վարկածի շրջանակներում հազիվ թէ ընդգրկված լինեին հնագույն հայկական գրերում եւ Մաշտոցի հավելած տառերի շարքից են, ապա պարզ է, որ այդ փակագրությունն արդեն չի կարող նախամաշտոցյան լինել: Ինչպէս տեսանք, ամենայն հավանականությամբ, դրանք *Ժ, Զ, Զ, Զ, Զ, Զ* տառերն են: Եւ ընդհակառակը, եթէ փակագրությունը պարունակում է միայն 22 տառից բաղկացած միջուկի տառերը, ապա այն կարող էր լինել նախամաշտոցյան: Բնականաբար պետք է հաշվի առնել եւ այլ հանգամանքներ. օրինակ՝ բառի իմաստը, դիրքը, որտեղ այն հայտնվել է, կատարման արվեստը եւ այլն: Օրինակ՝ *փրկիչ՝ ԿԶ* նշանագիրը չի կարող լինել նախամաշտոցյան, քանի որ ոչ միայն քրիստոնեական հասկացություն է արտահայտում (կարելի էր ենթադրել, որ սա կարող էր գոնե Դ դարի գործ լինել), այլեւ պարունակում է *չ* տառը, որը պիտի որ Մաշտոցի ստեղծած տառերից լինի: Հավելենք նաեւ, որ տառերը բոլորգիր են, այսինքն՝ այս նշանագիրը ոչ մի կերպ չի կարող նախամաշտոցյան լինել:

²⁷⁷ Ա. Աբրահամյան, *Հայոց գիր եւ գրչություն*, Եր., 1973, էջ 209:

Վերջապես, նմուշներ կարող են գտնվել այնտեղ, ուր չենք էլ սպասում: Բանն այն է, որ, ըստ շարադրված վարկածի, Մաշտոցին հասած դանիելյան գրերը պիտի արագագրական բնույթի լինեին, այսինքն՝ արդեն գրեթե այսօրվա տեսքն ունենալին: Սակայն, ինչպես տեսանք, վրացական եւ աղուանական տառաձևերի վերլուծությունից հետեւում է, որ դրանք փոխառվել են հայերենից, դրա դեռեւս կոթողային վիճակում գտնվելու փուլում, հետեւապես Մաշտոցից ինչ-որ ժամանակ առաջ նրանք պետք է նաեւ կոթողային ձեւով գործածված լինեին: Իսկ այդ դեպքում դրանք պիտի որ հիշեցնեին փյունիկյան եւ հին հունական գրերը:

Եւ ահա պարզվում է, որ նման օրինակներ մենք կարծես թե ունենք, եւ դրանք այսպես կոչված «հունատառ ծածկագրեր» հայտնի գրություններն են: Դրանց թվին են պատկանում, օրինակ, Երուսաղեմի պատրիարքարանի մատենադարանի #1297 ձեռագրի գրությունը՝ ընդօրինակված 1363 թվականին Յովսեփ գրիչի կողմից²⁷⁸, որը գրիչն ուղեկցել է հետեւյալ գրությամբ. «Թէ դպիր ես, ընթերցիր, թե տգետ՝ հիմարեցիր»²⁷⁹:

ՕՐ Շ Ի ԱՐԻՄՑ ԳԳՕՎԵ ԱՏԱԿ Կ Ի ԻՆՈՒ
ՈՐ ՉԵԱՐԻՆՍ ԳԳՈՒԵ ԱՏԱԿԸԼԻՆԵ

ՕՐ Ի Ծ Օ Ծ Ե Ր Մ Ա Ն Ե Ն Զ Յ Մ Ծ Ն Կ Ե Ր Ա Կ Ր Ե
Ո Ր Ի Ծ Ո Վ Ս Ե Ր Մ Ա Ն Ե Ն Զ Չ Կ ՈՒ Ն Ս Կ Ե Ր Ա Կ Ր Ե

ԱՐԵԳԱԿՆԿՕՒՐԱԳՕՉԾԱԳԵ ԵՎ ՕՉՄՏԱՆԵ
ԱՐԵԳԱԿՆԿՈՒՐԱԳՈՉԾԱԳԵ ԵՒ ՈՉՄՏԱՆԵ

Ընդունված է կարծել, որ նման գրություններում Յայոց տառերով գրված են միայն այն հնչյունները, որոնք չկան հունարենում: Սակայն մի շարք տառերի նկարվածքները, որոնք հիշեցնում են Յայոց տառերի վերականգնված հնարավոր ձեւերը, ստիպում են մտածել, որ ամեն ինչ այնքան էլ պարզ չէ: Այսպես՝ ուշագրավ է Չ-ի զոգավոր վերին տարրը. արդյոք սա հունականն է, թե՞ հայկականը, կամ Գ-ն, այն լիովին հայերեն տառի ձեւն ունի, մինչդեռ գոյություն ունի դրա հունական Դ ձեւը. ինչո՞ւ է գրիչը նախընտրել հայեցի ձեւը, եթե խոսքը ծածկագրի մասին է: Ինչո՞ւ է կիրառվել հայերեն Ի-ն, եթե այդ տառը կա նաեւ հունարենում: Եւ արդյոք Ե-ն հայկական է, թե՞ հունական: Այս հանգամանքները կասկած են հարուցում, որ այս միջնադարյան գրությունը ոչ թե հունատառ հայերեն է, այլ հենց *հայատառ հայերեն*, որի նկարվածքը հրաշքով պահպանվել է՝ ընդօրինակվելով հին, մեզ չհասած ձեռագրերից: Ցավոք, նման ենթադրությանը հակասում է Չ տառի գոյությունը, որը, եթե ճիշտ են սույն հետազոտության դրույթները, չէր կարող լինել նախամաշտո-

²⁷⁸ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 25:
²⁷⁹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 270:

ցյան հայկական գրության մեջ: Գուցե, այս նմուշը հետագա աղավաղման արդյունք է. չէ՞ որ սա ԺԴ դարի ընդօրինակություն է: Սակայն բոլոր դեպքերում, կարծում ենք, «հունատառ հայերեն» կոչված երեսույթի ուսումնասիրությունը կարող է դեռ հետաքրքիր բացահայտումների բերել:

Ավելացնենք նաեւ, որ պահպանվել է հորենացու գրքի մի պատառիկ, որում «յայլոց դպրությանց»-ին համապատասխանում է՝ «յունականին վվաղնջուց գրեալ շարագիրս տառից»²⁸⁰, այսինքն՝ այս աղբյուրը դանիելյան գրերը հունական է կարծում: Մենք հիմք չունենք՝ համարելու, թե այս պատառիկը հորենացու գրքի սկզբնական տարբերակն է ներկայացնում, սակայն արդեն տեսանք, որ դանիելյան գրերը, փոխառված լինելով փյունիկյանից՝ պիտի հիշեցնեին նույնպես փյունիկյանից փոխառված հունական գիրը, հետեւապես դրա նմուշները տեսնողը հեշտությամբ կարող էր այն հունական կարծել: Ուրեմն, եթե ճիշտ է այս տեղեկությունը, ապա այն լրացուցիչ փաստարկ է, որ որոշ «հունատառ ծածկագրեր» կարող են իրականում ներկայացնել Յայոց հին գիրը:

3.3.2. *Տառերի հաջորդականությունը*

Յայոց այբուբենի «լրացուցիչ» տառերի դասավորության օրինաչափությունը միշտ էլ հետաքրքրել է հետազոտողներին: Ինչպես հայտնի է, այբուբենի փոխառման դեպքում լրացուցիչ գրանշանները սովորաբար դասավորվում են կամ գծապատկերային սկզբունքի համաձայն՝ այն գրանշանից հետո, որի օրինակով կամ հիմքի վրա դրանք ստեղծվել են (արաբական, պարսկական, չեխական եւ այլն) կամ հիմնական մասից հետո՝ վերջում (վրացականը, սլավոնականը եւ այլն), մինչդեռ թեւեւ Յայոց այբուբենի հիմնական կորիզը ակնհայտորեն հետեւում է հունական այբբենական կարգին հայկական հավելյալ տառերը ցրված են նախորդների միջեւ կարծես թե առանց որեւէ օրինաչափության:

Իհարկե, հավանականությունը, թե դա պատահական սկզբունքով է արվել, չափազանց ցածր է, քանի որ որոշ տառերի դիրքերում դիտվում են *հայտնի* օրինաչափություններ: Այսպես՝ խորհրդապաշտական արժեք ունեցող *Է* տառը, որից սկսվում են *Էն*, *Էություն* բառերը, գտնվում է 7-րդ տեղում, թեւեւ ավելի բնական կլիներ տեսնել այդտեղ փյունիկյան *խեթ*-ին եւ հունական *էտա*-ին համապատասխանող հայերեն *Ըթ*-ը: Դրանից բացի՝ այբուբենի տառերը հավասարակողմ եռանկյունու (բուրգի) տեսքով դասավորելու դեպքում դրա գագաթներում հայտնվում են քրիստոնեական երրորդության անձանց առաջին տառերը՝ *Ա* (*Աստված*, հերթական համարը՝ 1), *Ս* (*Սուրբ Յոզի*, հերթական համարը՝ 29), *Բ* (*Բրիստոս*, հերթական համարը՝ 36), իսկ շեղանկյան (բառակուսու) տեսքով դասավորելու

²⁸⁰ Ա. Մաթեոսյան, *Ղազար Փարպեցիի մաշտոցյան գրերի մասին* // ԳԲԳ, 2002, 3^{րդ} 2, էջ 104:

դեպքում դրա գազաթների տառերով ժամացույցի սլաքի ուղղությամբ կարդացվում է ՅԱՅԶ²⁸¹:

Խորհրդապաշտական է նաև տառերի թիվը՝ 36՝ ըստ տարվա տասնօրյակների թվի: Ինչպես տեսնում ենք, կա առնվազն երեք դիտարկում, եւ դրանց բանակը հուշում է, որ գործ ունենք օրինաչափության, այլ ոչ թե պատահականության հետ: Այսինքն՝ տառերը «լրացուցիչ» դասավորվել են *Յ, Յ* եւ *Ս* տառերի միջեւ այն հաշվարկով, որպեսզի ստացվեն հենց այս գաղտնագրերը: Բայց արդյոք մինչեւ *Յ* լրացուցիչ տառը տեղադրված (*Ը, Ժ, Լ, Խ* լրացուցիչ տառերը կամ *Յ-ի* եւ *Յ-ի* միջեւ տեղադրված *Ձ* եւ *Ճ* տառերը հայտնվել են այնտեղ պատահաբար, թե՞ դրանք ընտրվել են ինչ-որ լրացուցիչ սկզբունքից ելնելով՝ դեռեւս պարզ չէ: Օրինակ՝ *Պ*. Պողոսյանը կարծիք է հայտնել, թե դա արվել է՝ ելնելով առանձին տառերին ավանդաբար հատկացվող իմաստների այնպիսի համաձայնեցմամբ, որ ստացվի ձոն՝ նվիրված Աստծուն²⁸²: Նա իր գրքում բերում է նաև վերականգնած ձոնը՝ պնդելով որ հենց այն ստանալու պայմանով են դասավորվել տառերը: Սա լրիվ անհավանական վարկած չէ, թեպետ պետք է նկատել, որ առանձին տառերին որոշակի իմաստ հաղորդելու ավանդույթն ինքնին ենթադրում է այդ տառերի գոյությունը: Սույն հետազոտության տրամաբանության շրջանակներում դա դեռ բնական կհնչեր, սակայն նույնիսկ այս դեպքում մենք չենք կարող համոզված կերպով պնդել, որ Մաշտոցի ժամանակ տառերին հաղորդվել են հենց նույն իմաստները, ինչ ավելի ուշ ձեռագրերում Ի վերջո *Պ*. Պողոսյանի առաջարկած ձոնը սկզբնատառային բանաստեղծություն է, որպիսիք բազմաթիվ են: Բավական է համեմատել, ասենք, Ներսես Շնորհալու «Անավոտ լուսոյ» ձոնի հետ: Այլ կերպ ասած՝ վտանգ կա, որ *Պ*. Պողոսյանի վարկածում շփոթված են պատճառն ու հետեւանքը, թեեւ որոշ համապատասխանություններ (ներառյալ վերելում նշվածները), օրինակ՝ *Թ-թագավոր, Ն-Նագովրեցի* (հատկապես որ սա հաջորդում է *Յ-Յիսուսին*), *Չ-չար* եւ այլն, բավական համոզիչ են: Նման կարծիք է հայտնում նաև Վ. Սարգսյանը՝ գտնելով սակայն, որ միայն առաջին հինգ՝ *Ա, Բ, Գ, Դ, Ե* տառերի *այք, բեն, գիւ, դա, եչ* անվանումները «արեգակին նվիրված մի հին ծիսական աղոթքի մնացորդներ են»²⁸³: Կարծում ենք՝ սա էլ ավելի անհավանական ենթադրությունների արդյունք է:

Սակայն նկատված քիչ թե շատ համոզիչ օրինաչափությունները հուշում են, որ «լրացուցիչ» տառերի դիրքն ունի, ամենայն հավանականությամբ, ոչ թե հնչյունական, այլ դեռեւս չբացահայտված, բայց գաղափարական հիմք:

²⁸¹ Ես մեկ անգամ նկատեմք, որ սրանք միանգամայն պարզ եւ ակնհայտ փաստեր են, որոնց որոշ հեղինակներ, ցավոք, վերագրում են չափազանցված նշանակություն՝ ներկայացնելով գործն այնպես, ասես հենց սրանք են Յայոց այբուբենի հիմնական արժանիքները, իսկ Մաշտոցի նպատակը եղել է ոչ թե Յայոց լեզուն գրառելու գործիք ստեղծելը, այլ մոզական հանելուկներ կազմելը:
²⁸² Պ. Պողոսյան, 1600-ամյա գաղտնիքներ, Եր., 1991, էջ 100:
²⁸³ Վ. Սարգսյան, Յայոց գրերի ծագումը, Եր., 1999, էջ 304:

3.3.3. *Տառերի թիվը*

Յր. Աճառյանը առանձին խոսում է դանիելյան գրերի մասին եւ առանձին՝ մաշտոցյան: Մենք միավորում ենք երկու բաժինները: Դա իմաստ ուներ անել, քանի որ Յայոց գրերի թվի մասին հաղորդումների մեծ մասը երկու համակարգերի մասին էլ տեղեկություններ է հայտնում: Խոսելով դանիելյան գրերի բանակի մասին՝ Յր. Աճառյանը նկատում է, որ պատմիչները տարբեր թվեր են հայտնում դրանց ենթադրական թվի մասին՝ 17, 22, 24, եւ 29. «Այս պանապանության պատճառն իմանալու համար պետք է քննել, թե՞ ի՞նչ լեզվից, այսինքն ի՞նչ այբուբենի համեմատությամբ ձեռագրած էր հիշյալ այբուբենը»²⁸⁴: Այսինքն՝ Յր. Աճառյանը լռելյայն ընդունում է, որ դանիելյան գրերը չեն գործածվել Յայոց լեզվի համար՝ բացի այն երկու տարուց (կամ ամսից, կամ շաբաթից, կարելու չէ), իսկ միջնադարյան աղբյուրների բերած թվերը պարզապես արտահայտում են հեղինակների կարծիքներն այն մասին, որ դրանք այս կամ այն հարեւան այբուբենի տառեր են եղել: Այսինքն, եթե հեղինակը հաղորդում է 17 կամ 22 թվերը, ապա նկատի ունի, որ դանիելյան գրերը արամեական գրերն են, եթե 24, ապա՝ հունական: Առավել զարմանալի է 29-ը թվի մեկնաբանությունը: Յր. Աճառյանը մի տարօրինակ համադրություն է կատարում հունական եւ ասորական այբուբենների միջեւ՝ «երկու այբուբենները միացնելով եւ պակասները իրարով լրացնելով» եւ վերագրում է նման հաշվարկ այն մատենագիրներին, որոնք դանիելյան տառերի թիվը 29 են համարում²⁸⁵: Թեեւ դա շատ ավելի պարզ կարող է բացատրվել՝ հիմնվելով Մովսես Խորենացու այն ձեռագրի վրա, ըստ որի՝ Մաշտոցը հավելել է միայն 7 ձայնավորները²⁸⁶, որպես 36-ից հանած 7: Սա, ի դեպ, նկատել է նաև Ս. Մուրավյովը²⁸⁷:

Սակայն ամեն ինչ այդքան էլ պարզ չէ: Յր. Աճառյանն էլ է նկատում, որ հաշվարկը բարդանում է նրանով, որ թե՛ արամեական այբուբենում եւ թե՛ հունականում կան տառեր, որոնք հայերենին պետք չեն, եւ այդ դեպքում հաշվարկը կարող է այլ լինել: Բայց մյուս կողմից, դանիելյան գրերը այսպես թե այնպես Յայոց լեզվին չհամապատասխանող գրեր էին, եւ դրանցում կարող էին ավելորդ տառեր լինել: Մի խոսքով, պարզ է, որ Յր. Աճառյանի առաջարկած հաշվարկի եղանակը որեւէ օգուտ չի կարող տալ, քանի որ ամբողջովին բխում է նրա ենթադրություններից:

Այս հարցի վերաբերյալ հողված ունի նաև Է. Պիվազյանը²⁸⁸, որում դանիելյան գրերի բանակի մասին աղբյուրների հակասական տվյալները նա դիտում է որպես

²⁸⁴ Յ. Աճառյան, Յայոց գրերը, էջ 443:
²⁸⁵ Յ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 444:
²⁸⁶ «Եւ տեսանէ ոչ ի բուն երազ եւ ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութազնայ հոգոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի», Մովսես Խորենացի, Յայոց պատմութիւն, Գ, ծգ // Մատենագիրք Յայոց, հտ. Բ, էջ 2081:
²⁸⁷ С. Муравьев, Из истории одного открытия, с. 39.
²⁸⁸ Է. Պիվազյան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության հարցի շուրջը // ՊԲԳ, 1962, № 4, էջ 161:

դրանց չզոյության ապացույց: Սակայն այս կարգի ապացույցները նույնպես սոսկ հռետորական են: Որքան էլ մեր պատմիչների վկայությունները հակասական թվան, դա չի կարող բավարար դիտվել իրենց հաղորդածն անհիմն ճանաչելու համար: Նույնիսկ այսօրվա մեր այբուբենի տառերի թվի մասին կարելի է լսել տարբեր կարծիքներ: Այսպես, ոմանք կարծում են, որ Հայոց տառերի թիվը 36 է՝ գտնելով, որ *O* եւ *Յ* տառերը՝ որպես ոչ մաշտոցյան, պետք է արտաայբբենական համարվեն: Մյուսները (տոհերիս հեղինակը եւս) գտնում են, որ տառերի թիվը 38-ն է, այսինքն՝ նշված երկու տառերը ներառյալ: Ցավոք, մի տարածված կարծիքի համաձայն էլ (այն հաղորդվում է ժամանակակից դասագրքերով)՝ Հայոց այբուբենում 39 տառ է՝ ներառյալ կցագիր *Ա-ը*: Անգամ որոշ լեզվաբաններ անցած դարի 90-ականներին փորձում էին պետականորեն հաստատել 40 տառից բաղկացած այբուբեն, որը, *Ա-ից* բացի (*Ե-վ* մեծատառով հանդերձ), պիտի ներառեր նաեւ *Ո՛* երկգրությունը՝ որպես լիիրավ տառ (*Բ-ի* կողքին): Այսպիսով, ունենք 36, 38, 39 եւ 40 թվերը²⁸⁹: Եթե նման վիճակ է տիրում այսօր մեր աչքի առջեւ, ինչպե՞ս կարող ենք սպասել, որ մեր պատմիչները (որոնք, ի դեպ, իրենց կարծիքները միաժամանակ չեն արտահայտել, այլ դարերի ընդմիջմամբ) մեզ տային միարժեք տվյալներ:

Եւ նման վիճակ է տիրում ոչ միայն հայերենում: Օրինակ՝ քանի՞ տառ կա լատինական այբուբենում: Ոմանք կասեն 26՝ դատելով անգլական այբուբենի տառերի թվից: Մյուսները կասեն, որ դասական լատիներենում *W* երկգրությունը այբբենական տառ չի եղել, ուստի տառերի թիվը պետք է համարել 25-ը: Բայց այդպես եղել է միայն նոր ժամանակներից սկսած, երբ ստեղծել են *I-ի* բաղաձայնական, *J* եւ *V-ի* ձայնավոր՝ *U* տարբերակները: Իսկ հնագույն ժամանակներում մ. թ. ա. է դարում, տառերի թիվը եղել է 21-ը: Մյուսները կասեն 23՝ *G* եւ *Y* տառերը ներառյալ (մ. թ. ա. 9 դարի դրությամբ): հիշենք, որ այդ միջոցին *Z* տառը հեռացվել էր այբուբենից եւ հետո նորից վերականգնվել: Դեռ չհաշված, որ Կլավդիոս կայսեր օրոք լատինական այբուբենի մեջ ներառվել էին իր կողմից ներմուծված եւ իր անունը ստացած 3 տառերը, *Չակասիզմա-ն՝ Չ*, որն արժեքով մոտավորապես համապատասխանում էր հունական *Ψ-ին*, *Շրջված դիզամմա-ն՝ Յ* (մոտավորապես *W-ի* արժեքով) եւ *Կես Ի-ն՝ Ի*:²⁹⁰ Կլավդիոսի մահից հետո այս տառերը դուրս եկան գործածությունից, սակայն երբ դրանք գործածվում էին լատինական տառերի թիվը 3-ով ավելի էր:

Կամ նույն հունական այբուբենը, որի տառերի թիվը լռելյայն համարվում է 24-ը: Սակայն եթե դրան հավելում ենք միայն թվային արժեք ունեցող *Ստիզմա*,

²⁸⁹ Մի զավեշտական հանգամանք. Զր. Աճառյանի «Հայոց գրերի» հրատարակության 474 էջում կա խմբագրության հետեյալ ծանոթագրությունը. «Չեղիակը [այսինքն՝ Զր. Աճառյանը - Ռ. Թ.] այբուբենի տառ չի համարում *Ա-ը*, որ սկզբունքորեն ճիշտ է, թեեւ այժմ նա մուծվել է այբուբենի մեջ: - *Խմբ.*» (Զ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, էջ 474):

²⁹⁰ Նկատենք, որ այս տառը թե՛ ծեփով, եւ թե՛ արժեքով զարմանալիորեն նույնանում էր ապագա հայերեն *Ին-ի*ն՝ *Ի*, իսկ սույն հետազոտության տրամաբանության շրջանակներում, կարող էր իրոք հայկական *Ի-ը* լինել, այսինքն՝ փոխառված լինել հին Հայոց գրից:

Սամայի եւ *Կոսպայա* տառերը, ապա կարելի է համարել, որ հունական տառերի թիվը 27-ն է: Կամ ռուսական այբուբենը, որը նույնպես քանիցս փոխել է տառերի քանակը Պետրոս ցարի, հետո՝ Լենինի օրոք, իսկ այսօր էլ *Է՛* տառի կողմնակիցների ու հակառակորդների միջեւ պայքար է ընթանում, եւ կախված այդ պայքարի արդյունքից՝ ռուսերենի այբուբենի տառերի թիվը կլինի 33, կամ 32: Կան եւ այլ օրինակներ: Վերոնշյալից հետեւում է, որ դանիեյան գրերի թվի մասին կարծիքների բազմազանությունը չի նշանակում, թե դրանք զուրկ են հիմքից եւ սոսկ վերարտադրում են հարեւան հայտնի այբուբենների տառաբանակները: Այս պահին արդեն սույն հետազոտության շրջանակներում մեր պատմիչների վկայությունները կարելի է մեկնաբանել բոլորովին այլ տրամաբանությամբ:

Այսպես՝ ինչ վերաբերում է 22 թվին, ապա սա, ինչպես տեսանք, հայկական այբուբենի հիմքը կազմող տառերի թիվն է. այն փյունիկյան դասական այբուբենի տառերի նույն թիվն է: Այբուբենը որոշակի զարգացում էր ստացել գրչական տարբերակների եւ երկգրությունների հաշվին, սակայն նոր գրանշանները կարող էին այբբենական չհամարվել: Թե որ տառերը կարող էին նկատի առնվել դրանց թիվը 24-ը համարվելու դեպքում, դժվար է ասել: Սա Դավիթ Անհաղթին վերագրվող հանելուկներից մեկում անկարկվող թիվն է եւ հոգեբանական նկատառումներից ելնելով՝ ամենահավանականն է թվում. հանելուկի հիմքում կարող է դրվել միայն հանրահայտ որել: Դրույթ: Մենք հակված ենք կարծելու, որ խոսքը փյունիկյան կորիզի եւ *Խ* ու *Փ* տառերին է վերաբերել, քանի որ դրանք, ինչպես ասվեց, կարող էին ունենալ հայկական հնագույն ծագում: Սակայն, իհարկե, տարբեր մարդիկ այդպիսիք կարող էին համարել նաեւ այլ տառեր, օրինակ՝ միեւնույն տառի տարբերակներ հանդիսացող *Չ/Ձ* եւ *Ո/Ը* տառերը եւ այլն:

Ոմանք էլ հնագույն ժամանակների տրամաբանությամբ կարող էին լիարժեք տառեր չհամարել ձայնավորները եւ փյունիկյան այն գրանշանները, որոնք հայերենում ստացել էին ձայնավորի արժեք՝ *Ալեֆ-ը*, *Յե-ն*, *Խալ-ը*, *Յող-ը* եւ *Այն-ը* կարող էին համարել որպես այբուբենից դուրս մնացած (*Խեթ-ը* հնում կարող էր դեռ հանդես գալ *spiritus asper-ի՝ [h]* հնչյունի արժեքով, ինչպես վկայում է հնագույն հունական արձանագրությունը²⁹¹ եւ ձայնավոր չհամարվել): ահա եւ 17 թվի բացատրությունը: Իրոք, ըստ Վարդանազրեի՝ տառերի թիվը բացատրվում է հետեյալ կերպ. «...*չկարացին ինչ անելի շահիլ զի պառաջինն ի նոցանէ էր առեալ եօթն և տասն գիր, զի փինգ գիրն թողեալ էր և չէր թարգմանեալ*»²⁹²: Թվում է, թե մենք իրավունք ունենք՝ ենթադրելու, որ Վարդանազրեում կարող են պահպանված լինել այդ հնագույն դեպքերի արձագանքները:

Վերջապես, 29 թիվն ամենեւին էլ պարտադիր չէ, որ դիտվի իբրեւ 36-ից հանած 7 ձայնավոր, կամ բացատրվի Զր. Աճառյանի հաշվարկով. այդ 7 գրանշանները,

²⁹¹ И. Гельб, *Опыт изучения письма*, Москва, 1982, с. 176.
²⁹² Ըստ՝ Զ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, էջ 446:

այսինքն՝ Մաշտոցի հավելած տառերը, ինչպես արդեն տեսանք, հիմնականում երկն են ոչ ծայնավորներ: Թերեւս միակ ծայնավորը կարող էր եղած լինել *է-ն*: Եւս *է-ը* կարող էին լինել այսպես կոչված կրկնավորները՝ համաչափությամբ ստացվող *թ, Չ, Ջ, Յ* տառերը: Ու եւս երկուսը՝ *Յ-ն* եւ *Յ-ն*: Իսկ 24 տառանոց միջուկի եւ 29-ի տարբերությունը կազմող 5 տառերը կարող են լինել միջուկի տառերի կրկնությունները եւ տարբերակները՝ *Ձ, Լ, Վ, Ռ* տառերը, ինչպես նաեւ *Ճ-ն*, որոնք բառինը տառանոց հիմքի կողմնակիցները կարող էին համարել այբբենական: Այսպիսով հնարավոր է, որ այս 29 եւ 7 տառերի մասին տեղեկությունն իրոք ճիշտ լինի, սակայն հետագայում ազդվելով Կորյունի «սիրողայններով եւ կապերով» են թաղրած լինեն, թե խոսքը վերաբերում է ծայնավորներին:

Անցնելով մաշտոցյան գրերի թվին՝ *Յ*ր. Աճառյանը բերում է 12 աղբյուրների հաղորդումները: Սրանց մեծ մասի տեղեկություններն արդեն դիտարկել ենք: Առավել կարելու է Ներսես Շնորհալու «Վիպասանության» հաղորդումը.

*Չաստուածագիծ տառս ընկալեալ,
երիւբ տասամբբ վեցիւբ յանգեալ,
կրեգական ելիւբ չափեալ:*

*Յ*ր. Աճառյանը գրում է, թե «հատվածի երկրորդ տողը շատ պարզ է. ներկայացնում է 36 թիվը ($3 \times 10 + 6 = 36$). իսկ երրորդ տողը՝ մուգ է մնում: Չամբյանը (Ա. 755) համարում է իբրեւ ակնարկություն տարվա 360 օրերի («բոտ 36 տասանց աուրց տարույն»)»²⁹³: Թե ինչու է *Յ*ր. Աճառյանը երրորդ տողը մուգ համարում, այն էլ Ա. Չամբյանի պարզաբանումից հետո, անհասկանալի է: Կարծում ենք՝ սա նույնիսկ ակնարկ չես անվանի. ուղիղ գրվածքով ասված է: Իսկ որպեսզի առհասարակ կասկած չլինի, կարող ենք հիշել նաեւ աղուանական այբուբենի տառերի քանակը՝ 52՝ տարվա շաբաթների թվով:


3.3.4. Այբուբենի հորինվածքը

«Մեսրոպյան այբուբենի հորինվածությունը» կոչվող բաժնում *Յ*ր. Աճառյանը քննում է գրանշանների անջատական կամ կցական (կցողական) լինելու հարցը: Իրականում սա մտացածին հարց է, սակայն հետազոտողներն այնքան մեծ նշանակություն են տալիս դրա քննարկմանը, որ իմաստ ունի այդ հարցին գոնե հպանցիկ անդրադառնալ:

Գրային համակարգի անջատական կամ կցական լինելը, գրանշանների ձեւը տարբեր դիրքում փոխել-չփոխելը ավելի շատ կախված է գրչական տվյալ դպրոցում դրա ընկալումից: Եւ հիմնականում դա պայմանավորված է նրանով, որ որոշ համակարգերում գրանշանները կոթողայնացվում էին դրանց արագագրական

²⁹³ *Յ. Աճառյան*, նշվ. աշխ., էջ 474:

հավելյալ ազիներով հանդերձ: Այսօր էլ, օրինակ, լատինական գիրը թեւ համարվում է անջատական, բայց արագ գրելիս այն կցական է: Այսպես՝ վերցնենք լատինատառ մի ձեռագիր նմուշ՝ Բոյթ Իիթմընի (Walt Whitman) ձեռագրերից²⁹⁴:



Այստեղ պարզորոշ երեւում են տարբեր դիրքերում միեւնույն տառի տարբեր իրագործումները: Օրինակ՝

f. բառասկզբում *f* եւ բառավերջում *f*,
i. բառասկզբում *i* եւ բառամիջում *i*,
s. բառամիջում *s* եւ բառավերջում *s*:

Եւրոպական գրչական մշակույթի ցանկացած ներկայացուցչի համար դրանք միեւնույն տառերն են, քանի որ տարբերությունները կապված են միացնող գծիկների լինել-չլինելու հետ (թեւեւ f-ի դեպքում նույնիսկ ունենք հենց գրույթային տարրի՝ հորիզոնական թեւի գեղչում. գրողն այն ընկալել է որպես կապակցման տարր. այդ մասին ասվել էր գրանշանների արագագրային աղավաղումների բաժնում): Բայց հաճախ նույն կարգի տարբերությունները, օրինակ, արաբական գրում դիտվում են կանոնական եւ հանձնարարվում գիրը յուրացնելիս: Այսպես՝ համարվում է, որ *Ալիք-ն* ունի երկու ձեւ. առանձին՝ *ا* եւ վերջնադիրք՝ *آ*, մինչդեռ ակնհայտ է, որ երկու ձեւերը տարբերող ստորին հորիզոնական ելուստն ընդամենը կապակցող գիծն է, որը չունի գրույթային արժեք եւ ոչնչով չի տարբերվում վերեւում բերված *i*-ի կապակցող գծից: Իհարկե, միշտ չէ, որ տարբերակներն այդքան քիչ են զանազանվում: Դարերի ընթացքում արաբական գրչական դպրոցի կողմից գրանշանները կցագիր դիրքերում առանձնահատուկ ձեւով մշակելը բերել է դրանց ոչ ակնհայտ ձեւափոխմանը, եւ այսօր միշտ չէ, որ հնարավոր է լինում միանգամից բացատրել, թե ինչպես է գոյացել այս կամ այն դիրքային տարբերակը: Սակայն խնդրի եռությունը դրանից չի փոխվում:

²⁹⁴ <http://www.tei-c.org/Activities/Council/Working/tcw19.html>

Ավնհայտ է, որ կցական գիրը շատ ավելի դժվար է յուրացնել: Փաստորեն վի գրանշանի փոխարեն սովորողները ստիպված են լինում յուրացնել չորսը, թեև միշտ չէ, որ կցական գրերում կանոնարկված են լինում բոլոր չորս դիրքերի գրելաձևերը: Սակայն Հայոց գիրն անջատական է: Ըստ ուսումնասիրողների՝ այդ սկզբունքը Մաշտոցն ընդօրինակել է հունական գրից: Շարադրվող վարկածի շրջանակներում սա արդեն իսկ Հայոց հնագույն գրի հատկությունն էր, որը Մաշտոցը անփոփոխ թողեց:

3.3.5. *Տառերի անունները*

Համառոտ անդրադառնալով նաև տառանուններին, թեպետ սա հիմնականում կապ չունի գրչագրական խնդիրների հետ, սակայն քանի որ գրանշանների նախածեւերը կարող են պատկերագրական բնույթ ունեցած լինել՝ սկզբնահնչյունային տեսակի, որոշակի կապ ստեղծվում է: Թեև պետք է հաշվի առնել, որ, ի տարբերություն տառաձևերի, տառանունների հարցում անորոշությունը շատ ավելի մեծ է, եւ այստեղ հարցերն ավելի շատ են, քան պատասխանները:

Նախ՝ փյունիկյան տառանունների մասին: Ընդունված է համարել, որ դրանք սեմական են: Դա բնական է թվում, քանի որ դրանք պիտի որ ստեղծված լինեին սեմական միջավայրում: Բայց իրականությունը, թվում է, թե քիչ ավելի բարդ է եղել: Նախ, ինչպես արդեն նշեցինք, ոչ բոլոր տառանուններն են վստահորեն ստուգաբանվում սեմական հողի վրա (օրինակ՝ ըստ Ի. Գեյբի՝ *Յէ, Խտթ, Տետ, Ծարդե* տառանունները): Սակայն ամեն ինչ պարզ չէ նաև նրանց դեպքում, որոնք, թվում է, ստուգաբանվում են սեմական բառերով: Օրինակ, ըստ Ռ. Գրեյվսի, հոյսները համարում էին, որ իրենց առաջին տառը՝ *Ալֆա*-ն, այդպես է կոչվում ի պատիվ հայտնի *Ալֆեոս* գետի²⁹⁵: Դրանից բացի՝ երկրորդ տառի անունն էլ կարող է կապ չունենալ սեմական «տուն» գաղափարի հետ կամ կապվել անուղղակի՝ «կեչու փայտից կառուցված տուն» իմաստով: Բանն այն է, որ այն համընկնում է կելտերի օգամյան *բեթ-լուիս-նիոն* այբուբենի առաջին բաղաձայնի անվան հետ, որը նշանակում է «կեչի»: Իսկ եթե հիշենք, որ փայտից, այն էլ կեչու փայտից կառուցված տունը բնորոշ չէ Սինայյան թերակղզուն կամ Պաղեստինին, ապա դա մեզ ուրիշ տեղ է տանում, այն է՝ Երոպա:

Վերոնշյալ երկու տառանուններով չի սահմանափակվում այն տառանունների ցանկը, որոնցում կարելի է հնդեւրոպական արմատներ տեսնել: Այսպես՝ *Չայն*-ը ստուգաբանում են որպես «գենք», սակայն, ըստ Հր. Աճառյանի «Արմատական բառարանի», այս արմատը սեմականները փոխառել են պահլավերենից, այդպես էլ հայերենը: Երբեմն, ելնելով այս գրանշանի հունական *Չետա* անունից, վերականգնում են դրա մեկ այլ անվան գոյությունը՝ կապված «ծեթ» հասկացության հետ, որը

²⁹⁵ P. Грейвс, *Мифы Древней Греции*, Москва, 1992, с. 142.

թվում է սեմական: Սակայն պետք է ասել, որ այս արմատի ծագումը կարելի է վիճելի համարել: «Արմատական բառարանում» Հր. Աճառյանն այն դրել է սեմականներից ծագածների մեջ՝ «սեմական բառ, որ ընդհանուր տարածուած է Արեւելքում»: Միեւնույն ժամանակ ստուգաբանության պատմության մեջ կան բավականին համոզիչ պնդումներ, որ բառը բնիկ հայկական է եւ փոխառվել է հակառակ ուղղությամբ (ի դեպ, սոսկ վրիպակ է, թե այլ բացատրություն ունի, բայց բառահողվածն օժտված է բնիկ բառերի նշանով՝ խաչով):

Եւ մեկ տառանուն՝ *Պէ-ն*, որը սովորաբար ստուգաբանում են «բերան», հատկապես որ դրա հնագույն ձևում կարելի է տեսնել *բերան* պատկերագիրը: Այս բառը բնիկ հայկական է եւ ծագում է *Խե. *bher-* արմատից: Այնպես որ սեմական այս բառի մեջ էլ հեշտությամբ կարելի է տեսնել նախահնդեւրոպական ակունք (առաջին տառի խոզ լինելը չի խանգարում. օրինակ՝ հայերենի շատ բարբառներում այն խլացված է):

Ուշագրավ է նաև *Յոդ* անվանումը: Այն սովորաբար ստուգաբանում են որպես սեմական *յար*՝ «ծռոք»: Սակայն այն պատկերագիրը, որից ենթադրվում է այդ բառի ծագումը՝ *Յ*, կարող է մեկնաբանվել նաև որպես բնիկ հայերեն *Յոդ* բառը, եթե ընդունենք, որ այս պատկերագրի հիմնական մասն արմունկն է:

Ասվածը կարող է նաև առաջին այբուբենի ծագման առանձնահատկությունների արտահայտությունը լինել: Ինչպես նշեցինք այբուբենի ակունքների մասին խոսելիս, կան կարծիքներ, որ այբուբենը թեև ստեղծվել է սեմական տարածքներում, սակայն շատ բազմազգ միջավայրում (հնարավոր է, որ, իրոք, տարբեր երկրներից հավաքված, քարհանքերում աշխատող բանվորների միջավայրում), եւ տառանունների տարբեր ծագումը կարող է դրանով պայմանավորված լինել:

Այժմ հայկական տառանունների մասին: Պ. Պողոսյանի կարծիքն այս հարցում արդեն ներկայացրել ենք վերելում: Այլ ճանապարհով է շարժվել Վ. Սարգսյանը, որի վերլուծության հիմնական մոտեցումները նույնպես ներկայացվել են: Հարագատ մնալով «ներքին ստուգաբանության» իր սկզբունքին՝ նա գտնում է, որ Հր. Աճառյանի կարծիքն այն մասին, թե հայերեն *Այբ*-ը բխում է սեմական *Ալեֆ*-ից, կհիմնավորվեր, եթե «*բ ծայնեղ պայթականից առաջ լ > յ հնչյունափոխության եւս մի քանի կամ գոնե մեկ այլ օրինակ բերվեր*»²⁹⁶: Սակայն պատմահամեմատական եղանակը այլ մոտեցում է ենթադրում. համատեղ պիտի դիտարկվեն բազմաթիվ գործոններ: Կարծում ենք՝ որքան բառ (կամ տառ) ունի որոշակի ակունքներ. այն կարող է լինել փոխառյալ կամ ոչ: Եւ այդ ակունքները բացահայտելու համար պետք է ընտրել ստուգաբանության ճիշտ մարտավարություն. անիմաստ եւ անհնար է փոխառյալ բառը ստուգաբանել «ներքին» ստուգաբանությամբ, եւ հակառակը: Մյուս կողմից, տարբեր օրինակափոխություններ ներկայացված են տարբեր ծավալի նյութով.

²⁹⁶ Վ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 69:

որոշ օրինաչափությունների դեպքում կարելի է բերել տասնյակ զուգահեռներ, մյուսների համար՝ սոսկ մի քանի: Նաեւ չի բացառվում, որ հնչյունափոխությունը մեզ հասած լինի սոսկ մեկ օրինակով, իսկ այդ դեպքում ի՞նչ օրինաչափության մասին կարող է խոսք լինել: Բայց ներկայումս օրինաչափության չդրսետրվելը չի կարող բացառել այդ օրինաչափության գոյությունը նախկինում:

Սակայն եթե զուգահեռաբար դիտարկում ենք նաեւ այլ գործոններ, անորոշությունը նվազում է: Եթե տեսնում ենք, որ փոխառվել են բազմաթիվ տառանուններ միեւնույն աղբյուրից, դա նույնպես օրինաչափություն է, եւ այդ դեպքում հնչյունափոխությունների առանձին անկանոնություններ կարող են գերակշռվել այլ օրինաչափությունների ակնհայտությամբ: Տվյալ դեպքում, նույնիսկ հակառակը, ելնելով դիտարկվող փաստից, կարող ենք ձեւակերպել կանոն. *հայերենում սեմական լեզուներից փոխառված բառերում p ծայնը պայթականից առաջ դիտվում է լ > j հնչյունափոխություն:* Անշուշտ, դժվար է պնդել այս կանոնի գոյությունը, սակայն եթե ապացուցվում է հայերեն տառանունների փոխառված լինելը սեմականներից, ապա մեր մոտեցումը հավանական է դառնում:

Մինչդեռ Վ. Սարգսյանը կարծում է, որ *«հայերենի հնչյունային օրենքների համաձայն այ երկբարբառը կարող է ծագել նախավոր *ար-ից, ուստի այք (սեռ. այրի) բառի համար կարելի է վերականգնել *արբ/ի նախածեղը»*²⁹⁷: Այնուհետեւ նա, նկատի ունենալով *այ > է* անցումը եւ հաշվի առնելով հնարավոր *p > փ* խլացումը, այս բառը կապում է *արփի* (արեգակ) բառի հետ: Հետագայում, կատարելով նման «ներքին վերականգնումներ» նաեւ *Բեն, Գիմ, Ղա, Եչ* տառանունների դեպքում, նա դրանք կապում է համապատասխանաբար *բարին* (< բարի), *գարիմ* (< կարմիր), *դար* («բարձր»), *եկ* («արի») բառերի հետ, անում լրացուցիչ եւս մի քանի դատողություն ու ենթադրում, որ *«... կարելի է առաջարկել Արեւի բարինի գարիմի դարի, եկի արտահայտության հետեւյալ թարգմանությունը «Բարե՛ւ, կարմիր արեւ, դո՛ւրս արի»*, նաեւ նկատելով, որ *«ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է այդ ծիսական բանաձեւի մեկ այլ տարբերակը՝ աննշան փոփոխությամբ. Բարե՛ւ, բարե՛ւ, կարմիր արեւ»*²⁹⁸ (ընդգծումները՝ Վ. Ս.): Մնացած տառանունների դեպքում, սակայն, նման զուգահեռներ Վ. Սարգսյանը չի բերում: Միեւնույն ժամանակ, քանի որ բոլոր տառաձեւերը նախ բխեցնում է մեկը մյուսից, իսկ ի վերջո՝ Ա տառից, սա էլ՝ շրջանագծից՝ որպես արեւի գաղափարագրից, ապա մնացած տառանուններն էլ բխեցնում է մեկը մյուսից՝ *«ձեւույթների հետադարձ ընդարձակման սկզբունքով»*²⁹⁹: Հազիվ թե այս դատողությունները կարելի է համոզիչ համարել:

Հր. Աճառյանի կարծիքի համաձայն՝ տառանունները Մաշտոցը կազմել է՝ ազդվելով թե՛ սեմական եւ թե՛ հունական անուններից, օգտվելով *«թե՛ մեկից եւ*

*թե՛ մյուսից, ընտրելով նրանց միջից իրեն հարմար երեւացածները, փոքրիկ փոփոխություն մտցնելով նրանց մեջ»*³⁰⁰: Ըստ նրա՝ Մաշտոցի նպատակը եղել է *«կարճ, միավանկ, դյուրահնչյուն»* անուններ ստեղծելը³⁰¹:

Արդյունքում՝ Հր. Աճառյանը համեմատում է տարբեր լեզուների տառանունները եւ ներկայացնում հետեւյալ զույգերը.

	Տառանունը	Աղբյուրը
1.	Այք	հունական Ալֆա կամ սեմական Ալեֆ
2.	Գիմ	հունական Գամմա կամ սեմ. Գիմել, արաբ. Գիմ/Ջիմ
3.	Է	հունական Է-փսիլոն
4.	Ըթ կամ Եթ	հունական Էտա
5.	Ղատ	հունական Լամետա կամ հունական Լամբդա
6.	Մեն	սեմական Մեմ
7.	Նու	հունական Նիւ կամ սեմական Նուն
8.	Ո	հունական Օ մեգա, Օ միկրոն
9.	Պէ	սեմական Փե
10.	Վե կամ Վեվ	սեմական Վաւ

Առհասարակ տառանունները տրվում են այբբենական կարգը մտապահելու նպատակով՝ հաջորդական արտասանության դեպքում կազմելով հիշվող հնչյունային (իմաստային) կապակցություններ: Որպես կանոն՝ դրանք լինում են սկզբնահնչյունային. դա հստակեցնում է կապը տառի եւ տառանվան միջեւ: Թեեւ կարող են այս սկզբունքից շեղումներ լինել: Կան տառանունների հետեւյալ տարբերակները՝ առօրեական հասկացությունների անվանումներով, անիմաստ հնչյունակապակցություններով եւ ըստ տառի հնչյունային արժեքի: Վերջին տարբերակը (այն կարելի է դիտել նաեւ որպես անունների բացակայություն) ներկայացնում է խորհրդային տարիներին ընդունված հայերենի այբուբենի տառերի արտասանությունը: Երկրորդ տարբերակը ներկայացնում են լատինական, ռուսական, հայկական, վրացական տառանունները: Այս խմբում կարելի էր առանձնացնել առավելապես երկտառ անուններով այբուբենները՝ լատինականը եւ ռուսականը. սրանց տառանուններում երբեմն խախտվում է սկզբնահնչյունությունը, թեեւ դա առանձնապես չի խանգարում, քանի որ այդ անունների երկտառ լինելու շնորհիվ համապատասխան հնչյունը պարզապես հայտնվում է երկրորդ տեղում: Եւ վերջապես, առաջին խմբին պատկանում են սեմական, սլավոնական, անգլոսաքսոնական, կելտերի օգամյան այբուբենները³⁰²: Այս խմբում էլ կա երկու ենթախումբ՝ տառանուններ, որոնք տվյալ լեզվով իմաստային են, եւ տառանուններ, որոնք անիմաստ

²⁹⁷ Վ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 69:
²⁹⁸ Նույն տեղում, էջ 297:
²⁹⁹ Նույն տեղում, էջ 293:

³⁰⁰ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 565:
³⁰¹ Նույն տեղում, էջ 566:
³⁰² И. Гельб, Опыт изучения письма, Москва, 1982, с. 140.

են: Առաջին խմբին պատկանում են սեմական եւ սլավոնական տառանունները, երկրորդին՝ հունական եւ հունականից ծագածները, որոնք փոխառել են սեմական անվանումները: Ու եթե սեմական լեզուներում Ալեֆ, Բեթ, Գիմել եւ այլն ունեն որոշակի իմաստներ (թեեւ հաճախ վիճելի: օրինակ, ըստ Ի. Գելբի, Յէ, Խեթ, Stun, Օարի անվանումները սեմականներով չեն բացատրվում³⁰³), ապա հունարենում հունականացված Ալֆա, Բետա, Գամմա եւ այլ բառերը ոչինչ չեն նշանակում:

Այժմ փորձենք պատկերացնել, թե ինչ կլիներ տառանունների հետ, եթե դրանք անիմաստ էին տվյալ լեզվի կրողների տեսակետից: Տրամաբանական է եւ թաղրել, որ աստիճանաբար դրանք պիտի ավելի ու ավելի աղավաղվեին ու հեռանային բնագրից: Սակայն հունական տառանունները թեեւ որոշ դեպքերում էապես հեռացել են սեմական բնագրից (օրինակ՝ Գիմել - Գամմա, Դալետ - Դելտա, Զաֆ - Կապպա եւ այլն), սակայն հիմնականում ճանաչելի են: Սա կարելի է բացատրել նրանով, որ վաղնջական ժամանակներից հունական այբբենական համակարգը ընդունված է եղել Հունաստանում պետականորեն, այսինքն՝ դասավանդվել է (բնականաբար տառանուններով հանդերձ) ուսումնական հաստատություններում: Իսկ ի՞նչ կարող էր լինել, եթե այն տարածվեր ժողովրդի մեջ առանց կենտրոնացված դասավանդման: Դժվար չէ կռահել, որ լինելով հույների համար բոլորովին անիմաստ՝ այդ անուններն է՛լ ավելի կաղավաղվեին: Ընդ որում, որպես սկզբնահնչյունային բառեր, դրանց իմաստային առանցքն առաջին հնչյունն է, հետեւաբար որքան ավելի հեռու այդ առանցքից, այնքան հնչյուններն ավելի անկայուն կլինեն. կաղավաղվեն կամ կտրվեն: Այս երեւոյթը պարզ երեւում է տարբեր այբուբենների տառանունների՝ Զր. Աճառյանի կազմած աղյուսակից³⁰⁴:

- Ալեֆ - Ալֆա - Ալֆա - Այբ - Ալթ - Ան
 - Բեթ - Բետա - Վիրա - Բան
 - Գիմել - Գամմա - Գամմա - Գիմ - Գան
 - Դալետ - Դելտա - Դալդա - Դատ - Դոն
- եւ այլն:

Այսպիսով, չնայած հայկական տառանունները նվազել են մինչեւ երկու-երեք տառանոց կապակցություններ, դրանց եւ սեմականների նույնիսկ աննշան նմանությունը կարելի է կանոնական համարել: Միաժամանակ հայկական տառանունների աղավաղված լինելը եւս մի ապացույց է հայկական այբուբենի զարգացման ինչ-որ փուլում եղած, չկանոնարկված, բարեշրջական ընթացքի: Եթե Մաշտոցն այբուբենը փոխառած լիներ ամբողջությամբ, ապա նա հիմք չէր ունենա փոխելու տառանունները այն նույն տրամաբանությամբ, որով չպիտի փոխվեին նաեւ տառածեւերը: Կամ հաշվի առնելով, որ օտար անունները, հայի համար անիմաստ լինելով,

³⁰³ И. Гельб, *նշվ. աշխ.*, էջ 137:

³⁰⁴ Զ. Աճառյան, *Հայոց այբուբենը*, էջ 563-564:

կարող էին դժվար յուրացվել, նա կարող էր հաղորդել դրանց հայկական նոր անուններ, ինչպես որ արեցին սլավոնները: Այն, որ Մաշտոցը նախընտրեց Հայոց տառերին հատկացնել անիմաստ անուններ, նույնպես խոսում է հոգուտ նրա, որ այդ ժամանակ դրանք պիտի որ հայտնի լինեին զգալի թվով հայերի:

Ու թերեւս փյունիկյան անունների հետքերը կրող տառերն ավելին են, քան Զր. Աճառյանի նկատածները: Դրանից բացի՝ հաշվի առնելով այն, որ Հայոց տառածեւերը ծագում են անմիջապես սեմականներից առանց հունական միջնորդության, աղյուսակից կարելի է հանել «կամ»-երը:

Կան եւ այլ բնույթի զուգահեռներ: Սեմականների անունների հարցը դեռ վերջնականապես որոշված չէ: Մի կողմից, ինչպես ասվեց, ուսումնասիրողները գտնում են, որ անունները, օրինակ՝ «ցուլ», տրվել է, քանի որ նշանը ծագել է ցուլի պատկերից, որն էլ այդ նշանին հաղորդել է [ա] արժեքը: Սակայն կա հակառակ կարծիքը, որի համաձայն՝ սեմական անունները պարզապես հուշարար բնույթ ունեն, ինչպես օրինակ՝ սլավոնականի դեպքում³⁰⁵, եւ տրվել են տվյալ նշանին, քանի որ առաջին տառը սկսվում է տվյալ հնչյունից: Թեեւ որոշ նշաններ կարող են հիշեցնել համապատասխան առարկան՝ լրացուցիչ հուշում պարունակելով:

Տառանունների հուշարար բնույթի օգտին է խոսում, օրինակ, սեմական *Չայն* տառանունը: Ինչպես նշվեց, սեմականներում այն նշանակում է «զենք», եւ շատերը փորձել են այս տառի պարզ ձեւի մեջ տեսնել զենքի տեսակ: Սակայն հունարենում սրա դիմաց ունենք *Չետա*, որը նշանակում է «ձեթ»: Կարելի է ենթադրել, որ այս տառը սեմականներում ունեցել է տարբեր անուններ, եւ հույները պարզապես փոխառել են դրանցից մեկը:

Կամ *Նուն* (փյունիկ. «ծուկ») անունը, որի կողքին ունենք եթովպական *Նահաս* «օձ» տարբերակը: Թեեւ այս դեպքում կարելի է ենթադրել, որ երկու անունները համատեղելի են եւ սկզբնապես նկատի են ունեցել ոչ թե ծուկն առհասարակ, այլ հատկապես *օձածուկը*:

Կարծես թե նույն շարքից է նաեւ հայերեն *Բեն* անունը: Առաջին հայացքից թվում է, թե հայերենում սպասելի էր *Բեթ*, իսկ սա սոսկ աղավաղման արդյունք է, հատկապես որ աղուանական տառի անունը կարծես թե նույնպես կոչվել է *Բեթ* (*Որեթ* > *ոԲեթ* > *Բեթ* ճշտման դեպքում. թերեւս, սա **այթորեթ*՝ «այբուբեն» վերականգնվող բառի ազդեցության հետեւանքը կարող էր լինել. հոդակապ *n*-ն միացվել է հաջորդ տառանվանը): Սակայն բացի սեմական *b-y-t* «տուն» (արդի եբր. ԽԻԵ «տուն») անվանումից՝ գոյություն ունի *b-n-y* «կառուցել» սեմական արմատը (հմմ. արաբ. *Էն* «շենք», եբր. ԽԻԵԵ «շենք»): Դա կարող է նշանակել, որ, իրոք, տառին պետք էր ինչ-որ անուն տալ, ու քանի որ այն նմանեցվել է տան պատկերին, ոմանք

³⁰⁵ А. Пушкин, *Полное собрание сочинений*, В 10-и т., Т. VII, Москва-Ленинград, 1949, с. 521.

այն անվանել են *Բեթ*, ոմանք՝ *Բեն*: Քանի որ երկուսն էլ սկսվել են *Բ*-ով, դրանք փոխարինվել են. հայերը եւ վրացիները կարող էին ժառանգել *Բեն / Բան* տարբերակը, հույներն ու աղուանները՝ *Բեթ*-ը:

Հայկական *Դա* տառանունը նույնպես կարելի է դիտել որպես սեմ. *Դալեթի* սրված տարբերակ: Սակայն *Ըթ*-ը պետք է դիտել ոչ թե որպես հունական *Էտայի* արծազանք, այլ, այբուբենի՝ սեմականից անմիջականորեն փոխառված լինելու պատճառով, հենց սեմ. *Խեթ*-ի: Մինչդեռ *Է-ի*՝ որպես նորաստեղծ տառի եւ ձայնավորի դեպքում, թերեւս կարելի է համարել, որ անունը համընկնում է արժեքի հետ:

Առանձին հարց է գրչական տարբերակի կամ մեկը մյուսից կազմված տառերի անունների հարցը: Տրամաբանական կլիներ ակնկալել, որ դրանք կունենան նման անվանումներ: Եւ իրոք, այդ ենթադրության շրջանակներում հայ. *Չա* տառանունը պիտի որ մնացած լինի նաեւ *Չա-ի* համար՝ որպես իր գրչական տարբերակի: Օրինաչափությունը տեսնում ենք նաեւ *Շա - Չա, ՃԷ - ՉԷ* զույգերի դեպքում: Սակայն *Շա - Տո, Ռա - ԸԷ* զույգերի դեպքում նմանություն չունենք:

Առաջին զույգի դեպքում կարելի է ենթադրել, որ սկզբնապես այդ տառանունը եղել է *Տա*, սակայն նրա վրա ազդել է այբբենական կարգում հաջորդող *Իլև*-ը՝ ընկալվելով որպես *աւ* երկբարբառ՝ հետագա կանոնավոր անցումով [օ]-ի, որը, սակայն, ներկայացվել է *ո*-ով:

Ինչ վերաբերում է *Ռա - ԸԷ* զույգին, ապա պետք է նկատել, որ այն արդեն այլ բնույթի է. եթե նախորդները, ինչպես մենք ենթադրել ենք, ստեղծված են Մաշտոցի կողմից՝ Հայոց հնագույն տառերից, ապա սրանք գրչական տարբերակներ են (կամ *Ռ-ն*՝ *Ը-ի* կրկնագրությունը), որոնք եղել են հայկական հնագույն այբուբենում: Այս զույգի տառանունների տարբերությունները թերեւս կարելի է բացատրել՝ փյունիկերենի առանձնահատկությունից ելնելով: Այսպես, Ի. Դյակոնովը գտնում է, որ սկզբնապես սեմական անվանումները պետք է որ *ա*-ով լինեին կազմված, եւ ավելի ուշ միայն երկբարբառ *այ* կապակցությունները վերածված լինեին *Է-ի*: Սա նաեւ հնարավորություն է տալիս նրան՝ պնդելու, որ այդ անվանումները ստեղծվել են հենց Փյունիկեում, մ. թ. ա. Բ հազարամյակում, քանի որ միայն փյունիկերենն էր թույլատրում վանկի երկբարդաձայն ավարտը: Ժամանակաշրջանը որոշվում է նրանով, որ դեռ պետք է պահպանված լինեին երկբարբառներն այն դիրքերում, որոնք հետո պիտի վերածվեին երկար ձայնավորների՝ **bait > bēt, *pai > pē* եւ այլն³⁰⁶ (այս տառի համար նա վերականգնում է *ra š* ձեւը): Եթե ճիշտ է Ի. Դյակոնովի այս ենթադրույթը, ապա հայերեն *Ռա - ԸԷ* զույգի տարբերություններում կարելի է տեսնել այդ նույն անցումը, որը նաեւ լրացուցիչ հնարավորություն կտա թվագրելու Հայոց այբուբենը: Փաստորեն պետք է ենթադրել, որ Հայոց լեզվի համար այդ համակարգը պիտի փոխառվեր այն ժամանակամիջոցում, երբ փյունիկերենում դեռ չէր

ավարտվել հնչյունային տվյալ անցումը, եւ Հայոց լեզվին անցել էին երկու տարբերակներն էլ՝ միեւնույն տառի գրչական երկու տարբերակների համար: Թեեւ հնարավոր է, որ այդ *այ > Է* անցումը կատարվել է արդեն հայերենում, որին այն նույնպես բնորոշ է:

Մնում են *Գիւ - ՃԷ, Ղաւ - Լիւ, Իլիւ - Վեւ* զույգերը, որոնք, հավանաբար տարբեր բացատրություններ ունեն: Սրանցից *ՃԷ-ն*, ինչպես տեսանք, նույնպես պիտի որ Մաշտոցի ստեղծածը լինի: Բայց եթե այն ստեղծված է *Գիւ*-ից, ուրեմն սպասելի էր *ժիւ* (ինչպես ունենք արաբ. *Ձիւ*, թեեւ այս վերջին դեպքում գործ ունենք բաղաձայնի հնչյունափոխության հետ): Անվազն գոնե ձայնավորը պիտի լիներ *ի-ն*: Կարելի է ենթադրել, որ այդպես էլ եղել է, բայց հետո ենթարկվել է հնչյունափոխման. հայերենում *ի > Է* անցում թեեւ հազվադեպ, բայց դիտվում է³⁰⁷: Սակայն, այդ դեպքում էլ պարզ չէ, թե ինչու չի հնչյունափոխվել *Գիւ*-ը. գուցե տարբերությունը կապված է *ւ-ի* անկման, կամ հաջորդ՝ *իւ(ի)* տառի ձայնավոր լինելու հետ:

Իսկ վերջին երկու զույգերի դեպքում նույնպես կարող է դիտվել օրինաչափություն, բայց մեկ այլ կապված *-իւն* վերջավորության հետ, որն ունենք նաեւ *Տիւն*-ի դեպքում: Թե դա ինչ վերջավորություն է, պարզ չէ: Հր. Աճառյանը բերում է Ղ. Աղայանի բացատրությունը, ըստ որի՝ նա *Իլիւ*-ը մեկնում է որպես *Վեւ+ն (ն հոդով) > Վիւն > Իլիւ*: Սակայն Հր. Աճառյանի կարծիքով՝ մյուս երկու տառանունների գոյությունը անհավանական է դարձնում այսպիսի մեկնությունը: Մինչդեռ այդ երկու տառերից մեկը՝ *Տիւն*-ը, առաջացել է *Տաւ*-ից եւ կարող է ստուգաբանվել նույն տրամաբանությամբ՝ նախորդի ազդեցությամբ: Մնում *Լիւն*-ը, որի՝ որպես գրչական տարբերակի անունը կարող է պարզապես ստեղծված լինել նախորդ երկուսի տրամաբանությամբ, քանի որ փյունիկյան անունն արդեն իսկ անցել էր *Ղաւ*-ին: Սակայն կարելի է ենթադրել նաեւ, որ, ինչպես *Բեթ*-ը, որը գուցե ունեցել է նաեւ *Բեն* անունը, *Չայն*-ը՝ *Ձեթ, Նուն*-ը՝ *Նահաս, Լամեդ*-ը նույնպես կարող էր ունենալ, եւ մեկ, օրինակ՝ **Լիւ* անունը, որից էլ առաջացած լիներ մեր *Լիւն*-ը հիմ. սեմ. *l-w-y* «ոլորել», արաբ. *لوي liwa* «թեթել, ոլորել»³⁰⁸. հատկապես, եթե նկատի ունենանք, որ փյունիկյան *Լամեդ*-ն իրոք թեթված ինչ-որ բան է հիշեցնում (տե՛ս վերեւում): Այս ենթադրույթն անուղղակիորեն հաստատվում է եթովպական համապատասխան գրանշանի *Läwe* անունը: Նկատենք նաեւ, որ եթովպական տառերի անունների շարքում այս երեքին՝ *Լիւն, Տիւն, Իլիւն* շարքին համապատասխանում է համահունչ *Läwe Täwe Wäwe* շարքը: Մնում է, *-ն* վերջնահնչյունի հարցը. ինչո՞ւ է այն կցվել *ւ*-ով ավարտվող անուններին, բայց չի կցվել մյուսներին: Գուցե այդ հարցի վրա լույս սփռի այն հանգամանքը, որ գերմանական ռուներին՝ *Իլիւ*-ի հետ գրեթե նույնարժեք գրանշանը կոչվել է *Wunjo* եւ նույնիսկ ձեւով հիշեցրել է *Բաւ*-ի հնագույն ենթադրյալ

³⁰⁷ Գ. Գեորգյան, *Նկատումներ եղանականիշ եւ ժամանականիշ մասնիկների գործառական դրսևորումների վերաբերյալ* // ԳՊՄԻ, Գիտական տեղեկագիր, Դրակ Բ, Գյումրի, 2014, էջ 81:

³⁰⁸ Տե՛ս *The Free Dictionary*, ինչպես նաեւ՝ *Rajki András, Arabic Dictionary [with etymologies]*, Version 2.1, 2005.

³⁰⁶ И. Дьяконов, *Комментарий* // И. Гельб, *Опыт изучения письма*, Москва, 1982, с. 304.

սինայյան նախօրինակները՝ Ք, թեև տարբերվել է անվան իմաստով. «բերկրակ»՝ «կեռի» դիմաց: Եթե այս նմանությունը պատահական չէ, ապա, գուցե, երկու անունների *-h*-երը միեւնույն ծագումն ունեն, իսկ նույն շարքի մյուս երկու տառանունները պարզապես կրել են այս մեկի ազդեցությունը: Սակայն այս ենթադրությունը մեզ տանում է արդեն գրի պատմության մշուշոտ խորքերը, եւ պարզ չէ, թե առկա կյուլթն արդյո՞ք երբեւէ հնարավորություն կընծեռի լուծելու այս խնդիրները:

Չլուծված խնդիրները դեռ շատ են, սակայն ասվածից երեւում է, որ նաեւ տառանուններում են երեւում մեր այբուբենի՝ նախայայբուբենի հետ կապող բազմաթիվ օրինաչափությունների հետքեր, որոնք վկայում են, որ նաեւ այս դեպքում գործ ունենք օրինաչափ, բարեշրջական այլ ոչ թե կամայական գործընթացի հետ:

Մինչդեռ հաճախ, չգիտես ինչու, ուսումնասիրողները որեւէ այբուբենի տառանունների մասին խոսելիս սկսում են դրանք խմբավորել ու տեսակավորել ըստ արտաքին նմանության (հատկապես՝ երբ դրանց իմաստներն անհայտ են)՝ հաշվի չառնելով, որ նման թվացող անունները կամ դրանց վերջավորությունները կարող են տարբեր ծագում ունենալ: Դա նույնն է, եթե պնդենք, թե, օրինակ, *այլ, գայլ, սայլ, քայլ* բառերը կազմված են համապատասխան սկզբնատառերին *-այլ* վերջավորության հավելմամբ: Ցավոք, նման մոտեցմանը տուրք են տալիս նույնիսկ անվանի գիտնականները, մինչդեռ պարզ է, որ, օրինակ, վրացական *Ան, Բան, Գան* եւ այլ տառանունների վերջնահնչյուն *-h*-երը կարող են բոլորովին տարբեր նախօրինակներից ծագել: Եւ իրոք, օրինակ՝ *Բան*-ի *-h*-ն կարող է համապատասխանել *Բեն*-ի *-h*-ին, իսկ *Գան*-ի *-h*-ն *Գաննա*-յի *մ*-ի հնչյունափոխության արդյունք լինել եւ այլն:

...այս մասին ընդորոշումները կարող են լինել միայնակ կամ զուգահեռ: Եթե ընդորոշումը լինում է միայնակ, ապա նախադասության մեջ կարող է լինել միայնակ ընդորոշում: Եթե ընդորոշումը լինում է զուգահեռ, ապա նախադասության մեջ կարող է լինել զուգահեռ ընդորոշում: Եթե ընդորոշումը լինում է զուգահեռ, ապա նախադասության մեջ կարող է լինել զուգահեռ ընդորոշում: Եթե ընդորոշումը լինում է զուգահեռ, ապա նախադասության մեջ կարող է լինել զուգահեռ ընդորոշում:

ՈՐՈՇԵՍ ԿԵՐՉԱԲԱՆ. ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս հետազոտությունը ցանկանում ենք ավարտել՝ ներկայացնելով Հայոց այբուբենի շերտագրությունը: Ինչպես տեսանք, Հայոց այբուբենում երեւում են հետեւյալ երկու խոշոր շերտերը՝ իրենց ենթաշերտերով: Առաջինը հին փյունիկյան համակարգի հայացված համակարգն է՝ թվով 22 տառ՝ *Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Թ, Ի, Ծ, Կ, Դ, Մ, Ն, Շ, Ո, Պ, Ս, Տ, Ը, Ի*, որոնցից 5-ը ձայնավորի արժեք ստացածներն են: Սրանց մեծ մասն այս կամ այն չափով պահպանել է սեմական հնագույն այբուբեններում ընդունված (թե՛նէ՛ ոչ միշտ սեմական ծագում ունեցող) անվանումները կամ դրանց հետքերը: Հետագայում դրանք լրացվել են հայկական ծագում ունեցող եւս երկու՝ *Խ* եւ *Փ* տառերով՝ դառնալով մաշտոցյան այբուբենի կորիզը՝ ընդհանուր թվով 24 տառ, եւ դպտական ծագումով *Ճ* տառը (գուցե՝ նաեւ *Դ*-ն), որը, թերեւս, այբբենական չի համարվել, քանզի պիտի որ ամենավերջում հավելված լիներ: Սա հնագույն եւ ամենախոշոր շերտն է, որը հայտնի է դանիելյան գրեր անվանմամբ: *Ճ*-ն՝ որպես այբբենական տառ, եւ մնացած 11 տառերը կազմում են մաշտոցյան նորամուծությունները: Դրանք եւս կարելի է բաժանել երկու խմբի՝ դանիելյան գրերի հիման վրա ստեղծվածներ եւ փոխառվածներ: Առաջիններից են գրչական տարբերակները՝ *Ձ (Ձ), Լ (Լ), Ռ (Ռ)*, գուցե՝ նաեւ *Է(Ը)* (թե՛նէ՛ սա կարող էր Մաշտոցի նորամուծությունը լինել այդ դեպքում այն պիտի որ *Ե*-ի գրչական տարբերակը լինի), ապա *Վ* կրկնագրությունն (*Ա*) ու հայելային արտապատկերմամբ ստեղծված եւս չորս տառ՝ *Շ (Չ-ից), Զ (Շ-ից), Զ (Ճ-ից), Յ (Ծ-ից)*: Երկրորդ ենթախումբը կազմում են, թերեւս, իրանական *Դ, Յ* փոխառությունները. երկրորդը նույնպես կրկնագրություն է:

Ինչպես երեւում է, տառերի բարեշրջական ընթացքը ներկայանում է տարբեր աստիճանի հավաստիությամբ: Բայց դա բնական է. ավելի տարօրինակ կլիներ, եթե բոլորի պատմությունը վերջնականապես բացահայտված թվար:

Սակայն առաջարկված քննության եղանակը հնարավորություն տվեց մեկ ամբողջության մեջ դիտելու բոլոր հարեւան գրային համակարգերը, այդ թվում եւ մաշտոցյան «եռյակը», որի արդյունքում ոչ միայն պարզվեց այդ եռյակի արտանմանային (օբյեկտիվ) միասնությունը, այլեւ բացահայտվեց դրա ներսում եւս մեկ՝ վրաց-աղուանական ենթաճյուղի գոյությունը:

Եռյակի մյուս երկու այբուբենները վերլուծվել են մասամբ՝ դրանց՝ միայն փյունիկյան կորիզին համապատասխանության շրջանակներում: Դրանց «լրացուցիչ» տառերը, ինչպես է հայկական «լրացուցիչ» տառերն ուսումնասիրելու համար թե՛ եւ պետք է կիրառվեն գծապատկերային վերլուծության նույն եղանակները, սակայն դա որակապես այլ խնդիր է: Բանն այն է, որ այս գրանշանները, բնորոշ լինելով միայն համապատասխան գրային համակարգերին եւ ներկայացված չլինելով ազգակից համակարգերում, հնարավորություն չեն տալիս համեմատական լայն, հարացուցային վերլուծության համար, եւ դրանք զգալի չափով իրոք կարող են հենվել առավելապես ներքին վերականգնումների վրա: Նույնիսկ հայկական «լրացուցիչ» տառերի մասին, ինչպես տեսանք, հնարավոր է առաջարկել զուտ «վարկածային» ենթադրություններ, թե՛ մեր կարծիքով, բավականին հավանական: Այնուամենայնիվ, այդ համակարգերի հորինվածքային որոշ հատկությունների՝ այբբենական կարգի եւ հատկապես հենց «լրացուցիչ» նշանների ձեւաստեղծման սկզբունքների բացահայտման շնորհիվ հնարավոր եղավ հաստատելու դրանց միասնական ձեւավորումը, որը, չիերքելով լրացական ավանդության տվյալները, հաստատում է նաեւ հայ պատմիչների հաղորդածն այն մասին, որ բոլոր երեք այբուբենները ձեւավորեց՝ «գրեր, կարգեր եւ աղիսաւք յարդարեր» մեկ անձ՝ Մեսրոպ Մաշտոցը:

Այս ուղղությամբ ուսումնասիրությունը մեզ տալիս է հստակ պատկերացում այն բանի մասին, որ Մեսրոպ Մաշտոցը, համապատասխանաբար, իր արհեստագործած այբուբենները հիմնարկեց ժամանակակից հայկական այբուբենի վրա: Ինչպես հայտնաբերվեցին, այնպես էլ Մեսրոպ Մաշտոցը համապատասխանաբար, իր արհեստագործած այբուբենները հիմնարկեց ժամանակակից հայկական այբուբենի վրա: Ինչպես հայտնաբերվեցին, այնպես էլ Մեսրոպ Մաշտոցը համապատասխանաբար, իր արհեստագործած այբուբենները հիմնարկեց ժամանակակից հայկական այբուբենի վրա:

Միջակայքում հայտնաբերվեցին համապատասխանաբար, իր արհեստագործած այբուբենները հիմնարկեց ժամանակակից հայկական այբուբենի վրա: Ինչպես հայտնաբերվեցին, այնպես էլ Մեսրոպ Մաշտոցը համապատասխանաբար, իր արհեստագործած այբուբենները հիմնարկեց ժամանակակից հայկական այբուբենի վրա:

remaining unspaced letters were consonants, since the Armenian language had already possessed all letters designated the vowel signs.

SUMMARY

The study attempted to solve the problem of origin of the modern Armenian alphabet – the alphabet of Mesrop Mashtots and the reconstruction of the Armenian proto-alphabet known as Danielian letters. The research methodology is based on a comparative historical analysis of the Armenian graphemes and a number of geographically proximal alphabets. The purpose is to articulate the basic principles and rules of creating and borrowing the writing systems in general as further applied to the particular case of the Armenian letters. The comparison technique is based on the experimental detection of transformational patterns of graphic characters in cursive, depending on the selected ducts (in the order and direction of the individual elements of writing letters). It is noted that the signs of the classical Phoenician writing under certain specified ducts as the process of acquiring cursive forms are close to the forms of the Armenian letters with the same phonemic value. The use of the same methodology to a number of other writing systems has enabled us to construct for each Phoenician sign a phylogenetic tree, integrating through common origin about 20 writing systems, including the Proto-Sinaitic, Phoenician, Ethiopian, Syrian, Nabataean, Arabic, Greek, Latin, Cyrillic, Albanian, Georgian, etc.

The resulting finding was that the basis of Mashtots alphabet was indeed composed of the earlier Armenian letters known as the Danielian letters, which are actually handwriting-modified symbols of the classic 22-letter Phoenician lettering, perhaps supplemented by two symbols, allegedly of the local Armenian origin. Inasmuch as even the augmented alphabet would not include all the Armenian phonemes, it was practically completed with other signs, numbering from 5 to 8, having been borrowed or representing the versions of the available graphemes or their combinations, regarded nevertheless as unalphabetic.

In all probability, Mashtots attached an alphabetic meaning to those signs, while appending at least 4 additional symbols shaped as mirror images with regard to the horizontal axes of the existing phonetically close letters. It has been established that in contrast to some traditional ideas Mashtots added only one vowel *ē*: the

ՀԱՅՈՅ ՏԱՐԻԵՐԸ

remaining appended letters were consonants, since the Armenian language had actually possessed all letters designating the vowel signs.

To be also noted is another sphere of Mashtots' activities, the diplomatic one, commonly unheeded but very significant, having largely facilitated the creation and deployment of the Armenian alphabet.

...the resulting finding was that the basis of Mashtots' alphabet was indeed composed of the earlier Phoenician letters known as the 22-letter Phoenician lettering, actually handwriting-modified symbols of the classic 22-letter Phoenician lettering, perhaps supplemented by two symbols, alongside of the local Armenian origin, such as even the suggested alphabet would not include all the Armenian phonemes. It was practically completed with other signs, numbered from 5 to 8, having been borrowed or reinterpreting the versions of the available phonemes or their combinations, regarded nevertheless as unorthodox.

In all probability, Mashtots started an alphabetic meaning to those signs while appending at least 4 additional symbols shaped as minor figures with regard to the horizontal axes of the existing phonetically close letters. It has been established that in contrast to some traditional ideas Mashtots added only one vowel 6 the

РЕЗЮМЕ

В исследовании сделана попытка решения проблемы происхождения современного армянского алфавита – алфавита Месропа Маштоца – и реконструкции армянского протоалфавита, известного в источниках как Данииловы письмена. Методология исследования основана на сравнительно-историческом анализе графем армянского и целого ряда географически соседствующих с ним алфавитов. При этом сформулированы общие принципы и закономерности создания и заимствования систем письма вообще, которые затем применены в частном случае армянского письма. Методика сравнения основана на экспериментальном выявлении закономерностей трансформации графических знаков при скорописи, в зависимости от принятых дуктов (порядка и направления написания отдельных элементов букв). Замечено, что знаки классического финикийского письма при определенных заданных дуктах в процессе скорописи приобретают формы, близкие к форме армянских букв с тем же фонетическим значением. Применение той же методики к ряду других систем письма позволило построить для каждого финикийского знака филогенетическое дерево, объединившее общим происхождением около 20-и систем письма, в том числе синайское, финикийское, эфиопское, сирийское, набатейское, арабское, греческое, латинское, кириллическое, албанское, грузинское и др.

В результате сделан вывод, что в основе алфавита Маштоца действительно положены буквы древнего армянского алфавита, известные как Данииловы письмена, которые представляют собой трансформированные скорописью знаки классического 22-буквенного финикийского письма, возможно дополненные двумя буквами, предположительно местного, армянского происхождения. Поскольку даже дополненный алфавит не отражал все армянские фонемы, на практике он стихийно дополнялся и иными знаками, числом от 5-и до 8-и – заимствованными, либо представляющими собой варианты имеющихся графем или их комбинации, которые тем не менее не считались алфавитными.

9. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976:
10. Աղայան Է., Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի եւ հարակից հարցերի մասին, Երեւան, 1977:
11. Աղայան Է., Մեսրոպ Մաշտոց, Երեւան, 1986:
12. Աճառյան Դ., Հայերեն արմատական բառարան, Երեւան, 1971:
13. Աճառյան Դ., Հայոց գրերը, Երեւան, 1984:
14. Անանեան Պ., Գրոց գիւտի թուականը եւ Կոնստանդնուպոլիսի Հայոց թագաւորի վեցերորդ տարին // Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երեւան, 12-17 Սեպտեմբերի, 2005 թ.), Չեկուցումների ժողովածո, Երեւան, 2006, էջ 579-592:
15. Բաբայան Ա., Տիեզերք, հոգի եւ... Այբուբեն // Եւրոյուն, 3^{րդ} 0, Երեւան, 1992, էջ 30-33, http://www.eutyun.org/S/E/EHandes/EHNNH_14_30.htm
16. Բարխուդարյան Ա. Գ., Դիվան հայ վիճակագրության, Պրակ V, Արցախ, Երեւան, 1982:
17. Գեւորգյան Գ., Նկատառումներ եղանականիշ եւ ժամանականիշ մասնիկների գործառական դրսեւորումների վերաբերյալ // ԳՊՄԻ, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Գյումրի, 2014, էջ 81:
18. Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, Երեւան, 1969:
19. Լոուկոտկա Չ., Գրի վարձագումը, Երեւան, 1955:
20. Խաչիկյան Լ., Նախամեսրոպյան գրի հարցը եւ հնայագրերը // ՊԲՀ, 3^{րդ} 4, Երեւան, 1963, էջ 145-158:
21. Կարազեռզեան Յ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում. Սեպագիր տեղանուններ, 3տ. 1, Գիրք 1, Երեւան, 1998:
22. Ղարիբյան Ա., Ժողովրդական լեզվի մի հնագույն վկայության մասին // ՍՍՈՄ ԳԱ հայկական ֆիլիալ. Տեղեկագիր, 3^{րդ} 4-5, Երեւան, 1940, էջ 81-88:
23. Ղարիբյան Ա., Հայ գրերի եւ գրության ստեղծող Մեսրոպ Մաշտոցը // ՊԲՀ, 3^{րդ} 2, Երեւան, 1962, էջ 15-25:
24. Ղաֆադարյան Կ., Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը եւ մեսրոպյան այբուբենի առաջին տառաձեւերը // ՊԲՀ, 3^{րդ} 2, Երեւան, 1962, էջ 39-54:
25. Մաթեւոսեան Ա., Կորիւնի Մեսրոպ Մաշտոցի պատմության ձեռագրի մի թղթի տեղափոխություն, Վենետիկ - Ս. Ղազար, 1990 (Հայագիտական մատենաշար «Բազմավեպ», թիվ 32):
26. Մաթեւոսյան Ա., Ղազար Փարպեցին մաշտոցյան գրերի մասին // ՊԲՀ, Երեւան, 2002, 3^{րդ} 2, էջ 93-111:
27. Մարկվարտ Յ., Պատմութիւն հայերէն նշանագրերու, Վիեննա, 1913:
28. Մարտիրոսյան Ա., Մաշտոց, Երեւան, 1982, էջ 265:
29. Մնացականյան Դ., Հայկական տառատեսակներ, Երեւան, 1979:
30. Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երեւան, 2003:

31. Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ժառանգությունը // ՊԲՀ, Երեւան, 2005, 3^{րդ} 2, էջ 87-100:
32. Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան գրավոր մշակույթը նախամաշտոցյան ժամանակաշրջանում, Ատենախոսություն, Երեւան, 2015:
33. Մուշեղյան Ա., Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը // ՊԲՀ, 3^{րդ} 2, Երեւան, 2006, էջ 210-236:
34. Յակոբեան Ա., Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները // Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երեւան, 12-17 Սեպտեմբերի, 2005 թ.), Չեկուցումների ժողովածո, Եր., 2006, էջ 122-131:
35. Յակոբեան Ռ., Սկզբից էր տառը, Երեւան, 2004:
36. Յակոբեան Ռ., Հայոց տառաձեւերը տառաբանութեան տեսակետից // «Հանդես ամսօրեայ», Վիեննա - Երեւան, 2005:
37. Յարութիւնեանց Ի., Հայոց գիրը, Թիֆլիս, 1892:
38. Յովսէփեան Գ., Զարուէկ հայ հնագրութեան // «Շողակաթ», Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածոյ, գիրք Ա, Վաղարշապատ, 1913:
39. Շանիձե Ա., Հին վրացերենի բերականություն, Երեւան, 1983:
40. Չամչեան Դ. Մ., Պատմություն Հայոց, հտ. 1, Վենետիկ, 1786:
41. Պատարիձե Ռ., Վրացական գիտատառերը // «Մալթոբի», 3^{րդ} 1-3, 6-9, 1972, ըստ՝ «Կովկասագիտության պորբլետներ», 3^{րդ} 2, Երեւան, 1976:
42. Պիվազյան Է., Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության հարցի շուրջը // ՊԲՀ, 3^{րդ} 4, Երեւան, 1962, էջ 153-170:
43. Պողոսյան Գ., Դանիելյան գրերի հարցը միջնադարյան բնագիտական ըմբռնումների տեսանկյունից // «Էջմիածին», 2005, 2, էջ 87-98, Ե-Ը, էջ 110-125:
44. Պողոսյան Պ., 1600-ամյա գաղտնիքներ, Երեւան, 1991:
45. Սարոյան Լ., Հայոց մեսրոպաստեղծ այբուբենը // ՊԲՀ, 3^{րդ} 2, Երեւան, 2005, էջ 58-86:
46. Սարգսյան Վ., Հայոց գրերի ծագումը, Երեւան, 1999:
47. Սեւակ Գ., Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները եւ աղբյուրները // «Մեսրոպ Մաշտոց», Երեւան, 1963, էջ 167:
48. Տաղավարյան Ն., Ծագումն հայ տառից, Վիեննա, 1895:
49. Տաշեան Յ., Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա, 1898:
50. Alexidze Z., *Discovery and Decipherment of Caucasian Albanian Writing* // Bulletin of the Georgian National Academy of Sciences, 175, № 1, Tbilisi, 2007.
51. Bekerie Ayele, *Historical Overview of Ethiopic Writing System's Possible Influence on the Development of the Armenian Alphabet* // International Journal of Ethiopian Studies, Vol. 1, № 1 (Summer/Fall 2003), p. 33-58.
52. Colless Brian E., *The Evolution of the Alphabet*, <https://sites.google.com/site/collesseum/alphabetevolution>.

53. **Colless Brian E.**, *Cuadernos del centro de estudios de historia del antiguo oriente* // Antiquo Oriente, Vol. 8, 2010, p. 75–96.
54. **Darnell J. and Dobbs-Allsopp C.**, et al., *Two Early Alphabetic Inscriptions from the Wadi el-Hol: New Evidence for the Origin of the Alphabet from the Western Desert of Egypt* // Annual of the American Schools of Oriental Research, 2005.
55. **Gelb I.**, *A Study of Writing*, Chicago, 1963.
56. **Gippert J., Schulze W., Aleksidze Z., Mahé J.-P.**, *The Caucasian Albanian Palimpsests of Mt. Sinai*, Brepols Publishers n. v., Turnhout, 2008.
57. **Goldwasser Orly**, *How the Alphabet Was Born from Hieroglyphs* // Biblical Archaeology Review, 36:02, Mar/Apr 2010: http://www.academia.edu/6916402/How_the_Alphabet_Was_Born_from_Hieroglyphs.
58. **Miltner F.**, *Die entwicklungsgeschichtliche Stellung der kleinasiatischen Alphabete* // «Forschungen und Fortschritte», Bd. 14, 1938 (русс. Фридрих И., История письма, М., 1979, с. 130).
59. **Mouraviev S.**, *Erkataguir ou Comment naquit l'alphabet arménien*, Sankt Augustin // Academia Verlag, 2010.
60. **Mouraviev S.**, *Les caractères daniéliens (identification et reconstruction); Les caractères mesropiens (Leur genèse reconstituée)* // Revue des Études Arméniennes, NS, t. XIV, Paris, 1980.
61. **Naveh J.**, *Early history of the alphabet*, 2005.
62. **Oppenheim A. Leo**, *Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization*, Chicago, 1964.
63. **Rajki András**, *Arabic Dictionary [with etymologies]*, Version 2.1, 2005, URL: https://www.academia.edu/4847281/Arabic_Etymological_Dictionary
64. **Sampson G.**, *Writing systems: methods for recording language* (To be chapter 4 of Keith Allan, ed., *Routledge Handbook of Linguistics*, Routledge, 2014). <http://www.grsampson.net/AWsm.pdf>
65. **Stone M., Kouymjian D., Lehmann H.**, *Album of Armenian Paleography*, Aarhus University Press, 2002.
66. *The Free Dictionary* http://www.thefreedictionary.com/_/roots.aspx?type=Semitic&root=lwy
67. **Thompson E.**, *An Introduction to Greek and Latin Palaeography*, Oxford 1912.
68. **Абрамян А.**, *Дешифровка надписей кавказских албан*, Ереван, 1964.
69. **Акопян А. А.**, *К хронологии завершения этноконсолидации удинов и лезгин (период ослабления Арабского халифата)* // Albania Caucasia, Сборник статей, Вып. I, Предисловие, подготовка А. К. Аликберов, М. С. Гаджиев, Москва, Институт востоковедения РАН, 2015, с. 129–147.
70. **Акопян А.**, *Рецензия на книгу С. Н. Муравьёва «Еркатагир, или Как родился армянский алфавит»* // Эпиграфика востока, Москва, 2011, Вып. 29, с. 202–204.

71. **Арутюнов С.**, *Народные механизмы языковой традиции* // Язык. Культура. Этнос., Москва, 1994, с. 5–12.
72. **Вахтин Н.**, *Условия языкового сдвига* // Вестник молодых ученых. Серия: Филологические науки, № 1, СПб., 2001, с. 11–16.
73. **Гамкрелидзе Т.**, *Происхождение и типология алфавитной системы письма (Письменные системы раннехристианской эпохи)* // Вопросы языкознания, № 5, Москва, 1988.
74. **Гамкрелидзе Т.**, *Алфавитное письмо и древнегрузинская письменность*, Тбилиси, 1989.
75. **Гельб И.**, *Опыт изучения письма*, Москва, 1982.
76. **Грейвс Р.**, *Мифы Древней Греции*, Москва, 1992.
77. **Дирингер Д.**, *Алфавит*, Москва, 1963.
78. **Дьяконов И.**, *О письменности* // Редакторский текст к книге Д. Дирингера «Алфавит», Москва, 1963.
79. **Дьяконов И.**, *Предисловие* // И. Фридрих, «История письма», М., 1979.
80. **Дьяконов И.**, *Комментарий* // И. Гельб, «Опыт изучения письма», М., 1982.
81. **Житенёва А.**, *Зеркальные начертания в кириллических источниках X–XV вв.*, Автореферат, Москва, 2003.
82. **Звегинцев В.**, *Очерки по общему языкознанию*, IV. 4.1.
83. **Истрин В.**, *Возникновение и развитие письма*, Москва, 1966.
84. **Кузнецов И.**, *Заметки к изучению агванского (кавказско-албанского) письма (I–III)* (Удины: источники и новые материалы (СП. Краснодар, 1999)), Часть 1-я, Кавказско-албанское прошлое и историческая память удин (Վրացական Գրականություն): <http://history.kubsu.ru/nas.html>
85. **Кузьмищев В.**, *Царство сынов Солнца*, Москва, 1982.
86. **Лихачёв Д.**, *Исторические предпосылки возникновения русской письменности и русской литературы* // Вопросы истории, 1951, № 12, с. 30–54.
87. **Лолуа Р.**, *Месроп Маштоц и вопросы генезиса еркатагира* // Albania Caucasia, I, Москва, 2015, с. 189–216.
88. **Лоукотка Ч.**, *Развитие письма*, Москва, 1950.
89. **Лурия А.**, *Письмо и речь*. Нейролингвистические исследования, Москва, 2002.
90. **Марр Н.**, *Древнеармянский алфавит и сирийское письмо* // ИФЖ, 2005, № 2, с. 30–57.
91. **Мартиросян А.**, *Маштоц*, Ереван, 1988.
92. **Мачавариани Е.**, *Графические основы грузинского алфавита* // Сабчота Хеловнеба, Тбилиси, 1977, № 10, с. 102–116.
93. **Муравьёв С.**, *О протосистеме армянского алфавита* // ИФЖ, 1980, № 2, с. 221–240.
94. **Муравьёв С.**, *Из истории одного открытия*, academia.edu.

95. **Ольдерогге Д.**, Из истории армяно-эфиопских связей (*Алфавит Маштоца*) // Древний Восток: Сб. 1., Москва, 1975, <http://iatp.am/news/dijest/dijest9/olderoge.pdf>.

96. **Оппенгейм Л.**, *Древняя Месопотамия*, Москва, 1990.

97. **Перепёлкин Ю.**, О происхождении минускульного письма // **М. А. Коростовцев**, Писцы Древнего Египта, СПб, 2001, с. 253–308.

98. **Периханян А.**, К вопросу о происхождении армянской письменности // Переднеазиатский сборнике, II, Москва, 1966, с. 103–133.

99. **Прохоров Г.**, *Глаголица среди миссионерских азбук* // Труды Отдела древнерусской литературы., СПб., 1992, Т. XLV, с. 178–199.

100. **Пушкин А.**, Полное собрание сочинений, в 10-и т., Т. VII. Москва-Ленинград, 1949.

101. **Струве В.**, *Происхождение алфавита*, Петроград, 1923.

102. **Тарумян Р.**, *Влияние приёмов письма на формирование графем и происхождение агванского алфавита* // Abania Caucasica, I, Москва, 2015, с. 217–234.

103. **Тревер К.**, *Очерки по истории культуры древней Армении*, Москва-Ленинград, 1953.

104. **Турчанинов Г.**, *Открытие и расшифровка древнейшей письменности Кавказа*, Москва, 1999.

105. **Фридрих И.**, *История письма*, Москва, 1979.

106. **Хазанов А.**, *Кочевники и внешний мир*, Алматы, 2002.

107. **Юзбашян К.**, *Новая попытка истолковать происхождение армянского алфавита: открытие или заблуждение?* // ИФЖ, 1982, № 1, с. 177–184.

108. **ձԵՄԼՁԵ Ո.**, *Կարտուղի Դերոս Երմայեթի*, տծ., 1973 (**Արուստան Ի.**, Վրացական գրությունների նմուշներ, Թբիլիսի, 1973):

109. **ձԼԵԽՏԻԶԵ Ն.**, *კავკასიის ალბანეთის დამწერლობა, ენა და მწერლობა*, տծ., 2003 (**Alexidze Z.**, *Caucasian Albanian Script, Language and Literature*, Tbilisi, 2003).

110. **ՁՅԵԾԼՈԻԶԵ Օ.**, *ადრეքրისტիანული კართული წარწერები*, օջւլոճա, 2012 (**Մչեդիիճե թ.**, Վաղ քրիստոնեական վրացական արձանագրություններ, Փոկրթ, 2012):

ՀԱՎԵԼԱԾ. ԳՐԱՅԻՆ ՏԱՆՔԵՐ ԴԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆՍՈՒՇՆԵՐ

Ստորել քերված են որոշ կարեւոր գրային համակարգերի գրանշանների աղյուսակներ, որոնց գրանշանների հետ համեմատվել են Հայոց տառերը:

Տառադրոմ	Արիւստ ժ գ. մ.թ.ա.	ՅԵԻՍԿՐԻԲ ժ գ. մ.թ.ա.	ՍԵՄ ժ գ. մ.թ.ա.	Արեւելական Ե-Գ ղ. մ.թ.ա.	Պունիկական	Եւրոպական
a	Կ	ԿԿ	Կ	Կ	Գ Գ	XXA
b	Գ	Գ	Գ	Գ Զ	Գ	ϸϸ/
g	Լ	Լ	Լ	Λ	Ղ Ա	Λ Λ
d		Δ	Δ	Δ A	Գ	Ϸ Ϸ
h	Յ	Յ	Յ	Յ	Յ Գ Ղ	Ϸ Ϸ Կ
w	ԿԿ	ԿԿ	Կ	ԿԿԿԿ	ԿԿ	ԿԿԿԿ
z	Ի	Ի	ԻԻ	ԻԻ	Ի Ի	ԿԿԿ
h	Է	Է	Է	ԷԷԿ	Է Է	ԿԿԿԿ
t	Թ	Թ	Թ	Թ Թ	Թ Թ	Թ Թ Թ
j	Հ	Հ	Հ	Հ Հ Հ	Հ Հ	Հ Հ Հ
k	Վ	Վ	Վ	Վ Վ Վ	Վ Վ	Վ Վ Վ
l	Լ	Լ	Լ	Լ Լ	Լ Լ	Լ Լ Լ
m	Ն	Ն	Ն	Ն Ն Ն	Ն Ն	Ն Ն Ն
n	Ն	Ն	Ն	Ն Ն Ն	Ն Ն	Ն Ն Ն
s	Փ	Փ	Փ	Փ Փ	Փ Փ	Փ Փ Փ
t	Օ	Օ	Օ	Օ Օ	Օ Օ	Օ Օ Օ
p	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե Ե
s	Ը	Ը	Ը	Ը Ը Ը	Ը Ը Ը	Ը Ը Ը
q		ՓՓ	Փ	Փ Փ	Փ Փ	Փ Փ
r	Գ	Գ	Գ	Գ Գ Գ	Գ Գ	Գ Գ Գ
s	Վ	Վ	Վ	Վ Վ Վ	Վ Վ Վ	Վ Վ Վ
t	+X	X	X	Ը Ը Ը	Ը Ը Ը	Ը Ը Ը

Փյունիկական գրերի նմուշներ (ըստ Յ. Ֆրիդրիխի):

GREEK LITERARY ALPHABETS (№1)							GREEK CURSIVE ALPHABETS (№3)		
4 th CENT. BC	4 th CENT. BC	3rd-3rd BC	2nd-2nd BC	3 rd CENT. BC	3 rd CENT. BC	1st-1st BC	3 rd CENT.	4 th CENT. AD 300-350	5 th CENT. 250-400
ΑΑΑΑ	ΑΑ	ΑΑΑΑ	ΑΑΑΑ	ΑΑΑΑ	ΑΑΑΑ	ΑΑΑΑ	αααα	αααα	αααα
ΒΒΒΒ	Β	ΒΒ	ΒΒΒ	ΒΒΒ	ΒΒ	ΒΒ	ββββ	ββββ	ββββ
ΓΓΓ	Γ	ΓΓ	ΓΓ	ΓΓ	ΓΓ	ΓΓ	γγγγ	γγγγ	γγγγ
ΔΔΔ	Δ	ΔΔ	ΔΔ	ΔΔ	ΔΔ	ΔΔ	δδδδ	δδδδ	δδδδ
ΕΕΕΕ	Ε	ΕΕ	ΕΕΕ	ΕΕΕ	ΕΕ	ΕΕ	εεεε	εεεε	εεεε
ΖΖΖ	Ζ	Ζ	Ζ	Ζ	Ζ	Ζ	ζζζζ	ζζζζ	ζζζζ
ΗΗΗ	Η	ΗΗ	ΗΗ	ΗΗ	ΗΗ	ΗΗ	ηηηη	ηηηη	ηηηη
ΘΘΘ	Θ	ΘΘ	ΘΘ	ΘΘ	ΘΘ	ΘΘ	θθθθ	θθθθ	θθθθ
ΙΙΙ	Ι	ΙΙ	ΙΙ	ΙΙ	ΙΙ	ΙΙ	ιιιι	ιιιι	ιιιι
ΚΚΚ	Κ	ΚΚ	ΚΚ	ΚΚ	ΚΚ	ΚΚ	κκκκ	κκκκ	κκκκ
ΛΛΛ	Λ	ΛΛ	ΛΛ	ΛΛ	ΛΛ	ΛΛ	λλλλ	λλλλ	λλλλ
ΜΜΜ	Μ	ΜΜ	ΜΜ	ΜΜ	ΜΜ	ΜΜ	μμμμ	μμμμ	μμμμ
ΝΝΝ	Ν	ΝΝ	ΝΝ	ΝΝ	ΝΝ	ΝΝ	νννν	νννν	νννν
ΞΞΞ	Ξ	ΞΞ	ΞΞ	ΞΞ	ΞΞ	ΞΞ	ξξξξ	ξξξξ	ξξξξ
ΟΟΟ	Ο	ΟΟ	ΟΟ	ΟΟ	ΟΟ	ΟΟ	οοοο	οοοο	οοοο
ΠΠΠ	Π	ΠΠ	ΠΠ	ΠΠ	ΠΠ	ΠΠ	ππππ	ππππ	ππππ
ΡΡΡ	Ρ	ΡΡ	ΡΡ	ΡΡ	ΡΡ	ΡΡ	ρρρρ	ρρρρ	ρρρρ
ΣΣΣ	Σ	ΣΣ	ΣΣ	ΣΣ	ΣΣ	ΣΣ	σσσσ	σσσσ	σσσσ
ΤΤΤ	Τ	ΤΤ	ΤΤ	ΤΤ	ΤΤ	ΤΤ	ττττ	ττττ	ττττ
ΥΥΥ	Υ	ΥΥ	ΥΥ	ΥΥ	ΥΥ	ΥΥ	υυυυ	υυυυ	υυυυ
ΦΦΦ	Φ	ΦΦ	ΦΦ	ΦΦ	ΦΦ	ΦΦ	φφφφ	φφφφ	φφφφ
ΧΧΧ	Χ	ΧΧ	ΧΧ	ΧΧ	ΧΧ	ΧΧ	χχχχ	χχχχ	χχχχ
ΨΨ	Ψ	Ψ	Ψ	Ψ	Ψ	Ψ	ψψψψ	ψψψψ	ψψψψ
ΩΩΩ	Ω	ΩΩ	ΩΩ	ΩΩ	ΩΩ	ΩΩ	ωωωω	ωωωω	ωωωω

Հունական արագագրի նմուշներ (ըստ Թովմանի)³⁰⁹

ԱՆՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱԿ

Ա

- Աբրեյան Ա. 56, 57, 161
 - Արուստան Ի. 161
 - Արրահամյան Ա. 17, 23-26, 56, 92, 100, 132, 138, 189, 190, 192, 215
 - Ազարանզեղու 114
 - Ալեքսիս 2. 183
 - Ալիսիս 117
 - Ալիսեան Զ. Ե. 106
 - Աղայան Է. 17, 28-30, 66, 100, 101, 215, 216
 - Աղայան Դ. 207
 - Աճառյան Զր. 9, 17, 19-22, 26, 45-47, 56, 57, 64, 66, 67, 70, 80, 85-87, 92, 106, 107, 111, 113, 118, 119, 129, 132, 134, 138, 140, 141, 158, 161, 162, 164, 171, 175, 185-187, 195-198, 201-204, 207, 216
 - Անդրաս Բայկի 207
 - Աշոկ արքա 172
 - Ապոլոնիոս Թիանացի 106, 107
 - Ասողիկ 21
 - Արամ Նահապետ 176
 - Արշակ թագավոր 106, 107
- Բ
- Բարայան Ա. 32, 40
 - Բարիլաս 117
 - Բաուեր Զ. 37
 - Բարխուդարյան Ա. 159

- Բենիամին 34
- Բեթերի Ա. 27, 170
- Բրայլ Լուի 11

Գ

- Գամկրելիս Թ. 17, 38, 39, 55, 175, 178, 180-182
- Գամուկ Գ. 187
- Գարդիներ Ա. 94
- Գեյր Ի. 13, 54, 59, 88, 90, 93, 126, 187, 197, 204, 206
- Գեորգյան Գ. 207
- Գիպերոս Յ. 183
- Գուրվաստեր Օ. 95, 189
- Գրեյս Ռ. 67, 188, 200
- Գրիգոր Պարթև, 114

Դ

- Դանիել Ասորի 24, 113, 118, 119, 120, 121, 122
- Դավիթ Անհաղթ 197
- Դարևել Զ. 95
- Դիոնիսիոս Թրակացի 175, 181
- Դիրինգեր Դ. 51, 59, 62, 63, 135, 145, 223
- Դյակոնով Ի. 62, 63, 111, 176, 206
- Դյունան Ա. 174

Զ

- Չեթ Կ. 95
- Չենոբ Գլակ 50

³⁰⁹ E. Thompson, *An Introduction to Greek and Latin Palaeography*. 1912.

ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԸ

Չվեգիսցե Վ. 60

Է

Էպիհարմոս Սիկիլիացի 67

Թ

Թոխաթյան Կ. 188

Թոմփսոն Ե. 224

Ժ

Ժիսկյովա Ա. 128

Ի

Իսման Յուսուֆ 37, 38

Լ

Լենին Վ. 197

Լեոն թագավոր 107

Լիխայով Դ. 102

Լյուա Ռ. 18, 33

Լոուկոտկա Չ. 109

Խ

Խազանով Ա. 102

Կ

Կադմոս 176

Կադմոս թագավոր 176

Կարագեոզեան Դ. 189

Կարապետ Սասնեցի, 22

Կիրիլ 63, 67, 124, 131

Կլավդիոս կայսր 196

Կոռնստովցե Ա. 45, 73

Կորյուն 9, 13-15, 106, 114, 116, 118,

120-123, 161, 162, 184, 187, 198,

215

Կուզմիչչե Վ. 101

Դ

Դաբել, 118

Դակոբյան Ա. 31

Դարոթյունյանց Ի, 108

Դարոթյունյանց Ի. 9

Դարոթյունով Ա. 114

Դերոդոտոս 107, 181

Դյուբշման Դ. 106

Դովսեփյան Գ. 159

Դոովանոս 158

Ղ

Ղազար Փարպեցի 15, 118, 122, 187,

193, 216

Ղարիբյան Ա. 59, 60, 175

Ղաֆադարյան Կ. 129, 138

Ս

Մաթեւոսյան Ա. 122

Մայխասյան Ստ. 111

Մահե Ժ-Պ. 183

Մաճարիանի Ե. 179

Մանանդյան Դ. 34

Մառ Ն. 170

Մարկվարտ 3. 92, 119

Մարտիրոսյան Ա. 17, 18, 36, 37, 68,

90, 119, 120, 123

Մեսրոպ Մաշտոց 9, 13-24, 26, 29, 30,

34, 36, 37, 40, 50, 56, 60, 66, 68,

70, 87, 90, 91, 104-106, 110, 111,

115, 116, 119, 120-123, 125, 126,

147, 153, 161, 165, 171, 175, 178,

184, 187, 188, 191, 192, 200, 202,

203, 207, 210, 215-217

Միլթեր Ֆ. 176

Մնացականյան Դ. 144, 154, 161

Մովսես Խորենացի 9, 14, 90, 103,

104, 118, 176, 195

Մովսիսյան Ա. 100, 189

Մուշեղյան Ա. 17, 50, 171

Մուրավյով Ա. 17, 30-33, 40, 87, 162,

173, 195

Յ

Յակոբեան Ա. 23

Յուզբաշյան Կ. 32

Լ

Լեոսես Շնորհալի 194, 198

Լիկանդրե, 83

Շ

Շուպե Վ. 183

Չ

Չամչյան Դ. Մ. 14, 107, 198

Չամչյան Մ. 198

Պ

Պատարիձե Ռ. 178, 179

Պետրոս ցար 197

Պերեպոլկին Յու. 45, 73

Պիվազյան Ե. 195

Պողոսյան Պ. 30, 42-45, 194, 201

Պոպպեր Կ. 53

Պուշկին Ա. 205

Պրոխորով Գ. 170

Ջ

Ջաղա, 34

Ռ

Ռաբինովիչ Ե. 107

Ս

Սադոյան Լ. 17, 39, 40-42, 162

Սահակ Կամսարական 138

Սահակ Պարթեւ 117, 120

Սարգիսյան Դ. Բ. 87

Սարգսյան Վ. 17, 45-50, 194, 201, 202

Սեմփսոն Ջ. 32, 89

Սեջոն Մեծ, 62

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Սեւակ Գ. 14, 17, 26, 28, 33, 36, 40, 86,

87, 170, 173

Սիմոնիդես Սամոսացի 67

Սիբվայա 68, 171

Ստրուպե Վ. 128

Վ

Վախտին Ն. 104

Վահրիճ 118

Վարդան Պատմիչ 22, 107, 111, 190

Վուֆիլա, 68, 187

Վռամշապուհ թագավոր, 117

Տ

Տաղավարյան Ն. 108, 164

Տուրչանինով Գ. 95

Տրայանոս կայսր 71, 72, 81

Տրեւեր Կ. 110

Ի

Իիթմըն Ի. 199

Փ

Փառնավազ թագավոր 182

Փաւստոս Բուզանդ 115

Փերիխանյան Ա. 1-18, 34, 35, 45, 64,

98, 138

Փիլոստրատոս 106, 107

Ք

Քուլես Բ. 89, 137

Օ

Օլդեռոզգե Դ. 17, 27, 28, 33, 40

Օկկամ Ուիլյամ 53

Օպենհայմ Լ. 57, 61, 83, 112

Ֆ

Ֆրիդրիխ 3. 59, 95, 157, 174, 176,

179, 221-223



post@tarumian.am

papn@ubm.hq

tarumian.am

arian.am

independent.academia.edu/
RubenTarumian



Անտարես

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
ՀՀ, 0009, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69
Հեռ. +(374 10) 58 10 59; 58 09 59; 56 15 26
Էլ. փոստ՝ antares@antares.am
Էլ. կայք՝ www.antares.am